

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ.
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԵՐԵՎԱՆ

2020

ՀՏԴ 330.322 Տպագրվել է ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
ԳՄԴ 65.263 տնտեսագիտության ինստիտուտի գիտական
Ս 259 խորհրդի որոշմամբ:

Մասնագիտական խմբագիր՝ տ. գ. դ. Ռ. Սարինյան

Սարգսյան Լ. Ն. և ուրիշներ

Ս 259 Հայաստանի ներդրումները. մարտահրավերներ և հնարավորություններ / Լ. Սարգսյան և ուրիշներ, -Եր.: ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020, -320 էջ:

Գրքում փաստաթղթային և ցուցանիշային վերլուծության միջոցով բացահայտվել են ՀՀ-ում ներդրումային միջավայրի հիմնական առավելություններն ու թերությունները: Ներդրողների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման միջոցով բացահայտվել են ՀՀ-ում ներդրողների ունեցած հիմնական խնդիրները: Տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ գնահատվել է ներդրումների ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման վրա, բացահայտվել են ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք կարող են հեռանկարային համարվել ՕՈՒՆ ներգրավման տեսանկյունից, ինչպես նաև մշակվել է ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ռազմավարության նախագիծ: Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19YR-5B009 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

Գրքի 1.4 ենթագլուխը հեղինակել է Դ. Գրիգորյանը, 1.2-ը՝ Ս. Մարգարյանը, իսկ 3.2 և 3.3 ենթագլուխերը՝ Դ. Գրիգորյանը և Ս. Մարգարյանը՝ համահեղինակությամբ:

ՀՏԴ 330.322
ԳՄԴ 65.263

ISBN 978-9939-9214-4-0

© ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	12
1.1. Ներդրումները որպես տնտեսության զարգացման շարժիչ ուժ	12
1.2. ՀՀ-ում ներդրումների քննական վերլուծություն.....	24
1.3. Ներդրումային ոլորտը կարգավորող իրավական դաշտը ՀՀ-ում.....	64
1.4. ՀՀ-ում ներդրումային միջավայրի առավելություններն ու թերությունները	87
ԳԼՈՒԽ 2. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ	155
2.1. ՕՈՒՆ ազդեցությունը տնտեսական զարգացման վրա աշխարհում	155
2.2. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա ՕՈՒՆ ազդեցության շղթաների բացահայտումը.....	170
2.3. Տնտեսության վրա ՕՈՒՆ ազդեցության քանակական գնահատումը ՀՀ-ում և աշխարհում.....	189
ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻԶԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	201
3.1. Տեղական և օտարերկրյա ներդրողների հիմնախնդիրները ՀՀ-ում.....	201
3.2. Ներդրումային դաշտի բարելավման ուղիները ՀՀ-ում	214
3.3. Ներդրումների համար շահավետ ոլորտները ՀՀ-ում.....	246
3.4. ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման ռազմավարական նախագիծ	278
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	300
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	311

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Փոքր ներքին շուկա ունեցող երկրները, ինչպիսին Հայաստանն է, չեն կարող ապահովել երկարատև կայուն տնտեսական աճ՝ հիմնվելով սահմանափակ ներքին ռեսուրսների վրա: Ավելին. անցումային տնտեսություն ունեցող երկրները, ինչպիսին Հայաստանն է, չունեն հզոր ֆինանսական և տեխնոլոգիական ներուժ արագընթաց տեմպերով տնտեսությունը զարգացնելու համար: Այդ է պատճառը, որ օտարերկրյա ներդրումների ներգրավումը այս երկրների արտաքին տնտեսական քաղաքականության անբաժան մասն է հանդիսանում: Այսպիսի երկրի համար ներդրումների ներգրավման ճիշտ ռազմավարության մշակումը և իրականացումը հանդիսանում է տնտեսության առաջնահերթ հրամայականներից մեկը:

Օտարերկրյա ներդրումները և արտաքին առևտուրը տարիներ շարունակ հանդիսացել են համաշխարհային տնտեսության կայացման և զարգացման նախադրյալները, ուստիև այս երևույթները հանգամանորեն քննարկվել են տարբեր տնտեսագիտական դպրոցների ներկայացուցիչների կողմից: Մերօրյա ժամանակաշրջանում ևս այս երևույթները կարևորվում են ազգային տնտեսությունների զարգացման տեսանկյունից՝ միևնույն ժամանակ հանդիսանալով որպես համաշխարհային տնտեսության շարժիչ ուժ:

Նախ և առաջ՝ հասկանալի է, որ երկիրը որոշակի ապրանքներ արտահանելու համար պետք է կարողանա ապահովել դրանց մրցունակությունն արտաքին շուկայում: Իսկ ազգային տնտեսության մրցունակության աճի անհրաժեշտ պայման հանդիսանում է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը, որոնք բերում են նոր տեխնոլոգիաներ և կառավարման ժամանակակից մեթոդներ, ինչպես նաև նպաստում են հայրենական ներդրումների զարգացմանը, որոնք մեծ դեր են խաղում երկրի տնտեսական վերելքի համար: Հարավարևելյան Ասիայի մի շարք զարգացող երկրների փորձի հիման վրա վստահությամբ կարող ենք ասել, որ տնտեսության մեջ ներդրումային աճը սկսվում է

օտարերկրյա կապիտալի հայտնվելուն պես: ՕՈՒՆ-ը հնարավորություն է տալիս տնտեսության զարգացման՝ ի հաշիվ այլ երկրների ռեզիդենտների ֆինանսական միջոցների՝ միաժամանակ չհանդիսանալով փոխառու միջոց և չմեծացնելով երկրի արտաքին պարտքը: Հասկանալի է, սակայն, որ օտարերկրյա ներդրումները ևս չեն կարող իրականացվել տնտեսության բոլոր ոլորտներում, քանի որ օտարերկրյա ներդրողը նախ և առաջ մտածում է առավելագույն շահույթ ստանալու մասին և ներդրում չի իրականացնի տնտեսության ոչ արդյունավետ գործող ոլորտներում: Այսպիսով, ՕՈՒՆ ներգրավման տեսանկյունից ևս շատ կարևոր է տնտեսության համեմատական առավելություն ունեցող ոլորտների բացահայտումը և ներդրողներին ներկայացումը՝ միաժամանակ զուգորդելով այն ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծմամբ:

ԽՍՀՄ փլուզումից հետո 20-րդ դարի վերջում տեղի ունեցած իրադարձությունները մեծ ազդեցություն ունեցան համաշխարհային տնտեսության վրա: Առաջացան տնտեսապես թույլ երկրներ, որոնք զարգացման համար չունեին անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Այդպիսի տնտեսական իրավիճակում հայտնվեց նաև Հայաստանը, որի տնտեսությունը, սակայն, տուժել էր ոչ միայն ԽՍՀՄ փլուզումից, այլ նաև Մալիտակի երկրաշարժից և Արցախյան պատերազմից: Տնտեսության ծանր վիճակն է՛լ ավելի խորացրեց ՀՀ-ի շրջափակումը 4 հարևան երկրներից 2-ի՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Ահա այսպիսի տնտեսական ծանր վիճակից վեր հառնեց և զարգացավ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները (այսուհետ՝ ՕՈՒՆ) մեծ դեր են խաղում Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Լավ մշակված քաղաքականության շնորհիվ հնարավոր կլինի ապահովել բարենպաստ ներդրումային միջավայր ներքին և օտարերկրյա ներդրողների համար: Արդյունքում կավելանան ներդրումները՝ հանգեցնելով Հայաստանի տնտեսության զարգացմանը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ մինչ օրս ՀՀ տնտեսու-

թյունում ՕՈԻՆ կենտրոնացվածությունը բավական բարձր է թե՛ ոլորտային, թե՛ ներդրման աշխարհագրական բաշխվածության տեսանկյունից: Ըստ վիճակագրության՝ ՀՀ-ում ՕՈԻՆ առավելապես կատարվել են սպասարկման ոլորտում, ընդ որում՝ դրանք հիմնականում իրականացվել են ՀՀ-ում ներկայացուցչությունների միջոցով, որոնց խնդիրն է ապահովել տվյալ կազմակերպության արտադրանքի կամ ապրանքանիշի ներկայացումը տեղական շուկայում: Ծառայությունների ոլորտում ներդրումները ՀՀ-ում հիմնականում իրականացվում են բեռնա և ավիափոխադրումների, զբոսաշրջության, հյուրանոցային, ապահովագրական և գովազդային բիզնեսի ոլորտներում: Ծառայությունների ոլորտում հատուկ տեղ են գրավում նաև կոմունալ ծառայությունների, մասնավորապես՝ էլեկտրաէներգիայի, գազի և հեռահաղորդակցման ոլորտները: ՕՈԻՆ ծագման երկրների կենտրոնացվածությունն արտացոլում է ՀՀ-ի կախվածությունը քիչ թվով երկրների կապիտալից, ինչը կարող է հանգեցնել Հայաստանի թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական կյանքին տվյալ երկրների ակտիվ մասնակցության ցանկության մեծացմանը, իսկ ըստ ներդրման ոլորտների՝ կենտրոնացվածությունը կարող է հանգեցնել մեր երկրի տնտեսության սահմանափակ զարգացմանը՝ անտեսելով տնտեսության համար կարևոր մյուս ոլորտների զարգացումը:

Վերը նշված բացասական հետևանքները վերացնելու կամ մեղմելու նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններից են.

- գիտելիքահենք տնտեսության ստեղծումն ու զարգացումը: Տվյալ դեպքում շեշտադրումը պետք է կատարվի մարդկային կապիտալի զարգացման վրա՝ ներուժի բացահայտման և ավելացման, տնտեսության մեջ գիտական մտքի կիրառելիության խթանման միջոցով:
- Գործարար և ներդրումային բարենպաստ միջավայրի զարգացումը: Պատերազմի մշտական վտանգի տակ գտնվող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, բավական բարդ է ներդրողներ ներգրավելը, այդ պատճառով էլ առնվազն տնտեսական տեսանկյունից ներդրումային բարենպաստ միջավայրի ստեղծու-

մը որոշակիորեն կարող է մեղմել հիմնախնդիրը:

- Ներքին սպառման փոքր շուկայի խնդրի լուծումը՝ ինտեգրացիոն միավորումներին միանալու միջոցով: Այս համատեքստում Հայաստանը, 2015 թ. անդամակցելով ԵԱՏՄ-ին, հնարավորություն է ընձեռում տեղական և օտարերկրյա ներդրողներին արտահանել իրենց արտադրանքը ԵԱՏՄ հսկայական շուկա՝ արտոնյալ պայմաններով:

Այնուամենայնիվ, անգամ այս պայմաններում Հայաստանում 2015-2020 թթ. ընթացքում էլ օտարերկրյա ուղղակի ներդրումները շատ քիչ չափով են ավելացել՝ տնտեսությունում տիրող անկայունության և շուկայի այլ անկատարությունների պատճառով: Հետհեղափոխական Հայաստանի տնտեսության զարգացման անկյունաքարը կարող ենք համարել 2018 թ. ապրիլ ամիսը:

2018 թվականից մինչ օրս ՀՀ կառավարությունը հետևողականորեն նվազեցնում և փորձում է արմատախիլ անել ՀՀ տնտեսության բազմաթիվ ոլորտներում առկա կոռուպցիան: Մա հանգեցրել է միջազգային ասպարեզում Հայաստանի վարկանիշի բարձրացմանը, ուստիև օտարերկրյա ներդրողները ներդրումային միջավայրի բարելավման պարագայում Հայաստանում նոր ներդրումներ կկատարեն, երբ կրճատվեն և վերացվեն ՀՀ տնտեսության հիմնական թերությունները: Իսկ հիմնական թերությունները դեռևս առկա են ներդրումային դաշտի վրա ազդող բոլոր գործոնների տեսանկյունից: Մասնավորապես՝ 2018 թվականից հետո մշակվող իրավական փաստաթղթերը ևս զերծ չեն զգալի թերացումներից: Այս տեսանկյունից, թերևս, քննարկվող հիմնախնդրին է վերաբերում «Գործարար միջավայրի բարելավման ռազմավարությունը», որում նկարագրված են ոլորտի վրա ազդող խիստ մակերեսային հիմնախնդիրներ՝ համեմված առկա իրավիճակի ոչ ճշգրիտ ներկայացմամբ: Մասնավորապես՝ որպես ՀՀ գործարար միջավայրի բնորոշող ցուցիչ ներկայացված է Գործարարության դյուրինության համաթիվը, որն իրականում նվիրված է առավել ընթացակարգային խնդիրների, քան խորքային խնդիրների վերհանմանը: Բացի այդ, անգամ այս համաթվի հիման վրա ներկայացված իրականությունը էապես խեղված է,

քանզի ռազմավարության մեջ նշվում է, որ ՀՀ կառավարության վարած արդյունավետ քաղաքականության շնորհիվ Գործարարության դյուրինության համաթվով ՀՀ տնտեսությունը 47-րդ հորիզոնականից բարձրացել է մինչև 41-րդ հորիզոնական: Մինչդեռ իրականում ՀՀ-ն, համաձայն Գործարարության դյուրինության ինդեքսի, 47-րդից հորիզոնականից բարձրացել է մինչև 39-րդ հորիզոնական, այնուհետև միայն՝ իջել մինչև 41-րդ հորիզոնական: Սա նշանակում է, որ վարվող քաղաքականությունը նույն հաջողությամբ շարունակելու պարագայում շարունակվելու է նաև Գործարարության դյուրինության համաթվով արձանագրվող հետընթացը: Ի թիվս արդեն իսկ նշած խնդիրների՝ հարկ է ավելացնել նաև այն հանգամանքը, որ Գործարարության դյուրինության համաթիվը ինքնին շատ հեռու է երկրի գործարար ու ներդրումային միջավայրի գրավչությունը բնութագրող ցուցանիշ լինելուց, և անգամ եթե կառավարության վարած քաղաքականության արդյունքում հաջողվի առաջիկա 5 տարիներին ՀՀ Գործարարության դյուրինության ինդեքսով հայտնվել 15-րդ հորիզոնականում, որն իրականում հնարավոր էլ չէ, դրանով հանդերձ ՀՀ տնտեսությունը չի հանդիսանա լավագույն ներդրումային միջավայր ունեցող 15 երկրներից մեկը, ինչպես նշված է ռազմավարության նպատակների մեջ: Սակայն ռազմավարության թերությունները չեն սահմանափակվում իրավիճակի ոչ ճշգրիտ ներկայացմամբ և անիրականանալի թիրախների ընտրությամբ: Դրանում առկա չեն չափելի թիրախներ, ուստիև հնարավոր չի լինի արձանագրել ռազմավարության իրագործման ընթացքում թույլ տված թերակատարումները: Թերևս այսպիսի փաստաթղթերը բազմաթիվ են ներկա և անցյալ ժամանակներում մշակված պետական փաստաթղթերի թվում:

Վերոնշյալ փաստերի առկայությունն է՛լ ավելի է մեծացնում տվյալ վերլուծության արդիականությունը: Պատերազմի մշտական վտանգի տակ գտնվող երկիրը օտարերկրյա կապիտալի ներգրավման համար չունի այլընտրանք, քան տնտեսական առավելագույնս բարենպաստ պայմաններ ստեղծելն է: Այուհանդերձ, անկախ Հայաստանի շուրջ երեսնամյա պատմության մեջ դեռևս

մշակված չէ ներդրումների ներգրավման ռազմավարություն, որը կարող էր դառնալ ՀՀ կայուն տնտեսական աճի, տնտեսական զարգացման, գործազրկության և աղքատության առկա մակարդակների նվազեցման ամենահավանական ուղիներից մեկը: Թերևս հենց այս բացը լրացնելուն է ուղղված սույն վերլուծությունը, որը նպատակ ունի ներկայացնել ՀՀ ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ռազմավարական նախագիծ:

Այն լավագույնս ներկայացնելու համար անհրաժեշտ է վերլուծել ՀՀ ՕՈՒՆ ներհոսքի դինամիկան՝ ներկայացնելով ներդրումների կրճատման պատճառները՝ ըստ ոլորտների և ըստ երկրների: Պետք է իրականացվի նաև ներդրումային դաշտը պայմանավորող գործոնների համեմատական վերլուծություն հարևան և ԵԱՏՄ երկրների հետ: Ներկայումս շատ կարևոր է ԵԱՏՄ անդամ երկրների համեմատությամբ ՀՀ ներդրումային միջավայրի առավելությունների և թերությունների բացահայտումը, քանի որ այս ոլորտում ունեցած առավելությունները և թերությունների շուտափույթ վերացումը միայն կստիպեն օտարերկրյա ներդրողներին ԵԱՏՄ անդամ երկրներում ներդրում կատարելիս որոշումը կայացնել հոգուտ ՀՀ-ում ներդրման: Տվյալ վերլուծության շրջանակներում մենք կանգ կառնենք ներդրումային միջավայրը պայմանավորող 50 գործոնների համախմբի վրա:

Անշուշտ, հնարավոր չէ հանգամանորեն վերլուծել ներդրումային միջավայրի հիմնախնդիրները՝ բացառապես օրենսդրության և ցուցանիշների վերլուծության արդյունքում, քանի որ այս պարագայում մեծ հավանականությամբ ուշադրությունից դուրս կմնան այնպիսի մակրոխնդիրներ, որոնց բախվում է գործարարը իր կազմակերպության բնականոն գործունեությունը կազմակերպելիս: Այդ պատճառով սույն վերլուծությունը ներառում է նաև ՀՀ-ում գործող կազմակերպությունների շրջանում իրականացված սոցիոլոգիական հարցման արդյունքներ, որոնք հնարավորություն են տալիս քննարկելու նաև գործարարների կողմից բարձրացվող խնդիրները: Հարցումների միջոցով առավել իրատեսական պատկեր ստանալու համար մենք ՀՀ-ում գործող 188093 ձեռնարկություններից հարցումն իրականացրել ենք 1832-ի շրջանա-

կում, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու 99 % վստահելիության մակարդակ և առավելագույնը 3 % սխալի հավանականություն:

Վերոնշյալ համակարգման միջոցով ներդրումային միջավայրի խնդիրների բացահայտումը չի կարող հանդիսանալ ինքնանպատակ և պետք է ուղեկցվի դրանց լուծմանն ուղղված հիմնավոր առաջարկներով՝ հաշվի առնելով համաշխարհային փորձն ու ՀՀ տնտեսության առանձնահատկությունները:

Մասնագիտական գրականությունում առկա են բազմաթիվ վերլուծություններ՝ նվիրված տնտեսության զարգացման վրա ՕՈՒՆ ազդեցության գնահատմանը: Այդուհանդերձ, հասկանալի է, որ տվյալ վերլուծությունները կարող են ցույց տալ ՕՈՒՆ ազդեցության մասին միայն մոտավոր պատկերացումներ, քանի որ յուրաքանչյուր երկրի համար իրական ՕՈՒՆ ազդեցությունը հնարավոր է գնահատել միայն տվյալ երկրի տվյալներով վերլուծություն կատարելիս: Ուստի սույն վերլուծության շրջանակներում մենք կներկայացնենք ՕՈՒՆ ազդեցության գնահատումը ինչպես աշխարհում, բարձր, միջին եկամտով երկրներում տնտեսական մի շարք ցուցանիշների, այնպես էլ ՀՀ տնտեսության մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Թերևս ներդրումային միջավայրի խնդիրների բացահայտումից և ՀՀ տնտեսության վրա ներդրումների ազդեցությունը գնահատելուց զատ շատ կարևոր է նաև բացահայտել ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք ունեն կամ կարող են մոտ ապագայում ունենալ ներդրումային գրավչություն: Մա ներդրումային միջավայրի բարելավման ռազմավարության անբաժան մասն է, ուստի մեր կողմից հաշվարկների հիման վրա ցույց կտրվեն ներդրումային գրավչություն ունեցող ոլորտները:

Այս խոր վերլուծությունից հետո է միայն հնարավոր մշակել ՀՀ ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված ռազմավարական նախագիծ, որն էլ կհանդիսանա սույն վերլուծության ամփոփումը:

Վերլուծությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող «ՕՈՒՆ ներգրավման համար անհրա-

Ժեշտ ռազմավարության մշակումը՝ որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակայություն» թեմայի շրջանակներում (ծածկագիր՝ 19YR-5B009): Կարծում ենք՝ այն օգտակար կլինի ՀՀ կառավարությանը ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ վարվող քաղաքականության իրականացման շրջանակներում և հող կնախապատրաստի գիտություն-պետություն առավել սերտ համագործակցության համար:

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1. Ներդրումները որպես տնտեսության զարգացման շարժիչ ուժ

Ժամանակակից աշխարհը բնորոշվում է ինտեգրման և գլոբալացման բարձր աստիճանով: Ներկայումս համաշխարհային տնտեսությունում գրեթե գոյություն չունեն ամբողջապես փակ և ինքնաբավ տնտեսություններ: Յուրաքանչյուր երկիր կապված է արտաքին աշխարհի հետ առևտրային, տրանսպորտային, ֆինանսական և այլ թելերով:

Համաշխարհային փորձը վկայում է, որ անկախ երկրի զարգացման աստիճանից, անկախ համաշխարհային տնտեսությունում դրա դերակատարությունից՝ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման գործընթացն առավել արագ է ընթացել այն երկրներում, որոնցում օտարերկրյա ներդրումներն առավել մեծ ծավալներով են իրականացվել: Ներդրումների ներգրավումը հատկապես կարևոր է անցումային տնտեսություններում, որտեղ սեփական ներդրումների սահմանափակ ծավալը շղթայաբար հանգեցնում է բազմաթիվ անցանկալի հետևանքների՝ աշխատատեղերի անբավարար քանակ, աղքատություն, պետական բյուջեի եկամուտների սակավություն, պետական ներդրումների չնչին հնարավորություն և այլն, որոնք խոչընդոտում են երկրի պոտենցիալ զարգացման հնարավորությանը: Այսպիսով, օտարերկրյա ներդրումների բացակայության պայմաններում տնտեսության ակտիվացման համար պետությունը ստիպված է լինում կատարել արտերկրից ֆինանսական փոխառություններ, որոնք գուցե տվյալ պահին խնդրին մասամբ լուծում տալու հնարավորություն են ստեղծում, սակայն ավելացնում են արտաքին պարտքը՝ մեծ բեռ դնելով ներկա և ապագա սերունդների ուսերին:

Փաստորեն ներդրումների ներգրավումը և դրա համար նպաստավոր պայմանների ստեղծումը դառնում է հատկապես

գարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրների՝ առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներից մեկը:

Հասկանալի է, իհարկե, որ յուրաքանչյուր ներդրողի համար կապիտալն այս կամ այն երկրում ներդնելու գլխավոր շարժառիթը առավելագույն շահույթի ստացումն է: Մասնագիտական գրականությունում¹ բազմաթիվ են ներդրում կատարելու շարժառիթների մասին վերլուծությունները: Ամփոփելով դրանք՝ կարելի է ներկայացնել ՕՈԻՆ հետևյալ շարժառիթները.

- աշխարհում կապիտալի նկատմամբ առկա է առաջարկի և պահանջարկի անհամապատասխանություն: Ներկայումս Համաշխարհային բանկը երկրները դասակարգում է ցածր, միջին և բարձր եկամուտ ստացողների, ինչն էլ հիմք է հանդիսանում նրանց տնտեսական զարգացման մասին ամփոփ պատկերացում կազմելու համար: Հասկանալի է, սակայն, որ երկրների տնտեսական զարգացման աստիճանը բխում է դրանցում կապիտալի կուտակման չափից: Այլ կերպ ասած՝ առավելապես զարգացած երկրները, որպես կանոն, ունեն «կապիտալի ավելցուկ», իսկ զարգացողները կամ թույլ զարգացածները՝ «կապիտալի պակասուրդ», այսինքն՝ ներդրումների կարիք: Հաճախ զարգացող երկրի նույն ոլորտում ներդրում կատարելն առավել շահավետ է ներդրողի համար, քան զարգացած երկրում՝ կապված բնապահպանական և այլ վճարների, ռեսուրսների գնի և այլ գործոնների հետ: Ուստի ներդրողը, հիմնվելով հնարավոր բոլոր գործոնների հաշվարկի վրա, որոշում է կայացնում այս կամ այն երկրում ներդրում կատարելու՝ առավելությունը տալով առավելագույն շահույթ ապահովող երկրին:
- Համաշխարհային փորձը վկայում է, որ երբեմն ձեռնարկատե-

¹ Mishkin F., International capital movements, financial volatility and financial instability, NBER working paper, Cambridge, 1998 (<https://www0.gsb.columbia.edu/faculty/fmishkin/PDFpapers/w6390.pdf>); Evana M.D.D., Hnatkovaka V., International capital flows, returns and world financial integration, September, 2005 (https://www.ecb.europa.eu/events/pdf/conferences/fgi/Hnatkovska_Evans.pdf); Committee on the global financial system, Capital flows and emerging market economies, January, 2009, (<http://www.bis.org/publ/cgfs33.pdf>)

ըը կանգնում է ներդրում-արտահանում այլընտրանքի առջև, այսինքն՝ ստիպված է ընտրություն կատարել՝ արտադրել x երկրում և արտահանել որևէ y երկրի՝ թե՛ արտադրությունը տեղափոխել y երկիր՝ այսպիսով մոտեցնելով թե՛ y երկրի, թե՛ դրան հարակից երկրների շուկաները: Այս իրավիճակն առավել բնորոշ է սպառման մեծ շուկա ունեցող կամ այնպիսի երկրների համար, որոնք, որևէ ինտեգրացիոն միավորման կազմում լինելով, հնարավորություն են տալիս այդ ինտեգրացիոն խմբավորումից դուրս գտնվող երկրներին տվյալ երկրում ներդրումներ կատարելով՝ անարգել մուտք գործել դեպի ինտեգրացիոն միավորման շուկա, ինչպիսին, օրինակ, Հայաստանն է ԵԱՏՄ անդամակցությունից հետո:

- Աշխարհում ամենօրյա մրցակցության սրումը ստիպում է ներդրողներին գտնել առավել էժան հումք և աշխատուժ՝ արտադրանքի ուրույն տեղը համաշխարհային շուկայում ամրապնդելու համար: Ուստի օրեցօր ՕՌԻՆ համար բավական գրավիչ են դառնում այն երկրները, որոնք կարող են հանդիսանալ էժան հումքի և աշխատուժի մատակարարման աղբյուր:
- Երբեմն օտարերկրյա ներդրումների իրականացմանը նպաստում է նաև որևէ երկրի տնտեսական սուբյեկտի նկատմամբ որոշակի վերահսկողության ձեռքբերման գրավականը, երբ օտարերկրյա ներդրողը ներդրում է իրականացնում արդեն իսկ գործող կազմակերպությունում՝ ձեռք բերելով դրա բաժնեմասի որոշակի, իսկ երբեմն էլ՝ հսկիչ փաթեթը, որով էլ կարողանում է ազդել դրա կառավարչական որոշումների կայացման վրա:
- Այս կամ այն երկրում ներդրում կատարելու որոշման վրա էական ազդեցություն են ունենում նաև երկրի քաղաքական և տնտեսական կայուն վիճակը, անվտանգությունը և ներդրումային գրավիչ միջավայրը: Այս տեսանկյունից, ինչպես ցույց կտրվի աշխատանքի հետագա շարադրանքում, Հայաստանի ներդրումային գրավչությունն այնքան էլ խոստումնալից չէ. ԽՍՀՄ փլուզումից հետո մշտապես փոփոխվող քաղաքական

և տնտեսական վիճակը, երկրաշարժի հետևանքները, Արցախյան պատերազմը՝ 1990-ականներին, տնտեսական փոփոխությունների մշտական բնույթով պայմանավորված անորոշությունը՝ 2000-ականներին, 2018 թ. քաղաքական հեղափոխությունից հետո մինչ օրս տարերային բնույթի փոփոխություններն այս կամ այն ոլորտում, ինչպես նաև Արցախյան պատերազմի վերսկսման առկախված վտանգը չեն նպաստում օտարերկրյա ներդրումների համար ՀՀ տնտեսության գրավչության բարձրացմանը:

- Բացի այդ, օտարերկրյա ներդրումների ներգրավման նպատակով երկիրը կարող է օտարերկրյա ներդրողների համար սահմանել որոշակի արտոնություններ և այլն: Տվյալ պարագայում խոսքը վերաբերում է օֆշորային կամ ազատ առևտրային գոտիներում գրանցվելու ճանապարհով տարատեսակ հարկային վճարների տնտեսման գրավակաճով և այլ հնարավոր եղանակներով օտարերկրյա ներդրումների ներգրավմանը:

Իհարկե. սրանք այն շարժառիթներն են, որոնց հիման վրա ներդրողը կայացնում է այս կամ այն երկիր իր տնօրինած կապիտալը տեղափոխելու որոշումը: Հասկանալի է, սակայն, որ տվյալ ներդրումները զգալի ազդեցություն ունեն նաև ներդրումներն ընդունող երկրի համար:

Ամփոփելով մասնագիտական գրականությունում² առկա կարծիքները՝ կարող ենք ներկայացնել ընդունող երկրի համար ՕՈՒՆ ազդեցության հետևյալ դրական հետևանքները.

² Romer Paul, Idea gaps and object gaps in economic development, University of California, Berkeley, CA 94720, USA, 1993, pp. 543-548. Balasubramanyam V. N., M., Sapsford Salisu and David, Foreign Direct Investment and Growth in EP and is Countries, The Economic Journal, Vol. 106, No. 434, Jan., 1996, pp. 92-105. De Mello L.R., Foreign Direct Investment-led growth: evidence from time series and panel data, Oxford Economic Papers, 51, 1999, pp. 133-151. Markuzen J.R., Venables A.J., Foreign direct investment as a catalyst for industrial development, European Economic Review, Vol. 43, 1999, pp. 335-356. Ahn S., Hemmings P., Policy influence on economic growth on OECD countries: An evaluation of the evidence, OECD Economics Department Working Paper, No. 246, OECD, Paris, 2000; Borensztein E., De Gregorio J., Lee L-W., How does foreign direct infestment affect economic growth, Journal of International Economics, Vol. 45, 1998, pp. 115-135. United Nations Conference on Trade and Development, World Investment Report 2000. Rusike T. G., Trends and determinants of inward foreign direct investment to South Africa, Rhodes University, September, 2007.

- նախ և առաջ՝ ՕՈԻՆ նվազեցնում է հարուստ և աղքատ երկրների միջև առկա տեխնոլոգիական խզման մակարդակը: Օտարերկրյա ներդրումները հեշտացնում են տեխնոլոգիաների և նորարարությունների հոսքը դեպի աղքատ կամ զարգացող երկրներ: Այս տեսանկյունից ներդրումները բարձրացնում են բոլոր կազմակերպությունների արտադրողականությունը, ոչ թե միայն նրանցը, որոնք կապիտալի ներհոսք են ունեցել:
- Բնականաբար ՕՈԻՆ ներհոսքի արդյունքում մեծանում են նաև արտադրողականությունն ու արտադրության և արտահանման ծավալը՝ նպաստելով տնտեսական աճին:
- Արտադրողականության ուղղակի մեծացումից բացի, ՕՈԻՆ նպաստում է նաև ընդունող երկրում մրցակցության բարձրացմանը, ինչը ստիպում է նոր ներդրումներ կատարել նաև մինչ այդ գործող կազմակերպություններին՝ այդպիսով խթանելով թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրումային ակտիվության բարձրացմանը: Ընդ որում՝ տվյալ դեպքում թեպետ կարճաժամկետ հատվածի համար արդյունքը կարող է լինել նաև բացասական՝ նպաստելով մի շարք կազմակերպությունների դուրամդմանը շուկայից՝ մրցակցությանը չդիմանալու պատճառով, այդուհանդերձ երկարաժամկետ հատվածի արդյունքը գրեթե միշտ դրական է: ՕՈԻՆ տվյալ դեպքում դառնում է տվյալ երկրում ներդրումների բաշխման արդյունավետության ցուցանիշ: Եթե կազմակերպությունները օտարերկրյա ձեռնարկության հայտնվելուն պես դուրս են մղվում շուկայից, ուրեմն դրանց գործունեությունը տվյալ ոլորտում անարդյունավետ էր: Մա երկարաժամկետ հատվածում նպաստում է տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումների կառուցվածքային փոփոխությունների՝ հօգուտ ներդրման արդյունավետության բարձրացման, ինչի արդյունքում էլ կմեծանա բնակչության բարեկեցությունը:
- Համանման տրամաբանության շրջանակներում կարող ենք նշել նաև զբաղվածության աճին և գործազրկությանը, ինչպես նաև աղքատության կրճատմանը նպաստելու հանգամանքը:
Հատկապես զարգացող կամ անցումային տնտեսությամբ

երկրների համար օտարերկրյա ուղղակի ներդրումները երկրի տնտեսության շարժիչ ուժ են: Մակայն դրանց ներդրման ձևերից կախված՝ օգուտների չափը երկրի համար կարող է տարբեր լինել: Այսպես, 2000 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից համաշխարհային ներդրումային զեկույցի համար անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ ներդրումներն ընդունող երկրի համար ՕՈՒՆ-ների հոսքը գործող ձեռնարկությունների ձեռքբերման տեսքով պակաս օգտակար է, քան զրոյից կատարվող ներդրումները³: Նույն հետազոտության համաձայն՝ գործող ձեռնարկություններում կատարվող ներդրումները նոր աշխատատեղեր չեն ծնում այն պարզ պատճառով, որ ոչ մի նոր արտադրական կարողություն չի ստեղծվում: Ավելին, այն կարող է հանգեցնել արտադրության ժամանակավոր ընդհատման: Իսկ զրոյից կատարվող ներդրումներն արդեն իսկ ենթադրում են նոր աշխատատեղերի ստեղծում:

ՕՈՒՆ տեսական հիմնադրույթները ամփոփված են մի քանի հիմնական տեսություններում՝ Վերնոնի «Ապրանքի միջազգային արտադրության ցիկլի տեսություն», Գելբրեյթի «Միջազգային կորպորացիաների տեխնոլոգիական տեսություն», ՎԱԿ-երի և շուկայի անկատարության տեսություն (Հայմեր, Կինդլբերգ), Օլիգոպոլիայի և ՕՈՒՆ տեսություն (Նիկերբոկեր, Գրեմ), Միջազգայնացման տեսություն (Բակլի, Կասոն, Ռուսոման), Թոչող սագերի տեսություն (Կոչիմա, Օզավա), Պորտերի «ՕՈՒՆ և մրցակցային առավելության տեսություն», Դանինգի «Էկլեկտիկ տեսություն» և Նարուլոյի «Ներդրումային զարգացման ուղիների տեսություն»: Հասկանալի է, որ նշված տեսություններից յուրաքանչյուրը առաջ է քաշվել՝ հաշվի առնելով մի շարք երկրներում տվյալ ժամանակահատվածում դրսևորված երևույթները: Ուստի ներկայումս ևս տվյալ տեսություններն իրենց կիրառությունը կարող են գտնել այս կամ այն երկրում՝ ելնելով տվյալ երկրի յուրահատկությունից: Մասնավորապես՝ զարգացող երկրներում կիրառելի են

³ United Nations Conference on Trade and Development, World Investment Report 2000.

հիշյալ տեսություններից գրեթե բոլորը: Օրինակ՝ զարգացող երկրները, որպես կանոն, չունեն բավարար ֆինանսական միջոցներ նորագույն տեխնոլոգիաներ ներգրավելու համար: Այդ պատճառով նրանք այդ խնդիրը լուծում են ՕՈՒՆ ներգրավման միջոցով (միջազգային կորպորացիաների տեխնոլոգիական տեսություն): Ապրանքի միջազգային արտադրության ցիկլի տեսությամբ բացատրվում է օտարերկրյա ներդրողների նախապատվությունը՝ ներդրում կատարել այն ոլորտներում, որոնց արտադրանքը գտնվում է հասունության փուլում, այլ ոչ թե անկման: ՎԱԿ-ի և շուկայի անկատարության տեսությունը կարող է բացատրել բոլորիս քաջածանոթ այնպիսի երևույթ, ինչպիսին է զարգացող երկրում ՎԱԿ-ի կողմից ներդրումների իրականացման արդյունքում մրցակցության սրման հետևանքով շուկայի տեղական մասնակիցների մի մասի դուրս մղումը շուկայից: Մրա հետևանքով ՎԱԿ-ը կամ օտարերկրյա ներդրողը ստանձնում է շուկայի առաջատարի դերակատարություն՝ օգտվելով ընդհուպ մինչև զին թելադրելու իրավունքից: Մեկ այլ հայտնի օրինակ է ոչ շատ արդյունավետ հակամենաշնորհային քաղաքականության վարման հետևանքով շուկայում օլիգոպոլիայի ձևավորումը, ինչը վառ արտացոլումն է «Օլիգոպոլիայի և ՕՈՒՆ» տեսության: Միջազգայնացման տեսությունը կարող է մեկնաբանել զարգացող համեմատաբար փակ շուկա, սակայն մեծ սպառման պոտենցիալ ունեցող շուկաներում ՎԱԿ-երի ներդրում կատարելու հանգամանքը: Յուրաքանչյուր թույլ զարգացած երկրի բնականոն զարգացումը կարելի է բացատրել «Թռչող սագերի տեսությամբ»: Սկզբնական շրջանում, օրինակ՝ ՀՀ-ն 1990-ականներին, երկիրը գրեթե չունի տեղական արտադրություն և ներքին պահանջարկը բավարարում է առավելապես ներմուծման հաշվին: Այնուհետև, երկրի տնտեսության զարգացմանը համահունչ, հիմնվում են տեղական արտադրություններ, որոնք էլ հետագայում զարգացման արդյունքում կարողանում են ձեռք բերել մրցունակություն արտաքին շուկայում և արտահանում են իրականացնում:

Հետևելով համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող գործընթացներին՝ կարելի է առանձնացնել մի շարք միտում-

ներ, որոնց ազդեցությամբ տեղի են ունեցել այս կամ այն երկրի օտարերկրյա ներդրումների կառուցվածքային փոփոխությունները.

1. 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին օտարերկրյա ներդրումները գաղութատերերից հիմնականում ուղղվում էին դեպի գաղութները՝ օգտագործելով գաղութների էժան աշխատուժն ու ռեսուրսները առավելագույն շահույթ ստանալու նպատակով:
2. Այդուհանդերձ, գաղութատիրական համակարգը հավերժ չէր, և դրա փլուզումը հիմք դրեց օտարերկրյա ներդրումների նոր մոդելի՝ զարգացած երկրների միջև փոխադարձ ներդրումների: Այս երևույթը հիմնականում բացատրվում է զարգացած երկրների առավել գնողունակ շուկաների մոտեցման հանգամանքով: Բացի այդ, նորագույն տեխնոլոգիաների առավել արդյունավետ գործարկումը երբեմն պահանջում է բարձր որակավորում ունեցող և բազմաթիվ վերապատրաստումներ անցած մասնագետների առկայություն, որոնք զարգացող երկրներում այնքան էլ շատ չեն: Իհարկե, 20-րդ դարասկզբին ՕՈՒՆ կառուցվածքի նման փոփոխությունը կարելի էր բացատրել զարգացող և թույլ զարգացած երկրներում ազատագրական շարժումների արդյունքում տվյալ երկրներից օտարերկրյա ներդրումների դուրսբերման և զարգացած երկրներ դրանք տեսփոխելու փաստով: Մակայն եթե հաշվի առնենք, որ միտումը շարունակվում է նաև այսօր, ապա մեր մատնանշած պատճառը, թերևս, ավելի հիմնավոր կարող է բացատրել երևույթի էությունը:
3. Ի դեպ, նախորդ միտման մեկ այլ տարբերակ է զարգացող երկրների միջև խաչաձև ներդրումների առկայությունը: Մա հիմնականում կարող է բացատրվել տնտեսական զարգացման մակարդակների համադրելիության արդյունքում շուկայի գրավման փաստով: Այսպես՝ զարգացող երկրի տնտեսական սուբյեկտը մեկ այլ զարգացող երկրում ներդրում է կատարում, քանի որ կարող է ապահովել բավարար մրցունակություն տվյալ շուկայում՝ միաժամանակ լուծելով շուկայի մոտեցման խնդիրը: Երևույթը հատկապես արդիական է մեծ ներքին սպառման շուկա ունեցող երկրների դեպքում, ինչպիսիք են, օրինակ, Հնդկաստանը, Իրանը և այլն:


Անդրադառնանք նաև այն հարցին, թե ինչ փոփոխությունների են ենթարկվել օտարերկրյա ներդրումների իրականացման օրինաչափությունները ժամանակի ընթացքում:

1. Ներդրումների իրականացման սկզբնական ժամանակաշրջանում դրանք հիմնականում իրականացվում էին արդեն իսկ գործող ձեռնարկության կապիտալում՝ պորտֆելային ներդրման տեսքով, որը կարող էր ապահովել նվազագույն ռիսկ ներդրողի համար: Հետագայում, սակայն, ներդրողները ձգտում էին ինքնուրույնության և կառավարման որոշումների կայացման արդյունքում շահույթի մեծացման, ինչն էլ հիմք դարձավ օտարերկրյա ներդրումների ծավալում պորտֆելային ներդրումների տեսակարար կշռի կրճատման և ուղղակի ներդրումների մեծացման համար⁴:
2. Հստակ ընդգծված փոփոխություն է արձանագրվել նաև ներդրումների իրականացման ճյուղային կառուցվածքում: Սկզբնական շրջանում արդյունահանող ճյուղեր ուղղվող ներդրումների տեսակարար կշիռը ներկայումս փոխվում է հոգուտ առավել բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղերի:

Համաձայն Համաշխարհային բանկի վիճակագրության՝ ՕՈՒՆ հոսքերի վիճակագրությունը ներկայացվում է սկսած 1970-ականներից: Հասկանալի է, որ այդ ժամանակից ի վեր ՕՈՒՆ հոսքերի դինամիկայի վրա ազդել են բազում գլոբալ գործընթացներ՝ պատերազմ, ճգնաժամ, հեղափոխություն, տնտեսակարգերի փլուզում, ինտեգրացիոն միավորումների ձևավորում և այլն: Այդուհանդերձ, մինչև 1985 թ. ՕՈՒՆ բաշխվածությունը տարբեր տարածաշրջանների միջև էապես չի տարբերվել: Ընդգծված տարբերություններն ի հայտ են եկել 1980-ականների երկրորդ կեսից սկսած: Դիտարկենք ՕՈՒՆ գուտ ներհոսքի համաշխարհային բաշխման միտումները՝ ըստ երկրների խմբի (գծապատկեր 1.1.1. և 1.1.2):

⁴ IMF, Foreign Direct Investment Trends and Statistics UNCTAD, Global Flows Of Foreign Direct Investment Exceeding Pre-Crisis Levels In 2011, Despite Turmoil In The Global Economy, No. 824, January 2012.

Դիտարկվող ժամանակահատվածի ողջ ընթացքում ներդրումային ներհոսքի ներգրավման տեսանկյունից առաջամարտիկ են Եվրոպա և Կենտրոնական Ասիա, Հյուսիսային Ամերիկա և Արևելյան Ասիա ու Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանները: Թերևս մինչև 1990 թ. ՕՈԻՆ զուտ ներհոսքի ավելի մեծ բաժինը հասնում էր Եվրոպա և Կենտրոնական Ասիա ու Հյուսիսային Ամերիկա տարածաշրջաններին: 1990-ից մինչև ասիական ճգնաժամի սկիզբը այս շարքերը համալրեցին նաև Արևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրները: 1997 թվականից ի վեր էապես մեծացավ Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանի ներդրումային ներհոսքի ծավալի խզումը մյուս տարածաշրջանների համեմատ, ինչն էլ փաստացի արձանագրում է զարգացած երկրների միջև փոխադարձ ներդրումների ծավալի աճի վերաբերյալ միտումը:



Գծապատկեր 1.1.1. ՕՈԻՆ զուտ ներհոսքի համաշխարհային բաշխումն ըստ տարածաշրջանների (1985-2019 թթ.)⁵

Հատկանշական է նաև, որ ի տարբերություն մյուս տարածաշրջանների՝ ասիական ճգնաժամից հետո որոշակի վայրիվերում-

⁵ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների, <https://databank.worldbank.org/>

ներով, սակայն աճի տեմպի պահպանմամբ ավելանում է Արևելյան Ասիա և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի ՕՈԻՆ զուտ ներհոսքը՝ ընդհուպ մինչև 2014 թվականից երբեմն առաջ անցնելով անգամ Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանից: Իսկ 2008 թվականից մինչ օրս տարածաշրջանը ներդրումային գրավչությամբ զբաղեցնում է երկրորդ տեղը՝ առաջ անցնելով Հյուսիսային Ամերիկայից:


Համանման պատկեր է նաև Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների ՕՈԻՆ ներհոսքի տեսանկյունից: Նշենք, որ ասիական ճգնաժամից հետո վերոնշյալ երկու տարածաշրջանների ՕՈԻՆ զուտ ներհոսքի հետագիծը զգալիորեն նման է:

2000 թ. բոլոր տարածաշրջաններում նվազեցին ՕՈԻՆ զուտ ներհոսքի ծավալները, ինչը բացատրվում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով, որն ընդգրկել էր համաշխարհային ֆինանսական կապիտալի երեք խոշորագույն կենտրոնները՝ ԱՄՆ, Եվրամիություն, Ճապոնիա: Ճգնաժամի հետևանքով առաջացած տատանումները բնականաբար բացասական ազդեցություն ունեցան ՎԱԿ-երի կողմից կատարվող ներդրումների վրա, ինչն էլ ավելի մեծացրեց ՕՈԻՆ ներհոսքի նվազման տեմպը: Այդուհանդերձ, ՕՈԻՆ ներհոսքի ներգրավման տեսանկյունից գրեթե միշտ միանձնյա առաջատարը Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանն էր, որտեղ ՕՈԻՆ զուտ ներհոսքի ամենաբարձր ռեկորդային ցուցանիշն արձանագրվել է 2007 թ., որը, սակայն, հետագա ճգնաժամի արդյունքում սրընթաց անկում ապրեց:

Ճգնաժամից հետո ՕՈԻՆ բաշխման վայրիվերումները կապված են այս կամ այն երկրի և տարածաշրջանի առողջացման յուրահատկությունների հետ:

Հաջորդ մեծ ցնցումը արձանագրվեց 2016-2018 թթ., երբ Էսպես կրճատվեց Եվրոպա և Կենտրոնական Ասիա տարածաշրջանի ՕՈԻՆ զուտ ներհոսքը: Սա հիմնականում պայմանավորված էր զարգացած երկրների զգալի մասում օրենսդրական փոփոխություններով, որոնք առնչվում էին շահույթի հայրենադարձությա-

նը: Տվյալ տարածաշրջանի համար այս անկումը հաճախ համեմատում են 2007-2008 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում ՕՌՆ ներհոսքի նվազման հետ:



Գծապատկեր 1.1.2. ՕՌՆ գուտ ներհոսքի բաշխումը երկրների միջև՝ ըստ եկամտային խմբի (1985-2019 թթ.)⁶

Գծապատկեր 1.1.2-ը գալիս է ապացուցելու մինչ այս առաջ քաշված բոլոր վարկածները: Նախ և առաջ գծապատկերից երեվում է, որ ՕՌՆ գուտ ներհոսքի համաշխարհային միտումը և բարձր եկամտով երկրների դինամիկան գրեթե նույն հետագիծն ունեն: Այսինքն՝ բարձր եկամտով երկրների ՕՌՆ ներհոսքը կազմում է համաշխարհային ՕՌՆ ներհոսքի զգալի մասը և էական ազդեցություն ունի ընդհանուր պատկերի նկարագրման

⁶ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների, <https://databank.worldbank.org/>

պարագայում: Իսկ մյուս երկրների խմբերի միջև ՕՈԻՆ գուտ ներհոսքի բաշխումն ուղիղ համեմատական է եկամտի մեծությանը. որքան ցածր է երկրների խմբի եկամուտը, այնքան փոքր է ՕՈԻՆ գուտ ներհոսքի ծավալը:

Այսպիսով, վերլուծության արդյունքում կարող ենք առաջ քաշել մի շատ կարևոր վարկած. օտարերկրյա ներդրումները էապես կախված են երկրի զարգացման աստիճանից և էապես ազդում են երկրի զարգացման մակարդակի վրա: Այս վարկածների բազմագործոն ստուգմանն էլ կանդրադառնանք աշխատանքի հետագա շարադրանքում:


1.2. ՀՀ-ում ներդրումների քննական վերլուծություն

Օտարերկրյա ուղղակի ներդրումները մեծ դեր և նշանակություն ունեն ինչպես յուրաքանչյուր երկրի, այնպես էլ ՀՀ տնտեսության զարգացման գործում: Յուրաքանչյուր երկրի գերխնդիրներից մեկը հանդիսանում է ներդրումների խթանման ճիշտ ռազմավարության մշակումը և իրականացումը: Ներդրումների ծավալի ավելացումը հանգեցնում է զբաղվածության, ինչպես նաև արտադրության և եկամուտների աճին և դրա հետ մեկտեղ՝ գործազրկության և աղքատության մակարդակի կրճատմանը: Ներդրումների խթանման արդյունավետ ռազմավարության մշակումը ՀՀ տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկն է: Ճիշտ և մտածված քաղաքականության շնորհիվ հնարավոր կլինի տեղական և օտարերկրյա ներդրողների համար ապահովել բարենպաստ ներդրումային միջավայր, ինչն էլ կնպաստի ներդրումների ծավալների ավելացմանը:

Հայաստանի Հանրապետությունը ներդրումային ոլորտում իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն, այսինքն՝ առաջնորդվում է ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և

միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:

2000-2018 թթ. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը կազմել է 5684217.5 հազար ԱՄՆ դոլար⁷: Ընդ որում՝ դիտարկվող ժամանակաշրջանում ամենամեծ ներհոսքը գրանցվել է 2008 թ.՝ կազմելով 1000911.2 հազար ԱՄՆ դոլար, իսկ ամենափոքր ներհոսքը՝ 2001 թ.՝ 75859 հազար ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.1):



Գծապատկեր 1.2.1. ՀՀ ՕՈՒՆ դինամիկան 2000-2018 թթ. (հազար ԱՄՆ դոլար)


Կարելի է արձանագրել, որ մինչև 2000 թ. ՀՀ ներդրումային գրավչությունը բավականին ցածր է եղել, ինչը պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզումից հետո սկիզբ առած ազատական բարեփոխումների հարուցած խնդիրներով, պատերազմական իրավիճակով և մի շարք այլ հանգամանքներով: 2000-ականների սկզբին պատկերը աստիճանաբար փոխվեց, և ներդրումների ծավալները սկսեցին դինամիկորեն աճել մինչև 2008 թ. (գծապատկեր 1.2.1): Մասնավորապես՝ 2008 թ. ՀՀ ՕՈՒՆ ծավալները 2000 թ. համեմատ ավելացել են շուրջ ութ անգամ՝ 120060.1 հազ. ԱՄՆ դոլարից 2008 թ. հասնելով 1000911.2 հազ. ԱՄՆ դոլարի: Սակայն 2008

⁷ Այս ենթագլխում ներկայացվող բոլոր վիճակագրական տվյալները ներկայացված են՝ համաձայն ՀՀ ՎԿ պաշտոնական տվյալների՝ <https://www.armstat.am>

թվականից հետո կրկին ի հայտ եկան բացասական միտումներ (գծապատկեր 1.2.1):

Հետճգնաժամային ժամանակահատվածում արտաքին ներդրումների ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2016 թ.՝ 130445.9 հազ. ԱՄՆ դոլար, ինչը շուրջ յոթ անգամ փոքր է 2008 թ. ցուցանիշից: Պետք է փաստել, որ 2017-2018 թթ. կրկին նկատվել են ՕՈՒՆ ծավալների աճի միտումներ (գծապատկեր 1.2.1): Մասնավորապես՝ 2017 թ. ՀՀ տնտեսության մեջ ՕՈՒՆ ծավալը կազմել է 192757.2 հազ. ԱՄՆ դոլար, ինչը 62311 հազ. ԱՄՆ դոլարով կամ 32.3 %-ով ավել է 2016 թ. ցուցանիշից, իսկ 2018 թ.՝ 231615.9 հազ. ԱՄՆ դոլար, ինչը 38858.7 հազ. ԱՄՆ դոլարով կամ 16.8 %-ով ավել է 2017 թ. ցուցանիշից:


ՀՀ տնտեսության մեջ իրականացված ՕՈՒՆ համեմատական վերլուծությունը 2000 թ., 2008 թ. և 2018 թ. ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում 5 %-ից ավելի մասնաբաժին ունեցած ներդրող երկրների և ՕՈՒՆ ընդհանուր ծավալի 5 %-ից ավելի ներդրում ներգրաված ոլորտների վերաբերյալ ցույց է տալիս, որ նշված տարիներին ՀՀ խոշորագույն ներդրողը եղել է Ռուսաստանի Դաշնությունը, իսկ ամենագրավիչ ներդրումային ոլորտը՝ «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտը: Մասնավորապես՝ 2000 թ. ՀՀ ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում Ռուսաստանի մասնաբաժինը կազմել է 35.92 % կամ բացարձակ արտահայտությամբ՝ 43127.6 հազ. ԱՄՆ դոլար: Այդ ներդրումների զգալի մասնաբաժինը ՌԴ-ն իրականացրել է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերի վրա: Նշանակալի է եղել նաև Հունաստանի մասնաբաժինը՝ 32.34 % կամ 38835 հազ. ԱՄՆ դոլար: Հունաստանից եկած ներդրումների առյուծի բաժինը հունական ՕԹԵ ընկերությունը ուղղել է ՀՀ կապի համակարգի նորացման և արդիականացման ծրագրերի իրականացմանը: Այդ ժամանակահատվածում նշանակալի ներդրումներ են եկել նաև Կանադայից՝ 8.99 % կամ 10803.5 հազ. ԱՄՆ դոլար և Ամերիկայի Միացյալ Նահանգներից՝ 6.26 % կամ 7511.1 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.2):



Գծապատկեր 1.2.2. 2000 թ. ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքում 5 %-ից ավելի տեսակարար կշիռ ունեցած երկրները (%)


2000 թ. ներդրումների գերակշիռ մասն ուղղվել է դեպի «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտ: Մասնավորապես՝ այս ոլորտի մասնաբաժինը ներգրավված ներդրումների կառուցվածքում կազմել է 34.98 % կամ 42000 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.3): Երկրորդ տեղում եղել է «հեռահաղորդակցություն» ոլորտը՝ 31.2 % կամ 37415 հազ. ԱՄՆ դոլար: Առաջատար ոլորտներ են եղել նաև «մեծածախ առևտուր և առևտուր գործակալների միջոցով, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլետների առևտրից» և «սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն» ոլորտները, որոնց բաժին է ընկել համապատասխանաբար, 9 % և 6.5 % կամ 10811.2 հազ. ԱՄՆ դոլար և 7793.3 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.3):⁸

⁸ Саргсян Л. Н., Маргарян С. А., Анализ динамики ПИИ Армении в 2000-2018 гг., “Современная экономика: актуальные вопросы, достижения и инновации”: сб. статей XXXII Международной научно-прак. конф., МЦНС “Наука и просвещение”, Пенза, ноябрь, 2019 г., стр. 88-92 <https://naukaip.ru/wp-content/uploads/2019/11/MK-656.pdf>



Գծապատկեր 1.2.3. 2000 թ. 5 %-ից բարձր տեսակարար կշիռ ունեցող ՕՈՒՆ ներգրավված ոլորտները (%)

2008 թ. ամենախոշոր ներդրողը կրկին եղել է Ռուսաստանը՝ 71.38 % կամ 714508.8 հազ. ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ 2008 թ. 2000 թ. համեմատ այս երկրի մասնաբաժինն ավելացել է 35.46 %-ով կամ 671381.2 հազ. ԱՄՆ դոլարով: Առաջատար ներդրողներ են եղել Արգենտինան՝ 8.75 % կամ 87666.8 հազ. ԱՄՆ դոլար և Ֆրանսիան՝ 8.36 % կամ 83756 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.4):




Գծապատկեր 1.2.4. 2008 թ. ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքում 5 %-ից ավելի տեսակարար կշիռ ունեցած երկրները (%)

Այդ ժամանակահատվածում արգենտինական ծագման ներդրումների հիմնական հասցեատերը հայազգի գործարար Էդուարդո Էոնեկյանի ներդրումներն են ՀՀ օդային հաղորդակցության («Զվարթնոց» օդանավակայան) և գյուղատնտեսության ոլորտներում:


Հետաքրքրական է, որ 2000 թ. խոշորագույն ներդրողներ հանդիսացող Կանադյան և Հունաստանը 2008 թ. Հայաստանում ՕՈՒՆ չեն իրականացրել, իսկ ԱՄՆ մասնաբաժինը ՀՀ ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում կազմել է ընդամենը 1.8 %, այսինքն՝ 2000 թ. համեմատ կրճատվել է 4.5 %-ով:

Ամենաշատ ներդրումներ ներգրաված ոլորտը ինչպես 2000 թ., այնպես էլ 2008 թ. եղել է «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտը, որին բաժին է ընկել ընդհանուր ՕՈՒՆ 47.6 %-ը կամ 476278.9 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.5). 2000 թ. համեմատ աճը կազմել է 12.6 % կամ 434278.9 հազ. ԱՄՆ դոլար: Երկրորդ տեղում եղել է «հեռահաղորդակցություն» ոլորտը՝ 15.8 % կամ 157838.4 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.5): Չնայած որ այս ոլորտը առաջատարների շարքում է եղել, այդուհանդերձ 2000 թ. համեմատ 2008 թ. մասնաբաժինը գրեթե կրկնակի կրճարվել է (15.4 %):



Գծապատկեր 1.2.5. 2008 թ. 5 %-ից բարձր տեսակարար կշիռ ունեցող ՕՈՒՆ ներգրաված ոլորտները (%)


Զգալի ծավալի ներդրումներ ուղղվել են նաև տրանսպորտային ենթակառուցվածքների ոլորտ, մասնավորապես՝ «ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով» և «օդային տրանսպորտի գործունեություն» ոլորտներ: Սրանց բաժին է ընկել ընդհանուր ՕՈՒՆ համապատասխանաբար 13.6 % և 5.4 % կամ 136330 հազ. ԱՄՆ դոլար և 53747.6 հազ. ԱՄՆ դոլար (զճապատկեր 1.2.5): 2008 թ. «սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն» և «մեծածախ առևտուր և առևտուր գործակալների միջոցով, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլետների առևտրից» ոլորտների ներգրավված ՕՈՒՆ չեն գերազանցել 5 %-ը: Մասնավորապես՝ «սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն» ոլորտին բաժին է ընկել 2.5 % կամ 25381.8 հազ. ԱՄՆ դոլար (այդ թվում՝ սննդամթերքի արտադրությանը՝ 0.1 % կամ 1054.6 հազ. ԱՄՆ դոլար, իսկ խմիչքների արտադրությանը՝ 2.4 % կամ 24327.2 հազ. ԱՄՆ դոլար): «Մեծածախ առևտուր և առևտուր գործակալների միջոցով, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլետների առևտրից» ոլորտի մասնաբաժինը կազմել է ընդամենը 0.06 % կամ 639.1 հազ. ԱՄՆ դոլար:



Գճապատկեր 1.2.6. 2008 թ. ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքում 5 %-ից ավելի տեսակարար կշիռ ունեցած երկրները (%)

Փաստենք, որ 2018 թ. ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքում Ռուսաստանը պահպանել է իր առաջատարի դիրքը՝ 53.8 % կամ 124625.9 հազ. ԱՄՆ դոլար ցուցանիշով (գծապատկեր 1.2.6), չնայած որ 2008 թ. համեմատ այս երկրի մասնաբաժինը կրճատվել 17.58 %-ով կամ 589882.9 հազ. ԱՄՆ դոլարով: 2018 թ. ՀՀ ՕՈՒՆ նշանակալի են եղել օֆշորային գոտի հանդիսացող Ջերսի կղզու կողմից իրականացված ներդրումները՝ ՕՈՒՆ 18.45 % կամ 42732.9 հազար ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.6): Ընդ որում՝ այս կղզու ներդրումների հիմնական մասն ուղղվել է հանքագործական ոլորտ: ՕՈՒՆ 13.94 %-ը կամ 32302.9 հազ. ԱՄՆ դոլարը ներդրվել է Գերմանիայի կողմից: 2008 թ. խոշոր ներդրողներ Արգենտինայի և Ֆրանսիայի մասնաբաժինները 2018 թ. չեն գերազանցել 5 %-ը և կազմել են համապատասխանաբար 2.3 % և 3.8 %:


ՕՈՒՆ ներգրավման ծավալով ինչպես 2000 և 2008 թթ., այնպես էլ 2018 թ. առաջատար ոլորտը եղել է «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտը՝ 42.8 % կամ 99105.2 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.7):



Գծապատկեր 1.2.7. 2018 թ. 5 %-ից բարձր տեսակարար կշիռ ունեցող ՕՈՒՆ ներգրավված ոլորտները (%)

2018 թ. օտարերկրյա ներդրողների համար բավականին գրավիչ են եղել «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ձյուղեր» և «հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» ոլորտները՝ համապատասխանաբար 9.92 % կամ 22979.3 հազ. ԱՄՆ դոլար և 17.3 % կամ 40177.4 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.7): «Անշարժ գույքի հետ կապված գործունեություն» ոլորտում կատարված ներդրումները կազմել են 12.1 % կամ 28108.1 հազ. ԱՄՆ դոլար, իսկ «հիմնային մետաղների արտադրություն» ոլորտում՝ 6 % կամ 13949.5 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.7): 2000 և 2008 թթ. առաջատար համարվող ոլորտում 2018 թ. ներդրումները կազմել են ընդամենը 1 % կամ 2356.7 հազ. ԱՄՆ դոլար:

ՀՀ ՕՈԻՆ կառուցվածքում 5 %-ից ավելի տեսակարար կշիռ ունեցող երկրների կողմից 2000-2018 թթ իրականացված ՕՈԻՆ դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակաշրջանի ողջ ընթացքում Ռուսաստանը եղել է Հայաստանում ՕՈԻՆ իրականացնող առաջատար երկիրը (գծապատկեր 1.2.8): Մասնավորապես՝ Ռուսաստանի մասնաբաժինը ՕՈԻՆ ընդհանուր կառուցվածքում գրեթե մշտապես բարձր է եղել 5 %-ից (սկսած 2000 թվականից, երբ Հայաստանի տնտեսությունը դեռևս անկայուն վիճակում էր): Այս երկրի կողմից ամենաշատ ՕՈԻՆ գրանցվել է 2008 թ.՝ 714508.8 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8), իսկ երկրի մասնաբաժինը ՀՀ իրականացված ՕՈԻՆ ընդհանուր կազմում եղել է 71.4 %: 2009-2010 թթ. ներդրումները նվազել են՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով: 2010 թ. Ռուսաստանը ՀՀ տնտեսությունում իրականացրել է ընդամենը 194539.8 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈԻՆ, ինչը 2008 թ. ՕՈԻՆ համեմատ պակաս է 519969 հազ. ԱՄՆ դոլարով (իսկ երկրի մասնաբաժինը 2008 թ. համեմատ կրճատվել է 40.3 %-ով): 2011 թ. 2010 թ. համեմատ գրանցվել է ներդրումային ծավալների աճ 42.5 %-ով (338164.3 հազ. ԱՄՆ դոլար կամ 53.6 %): 2012 թ. ռուսական ՕՈԻՆ կրկին նվազել են (88277.9 հազ. ԱՄՆ դոլար, մասնաբաժինը՝ 15.6 %, նախորդ տարվա համեմատ՝ -38 %), որից հետո մինչև 2016 թ. տատանումները փոքր են եղել:



Գծապատկեր 1.2.8. ՀՀ ՕՈՒՆ 5 %-ից ավելի տեսակարար կշիռ ունեցող երկրների կողմից իրականացված ներդրումների դինամիկան 2000-2018 թթ. (հազ. ԱՄՆ դոլար)

2016-2017 թթ. գրանցվել է ամենամեծ անկումը: Մասնավորապես՝ 2016 թ. ներդրումային սալդոն կազմել է -54714.9 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2017 թ.՝ -25011.6 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ տեղի է ունեցել կապիտալի զուտ արտահոսք (գծապատկեր 1.2.8): 2018 թ. նկատվել է ռուսաստանյան ներդրումների ծավալների աճ՝ 124625.9 հազ. ԱՄՆ դոլար կամ 53.8 % (գծապատկեր 1.2.8):

Ռուսաստանը Հայաստանում ներդրումներ է իրականացնում տարբեր ոլորտներում, ինչպիսիք են «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում», «հեռահաղորդակցություն», «մեծածախ առևտուր և առևտուր գործակալների միջոցով, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլետների առևտրից», «ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով» և մի շարք այլ ոլորտներ: 2008 թ. «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում Ռուսաստանը իրականացրել է 476278.9 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում (ընդ որում՝ ՀՀ այս ոլորտում 2008 թ. ներդրումներ իրականացրել է միայն Ռուսաստանը): Սկսած 2009 թվականից մինչև 2018 թ. այս ոլորտում Ռուսաստանի իրականացրած ՕՈՒՆ շարունակաբար նվազել են՝ 2010 թ. կազմելով 96541.8 հազ. ԱՄՆ

դուլար, 2014 թ.՝ 83877.4 հազ. ԱՄՆ դուլար, 2016-2017 թթ. գրանցվել է ներդրումային բացասական սալդո (համապատասխանաբար - 22348.6 հազ. ԱՄՆ դուլար և -32332.7 հազ. ԱՄՆ դուլար), իսկ 2018 թ. գրանցվել է աճի միտում՝ 106299.8 հազ. ԱՄՆ դուլար:

Կարելի է ասել, որ Ռուսաստանի համար Հայաստանում ներդրումային գրավիչ ոլորտ է նաև «հեռահաղորդակցություն» ոլորտը: Այս ոլորտում իրականացված ներդրումների ծավալում Ռուսաստանը գրեթե մշտապես առաջատարների շարքում է եղել (հատկապես մինչև 2008 թ.). բացառություն են կազմում 2017 և 2018 թթ., երբ գրանցվել է բացասական ներդրումային սալդո (համապատասխանաբար -3414.1 հազ. ԱՄՆ դուլար և -2521.9 հազ. ԱՄՆ դուլար): 2007 թ. «հեռահաղորդակցություն» ոլորտում Ռուսաստանի իրականացրած ներդրումները կազմել են 67129.4 հազ. ԱՄՆ դուլար, ինչը կազմել է այս ոլորտում իրականացված ներդրումների 44.9 %-ը: 2008 թ. ներդրումները կազմել են 82310.9 հազ. ԱՄՆ դուլար, և Ռուսաստանի մասնաբաժինը ավելացել է 7.2 %-ով՝ կազմելով 52.1 %: Սակայն սկսած 2010 թվականից ռուսական ներդրումների հոսքը դեպի «հեռահաղորդակցություն» ոլորտ աստիճանաբար նվազել է: Օրինակ՝ 2014 թ. ռուսական ներդրումները կազմել են 14395.3 հազ. ԱՄՆ դուլար, 2016 թ.՝ 8263.8 հազ. ԱՄՆ դուլար, իսկ 2016-2017 թթ. արդեն գրացվել է ներդրումային բացասական սալդո:

Ռուսական ՕՈՒՆ հոսքերը մեծ են եղել նաև դեպի «ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով» ոլորտ: Ընդ որում՝ այս ոլորտում Ռուսաստանն ունի ներդրումային մենաշնորհ: 2008 թ. ռուսական ՕՈՒՆ ծավալը կազմել է 136330 հազ. ԱՄՆ դուլար, իսկ 2009 թ. 2008 թ. համեմատ ծավալներն աճել են 8.4 %-ով և կազմել են 148800 հազ. ԱՄՆ դուլար, սակայն 2010 թ. դրանք կտրուկ նվազել են՝ 37857.6 հազ. ԱՄՆ դուլար (կրճատումը կազմել է 74.6 %): Նվազման միտումը որոշակի տատանումներով պահպանվել է մինչև 2018 թ.:

2000-2018 թթ. Ռուսաստանը ՕՈՒՆ է իրականացրել նաև այնպիսի ոլորտներում ինչպիսիք են «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր», «հան-

քաղորդական արդյունաբերության հարակից գործունեություն», «էլեկտրական սարքավորանքի արտադրություն», «շինարարություն» և մի շարք այլ ոլորտներ, սակայն դրանք եղել են փոքր ծավալներով և կրել են ոչ մշտական բնույթ:

2000-2003 թթ. Կանադան Հայաստանում մեծածավալ ՕՈՒՆ իրականացնող երկիր էր (զծապատկեր 1.2.8): 2000 թ., 2002 թ. և 2003 թ. Կանադայի մասնաբաժինը նույնիսկ գերազանցել է 5 %-ը: Մասնավորապես՝ 2000 թ. Կանադային բաժին է ընկել ընդհանուր ՕՈՒՆ 9 %-ը (10803.5 հազ. ԱՄՆ դոլար), չնայած 2001 թ. կտրուկ անկմանը (ընդամենը 650.8 հազ. ԱՄՆ դոլար, ընդհանուր ՕՈՒՆ մեջ՝ 0.9 %)՝ 2002 թ. այս երկրի մասնաբաժինը կազմել է 35.6 % (50133.4 հազ. ԱՄՆ դոլար), սակայն 2003 թ. կրկին՝ 7.4 % (11291 հազ. ԱՄՆ դոլար): 2004-2005 թթ. կանադական ՕՈՒՆ կրկին կրճատվել են (զծապատկեր 1.2.8). 2005 թ. ՕՈՒՆ կազմել են 881.6 հազ. ԱՄՆ դոլար կամ 0.3 %: 2006 թ. այս երկրի ներդրումները Հայաստանում կրկին աճ են գրանցել (17997.2 հազ. ԱՄՆ դոլար), սակայն պետք է փաստել, որ սկսած 2007 թվականից մինչև 2018 թ. Կանադան ՀՀ տնտեսության մեջ իրականացրել է չնչին ծավալներով ՕՈՒՆ, իսկ 2016 թ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո (որոշակի տարիների ներդրումները նույնիսկ բացակայել են, զծապատկեր 1.2.8):

2000-2006 թթ. Հայաստանում ՕՈՒՆ իրականացնող առաջատար երկրներից մեկը Հունաստանն էր, սակայն 2007-2018 թթ. հունական ՕՈՒՆ հոսքը դեպի ՀՀ դադարել է (զծապատկեր 1.2.8): Միայն 2016 թ. գրանցվել է 0.6 հազ. ԱՄՆ դոլար ՕՈՒՆ՝ «ֆինանսական միջնորդություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից» ոլորտում: 2000-2006 թթ. ամենամեծ ծավալով ՕՈՒՆ գրանցվել են 2005 թ.՝ 49050.3 հազ. ԱՄՆ դոլար (17.8 %), իսկ ամենափոքր ծավալով ՕՈՒՆ՝ 2002 թ.՝ 9314 հազ. ԱՄՆ դոլար (6.6 %):

2000-2018 թթ. ՀՀ խոշոր ներդրումային գործընկերներից է եղել նաև Արգենտինան: Չնայած 2000-2002 թթ. ՕՈՒՆ բացակայել են, այդուհանդերձ սկսած 2003 թվականից մինչև 2008 թ. արգենտինական ՕՈՒՆ Հայաստանում շարունակաբար աճել են

(գծապատկեր 1.2.8): 2008 թվականից հետո Արգենտինայի կողմից իրականացվող ծավալները որոշակիորեն նվազել են (գծապատկեր 1.2.8), սակայն երկիրը շարունակել է մնալ ՀՀ ՕՌԻՆ իրականացնող առաջատար երկրների շարքում: Մասնավորապես՝ Արգենտինայի կողմից իրականացվող ՕՌԻՆ դիտարկվող ժամանակահատվածում հիմնականում գերազանցել են ՀՀ իրականացված ընդհանուր ՕՌԻՆ 5 %-ը⁹: Եթե 2003 թ. արգենտինական ՕՌԻՆ կազմել են 3627.4 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ Արգենտինային բաժին է ընկել ընդհանուր ՕՌԻՆ 2.4 %-ը, ապա արդեն 2004 թ. ՕՌԻՆ կազմել են 24401 հազ. ԱՄՆ դոլար, և ընդհանուր ՕՌԻՆ կառուցվածքում երկրի մասնաբաժինը կազմել է 10.8 % (նախորդ տարվա համեմատ՝ +8.4 %): Ամենամեծ ծավալով ՕՌԻՆ Հայաստանում Արգենտինան իրականացրել է 2008 թ.՝ 87666.8 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8) կամ 8.8 %¹⁰: Վերջին տարիներին՝ 2017-2018 թթ., սակայն, դրանց ծավալները նվազել են (գծապատկեր 1.2.8): Եթե 2015 թ. Արգենտինայի մասնաբաժինը կազմել է 18 % (26164.9 հազ. ԱՄՆ դոլար), ապա 2018 թ. այն կազմել է 2.3 % (5363.1 հազ. ԱՄՆ դոլար)¹¹:

Արգենտինայի համար Հայաստանում ներդրումային հիմնական գրավիչ ոլորտը եղել է «բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ» ոլորտը¹²: Սակայն այս ոլորտ ուղղվող ներդրումների ծավալները 2000-2018 թթ. ընթացքում անընդհատ տատանվել են: 2008 թ. այս ոլորտում Արգենտինայի իրականացրած ՕՌԻՆ կազմել են 22923.6 հազ. ԱՄՆ դոլար: 2009-2011 թթ. ՕՌԻՆ աստիճանաբար նվազել են. մասնավորապես՝ 2011 թ. ներդրումները կազմել են 2718.2 հազ. ԱՄՆ դոլար¹³, այսինքն՝ 2008 թ. համեմատ դրանք նվազել են

⁹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰ Հաշվարկը կատարվել է հեղինակների կողմից՝ <https://www.armstat.am/am/?nid=14> կայքում գետեղված տվյալների հիման վրա:

¹¹ Հաշվարկը կատարվել է հեղինակների կողմից՝ <https://www.armstat.am/am/?nid=14> կայքում գետեղված տվյալների հիման վրա:

¹² <https://www.armstat.am/am/?nid=14>

¹³ Տե՛ս նույն տեղում:

20205.4 հազ. ԱՄՆ դոլարով¹⁴: 2012 թ. գրանցվել է ՕՌԻՆ որոշակի աճ՝ 33075 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ +30356.8 հազ. ԱՄՆ դոլար), սակայն 2013 թ. կրկին նկատվել է նվազման միտում՝ նախորդ տարվա համեմատ 25904 հազ. ԱՄՆ դոլարով (7171 հազ. ԱՄՆ դոլար): 2014-2015 թթ. գրանցվել է որոշակի աճ: 2015 թ. գրանցվել է ՕՌԻՆ ամենամեծ ներդրումային հոսքը՝ 26165 հազ. ԱՄՆ դոլար, սակայն հետագա տարիներին ներդրումները կրկին կրճատվեցին՝ 2018 թ. հասնելով 5363.1 հազ. ԱՄՆ դոլարի (2015 թ. համեմատ՝ -20801.9 հազ. ԱՄՆ դոլար):

2007-2013 թթ. Արգենտինյան նշանակալի ՕՌԻՆ է իրականացրել «օդային տրանսպորտի գործունեություն» ոլորտում: Մասնավորապես՝ 2008 թ. ՕՌԻՆ կազմել են 53646.4 հազ. ԱՄՆ դոլար ու ծախսվել «Զվարթնոց» օդանավակայանի նոր մասնաշենքի կառուցման վրա: Սկսած 2009 թվականից՝ այդ ներդրումների ծավալը աստիճանաբար կրճատվել է և 2013 թ. կազմել 4869.4 հազ. ԱՄՆ դոլար՝ 2008 թ. համեմատ կրճատվելով 48777 հազ. ԱՄՆ դոլարով: 2014 թ. ՕՌԻՆ կազմել են ընդամենը 235 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2013 թ. համեմատ դրանք կրճատվել են 4634.4 հազ. ԱՄՆ դոլարով: Սկսած 2015 թվականից մինչև 2018 թ. Արգենտինյան այս ոլորտում ՕՌԻՆ չի իրականացրել:

2007-2009 թթ. Արգենտինյան ՕՌԻՆ է իրականացրել նաև «պահեստավորում և տրանսպորտային օժանդակ գործունեություն» ոլորտում՝ 2007 թ. 2818.2 հազ. ԱՄՆ դոլար, 2008 թ. 11096.8 հազ. ԱՄՆ դոլար և 2009 թ. 10373.9 հազ. ԱՄՆ դոլարի չափով, սակայն 2010-2018 թթ. այս ոլորտում երկիրը ներդրումներ չի իրականացրել: 2012 թվականից սկսած՝ արգենտինական ՕՌԻՆ որոշակի մաս ուղղվել է «շինարարություն» ոլորտ: Այստեղ ներդրումները նշանակալի են եղել 2014 թ.՝ 3920.2 հազ. ԱՄՆ դոլար: 2015-2018 թթ. այս ոլորտում ՕՌԻՆ չեն եղել:

Ամերիկայի Միացյալ Նահանգները մեծածավալ ՕՌԻՆ Հայաստանում իրականացրել է 2000-2007 թթ. (գծապատկեր 1.2.8):

¹⁴ Հաշվարկը կատարվել է հեղինակների կողմից՝ <https://www.armstat.am/> [am/?nid=14](https://www.armstat.am/?nid=14) կայքում գետեղված տվյալների հիման վրա:

Նշված ժամանակահատվածում (բացառությամբ 2004 թ. և 2007 թ.) ԱՄՆ մասնաբաժինը ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում գերազանցել է 5 %-ի շեմը: Մասնավորապես՝ 2000 թ. ԱՄՆ կողմից իրականացված ՕՈՒՆ մասնաբաժինը կազմել է 6.3 % կամ 7511.1 հազ. ԱՄՆ դոլար: 2001 թ. ԱՄՆ մասնաբաժինը ՀՀ իրականացված ընդհանուր ՕՈՒՆ կազմում եղել է 23.7 % կամ 17941.3 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 17.4 % կամ 10430.2 հազ. ԱՄՆ դոլար: 2002-2004 թթ. ամերիկյան ՕՈՒՆ որոշակիորեն նվազել են (զծապատկեր 1.2.8): 2005-2007 թթ. դրանց ծավալները աճել են: Մասնավորապես՝ 2005 թ. գրանցվել են 13748 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ, իսկ ԱՄՆ մասնաբաժինը կազմել է կազմել է 5 %: 2006 թ. ԱՄՆ կողմից իրականացված ՕՈՒՆ կազմել են 24787.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 6.1 % (նախորդ տարվա համեմատ՝ +1.1 %), իսկ 2007 թ. ՕՈՒՆ դրամական արտահայտությամբ կազմել են 25734.8 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ +947 հազ. ԱՄՆ դոլար), և ԱՄՆ մասնաբաժինը կազմել է 4.4 %: Այսինքն՝ չնայած 2007 թ. ամերիկյան ՕՈՒՆ դրամական արտահայտությամբ աճել են, այդուհանդերձ ԱՄՆ մասնաբաժինը ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ մեջ տոկոսային արտահայտությամբ նախորդ տարվա համեմատ նվազել է 1.7 %-ով: 2008 թ. սկսած մինչև 2018 թ. ԱՄՆ կողմից իրականացված ներդրումների դինամիկան հիմնականում նվազման միտում է ունեցել: Ներդրումները նշանակալի են եղել 2011 թ. և 2015 թ. (զծապատկեր 1.2.8): 2011 թ. ՕՈՒՆ կազմել 3.7 % կամ 23226.6 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2015 թ. ԱՄՆ մասնաբաժինը կրկին գերազանցել է 5 %-ը (12 % կամ 17228.5 հազ. ԱՄՆ դոլար):

Հայաստանում ԱՄՆ ՕՈՒՆ է իրականացրել բազմաթիվ ոլորտներում: Հիմնական ուղղություններից է եղել «կացության կազմակերպում» ոլորտը: Այստեղ ԱՄՆ 2000-2018 թթ. իրականացրած ՕՈՒՆ դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ դիտարկվող ողջ ժամանակաշրջանում ներդրումային ծավալները անընդհատ տատանվել են: Եթե 2007 թ. ամերիկյան ՕՈՒՆ կազմել են 7342.0 հազ. ԱՄՆ դոլար, ապա 2010 թ. նվազելով հա-

սել են 85.6 հազ. ԱՄՆ դոլարի, այսինքն՝ կրճատվել են շուրջ 7256.4 հազ. ԱՄՆ դոլարով: Այնուհետև 2011 թ. ՕՈԻՆ կրկին ավելացել են՝ հասնելով 8795.3 հազ. ԱՄՆ դոլարի (նախորդ տարվա համեմատ՝ +8709.7 հազ. ԱՄՆ դոլար): Հաջորդ տարիներին այս ոլորտ ուղղվող ՕՈԻՆ նվազել են, և 2014-2016 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո: 2017-2018 թթ. կրկին նկատվել է որոշակի ներդրումային ակտիվություն (համապատասխանաբար 382 հազ. ԱՄՆ դոլար և 253 հազ. ԱՄՆ դոլար):

2000-2018 թթ. ողջ ընթացքում ԱՄՆ ներդրումներ է իրականացրել նաև «ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում» ոլորտում: Մակայն այստեղ իրականացված ՕՈԻՆ ծավալը շարունակաբար կրճատվել է: Ամենամեծ հոսքը գրանցվել է 2007 թ.՝ 5266.8 հազ. ԱՄՆ դոլար: 2010 թ. ՕՈԻՆ կազմել են 2794.5 հազ. ԱՄՆ դոլար (2007 թ. համեմատ՝ -2472.3 հազ. ԱՄՆ դոլար): 2018 թ. ամերիկյան ՕՈԻՆ այս ոլորտում արդեն կազմել են 1098 հազ. ԱՄՆ դոլար, ինչը 2010 թ. համեմատ 1696.5 հազ. ԱՄՆ դոլարով պակաս է:

ԱՄՆ աչքի է ընկել նաև 2007-2012 թթ. «գիտական հետազոտություններ և մշակումներ» ոլորտում իրականացված ՕՈԻՆ-ով: 2007 թ. դրանք կազմել են 4178.2 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2008 թ.՝ 5168.9 հազ. ԱՄՆ դոլար (+ 990.7 հազ. ԱՄՆ դոլար): Մակայն 2009 թվականից սկսած՝ ՕՈԻՆ այս ոլորտում սկսել են նվազել, իսկ 2013 թ. դրանք բացակայել են: 2014-2015 թթ. դրանք եղել են շատ չնչին ծավալով, 2017 թ. բացակայել են, իսկ 2018 թ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո:

ԱՄՆ փոքրածավալ և ոչ պարբերական բնույթի ներդրումներ է իրականացրել նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են «Էլեկտրական սարքավորանքի արտադրություն», «շինարարություն», «մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից», «մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից» ոլորտները և այլն:

2000-2018 թթ. ՀՀ-ում մեծածավալ ներդրումներ իրականացնող երկիր է համարվում նաև Ֆրանսիան: Ֆրանսիայի կողմից

իրականացվող ՕՈՒՆ ծավալները 2000-2001 թթ. փոքր են եղել. 2000 թ. դրանք կազմել են 3019 հազ. ԱՄՆ դոլար կամ ՀՀ ընդհանուր ներդրումների 2.5 %-ը, իսկ 2001 թ.՝ 2.3 հազ. ԱՄՆ դոլար կամ 0.003 %: Մակայն 2002 թ. Ֆրանսիայից ՕՈՒՆ ներհոսքի աճ է գրանցվել (գծապատկեր 1.2.8): 2006-2007 թթ. Ֆրանսիայի մասնաբաժինը ՀՀ ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում չի գերազանցել 5 %-ը: 2008-2012 թթ. որոշակի տատանումներով ֆրանսիական ՕՈՒՆ շարունակել են աճել, և Ֆրանսիայի մասնաբաժինը գերազանցել է 5 %-ը (գծապատկեր 1.2.8): 2008 թ. Ֆրանսիայի ՕՈՒՆ կազմել են 8.4% կամ 83756 հազ. ԱՄՆ դոլար, իսկ արդեն 2012 թ.՝ 40.6 % կամ 230429.5 հազ ԱՄՆ դոլար: Ընդ որում՝ 2012 թ. գրանցվել են Ֆրանսիայի կողմից իրականացված ամենամեծ ծավալի ՕՈՒՆ: 2013 թ. սկսած որոշակի տատանումներով նկատվել է ֆրանսիական ՕՈՒՆ նվազման միտում: Չնայած որ 2016 թ. ՕՈՒՆ 2012 թ. համեմատ կրճատվել են 35.2 %-ով, այդուհանդերձ ընդհանուր ՕՈՒՆ կառուցվածքում երկրի մասնաբաժինը գերազանցել է 5 %-ը և կազմել 5.4 % կամ 7046.6 հազ. ԱՄՆ դոլար: 2017-2018 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո (համապատասխանաբար -12612.8 հազ. ԱՄՆ դոլար և -8722.8 հազ. ԱՄՆ դոլար):

2000-2018 թթ. Ֆրանսիայի համար Հայաստանում ՕՈՒՆ իրականացման ամենագրավիչ ոլորտը եղել է «հեռահաղորդակցություն» ոլորտը: 2008 թ. այս ոլորտում Ֆրանսիայի իրականացրած ՕՈՒՆ կազմել են 64738.3 հազ. ԱՄՆ դոլար: 2009 թ. նախորդ տարվա համեմատ դրանք ավելացել են 104748.2 հազ. ԱՄՆ դոլարով՝ կազմելով 169486.5 հազ. ԱՄՆ դոլար: 2010-2011 թթ. ֆրանսիական ՕՈՒՆ նվազել են և կազմել համապատասխանաբար 125165.9 հազ. ԱՄՆ դոլար (2009 թ. համեմատ՝ -44320.6 հազ. ԱՄՆ դոլար) և 74990.2 հազ. ԱՄՆ դոլար (2010 թ. համեմատ՝ -50175.7 հազ. ԱՄՆ դոլար): 2012 թ. այս ոլորտում Ֆրանսիան իրականացրել է ամենամեծ ծավալով ՕՈՒՆ՝ 210886.8 հազ. ԱՄՆ դոլար: 2013-2015 թթ. կրկին գրանցվել է նվազման միտում. 2015 թ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո (-88935.3 հազ. ԱՄՆ դոլար),

իսկ 2016-2018 թթ. Ֆրանսիան ՀՀ այս ոլորտում ՕՈՒՆ չի իրականացրել:

Վերը նշված ժամանակաշրջանում նշանակալի են եղել նաև Ֆրանսիայի իրականացրած ներդրումները «սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն» ոլորտում՝ հատկապես խմիչքների արտադրության ոլորտում: 2007 թ. Ֆրանսիան «սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն» ոլորտում իրականացրել է 16844 հազ. ԱՄՆ դոլար ներդրում, որից 16838.0 հազ. ԱՄՆ դոլարը բաժին է ընկել խմիչքների արտադրությանը, իսկ 6 հազ. ԱՄՆ դոլարը՝ սննդամթերքի արտադրությանը: 2008 թ. ֆրանսիական ՕՈՒՆ այս ոլորտում կազմել են 17645.8 հազ. ԱՄՆ դոլար, ընդ որում՝ խմիչքների արտադրության ոլորտում իրականացվող ՕՈՒՆ նախորդ տարվա համեմատ ավելացել են 802 հազ. ԱՄՆ դոլարով և կազմել են 17640 հազ. ԱՄՆ դոլար, իսկ սննդամթերքի արտադրությանը բաժին ընկնող ՕՈՒՆ նախորդ տարվա համեմատ կրճատվել են 0.2 հազ. ԱՄՆ դոլարով և կազմել են 5.8 հազ. ԱՄՆ դոլար: 2009-2013 թթ. այս ոլորտ ուղղված ՕՈՒՆ ծավալներում չնայած գրանցվել են նաև որոշակի կրճատումներ, սակայն 2007-2008 թթ. համեմատ դրանք հիմնականում աճել են: 2009 թ. դրանք կազմել են 26011.7 հազ. ԱՄՆ դոլար (2008 թ. համեմատ՝ +8365.9 հազ. ԱՄՆ դոլար), այդ թվում՝ խմիչքների արտադրությանը՝ 26005 հազ. ԱՄՆ դոլար (2008 թ. համեմատ՝ +8365 հազ. ԱՄՆ դոլար), սննդամթերքի արտադրությանը՝ 6.7 հազ. ԱՄՆ դոլար (2008 թ. համեմատ՝ +0.9 հազ. ԱՄՆ դոլար): 2010 թ. 2009 թ. համեմատ Ֆրանսիայի կողմից իրականացված ՕՈՒՆ կրճատվել են 4390.4 հազ. ԱՄՆ դոլարով (ՕՈՒՆ կազմել են 21621.3 հազ. ԱՄՆ դոլար), ընդ որում՝ նվազել են խմիչքների արտադրության մեջ իրականացված ներդրումները (նախորդ տարվա համեմատ՝ -4390.5 հազ. ԱՄՆ դոլար՝ 21614.5 հազ. ԱՄՆ դոլար), իսկ սննդամթերքի արտադրությունում իրականացնող ներդրումները, ընդհակառակը, աճել են (նախորդ տարվա համեմատ՝ +0.1 հազ. ԱՄՆ դոլար՝ 6.8 հազ. ԱՄՆ դոլար):

2011 թ. ՕՈՒՆ նախորդ տարվա համեմատ ավելացել են և կազմել են 23952.4 հազ. ԱՄՆ դոլար (+2331.1 հազ. ԱՄՆ դոլար),

սակայն 2012 թ. կրկին կրճատվել են՝ կազմելով 19542.7 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ -4409.7 հազ. ԱՄՆ դոլար): 2010 թ. համեմատ 2011 թ. և 2012 թ. էական փոփոխության է ենթարկվել խմիչքների արտադրության մասնաբաժինը, մասնավորապես՝ այդ տարիներին խմիչքների արտադրությանը բաժին է ընկել համապատասխանաբար 4.4 հազ. ԱՄՆ դոլար և 4.7 հազ. ԱՄՆ դոլար: 2013 թ. ներդրումների ծավալը մոտավորապես վերադարձել է 2009 թ. ցուցանիշին՝ կազմելով 26406 հազ. ԱՄՆ դոլար, այդ թվում՝ խմիչքների արտադրություն՝ 26400 հազ. ԱՄՆ դոլար, սննդամթերքի արտադրություն՝ 6 հազ. ԱՄՆ դոլար: 2014-2018 թթ. Ֆրանսիան ներդրումներ է իրականացրել միայն խմիչքների արտադրության ոլորտում, ընդ որում՝ նշված ժամանակահատվածում ամենամեծ ծավալով ՕՈՒՆ իրականացվել են 2016 թ.՝ 12971.3 հազ. ԱՄՆ դոլարի չափով, իսկ ամենափոքր ծավալով ներդրումները՝ 2018 թ.՝ 3956 հազ. ԱՄՆ դոլարի չափով: 2017թ. Ֆրանսիան ՀՀ-ում որպես ներդրող գրանցել է բացասական ներդրումային սալը:

2000-2018 թթ. Ֆրանսիան փոքրածավալ ներդրումներ է իրականացրել նաև «մանածագործական արտադրատեսակների արտադրություն», «ջրի հավաքում, մշակում և բաշխում», «մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից», «կացության կազմակերպում», «զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ» ոլորտներում:

ՀՀ-ում հաջորդ խոշոր ՕՈՒՆ իրականացնող երկիրը Գերմանիան է: 2000-2003 թթ. գերմանական ՕՈՒՆ փոքր են եղել (զծապատկեր 1.2.8): Մասնավորապես՝ 2000 թ. դրանք կազմել են ՀՀ իրականացված ընդհանուր ՕՈՒՆ ընդամենը 0.01 %-ը կամ 12 հազ. ԱՄՆ դոլար: 2003 թ. դրանք որոշակի չափով աճել են, և երկրի մասնաբաժինը կազմել է 1.9 % կամ 1822 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2001 թ. համեմատ աճը կազմել է 1.89 % կամ 1810 հազ. ԱՄՆ դոլար: 2004-2007 թթ. Գերմանիայի կողմից իրականացված ներդրումները ավելացել են (զծապատկեր 1.2.8), և երկրի մասնա-

բաժինը Հայաստանի տնտեսության մեջ իրականացված ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում գերազանցել է 5 %-ը: 2004 թ. գերմանական ՕՈՒՆ մասնաբաժինը կազմել է 17.1 % կամ 38705.9 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8), այսինքն՝ 2003 թ. համեմատ աճը կազմել է 15.2 % կամ 36883.9 հազ. ԱՄՆ դոլար: 2005 թ. Գերմանիայի կողմից իրականացվող ներդրումները զգալիորեն աճել են՝ կազմելով 97354.4 հազ. ԱՄՆ դոլար կամ 35.4 % (գծապատկեր 1.2.8, նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 58648.5 հազ. ԱՄՆ դոլար կամ 20.2 %): 2006 թ. ներդրումները կրկին կրճատվել են՝ կազմելով 47815.9 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ -49538 հազ. ԱՄՆ դոլար, գծապատկեր 1.2.8), իսկ երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՈՒՆ կառուցվածքում եղել է 11.7 % (նախորդ տարվա համեմատ՝ -23.7 %): 2007 թ. գերմանական ՕՈՒՆ մասնաբաժինը ՀՀ իրականացված ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում եղել է 9.5 % (նախորդ տարվա համեմատ՝ -2.2 %) կամ 55251.9 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ +7436 հազ. ԱՄՆ դոլար):

Փաստորեն, չնայած որ 2007 թ. Գերմանիայի կողմից իրականացված ՕՈՒՆ դրամական արտահայտությամբ աճ են գրանցել, այդուհանդերձ երկրի մասնաբաժինը տոկոսային արտահայտությամբ կրճատվել է: 2008 թվականից սկսած գերմանական ՕՈՒՆ հիմնականում որոշակի տատանումներով նվազման միտում են ցուցաբերել: Միայն 2012 և 2014 թթ. նկատվել է ՕՈՒՆ որոշակի աճ՝ համապատասխանաբար՝ 48143.4 հազ. ԱՄՆ դոլար և 47641.9 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8):

Հայաստանում Գերմանիան ՕՈՒՆ մեծ մասը 2000-2018 թթ. ուղղել է «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» ոլորտ: 2007 թ. այս ոլորտում իրականացված գերմանական ՕՈՒՆ կազմել են 55251.9 հազ. ԱՄՆ դոլար: 2008-2010 թթ. դրանց ծավալները հիմնականում նվազել են՝ 2010 թ. կազմելով 21181.9 հազ. ԱՄՆ դոլար (2007 թ. համեմատ՝ -34070 հազ. ԱՄՆ դոլար): 2011-2012 թթ. կրկին աճ է գրանցվել. 2012 թ. գերմանական ՕՈՒՆ կազմել են 48123.1 հազ. ԱՄՆ դոլար (2010 թ. համեմատ՝ +26941.2 հազ. ԱՄՆ դոլար): 2013 թ.

ՕՈՒՆ նախորդ տարվա համեմատ գրեթե կրկնակի կրճատվել են և կազմել են 20122.6 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2014 թ. կրկին որոշակիորեն աճել են՝ 29574.2 հազ. ԱՄՆ դոլար: 2015-2016 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալոն: 2017-2018 թթ. Գերմանիայի կողմից իրականացվող ներդրումները կրկին աճ են գրանցել՝ 2018 թ. կազմելով 23000.2 հազ. ԱՄՆ դոլար:

Սկսած 2013 թվականից՝ Գերմանիան մեծամասշտաբ ներդրումներ է իրականացրել նաև «հիմնային մետաղների արտադրություն» ոլորտում: 2015 թ. այս ոլորտում Գերմանիան իրականացրել է ամենախոշոր ներդրումը՝ 31695.3 հազ. ԱՄՆ դոլարի չափով: 2016 թ. սկսած այս ոլորտ ուղղվող ներդրումները աստիճանաբար նվազել են՝ 2018 թ. կազմելով 8613.8 հազ. ԱՄՆ դոլար (2015 թ. համեմատ՝ -23081.5 հազ. ԱՄՆ դոլար): Գերմանիան որոշակի ներդրումներ է իրականացրել նաև «էլեկտրական սարքավորանքի արտադրություն», «մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից», «ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում» և մի շարք այլ ոլորտներում:

Հետաքրքիր է, որ 2016-2018 թթ. ՀՀ-ում ներդրումներ է իրականացրել Ջերսի օֆշորային կղզին: Այս օֆշորային գոտին ՕՈՒՆ է իրականացրել բացառապես «Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» ոլորտում: 2016 թ. Ջերսին այս ոլորտում իրականացրել է 21059.5 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ, 2017 թ. դրանք զգալիորեն ավելացել են՝ կազմելով 223509.8 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ +202450.3 հազ. ԱՄՆ դոլար):

2000-2001 թթ. Միացյալ Թագավորության կողմից ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ փոքր են եղել՝ համապատասխանաբար 516.1 հազ. ԱՄՆ դոլար և 1216.8 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8), և երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՈՒՆ մեջ կազմել է համապատասխանաբար 0.7 % և 1.6 %: 2002 թ. ՕՈՒՆ ծավալները կտրուկ աճել են՝ կազմելով 19259 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8) կամ 13.7 % (2001 թ. համեմատ՝ +18042.2 հազ.

ԱՄՆ դոլար կամ +12.1 %): 2003 թ. ՕՈԻՆ կրճատվել են՝ հասնելով 6414.6 հազ. ԱՄՆ դոլարի (գծապատկեր 1.2.8) կամ 4.2 %-ի (նախորդ տարվա համեմատ՝ -12844.4 հազ. ԱՄՆ դոլար կամ -9.5 %): 2004-2009 թթ. Միացյալ Թագավորության կողմից իրականացված ՕՈԻՆ շարունակել են նվազման միտում ցուցաբերել (գծապատկեր 1.2.8). 2009 թ. ՕՈԻՆ կրճատվել են մինչև 82.5 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրի մասնաբաժինը՝ 0.01 % (2002 թ. համեմատ՝ -19176.5 հազ. ԱՄՆ դոլար, իսկ մասնաբաժինը՝ -13.69 %): 2010-2014 թթ. Միացյալ Թագավորության կողմից իրականացվող ներդրումները որոշակի չափով աճել են (գծապատկեր 1.2.8). 2014 թ. 2009 թ. համեմատ ՕՈԻՆ ավելացել են 32376.5 հազ ԱՄՆ դոլարով և կազմել են 32459 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՈԻՆ կառուցվածքում 2009 թ. համեմատ ավելացել է 11.49 %-ով և կազմել է 11.5 %: 2015 թ. գրանցվել է բացասական ներդրումային սալոն, սակայն 2016 թ. կրկին կտրուկ աճ է գրանցվել (գծապատկեր 1.2.8). Միացյալ Թագավորության կողմից իրականացված ներդրումները հասել են 68324.5 հազ. ԱՄՆ դոլարի (գծապատկեր 1.2.8), իսկ երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՈԻՆ մեջ 2014 թ. համեմատ ավելացել է 23.9 %-ով՝ կազմելով 35.4 %: 2017-2018 թթ. կրկին նվազել են և 2018 թ. կազմել են 1544.1 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8), իսկ մասնաբաժինը ընդհանուր ՕՈԻՆ մեջ կազմել է 0.7 % (2016 թ. համեմատ՝ -66780.4 հազ. ԱՄՆ դոլար, մասնաբաժինը՝ -34.7 %):

2000-2018 թթ. Միացյալ Թագավորության համար Հայաստանում ՕՈԻՆ իրականացնելու գրավիչ ոլորտները անընդհատ փոփոխվել են: Պետք է փաստել, որ 2007-2013 թթ. Հայաստանում Միացյալ Թագավորությունը իրականացրել է փոքրածավալ և ոչ պարբերական ներդրումներ: Մասնավորապես՝ 2007-2011 թթ. ՕՈԻՆ հիմնական մասն ուղղվել է «մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից» ոլորտ. 2007 թ. այս ոլորտում ՕՈԻՆ կազմել են 4249 հազ. ԱՄՆ դոլար: 2008-2009 թթ. դրանք նվազել են, 2009 թ. ՕՈԻՆ ծավալը հասել է 67.6 հազ. ԱՄՆ դոլարի՝ 2007 թ. համեմատ կրճատվելով 4181.4 հազ. ԱՄՆ դոլարով: 2010-2011 թթ. դրանք կրկին կրճատվել են. 2011թ. ՕՈԻՆ

ծավալները այս ոլորտում հասել են 9010.2 հազ. ԱՄՆ դոլարի՝ 2009 թ. համեմատ աճելով 8942.6 հազ. ԱՄՆ դոլարով: 2012 թ. սկսած մինչև 2018 թ. այս ոլորտում Միացյալ Թագավորությունը այլևս ներդրումներ չի իրականացրել: 2007 թ. Միացյալ Թագավորությունը 2518.1 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ է իրականացրել «համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն» ոլորտում, սակայն դրանից հետո ներդրումները բացակայել են: 2007-2012 թթ. Միացյալ Թագավորությունը փոքրածավալ ՕՈՒՆ է իրականացրել «իրավաբանական և հաշվապահական գործունեություն» ոլորտում, սակայն 2012-2018 թթ. այս ոլորտում ևս ՕՈՒՆ չեն իրականացվել: 2014-2018 թթ. Միացյալ Թագավորությունը խոշոր ՕՈՒՆ է իրականացրել «խմիչքների արտադրություն» ոլորտում: 2014 թ. այստեղ ՕՈՒՆ կազմել են 26673.5 հազ. ԱՄՆ դոլար: Մինչև 2017 թ. դրանց ծավալները աստիճանաբար նվազել են. 2017 թ. Միացյալ Թագավորությունը այս ոլորտում իրականացրել է 485.9 հազ. ԱՄՆ դոլար (2014 թ. համեմատ՝ -26187.6 հազ. ԱՄՆ դոլար): 2018 թ. դրանք կրկին աճել են՝ 1346.6 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ +860.7 հազ. ԱՄՆ դոլար): Մեծածավալ տատանումներով ներդրումներ են իրականացվել նաև «հիմնային մետաղների արտադրություն», «կացության կազմակերպում» և մի շարք այլ ոլորտներում:

2000-2006 թթ. ՀՀ-ում Լիբանանի իրականացրած ՕՈՒՆ նշանակալի չեն եղել (գծապատկեր 1.2.8): Այս երկրի կողմից իրականացված ՕՈՒՆ ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում 5 %-ից ավելի բաժնեմաս ունեցել են միայն 2007 և 2015թթ.: 2007 թ. դրանք կազմել են 82877.8 հազ. ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ՕՈՒՆ կառուցվածքում՝ 14.2 %: Ընդ որում՝ 2007 թ. Լիբանանը ՀՀ-ում իրականացրել է ամենամեծածավալ ներդրումները: 2008-2014 թթ. այս երկրի կողմից իրականացված ՕՈՒՆ աստիճանաբար կրճատվել են (գծապատկեր 1.2.8). 2014 թ. 2007 թ. համեմատ ՕՈՒՆ նվազել են 81757.1 հազ. ԱՄՆ դոլարով և կազմել են 1120.7 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրի մասնաբաժինը կրճատվել է 13.8 %-ով և կազմել է 0.4 %: 2015 թ. Լիբանանից այս ոլորտ ուղղված ՕՈՒՆ կազմել են 10590.1 հազ. ԱՄՆ դոլար,

այսինքն՝ նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 9469.4 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրի մասնաբաժինը Հայաստանում իրականացված ներդրումների ընդհանուր կառուցվածքում կազմել է 7.3 % (նախորդ տարվա համեմատ՝ +6.9 %): 2016-2017 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո, իսկ 2018 թ. ներդրումները կազմել են 10061.7 հազ. դոլար:

2007-2018 թթ. Լիբանանը Հայաստանում ՕՈՒՆ է իրականացրել «հեռահաղորդակցություն» և «սննդամթերքի արտադրություն» (առանց խմիչքների արտադրության) ոլորտներում: «Հեռահաղորդակցություն» ոլորտում 2007 թ. ՕՈՒՆ կազմել են 82304.7 հազ. ԱՄՆ դոլար. ընդ որում՝ 2007 թ. Լիբանանը ՀՀ այս ոլորտում իրականացրել է ամենախոշոր ծավալով ՕՈՒՆ: Այնուհետև ՕՈՒՆ ծավալները որոշակի տատանումներով նվազել են մինչև 2014 թ.: 2014 թ. ՕՈՒՆ այս ոլորտում կազմել են 1293.3 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2007թ. համեմատ նվազել են 81011.4 հազ. ԱՄՆ դոլարով: Չնայած որ 2015 թ. ՕՈՒՆ աճել են (13959 հազ. ԱՄՆ դոլար), այդուհանդերձ 2016-2017 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո, իսկ 2018 թ. ՕՈՒՆ չնչին աճ են գրանցել՝ կազմելով 7354.04 հազ. ԱՄՆ դոլար (2015 թ. համեմատ՝ -6605 հազ. ԱՄՆ դոլար): Ինչ վերաբերում է «սննդամթերքի արտադրություն» ոլորտում Լիբանանի իրականացրած ներդրումներին, ապա դրանք նշանակալի են եղել 2007-2013 թթ., 2014-2016 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո, իսկ 2017-2018 թթ. ներդրումները բացակայել են: Ամենամեծ ծավալով ՕՈՒՆ Լիբանանը իրականացրել է 2011 թ.՝ 2765.2 հազ. ԱՄՆ դոլար: 2017-2018 թթ. Լիբանանը ՕՈՒՆ է իրականացրել նաև «շենքերի սպասարկման և բնատեսարանի բարեկարգման գործունեություն» ոլորտում. 2018 թ. այս ոլորտ ուղղված ՕՈՒՆ կազմել են 1135.9 հազ. ԱՄՆ դոլար, 2019 թ. դրանք ավելացել են՝ կազմելով 2707.5 հազ. ԱՄՆ դոլար:

2000-2018 թթ. ընթացքում Շվեյցարիան ՀՀ-ում ներդրումներ է իրականացրել 2001-2003 թթ. և 2010-2018 թթ. (2001 թ. և 2004-2009 թթ. ՕՈՒՆ բացակայել են, զծապատկեր 1.2.8): 2001 թ. շվեյցարական ՕՈՒՆ կազմել են 915.7 հազ. ԱՄՆ դոլար (զծապատկեր 1.2.8),

իսկ երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՈՒՆ կառուցվածքում կազմել է 1.2 %: 2002 թ. ՕՈՒՆ որոշակի չափով նվազել են՝ 749 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8) կամ 0.5 % (նախորդ տարվա համեմատ՝ -166.7 հազ. ԱՄՆ դոլար, մասնաբաժինը՝ 0.7 %): 2003 թ. Շվեյցարիայի մասնաբաժինը ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքում կազմել է 4.4 % կամ 6736.4 հազ. ԱՄՆ դոլար: 2010-2018 թթ. իրականացված ՕՈՒՆ ծավալները անընդհատ տատանվել են (գծապատկեր 1.2.8): 2010 թ. երկարատև դադարից հետո, Շվեյցարիան Հայաստանում իրականացրել է 10908.2 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ (գծապատկեր 1.2.8), իսկ երկրի մասնաբաժինը կազմել է 2.3 %: 2011 թ. դրանք կրճատվել են՝ հասնելով 7930 հազ. ԱՄՆ դոլարի կամ 1.3 %-ի (նախորդ տարվա համեմատ՝ -2978.2 հազ. ԱՄՆ դոլար կամ -1 %): 2012 թ. շվեյցարական ՕՈՒՆ ծավալները գերազանցել են ընդհանուր ՕՈՒՆ 5 %-ը՝ կազմելով 7.7 % (43705.3 հազ. դոլար): 2013 թ. ՕՈՒՆ նվազել են (10266.4 հազ. ԱՄՆ դոլար): 2014-2015 թթ. Շվեյցարիան կրկին իրականացրել է մեծածավալ ՕՈՒՆ, մասնավորապես՝ 2014 թ. դրանք կազմել են 23360.7 հազ. ԱՄՆ դոլար կամ 8.3 %, իսկ 2015 թ.՝ 85901.2 հազ. ԱՄՆ դոլար կամ 59.1 %: 2016-2018 թթ. ՕՈՒՆ կտրուկ նվազել են (գծապատկեր 1.2.8). 2018 թ. դրանք կազմել են 532.9 հազ. ԱՄՆ դոլար կամ 0.2 % (2015 թ. համեմատ՝ -85368.3 հազ. ԱՄՆ դոլար կամ - 58.9 %):

2007-2013 թթ. Շվեյցարիան ՀՀ-ում ՕՈՒՆ է իրականացրել երկու ոլորտներում՝ «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» և «մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից»: «Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» ոլորտում Շվեյցարիան ՕՈՒՆ սկսել է իրականացնել 2010 թ.՝ 10880 հազ. ԱՄՆ դոլարի չափով, 2011 թ. դրանք բացակայել են: 2012 թ. Շվեյցարիան այս ոլորտում կրկին ՕՈՒՆ է իրականացրել՝ 43637.4 հազ. ԱՄՆ դոլարի չափով (2010 թ. համեմատ՝ +32757.4 հազ. ԱՄՆ դոլար), սակայն 2013 թ.դրանք 2012 թ. համեմատ կրճատվել են 33487.4 հազ. ԱՄՆ դոլարով և կազմել են 10150 հազ. ԱՄՆ դոլար: 2014-2015 թթ. շվեյցարական

ներդրումների ծավալներն աճել են, ընդ որում՝ 2015 թ. գրանցվել են ամենամեծ ծավալով ներդրումները: Մասնավորապես՝ 2015 թ. Շվեյցարիան այս ոլորտում իրականացրել է 88234 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ (2013 թ. համեմատ՝ +78084 հազ. ԱՄՆ դոլար): 2016-2017 թթ. այս ոլորտում Շվեյցարիան կրկին ներդրումներ չի իրականացրել: Ինչ վերաբերում է «մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից» ոլորտին, ապա այստեղ ևս Շվեյցարիան ՕՈՒՆ իրականացրել է 2010 թվականից սկսած. 2010 թ. ՕՈՒՆ կազմել են ընդամենը 28.2 հազ. ԱՄՆ դոլար: Ամենամեծ ծավալով ՕՈՒՆ այս ոլորտում Շվեյցարիան իրականացրել է 2011 թ.՝ 1930 հազ. ԱՄՆ դոլարի չափով (նախորդ տարվա համեմատ՝ +1901.8 հազ. ԱՄՆ դոլար): Սակայն 2012 թ. ՕՈՒՆ ծավալները կրկին կտրուկ նվազել են՝ 67.9 հազ. ԱՄՆ դոլար (2011 թ. համեմատ՝ -1862.1 հազ. ԱՄՆ դոլար): 2013-2014 թթ. ՕՈՒՆ կրկին աճել են, մասնավորապես՝ 2014 թ. ՕՈՒՆ հասել են 1742.5 հազ. ԱՄՆ դոլարի (2012 թ. համեմատ՝ +1674.6 հազ. ԱՄՆ դոլար): 2015-2016 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո, որից հետո 2017-2018 թթ. գրանցվել է ՕՈՒՆ փոքր աճ՝ 2017 թ.՝ 453.7 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2018 թ.՝ 185.5 հազ. ԱՄՆ դոլար: Շվեյցարիան ներդրումներ է իրականացրել նաև «շինարարություն», մասնավորապես՝ «շենքերի շինարարություն» ոլորտում: 2014 թ. այս ոլորտում իրականացված ՕՈՒՆ կազմել են 10138.3 հազ. ԱՄՆ դոլար, 2017 թ.՝ 126.6 հազ. ԱՄՆ դոլար (2014 թ. համեմատ՝ -10011.7 հազ. ԱՄՆ դոլար) և 2018 թ.՝ 369.2 հազ. ԱՄՆ դոլար (2014 թ. համեմատ՝ -9769.1 հազ. ԱՄՆ դոլար): Մնացած բոլոր տարիներին այս ոլորտում Շվեյցարիան ներդրումներ չի իրականացրել:

2000-2018 թթ. ընթացքում Հայաստանում Լյուքսեմբուրգի կողմից իրականացված ՕՈՒՆ մեծածավալ են եղել 2014-2016 թթ. (գծապատկեր 1.2.8): Մնացած տարիներին երկրի մասնաբաժինը ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում չի գերազանցել 5 %-ը: 2000-2013 թթ. Լյուքսեմբուրգի կողմից իրականացված ՕՈՒՆ համեմատաբար մեծածավալ են եղել 2008 թ.՝ 6687 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8), իսկ երկրի մասնաբա-

ժինը կազմել է 0.7 %: 2014 թ. ՕՈԻՆ կազմել են 19784.1 հազ ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8), իսկ երկրի մասնաբաժինը կազմել է 7.02 %, այսինքն՝ 2008 թ. համեմատ աճը կազմել է 13097.1 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրի մասնաբաժինն ավելացել է 6.32 %-ով: 2015 թ. Լյուքսեմբուրգը ՀՀ-ում իրականացրել է 60150.7 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈԻՆ (գծապատկեր 1.2.8), և երկրի մասնաբաժինը եղել է 86.6 %, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 40366.6 հազ. ԱՄՆ դոլար, կամ երկրի մասնաբաժինը ավելացել է 80.28 %-ով: 2016 թ. 2015 թ. համեմատ ՕՈԻՆ կրճատվել են (գծապատկեր 1.2.8), մասնավորապես՝ 2016 թ. Լյուքսեմբուրգի կողմից իրականացված ՕՈԻՆ կազմել են 22503.2 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ -17863.4 հազ. ԱՄՆ դոլար), իսկ մասնաբաժինը ընդհանուր ՕՈԻՆ կառուցվածքում՝ 17.3 % (նախորդ տարվա համեմատ՝ -69.3 %): 2017-2018 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սաղոթ (գծապատկեր 1.2.8):

2000-2018 թթ. Լյուքսեմբուրգը ՀՀ-ում ՕՈԻՆ հիմնականում ուղղել է դեպի «սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն», մասնավորապես՝ «խմիչքների արտադրության» ոլորտ: 2007 թ. այս ոլորտ ուղղված ներդրումները կազմել են 3731 հազ. ԱՄՆ դոլար, 2008 թ. դրանք գրեթե կրկնակի ավելացել են՝ կազմելով 6687 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ +2956 հազ. ԱՄՆ դոլար): 2009 թվականից մինչև 2013 թ. այստեղ ՕՈԻՆ ծավալները, որոշակի տատանումներով, հիմնականում նվազման միտում են ցուցաբերել: 2013 թ. 2008 թ. համեմատ դրանք նվազել են 5200 հազ. ԱՄՆ դոլարով և կազմել են 1487 հազ. ԱՄՆ դոլար: Սակայն 2014 թ. Լյուքսեմբուրգը կտրուկ ավելացրել է այս ոլորտ ուղղվող ներդրումների ծավալները՝ 19784.1 հազ. ԱՄՆ դոլար (2013 թ. համեմատ՝ +18297.1 հազ. ԱՄՆ դոլար): Սրան հաջորդող տարիներին որոշակի տատանումներով կրկին նկատվել է նվազման միտում, և 2018 թ. ՕՈԻՆ կազմել են 1211 հազ. ԱՄՆ դոլար (2014 թ. համեմատ կրճատվել է 18573.1 հազ. ԱՄՆ դոլարով): 2015-2018 թթ. Լյուքսեմբուրգը ՀՀ-ում ՕՈԻՆ է իրականացրել նաև «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում: 2015 թ. այս ոլորտ ուղղված ներդրումները

կազմել են 57142 հազ. ԱՄՆ դոլար, 2016 թ. դրանք կրճատվել են մինչև 21623.5 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ - 35518.5 հազ. ԱՄՆ դոլար): 2017-2018 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո:

2000-2006 թթ. ՀՀ տնտեսության մեջ Իռլանդիայի կատարած օտարերկրյա ուղղակի ներդրումները փոքրածավալ էին. 2004 և 2006 թթ. դրանք բացակայել են (գծապատկեր 1.2.8): Որոշակի աճ գրանցվել է 2007-2008 թթ.: 2007 թ. օտարերկրյա ուղղակի ներդրումները կազմել են 4049.2 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրի մասնաբաժինը ՀՀ-ում իրականացված ՕՌԻՆ ընդհանուր կառուցվածքում՝ 0.7 %, 2008 թ.՝ 6407 հազ. ԱՄՆ դոլար, երկրի մասնաբաժինը՝ 0.6 % (նախորդ տարվա համեմատ՝ +2357.8 հազ. ԱՄՆ դոլար և -0.1 %): 2009-2013 թթ. իռլանդական ՕՌԻՆ կտրուկ նվազել են (գծապատկեր 1.2.8): 2014 թ. Իռլանդիան ՀՀ-ում իրականացրել է 13863.4 հազ. ԱՄՆ դոլարի ՕՌԻՆ, իսկ երկրի մասնաբաժինը կազմել է 5 %: 2015 թ. 2014 թ. համեմատ Իռլանդիան ՀՀ-ում իրականացրել է 5563.5 հազ. ԱՄՆ դոլարով պակաս ՕՌԻՆ, սակայն երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՌԻՆ մեջ ավելացել է 0.7 %-ով (8299.9 հազ. ԱՄՆ դոլար, իսկ մասնաբաժինը՝ 5.7 %): 2016-2018 թթ. 2015 թ. համեմատ, որոշակի տատանումներով, ՕՌԻՆ նվազել են (գծապատկեր 1.2.8): 2018 թ. ՕՌԻՆ կազմել են 2973.9 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.8), իսկ երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՌԻՆ մեջ կազմել է 1.3 % (2015 թ. համեմատ՝ -5326 հազ. ԱՄՆ դոլար, մասնաբաժինը՝ 4.4 %):

Իռլանդիայի համար Հայաստանում ՕՌԻՆ իրականացման հիմնական ուղղություններից է «ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում» ոլորտը: 2007 թ. այստեղ Իռլանդիան իրականացրել է 3745.4 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում: 2008 թ. ՕՌԻՆ ավելացել են՝ կազմելով 5937.4 հազ. ԱՄՆ դոլար: 2009-2013 թթ. այս ոլորտում ներդրումներ չեն իրականացվել: 2014 թ. Իռլանդիան կրկին սկսեց ՕՌԻՆ իրականացնել այս ոլորտում, մասնավորապես՝ 2014թ. դրանք կազմեցին 13863.4 հազ. ԱՄՆ դոլար: Սակայն 2015 թվականից սկսած իռլանդական

ՕՈՒՆ կրկին նվազեցին և 2018 թ. 2014 թ. համեմատ կազմեցին 2974 հազ. ԱՄՆ դոլար (-10889.4 հազ. ԱՄՆ դոլար): Իռլանդիան 2013 թ. 103.9 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ է իրականացրել նաև «տեղեկատվական ծառայությունների մատուցում» ոլորտում:

2007-2013 թթ. Իռլանդիան ՕՈՒՆ է իրականացրել նաև «մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն» ոլորտում: Ամենախոշոր ՕՈՒՆ այս ոլորտում գրանցվել են 2008 թ.՝ 469.6 հազ. ԱՄՆ դոլար, իսկ ամենափոքր ներդրումները՝ 2013 թ.՝ ընդամենը 42.1 հազ. ԱՄՆ դոլար: 2014-2018 թթ. այս ոլորտում ներդրումները բացակայել են: 2018 թ. Իռլանդիան 88.5 հազ. ԱՄՆ դոլարի ներդրում է իրականացրել «հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» ոլորտում:

2000-2018 թթ. Հայաստանում Կիպրոսի կողմից իրականացված ՕՈՒՆ ծավալները աչքի են ընկել մեծ տատանումներով: 2000-2006 թթ. ՕՈՒՆ փոքրածավալ են եղել: 2007-2011 թթ. Կիպրոսի կողմից իրականացվող ՕՈՒՆ ծավալները, փոքր տատանումներով, աճի միտում են դրսևորել (գծապատկեր 1.2.8): Մասնավորապես՝ 2007 թ. դրանք կազմել են 11943.2 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.1 %, իսկ 2011 թ. դրանք արդեն կազմել են 16378.2 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.6 % (2007 թ. համեմատ՝ +4435 հազ. ԱՄՆ դոլար, մասնաբաժինը՝ +0.5 %): 2012-2014 թթ. կրկին ՕՈՒՆ ծավալները կրճատվել են (գծապատկեր 1.2.8). 2012 թ. դրանք կազմել են 5269 հազ. ԱՄՆ դոլար, իսկ երկրի մասնաբաժինը՝ 0.9 %, այսինքն՝ 2011 թ. համեմատ ՕՈՒՆ կրճատվել են 11109.2 հազ. ԱՄՆ դոլարով, երկրի մասնաբաժինը ընդհանուր ՕՈՒՆ կառուցվածքում՝ 1.7 %-ով: 2014 թ. գրանցվել է բացասական ներդրումային սալդո (գծապատկեր 1.2.8): 2015-2016 թթ. Կիպրոսի մասնաբաժինը ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ ընդհանուր կառուցվածքում գերազանցել է 5 %-ը. 2015 թ. Կիպրոսի մասնաբաժինը կազմել է 7.6 % (11032.9 հազ. ԱՄՆ դոլար), իսկ 2016 թ.՝ 55.2 % (71973.9 հազ. ԱՄՆ դոլար), այսինքն՝ 2016 թ. 2015 թ. համեմատ աճը կազմել է 47.6 % (60941 հազ. ԱՄՆ դոլար): 2017 թ. կրկին գրանցվել է բացասական ներդրումային սալդո (գծապատկեր 1.2.8): Սակայն 2018 թ. կրկին նկատվել է աճի միտում. Կիպրոսի մասնաբաժինը

ընդհանուր ՕՈՒՆ կազմում եղել է 2.9 % (6622.6 հազ. ԱՄՆ դոլար):

Կիպրոսի համար ՀՀ ՕՈՒՆ իրականացնելու հիմնական ուղղություններից մեկը եղել է «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» ոլորտը: 2007 թ. այս ոլորտում ՕՈՒՆ կազմել են 7184.2 հազ. ԱՄՆ դոլար, սակայն 2008-2010 թթ. դրանց ծավալները կտրուկ նվազել են: Մասնավորապես՝ 2010 թ. ՕՈՒՆ կազմել են 226.8 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2007 թ. համեմատ դրանք նվազել են 6957.4 հազ. ԱՄՆ դոլարով: 2011 թ. Կիպրոսը այս ոլորտում ներդրումներ չի իրականացրել, սակայն 2012 թ. իրականացրել է 1069.1 հազ. ԱՄՆ դոլար ներդրումներ: 2013-2014 թթ. ՕՈՒՆ կրկին բացակայել են: 2015 թ. Կիպրոսը փոքրածավալ ներդրումներ է իրականացրել այս ոլորտում՝ 124.1 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2016-2018 թթ. ներդրումները դարձյալ բացակայել են:


Կիպրոսը ՕՈՒՆ զգալի մասը ուղղել է դեպի «մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից» ոլորտ: Ընդ որում՝ այս ոլորտ ուղղվող ներդրումների ծավալները անընդհատ տատանվել են: Մասնավորապես՝ 2007 թ. իրականացվել են 4759 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ, սակայն 2008 թ. նախորդ տարվա համեմատ դրանք կրճատվել են 4553 հազ. ԱՄՆ դոլարով՝ կազմելով 206 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2009 թ. ՕՈՒՆ կազմել են 3668.4 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ նախորդ տարվա համեմատ ավելացել են 3462.4 հազ. ԱՄՆ դոլարով: Հետագա տարիներին, որոշակի տատանումներով, հիմնականում նվազման միտում է գրանցվել, և 2013 թ. այս ոլորտ ուղղված ներդրումների ծավալները կազմել են 567.6 հազ. ԱՄՆ դոլար: Չնայած որ 2014 թ. որոշակի աճ է գրանցվել՝ 676 հազ. ԱՄՆ դոլար, սակայն 2015 թ., ինչպես նաև 2017 թ. գրանցվել է բացասական ներդրումային սաղոթ: 2018 թ. ՕՈՒՆ կազմել են 317.6 հազ. ԱՄՆ դոլար:

Նշանակալի ծավալով օտարերկրյա ուղղակի ներդրումներ ուղղվել են նաև «կացության կազմակերպում» ոլորտ: 2008 թ. այս ոլորտում Կիպրոսը իրականացրել է 554.5 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ: 2009-2010 թթ. դրանք աստիճանաբար աճել են՝ 2010 թ. հասնելով 10699.3 հազ. ԱՄՆ դոլարի (2018 թ. համեմատ աճը կազմել է 10144.8

հազ. ԱՄՆ դոլար): Այնուհետև կրկին նվազում է նկատվել. 2013 թ. այս ոլորտ ուղղված ներդրումները կազմել են ընդամենը 33.6 հազ. ԱՄՆ դոլար (2010 թ. համեմատ՝ -10665.7 հազ. ԱՄՆ դոլար): 2014-2018 թթ. ամենամեծ ծավալելվ ներդրումներն իրականացվել են 2016 թ.՝ 70479.1 հազ. ԱՄՆ դոլար: 2017 թ. դրանք կազմել են 5522.3 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2018 թ.՝ 8617.8 հազ. ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ՝ +3095.5 հազ. ԱՄՆ դոլար): Կիպրոսը փոքրածավալ ՕՈԻՆ է իրականացրել նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են «մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից», «վարձույթ և լիզինգ», «սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն» և մի քանի այլ ոլորտներում, սակայն սրանք իրականացվել են միայն որոշակի տարիների և հիմնականում բացակայել են:

2000-2018 թթ. ՀՀ-ում իրականացված ՕՈԻՆ դինամիկայի վերլուծությունը ըստ ոլորտների ցույց է տալիս, որ դիտարկվող ժամանակաշրջանում Հայաստանում օտարերկրյա ներդրողների համար հիմնական գրավիչ ոլորտները եղել են «սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն», «էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում», «հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր», «հեռահաղորդակցություն», «անշարժ գույքի հետ կապված գործունեություն» ոլորտները և այլն (գծապատկեր 1.2.9):

«Մսնդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն» ոլորտին ուղղված ներդրումները 2000-2018 թթ. ընթացքում գրեթե միշտ մեծածավալ են եղել. 2000 թ. դրանք կազմել են 7793.3 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.9), այսինքն՝ այս ոլորտին բաժին է ընկել ՀՀ-ում իրականացված ՕՈԻՆ 6.5 %-ը: Չնայած 2001 թ. այստեղ ՕՈԻՆ նվազել են՝ 3851.6 հազ. ԱՄՆ դոլար (5.1 %), այդուհանդերձ 2002-2004 թթ. դրանք զգալիորեն աճել են (գծապատկեր 1.2.9):



Գծապատկեր 1.2.9. ՀՀ ՕՌԻՆ դինամիկան ըստ ոլորտների 2000-2018 թթ. (հազ. ԱՄՆ դոլար)

2004 թ. դրանք կազմել են 34728.4 հազ ԱՄՆ դոլար, այսինքն՝ այս ոլորտին բաժին է ընկել ընդհանուր ՕՌԻՆ 15.3 %-ը (2001 թ. համեմատ՝ +10.2% կամ +30876.8 հազ. ԱՄՆ դոլար): 2005-2010 թթ. այս ոլորտին բաժին ընկած ՕՌԻՆ 2004 թ. ցուցանիշի համեմատ որոշակիորեն կրճատվել են (գծապատկեր 1.2.9), սակայն 2011 թ. դրանք կրկին աճել են և դրամական արտահայտությամբ նույնիսկ գերազանցել 2004 թ. ցուցանիշը՝ 38530.8 հազ. ԱՄՆ դոլար (+3802 հազ. ԱՄՆ դոլար, գծապատկեր 1.2.9), սակայն ՀՀ-ում իրականացված ընդհանուր ՕՌԻՆ կառուցվածքում ոլորտի բաժինը կրճատվել է մինչև 6.1% (-9.2%): 2012-2013 թթ. 2011 թ. համեմատ ՕՌԻՆ որոշակի կրճատվել են. մասնավորապես՝ 2013 թ. դրանք կազմել են 29369.4 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.9), այսինքն՝ 2011 թ. համեմատ նվազումը կազմել է 9161.4 հազ. ԱՄՆ դոլար, սակայն ոլորտին բաժին է ընկել ընդհանուր ՕՌԻՆ 10.8 %-ը, հետևաբար 2011 թ. համեմատ այս ոլորտի մասնաբաժինը ավելացել է 4.7 %-ով: 2014 թ. ՕՌԻՆ կազմել են 51557.4 հազ. ԱՄՆ դոլար՝ 18.3 % (2013 թ. համեմատ՝ +22188 հազ. ԱՄՆ դոլար կամ +7.5 %): Պետք է փաստել, որ 2015 թվականից սկսած այս ոլորտում իրականացվող ՕՌԻՆ նվազման միտում են ցուցաբերել

(գծապատկեր 1.2.9): 2018 թ. դրանք կազմել են ընդամենը 6764 հազ. ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ՕՈՒՆ մեջ՝ 3 % (2014 թ. համեմատ՝ -44793.4 հազ. ԱՄՆ դոլար կամ -15.3 %):

«Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտին բաժին ընկած ՕՈՒՆ դիտարկվող ողջ ժամանակահատվածում անընդհատ տատանվել են (գծապատկեր 1.2.9): Եթե 2000 թ. այս ոլորտում ՕՈՒՆ կազմել են 42000 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ այս ոլորտ ուղղվել է ՀՀ-ում իրականացված ընդհանուր ՕՈՒՆ 35 %-ը, ապա 2003 թ. դրանք կազմել են ընդամենը 3769 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.5 %: 2004 թ. ՕՈՒՆ կրկին կտրուկ աճել են՝ կազմելով 32282.5 հազ. ԱՄՆ դոլար կամ 14.2 % (նախորդ տարվա համեմատ՝ +28513.5 հազ. ԱՄՆ դոլար կամ +16.7 %), իսկ 2005 թ. դրանք կազմել են ընդամենը 120 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ այս ոլորտ է ուղղվել ՀՀ-ում իրականացված ՕՈՒՆ 0.04 % (նախորդ տարվա համեմատ՝ -32162.5 հազ. ԱՄՆ դոլար կամ -14.16 %): 2006-2008 թթ. այս ոլորտ ուղղված ներդրումները աստիճանաբար աճել են, իսկ 2009-2013 թթ.՝ աստիճանաբար նվազել (գծապատկեր 1.2.9): 2006 թ. ՕՈՒՆ կազմել են 142937 հազ. ԱՄՆ դոլար կամ 35.1 % (նախորդ տարվա համեմատ՝ +142817 հազ. ԱՄՆ դոլար կամ + 35.06 %), 2008 թ. դրանց ծավալները հասել են 476278.9 հազ. ԱՄՆ դոլարի կամ 47.6 %-ի (2006 թ. համեմատ՝ + 333341.9 հազ. ԱՄՆ դոլար կամ +12.5 %), 2009 թ. ՕՈՒՆ նվազելով կազմել են 151320.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 20.7 % (նախորդ տարվա համեմատ՝ -324958.1 հազ. ԱՄՆ դոլար կամ -26.9 %), իսկ արդեն 2013 թ. ՕՈՒՆ կազմել են 7312.6 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.7 % (2009 թ. համեմատ՝ -144008.2 հազ. ԱՄՆ դոլար, ոլորտի բաժինը՝ -18 %): 2014 թ. ներդրումները կրկին աճել են՝ 83368.4 հազ. ԱՄՆ դոլար կամ 29.6 % (նախորդ տարվա համեմատ՝ +76055.8 կամ +26.9 %), 2015-2017 թթ. գրանցվել է նվազման միտում, իսկ 2018 թ. ՕՈՒՆ կրկին աճել են և կազմել 99105.2 հազ. ԱՄՆ դոլար (գծապատկեր 1.2.9):

«Մեծածախ առևտուր և առևտուր գործակալների միջոցով, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլետների առևտրից» ոլորտ ուղղված ներդրումները ՀՀ-ում իրականացված ընդհանուր ՕՈՒՆ

կառուցվածքում զգալի մասնաբաժին են ունեցել (գերազանցել են 5 %-ը) միայն 2000-2002 թթ., մասնավորապես՝ 2000 թ. ՕՈՒՆ կազմել են 10811.2 հազ. ԱՄՆ դոլար, 2001 թ.՝ 3938.1 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2002 թ.՝ 7235.1 հազ. ԱՄՆ դոլար (զծապատկեր 1.2.9), համապատասխանաբար 9 %, 5.2 %, 5.1 %: Հետագա տարիներին ներդրումները փոքրածավալ են եղել, և հիմնականում գրանցվել է նվազման միտում. բացառություն է եղել 2011 թ. (զծապատկեր 1.2.9)՝ 12590 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.2 %:

«Ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով» ոլորտում ՕՈՒՆ մեծածավալ են եղել 2008-2011 թթ. (զծապատկեր 1.2.9): Մասնավորապես՝ 2008 թ. այստեղ ՕՈՒՆ կազմել են 136330 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ այս ոլորտ է ուղղվել ՀՀ-ում ընդհանուր ՕՈՒՆ 13.6 %-ը: 2011 թ., աստիճանաբար աճելով, ՕՈՒՆ կազմել են 43688.7 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ ընդհանուր ՕՈՒՆ մեջ՝ 7 % (2008 թ. համեմատ՝ +92641.3 հազ. ԱՄՆ դոլար կամ +6.6 %): 2012 թվականից սկսած այս ոլորտ ուղղվող ՕՈՒՆ աստիճանաբար նվազել են (զծապատկեր 1.2.9):

«Օդային տրանսպորտի գործունեություն» ոլորտում 2000-2002 թթ. ներդրումներ չեն իրականացվել: 2003-2006 թթ. ՕՈՒՆ այս ոլորտում որոշակի տատանումներով աճել են (զծապատկեր 1.2.9). 2003 թ. ՕՈՒՆ կազմել են 3627.4 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.4 %, 2004 թ.՝ 24401 հազ. ԱՄՆ դոլար կամ 10.8 % (2003 թ. համեմատ՝ +20773.6 հազ. ԱՄՆ դոլար կամ +8.4 %), 2005 թ. գրանցվել է անկում՝ 14866.6 հազ. ԱՄՆ դոլար կամ 5.4 % (2004 թ. համեմատ՝ -9534.4 հազ. ԱՄՆ դոլար կամ -5.4 %), 2006 թ. ՕՈՒՆ կրկին աճել են՝ կազմելով 26615.7 հազ. ԱՄՆ դոլար կամ 6.5 % (նախորդ տարվա համեմատ՝ +11749.1 հազ. ԱՄՆ դոլար կամ +1.1 %): 2007 թվականից սկսած մինչև 2018 թ. այս ոլորտում ՕՈՒՆ հիմնականում նվազման միտում են ունեցել: Բացառություն են կազմել 2008 և 2010 թթ. (զծապատկեր 1.2.9): 2008 թ. ՕՈՒՆ կազմել են 53747.6 հազ. ԱՄՆ դոլար, 2010 թ.՝ 24967.8 հազ. ԱՄՆ դոլար, իսկ բաժինը ընդհանուր ՕՈՒՆ մեջ կազմել է համապատասխանաբար 5.4 % և 5.2 %:

«Հեռահաղորդակցություն» ոլորտը եղել է 2000-2018 թթ. ամենամեծ ծավալով ՕՈՒՆ ներգրաված ոլորտներից մեկը: 2000 թ.

այս ոլորտ ուղղվել են 37415 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ (զծապատկեր 1.2.9), կամ ՀՀ ընդհանուր ՕՈՒՆ 31.2 %-ը իրականացվել է այս ոլորտում: 2001-2003 թթ. 2000 թ. համեմատ ՕՈՒՆ նվազել են: Մասնավորապես՝ 2003 թ. այս ոլորտում իրականացված ՕՈՒՆ կազմել են 10069 հազ. ԱՄՆ դոլար կամ 6.6 % (2000թ. համեմատ՝ -27346 հազ. ԱՄՆ դոլար կամ -24.6 %): 2004-2009 թթ. ՕՈՒՆ աստիճանաբար աճել են (զծապատկեր 1.2.9): 2009 թ. դրանք կազմել են 253402.5 հազ. ԱՄՆ դոլար կամ 34.6 %: 2010-2011 թթ. որոշակի անկում է գրանցվել, սակայն 2012 թ. այս ոլորտում ՕՈՒՆ կազմել են 282668.3 հազ. ԱՄՆ դոլար, կամ այս ոլորտին է բաժին ընկել ընդհանուր ՕՈՒՆ գրեթե 50 %-ը: Սակայն 2013-2018 թթ. ներդրումները աստիճանաբար նվազել են (զծապատկեր 1.2.9): Մասնավորապես՝ 2018 թ. ՕՈՒՆ կազմել են 2356.7 հազ. ԱՄՆ դոլար կամ 1 % (2012 թ. համեմատ՝ -280311.6 հազ. ԱՄՆ դոլար կամ -49 %):

«Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր» ոլորտ ուղղված ներդրումները փոքրածավալ են եղել միայն 2000-2003 թթ.: 2004-2012 թթ. այս ոլորտ ուղղվող ներդրումները փոքր տատանումներով աճել են: Ամենամեծ ծավալով ներդրումները գրանցվել են 2012 թ.՝ 92829.6 հազ. ԱՄՆ դոլար կամ 16.4 %: Միայն 2015 թ. է գրանցվել բացասական ներդրումային սալոդ: Սակայն 2017-2018 թթ. կրկին աճի միտում է գրանցվել (զծապատկեր 1.2.9):

«Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն» ոլորտը օտարերկրյա ներդրողների համար գրավիչ է դարձել սկսած 2013 թվականից (2000-2012 թթ. ՕՈՒՆ այս ոլորտում բացակայել են, զծապատկեր 1.2.9): 2013 թ. իրականացվել են 9750 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ կամ ընդհանուր ՕՈՒՆ 3.6 %-ը: 2014 թ. դրանք որոշակի չափով նվազել են՝ կազմելով 6470.5 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.3 % (նախորդ տարվա համեմատ՝ -3279.5 հազ. ԱՄՆ դոլար կամ -1.3 %): 2015 թվականից սկսած այս ոլորտում իրականացնող ՕՈՒՆ կրկին աճել են՝ 2017 թ. հասնելով 223617.8 հազ. ԱՄՆ դոլարի: Սակայն 2018 թ. կրկին կրճատվել են՝ 40177.4 հազ. ԱՄՆ դոլար (զծապատկեր 1.2.9):

«Հիմնային մետաղների արտադրություն» ոլորտում իրակա-
նացված ՕՈՒՆ նշանակալի են եղել միայն 2011, 2016, 2017 և 2018
թթ.: 2011 թ. ՕՈՒՆ կազմել են 135570 հազ. ԱՄՆ դոլար կամ ընդ-
հանուր ՕՈՒՆ մեջ 21.5 %-ը: 2012-2015 թթ. ՕՈՒՆ կտրուկ նվազել
են: 2016 թ. դրանք կրկին աճել են և կազմել 12072.8 հազ. ԱՄՆ դո-
լար կամ ընդհանուր ՕՈՒՆ 9.3 %-ը (2011թ. համեմատ՝ -123497.2
հազ. ԱՄՆ դոլար կամ -12.2 %), իսկ 2017 թ. 2016 թ. համեմատ
ՕՈՒՆ աճել են՝ 14201.4 հազ. ԱՄՆ դոլար (2016 թ. համեմատ՝
+2128.6 հազ. ԱՄՆ դոլար), սակայն ընդհանուր ՕՈՒՆ մեջ այս
ոլորտի բաժինը կրճատվել է՝ կազմելով 7.4 % (2016 թ. համեմատ՝
-1.9 %): 2018 թ. այս ոլորտ ուղղված ներդրումները կրկին նվազել
են՝ կազմելով 13949.5 հազ. ԱՄՆ դոլար կամ 6 %:

«Անշարժ գույքի հետ կապված գործունեություն» ոլորտում
2000-2002 թթ. ներդրումները բացակայել են (գծապատկեր 1.2.9):
2003-2006 թթ. ՕՈՒՆ այս ոլորտում աստիճանաբար աճել են:
2003 թ. դրանք կազմել են 4200 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.7 %, իսկ
2006 թ. դրանք հասել են 40100 հազ. ԱՄՆ դոլարի կամ 10 %-ի:
2007-2010 թթ. ՕՈՒՆ կրճատվել են (գծապատկեր 1.2.9): 2007 թ.
2006 թ. համեմատ դրանք կրճատվել են 10163 հազ. ԱՄՆ դոլարով
և կազմել 29937 հազ. ԱՄՆ դոլար կամ 5.1 % (2006 թ. համեմատ՝ -
4.9 %), իսկ մինչև 2010 թ. դրանք կրճատվել են մինչև 24871.6 հազ.
ԱՄՆ դոլար (2007 թ. համեմատ՝ -5065.4 հազ. ԱՄՆ դոլար), բայց
այս ոլորտի բաժինը ընդհանուր ներդրումների կառուցվածքում
չի փոխվել (5.1 %): 2011 թ. ՕՈՒՆ կտրուկ աճել են և կազմել 63000
հազ. ԱՄՆ դոլար կամ 10 % (2010 թ. համեմատ՝ +38128.4 հազ.
ԱՄՆ դոլար կամ +4.9 %): Սակայն 2012-2017 թթ. ՕՈՒՆ հիմնա-
կանում նվազել են (գծապատկեր 1.2.9): 2017 թ. դրանք կազմել են
11486.4 հազ. ԱՄՆ դոլար կամ 6 % (2011 թ. համեմատ՝ -51513.6
հազ. ԱՄՆ դոլար կամ -4 %): 2018 թ. ներդրումները կրկին աճի
միտում են ցուցաբերել՝ 28108.1 հազ. ԱՄՆ դոլար կամ 12.1 %
(2017 թ. համեմատ՝ +16621.7 հազ. ԱՄՆ դոլար կամ +6.1 %):

«Հետազոտություններ և մշակումներ» ոլորտում ՕՈՒՆ սկսել
են իրականացվել 2001 թ.՝ 4573.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 6 %: Ամե-
նամեծ ծավալով ներդրումները այս ոլորտում գրանցվել են 2003 թ.

8074.1 հազ. ԱՄՆ դոլար կամ 5.3 % (2001 թ. համեմատ՝ -3500.3 հազ. ԱՄՆ դոլար կամ -0.7 %): Հետագա տարիներին, որոշակի տատանումներով, ՕՈԻՆ հիմնականում նվազել են (գծապատկեր 1.2.9):

«Քիմիական արդյունաբերություն» ոլորտում 2000 թ. ներդրումները կազմել են ընդամենը 180.1 հազ. ԱՄՆ դոլար կամ 0.2 %, որից հետո զգալի աճ գրանցվել է միայն 2003 թ.՝ 10788.7 հազ. ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ՕՈԻՆ մեջ 7 %: 2004-2007 թթ. ՕՈԻՆ կտրուկ կրճատվել են, իսկ 2008 թ. դրանք բացակայել են (գծապատկեր 1.2.9): 2009 թ. այստեղ իրականացվել են 4574.7 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ կամ 0.6 %: 2010-2014 թթ. ներդրումները կրկին բացակայել են, 2015-2017 թթ. գրանցվել է բացասական ներդրումային սալոդ, իսկ 2018 թ. կրկին ներդրումներ չեն եղել (գծապատկեր 1.2.9):

«Շինարարություն» ոլորտում նշանակալի ներդրումներ գրանցվել են միայն 2003 և 2014 թթ. (գծապատկեր 1.2.9): 2003 թ. ՕՈԻՆ այստեղ կազմել են 8619.1 հազ. ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ՕՈԻՆ 5.6 %-ը: 2004-2011 թթ. ՕՈԻՆ որոշակի տատանումներով հիմնականում նվազման միտում են ցուցաբերել (գծապատկեր 1.2.9): 2012 թ. այս ոլորտ ուղղված ներդրումները կազմել են 17236.5 հազ. ԱՄՆ դոլար (2003 թ. համեմատ՝ +8617.4 հազ. ԱՄՆ դոլար), սակայն 2003 թ. համեմատ ոլորտի մասնաբաժինը ընդհանուր ՕՈԻՆ կառուցվածքում նվազել է 2.6 %-ով և կազմել 3 %: 2013 թ. դրանք կտրուկ նվազել են՝ 2547.4 հազ. ԱՄՆ դոլար կամ 1 % (2012 թ. համեմատ՝ -14689.1 հազ. ԱՄՆ դոլար կամ -2 %): 2014 թ. ՕՈԻՆ կազմել են 15631.9 հազ. ԱՄՆ դոլար կամ 5.5 % (նախորդ տարվա համեմատ՝ +13084.5 կամ +4.5 %): 2015-2018 թթ. ՕՈԻՆ կրկին կրճատվել են:

«Ֆինանսական միջնորդություն» ոլորտի մասնաբաժինը ՀՀ-ում իրականացված ՕՈԻՆ ընդհանուր կառուցվածքում մեծ է եղել միայն 2002 թ. և 2004 թ., համապատասխանաբար 6.7 % (9447 հազ. ԱՄՆ դոլար) և 5.3 % (11930.1 հազ. ԱՄՆ դոլար): Չնայած 2008 թ. դրամական արտահայտությամբ ՕՈԻՆ գերազանցել են վերը նշված տարիների ցուցանիշները՝ կազմելով 15929.4 հազ.

ԱՄՆ դոլար, այդուհանդերձ երկրին բաժին է ընկել ՕՈՒՆ 1.6 %-ը, այսինքն՝ 2002 թ. համեմատ կրճատումը կազմել է համապատասխանաբար 5.1 % և 3.7 %:

«Մետաղե հանքաքարերի արդյունահանում» ոլորտում ՕՈՒՆ 2000-2002 թթ. փոքրածավալ են եղել (գծապատկեր 1.2.9): 2003 թ. ՕՈՒՆ աճել են՝ հասնելով 12168.6 հազ. ԱՄՆ դոլարի, կամ ընդհանուր ՕՈՒՆ մեջ այս ոլորտին բաժին է ընկել 8 %-ը: 2004-2005 թթ. դրանց ծավալները կրճատվել են, իսկ 2006-2007 թթ.՝ կրկին աճել (գծապատկեր 1.2.9): Մասնավորապես՝ 2005 թ. դրանք կազմել են 881.6 հազ. ԱՄՆ դոլար կամ 0.3 %, իսկ 2007 թ.՝ 18428.7 հազ. ԱՄՆ դոլար կամ 3.2 % (2005 թ. համեմատ՝ -17547.1 հազ. ԱՄՆ դոլար կամ -2.9 %): 2008-2010 թթ. ներդրումներն այս ոլորտում բացակայել են, 2011 թ. գրանցվել են 13381.5 հազ. ԱՄՆ դոլարի ՕՈՒՆ, որից հետո մինչև 2018 թ. կրկին գրանցվել է նվազման միտում (գծապատկեր 1.2.9):

Էլեկտրական սարքավորանքի և օպտիկական սարքերի արտադրություն» ոլորտում ՕՈՒՆ մեծածավալ են եղել միայն 2003 թ. (գծապատկեր 1.2.9)՝ 57041.4 հազ. ԱՄՆ դոլար կամ ընդհանուր ՕՈՒՆ կառուցվածքում 37.2 %: Հետագա տարիներին ՕՈՒՆ կտրուկ նվազել են (գծապատկեր 1.2.9):

«Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում» ոլորտում 2000 թ. իրականացվել են 1488.8 հազ. ԱՄՆ դոլարի ներդրումներ կամ 1.2 %: 2001-2003 թթ. դրանք աճել են (գծապատկեր 1.2.9)՝ 2003 թ. կազմելով 7869.6 հազ. ԱՄՆ դոլար կամ 5.1 %: 2004-2006 թթ. գրանցվել է ոլոշակի անկում՝ 2006 թ. հասնելով 7107.5 հազ. ԱՄՆ դոլարի կամ 1.7 %-ի (2003 թ. համեմատ՝ -762.1 հազ. ԱՄՆ դոլար կամ -3.4 %), սակայն 2007-2008 թթ. կրկին աճ է գրանցվել (գծապատկեր 1.2.9)՝ 2008 թ. կազմելով 11236 հազ. ԱՄՆ դոլար (2006 թ. համեմատ՝ +4128.5 հազ. ԱՄՆ դոլար), սակայն երկրի բաժինը նվազել է 0.6 %-ով՝ կազմելով 1.1 %: 2009-2013 թթ. ՕՈՒՆ ծավալները կրկին կրճատվել են (գծապատկեր 1.2.9): 2014 թ. ՕՈՒՆ աճել են՝ կազմելով 15329.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 5.4 %: Սկսած 2015 թ. ՕՈՒՆ կրկին նվազման միտում են

ցուցաբերել՝ 2018 թ. հասնելով 4147.2 հազ. ԱՄՆ դոլարի կամ 1.8%-ի (2014 թ. համեմատ՝ -11182.6 հազ. ԱՄՆ դոլար կամ -3.6 %):

«Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ» ոլորտ ուղղված ներդրումները նշանակալի բաժին են կազմել 2012 թ.՝ 6.4 % կամ 36126.3 հազ. ԱՄՆ դոլար, 2015 թ.՝ 18 % կամ 26164.8 հազ. ԱՄՆ դոլար, 2016 թ.՝ 5.6 % կամ 7305.9 հազ. ԱՄՆ դոլար: 2017-2018 թթ. կրկին նվազման միտում է եղել (գծապատկեր 1.2.9). 2018 թ. ՕՈԻՆ կազմել են 5388.8 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.3 % (2016 թ. համեմատ՝ -1917.1 հազ. ԱՄՆ դոլար կամ -3.3 %): «Դեղագործական արտադրանքի արտադրություն» ոլորտում ՕՈԻՆ իրականացվել են 2011 թ. և 2013-2015 թթ. ընթացքում: Ամենամեծ ծավալով ՕՈԻՆ իրականացվել են 2015 թ.՝ 12794.7 հազ. ԱՄՆ դոլարի չափով (գծապատկեր 1.2.9): «Կացության կազմակերպում» ոլորտում ներդրումներ իրականացվել են 2007 թ. սկսած (գծապատկեր 1.2.9)՝ 13939.7 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.4 %: 2008-2010 թթ. դրանք նվազել են: 2011 թ. որոշակիորեն աճելով՝ ՕՈԻՆ կազմել են 15995.1 հազ. ԱՄՆ դոլար կամ 2.5 % (2007 թ. համեմատ՝ +2055.4 հազ. ԱՄՆ դոլար կամ +0.1 %): 2016 թ. գրանցվել են ամենամեծ ծավալով ներդրումները՝ 64278.7 հազ. ԱՄՆ դոլար կամ 49.3 %: «Ջրի հավաքում, մշակում և բաշխում» ոլորտում նշանակալի ծավալով ներդրումներ իրականացվել են միայն 2017 թ.՝ 10261.03 հազ. ԱՄՆ դոլարի չափով, կամ այս ոլորտ է ուղղվել ՀՀ-ում իրականացված ՕՈԻՆ 5.3 %-ը:

Այսպիսով, ՀՀ կառավարությունների որդեգրած ներդրումների ներգրավման ու խրախուսման քաղաքականությունը վերջին երկու տասնամյակների ընթացքում ապահովել է միջոցների զգալի ներհոսք ու ազդել տնտեսական իրավիճակի, տեխնոլոգիական մրցունակության, արտադրողականության և տնտեսական արդյունավետության վրա: Հատկապես ՀՀ տնտեսության իրական հատվածում և ենթակառուցվածքներում կատարված ներդրումները նպաստել են 1990-ական թվականներին անբարենպաստ իրավիճակում հայտնված ՀՀ տնտեսության վերականգման և նոր հզորությունների ու արտադրական կարողության ստեղծման ու զարգացման ծրագրերի իրականացմանը:

Հայաստանի Հանրապետությունը, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով առաջնորդվելով, ընդհանուր առմամբ բարելավել է ոչ միայն ներդրումների ուղղակի ներդրումների ինստիտուցիոնալ միջավայրը, այլև առանձին ժամանակահատվածում իրականացրել է թիրախավորված աշխատանքներ առանձին խոշոր ներդրումային ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Կարելի է արձանագրել, որ մինչև 2000 թ. ՀՀ ներդրումային գրավչությունը բավականին ցածր է եղել, ինչը պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզումից հետո սկիզբ առած ազատական բարեփոխումների հարուցած խնդիրներով, պատերազմական իրավիճակով և մի շարք այլ հանգամանքներով: 2000-ականների սկզբին պատկերը աստիճանաբար փոխվեց, և ներդրումների ծավալները սկսեցին դինամիկորեն աճել մինչև 2008-2009 թթ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Հետճգնաժամային ժամանակահատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը դինամիկորեն նվազել է՝ պայմանավորված երկրում ընդհանուր քաղաքական իրավիճակի և ինստիտուցիոնալ միջավայրի վատթարացմամբ, ինչպես նաև մի շարք անբարենպաստ արտաքին գործոններով: Խոսքը հատկապես վերաբերում է ՀՀ հիմնական արտաքին ներդրողի՝ Ռուսաստանի Դաշնության նկատմամբ 2014 թ. սկսված և մինչև օրս շարունակվող տնտեսական պատժամիջոցների ազդեցությանը:

1.3. Ներդրումային ոլորտը կարգավորող իրավական դաշտը ՀՀ-ում

Օրենսդրաիրավական դաշտը ներդրումային միջավայրի վրա ազդող կարևորագույն գործոններից է: Հասկանալի է, որ օրենքների և իրավական ակտերի հաճախակի փոփոխությունները կարող են անկայունություն մտցնել ներդրումային դաշտում՝ այսպիսով խոչընդոտելով նոր ներդրողների ներգրավմանը: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ օրենսդրաիրավական դաշտում չպետք է իրականացվեն բարեփոխումներ: Դիտարկենք ՀՀ ներդրումային միջավայրը պայմանավորող օրենսդրաիրավական դաշտի ներկա վիճակը, սպասվող փոփոխությունները և դրանց հնարավոր ազդեցությունը ներդրումների ներգրավման վրա:

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 31.07.1994 թ.: Նշված օրենքը սահմանում է մի շարք իրավունքներ, որոնք օտարերկրացիների համար համարվում են կարևոր: Դրանք են¹⁵.

- «Ազգային ռեժիմ» օտարերկրյա ներդրողների և նրանց ներդրումների համար, որը բացառում է որևէ խտրականություն հօգուտ տեղական ներդրողների: Իրենց սեփականության, սեփականության իրավունքների (ներառյալ մտավոր սեփականության իրավունքների) և ներդրումային գործունեության հետ կապված՝ օտարերկրյա ներդրողները վայելում են այնպիսի իրավական ռեժիմ, որը չի կարող նվազ բարենպաստ լինել, քան նույնը՝ տեղական ձեռներեցների համար: Հայաստանն ունի ազատականացված արտաքին առևտրային ռեժիմ, որը ներառում է ներմուծման ժամանակ կիրառվող պարզեցված երկտարիֆային համակարգ (0 % և 10 %), չհարկվող արտահանում, ինչպես նաև չկան առևտրի քանակական սահմանափակումներ: Ներմուծման, արտահանման և տեղական ապրանքների արտադրության համար լիցենզիաներ պահանջվում են

¹⁵ «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ 31.07.1994 թ. ՀՕ-115 օրենք, հոդված 6,7,8,9,11,15,21:

միայն առողջապահական, անվտանգության և էկոլոգիական նկատառումներով: Չկան սահմանափակումներ ներմուծվող կանխիկ արժույթի հանդեպ:

- «Կայունության երաշխիք» (հայտնի է որպես «Պապիկի դրույթ»): Օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում օտարերկրյա ներդրողի ցանկությամբ կիրառվում է իրականացման պահին գործող օրենսդրությունը:
- Օտարերկրյա ներդրումների ազգայնացումը և բռնագրավումն արգելված է: Առգրավումը որպես բացառիկ միջոց թույլատրվում է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտակարգ դրության պայմաններում՝ դատարանի վճռով և լրիվ փոխհատուցմամբ:
- Օտարերկրյա ներդրողներն ունեն նյութական և բարոյական այն վնասների, ներառյալ բաց թողնված օգուտի դատական կարգով փոխհատուցման իրավունքը, որոնք հասցվել են ՀՀ պետական մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությանը հակասող գործողությունների, ինչպես նաև օտարերկրյա ներդրողի կամ օտարերկրյա ներդրումներով ձեռնարկության նկատմամբ նշված մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով:
- Օտարերկրյա ներդրողին և օտարերկրյա վարձու աշխատողներին իրավունք է տրվում և երաշխավորվում է ազատորեն արտահանել իրենց սեփականությունը, ներդրման հետևանքով ստացված շահույթը (եկամուտը) և այլ միջոցներ, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար, կամ որպես սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված փոխհատուցում:
- Մաքսային արտոնություններ: Օտարերկրյա ներդրողներն ազատվում են մաքսատուրք վճարելուց, երբ ներմուծում են սեփական արտադրության համար նախատեսված միջոցներ կառավարության կողմից անմաքս ներմուծման սահմանված

ցանկից: Բացի այդ, նրանք կարիք չունեն ստանալու արտոնագրեր իրենց արտադրանքի, աշխատանքի և ծառայության արտահանման համար, եթե այլ բան չի նախատեսում օրենսդրությունը:

- Օտարերկրյա ներդրողները կարող են ներգրավվել բնական պաշարների շահագործման աշխատանքներում: Սա պետք է իրականացվի ՀՀ կառավարության կամ լիազորված մարմնի հետ ստորագրված կոնցեսիոն պայմանագրով:
- Օտարերկրյա ներդրողի գույքի և ռիսկի ապահովագրությունը կատարվում է նրա հայեցողությամբ, եթե այլ կարգ չի նախատեսված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
- Օտարերկրյա ներդրումների հետ կապված բոլոր վեճերը, որոնք ծագել են օտարերկրյա ներդրողի և Հայաստանի Հանրապետության միջև, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քննվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում: Օտարերկրյա ներդրումների հետ կապված այն վեճերը, որոնցում որպես կողմ հանդես չի գալիս Հայաստանի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան քննվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում կամ տնտեսական վեճեր լուծող այլ մարմիններում, իսկ վիճող կողմերի համաձայնությամբ՝ նաև արբիտրաժային տրիբունալներում, եթե միջազգային պայմանագրերով կամ վիճող կողմերի նախնական պայմանավորվածությամբ (հիմնադիր փաստաթղթերով, տնտեսական պայմանագրերով և այլն) այլ կարգ չի նախատեսված:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը սահմանում է գրեթե իդեալական պայմաններ ներդրողների համար:

«Շահութահարկի մասին» օրենքը ընդունվել է 27.11.1997 թ.: Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով, իսկ ներդրումային ֆոնդերի համար՝ գուտ ակտիվների նկատմամբ 0.01 տոկոս դրույքաչափով, վերջինս ավելացել է 22.12.2010 թ.: Շահութահարկը

ենթակա է վճարման մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 25-ը ներառյալ¹⁶:

2015 թ. մարտի 12-ից ՀՀ կառավարության հավանությանն արժանացած արտահանման ծրագիր իրականացնող և այդ ծրագրում ընդգրկված ՀՀ ռեզիդենտ հարկ վճարողների համար սահմանվում է 5 % կամ 2 % դրույքաչափ, եթե ՀՀ տարածքից դուրս արտահանված ապրանքների մաքսային արժեքների, ինչպես նաև ՀՀ տարածքից դուրս ոչ ռեզիդենտներին մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) արժեքների հանրագումարը կազմում է առնվազն 40 մլրդ կամ 50 մլրդ դրամ¹⁷:

2010 թ. դեկտեմբերի 30-ին օրենքում կատարվել է լրացում, ըստ որի՝ հարկատուի հարկվող շահույթը սահմանելիս համախառն եկամուտը նվազեցվում է յուրաքանչյուր վարձու աշխատողի համար կատարված կամավոր կուտակային կենսաթոշակային վճարումների 50 տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան տվյալ վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումների 2,5 տոկոսի չափով¹⁸:

ՀՀ-ում ոչ ռեզիդենտների կողմից հայաստանյան աղբյուրներից ստացած եկամտից շահութահարկը գանձվում է հետևյալ չափերով.

- ապահովագրական հատուցումներ, վերապահովագրական վճարներ և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներ՝ 5 տոկոս,
- շահաբաժիններ, տոկոսներ, ռոյալթիներ, գույքը վարձակալության տալուց ստացած եկամուտ, գույքի արժեքի հավելված և այլ պասիվ եկամուտներ (բացի փոխադրման (ֆրախտի) դի-

¹⁶ «Շահութահարկի մասին» ՀՀ 27.11.1997 թ. ՀՕ-155 օրենք, հոդված 33, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73140>

¹⁷ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 12.03.2015 թ. ՀՕ-4-Ն օրենք, հոդված 2, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=96152>

¹⁸ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 30.12.2010 թ. ՀՕ-265-Ն օրենք, հոդված 11, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64552>

մաց ստացված եկամուտներից), ինչպես նաև այլ հայաստանյան աղբյուրներից ստացված եկամուտներ՝ 10 տոկոս (մինչև 29.12.2000 թ.՝ 15 տոկոս¹⁹):

Նախկինում շահութահարկի կանխավճարները իրականացվում էին յուրաքանչյուր եռամսյակ՝ նախորդ տարվա շահութահարկի մեծության 18,75 տոկոսի չափով: Ըստ 2018 թ. հունվարի 1-ին ուժի մեջ մտած «ՀՀ հարկային օրենսգրքի»՝ շահութահարկի կանխավճարները իրականացվելու են յուրաքանչյուր եռամսյակ՝ նախորդ տարվա շահութահարկի մեծության 20 տոկոսի չափով: Ներդրվել է նաև այլընտրանքային տարբերակ, որը ուժի մեջ է մտել 2017 թ. հունվարի 1-ից, ըստ որի՝ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները կարող են ընտրել և շահութահարկի կանխավճարները կատարել նախորդ եռամսյակի ընթացքում ստացվող եկամուտների 2 տոկոսի չափով, եթե ընթացիկ տարվա մարտի 20-ը ներառյալ ներկայացնեն հայտարարություն՝ շահութահարկի կանխավճարների կատարման այլընտրանքային եղանակի վերաբերյալ²⁰:

Այսպիսով, տեսնում ենք, որ, համաձայն նոր օրենսգրքի, դրույքաչափերի հետ կապված դրական փոփոխություն է արձանագրվել շահութահարկի կանխավճարների այլընտրանքային տարբերակի մասով:

«Եկամտահարկի մասին» օրենքը ընդունվել է 30.12.1997 թ., սակայն ուժը կորցրած է համարվել, և 30.12.2010 թ. ընդունվել է նոր օրենքը, որն ուժի մեջ է մտել 01.01.2013 թ.: Այն իր մեջ պարունակում է որոշակի փոփոխություններ և լրացումներ:

Հին օրենքի համաձայն՝ եկամտահարկը գանձվում էր հետև-

¹⁹«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 29.12.2000 թ. ՀՕ-128-Ն օրենք, հոդված 22, «բ» ենթակետ, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=813>

²⁰ «ՀՀ հարկային օրենսգրք», ՀՀ 01.11.2016 թ. ՀՕ-165-Ն օրենք, հոդված 135, 1 և 4 կետեր, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>

յալ դրույքաչափերով²¹.

- մինչև 80 000 դրամ՝ հարկվող եկամտի 10 տոկոսը,
- 80 000 դրամից մինչև 2 000 000 դրամ՝ 8 000 դրամին գումարած 80 000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը,
- 2 000 000 դրամը գերազանցող չափից ավելի՝ 392 000 դրամին գումարած 2 000 000 դրամը գերազանցող գումարի 25 տոկոսը:
Նոր օրենքը սահմանում է հետևյալ դրույքաչափերը²².
- մինչև 120 000 դրամ՝ հարկվող եկամտի 24,4 տոկոսը,
- 120 000-2 000 000 դրամ՝ 29 280 դրամին գումարած 120 000 դրամը գերազանցող գումարի 26 տոկոսը,
- 2 000 000 դրամից ավելի՝ 518 080 դրամին գումարած 2 000 000 դրամը գերազանցող գումարի 36 տոկոսը:

2018 թ. ՀՀ հարկային օրենսգրքով եկամտահարկի վճարման մասով նախատեսված են հետևյալ փոփոխությունները²³.

- մինչև 150 000 դրամը ներառյալ՝ 23 տոկոս,
- 150 000-2 000 000 դրամը ներառյալ՝ 34 500 դրամ՝ գումարած 150 000 դրամը գերազանցող գումարի 28 տոկոսը,
- 2 000 000 դրամից ավել՝ 552 500՝ գումարած 2 000 000 գերազանցող գումարի 36 տոկոսը:

Այսպիսով, եթե դիտարկենք նախկինում գործող դրույքաչափերը և այն դրույքաչափերը, որոնք գործում են 2018 թվականից, ապա կտեսնենք, որ մինչև 150 000 դրամ աշխատավարձ ստացողների համար տեղի կունենա դրական տեղաշարժ.

- 120 000 - եկամտահարկ (24.4 %) - արհմիության անդամավճար (0.8 %) = 89 760,
- 120 000 – եկամտահարկ (24.4 %) – արհմիության անդամավճար (0.8 %) - նպատակային սոցվճար (5 %, որը վճարում են

²¹ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 29.12.2000 թ. ՀՕ-130 օրենք, հոդված 8, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=482>

²² «Եկամտային հարկի մասին» ՀՀ 30.12.2010 թ. ՀՕ-246-Ն օրենք, հոդված 10, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80486>

²³ «ՀՀ հարկային օրենսգրք», ՀՀ 01.11.2016 թ. ՀՕ-165-Ն օրենք, հոդված 150, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>

1974 թ. հունվարի 1-ից հետո ծնված անձինք) = 83 760,

- 120 000 - եկամտահարկ (23 %) - արհմիության անդամավճար (0.8 %) = 91 440,
- 120 000 – եկամտահարկ (23 %) – արհմիության անդամավճար (0.8 %) - նպատակային սոցվճար (5 %) = 85 440,
- 150 000 - եկամտահարկ (26 %) - արհմիության անդամավճար (0.8 %) = 109 800,
- 150 000 – եկամտահարկ (26 %) – արհմիության անդամավճար (0.8 %) - նպատակային սոցվճար (5 %) = 102 300,
- 150 000 - եկամտահարկ (23 %) - արհմիության անդամավճար (0.8 %) = 114 300,
- 120 000 – եկամտահարկ (23 %) – արհմիության անդամավճար (0.8 %) - նպատակային սոցվճար (5 %) = 106 800:

Այսպիսով, տեսնում ենք, որ հատկապես շահում են 120 000-150 000 դրամ աշխատավարձ ստացող անձինք: 150 000 - 2 000 000 դրամ ստացողների դեպքում դրույքաչափը բարձրանում է 2 %-ով, սա աշխատողների տեսանկյունից շահավետ չէ, իսկ 2 000 000 դրամից ավել աշխատավարձ ստացողների համար դրույքաչափի փոփոխություն չի սահմանվում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում միջին ամսական անվանական աշխատավարձը 177 000 դրամ և ավել է, ապա կարող ենք ասել, որ բնակչության ստվար զանգվածը տուժել է եկամտահարկի փոփոխություններից:

Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց եկամուտներ վճարելիս եկամտահարկը գանձվում է հետևյալ դրույքաչափերով. ապահովագրությունից ստացված ապահովագրական հատուցումներից և փոխադրման (ֆրախտի) դիմաց ստացված եկամուտներից՝ 5 տոկոս, ռոյալթիներից, տոկոսներից, գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտներից, գույքի արժեքի հավելաճից՝ 10 տոկոս (հին օրենքում՝ 15 տոկոս):

Ուշագրավ է «ՀՀ հարկային օրենսգրքի» հետևյալ դրույթը, որն ուժի մեջ է մտել 2017 թ. հունվարի 1-ից, և ըստ որի՝ օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձանց շահա-

բաժինների մասով եկամտային հարկը հարկվելու է 10 տոկոսով, իսկ ՀՀ քաղաքացիների ստացած շահաբաժինների մասով եկամտային հարկը՝ 5 տոկոսով²⁴: Այսինքն՝ սա կարող է օտարերկրյա քաղաքացիների համար խոչընդոտ հանդիսանալ ՀՀ-ում գործունեություն ծավալելու համար:

«Ակցիզային հարկի մասին» օրենքը ընդունվել է 27.07.2000 թ.: Ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքներն են գարեջուրը, խաղողի և այլ գինիները, սպիրտը (բացառությամբ կոնյակի սպիրտի) և սպիրտային խմիչքները, ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարեկանները և սիգարետները՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով, բենզինը, հում նավթը և նավթամթերքները, դիզելային վառելիքը, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ բնական գազի քայուղերի)²⁵:

2014 թ. հունիսի 10-ից 25 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ³ և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաները հարկման ենթակա չեն (մինչև այդ հարկվում էին 20 տոկոս դրույքաչափով)²⁶:

2017 թ. հունվարի 1-ից փոխվել են ակցիզային դրույքաչափերը. սպիրտային խմիչքները հարկվում են 63 տոկոսով, բայց ոչ պակաս, քան 1 լիտրը 630 դրամ (նախկինում՝ 50 տոկոս), վիսկի, ռոմ և այլ սպիրտային թրմեր՝ 57 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրի համար 3450 դրամ (նախկինում՝ 50 տոկոս), պտուղներից և հատապտուղներից պատրաստված օղի՝ 55 տոկոս, բայց ոչ պակաս, քան 1 լիտրը 55 դրամ, ծխախոտի արտադրանք՝ 15 տո-

²⁴ «ՀՀ հարկային օրենսգիրք», ՀՀ 01.11.2016 թ. ՀՕ-165-Ն օրենք, հոդված 150, 8-րդ կետ: <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>

²⁵ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ 27.07.2000 թ. ՀՕ-79 օրենք, հոդված 3, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95189>

²⁶ «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին 10.06.2014 թ., ՀՕ-24-Ն օրենք, հոդված 2, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90846>

կոս, բայց ոչ պակաս, քան 10 հատի համար 6325 դրամ²⁷:

Այսպիսով, տեսնում ենք, որ դրույքաչափերը բարձրացել են, ինչը հիմնականում պայմանավորված է ԵԱՏՄ անդամակցությամբ:

«Ավելացված արժեքի մասին» օրենքը ընդունվել է 16.06.1997 թ.: Ավելացված արժեքի հարկը անուղղակի հարկ է, որը վճարվում է պետական բյուջե՝ ապրանքի ներմուծման, արտադրության, ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: 2015 թ. մայիսի 30-ից սկսած՝ ցանկացած անձ, որն իրականացնում է տնտեսական գործունեություն, և որի իրականացրած գործարքների հարկվող շրջանառությունը գերազանցում է 58.35 մլն դրամը, համարվում է ԱԱՀ վճարող²⁸:

Օրենքով սահմանված է ԱԱՀ-ի երկու դրույքաչափ²⁹.

- 20 % (եթե հարկի գումարը ներառված է ապրանքի կամ ծառայության գնի մեջ, ապա ԱԱՀ-ն հաշվարկվում է ապրանքների և ծառայությունների ամբողջ արժեքի նկատմամբ 16.67 % հաշվարկային դրույքաչափով),
- 0 %, այսինքն՝ գրոյական դրույքաչափ (այս դրույքաչափը սովորաբար կիրառվում է ապրանքների կամ ծառայությունների արտահանման դեպքում, ինչպես նաև այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք ձեռք են բերվում Հայաստանում դիվանագիտական և նրանց հավասարեցված կազմակերպությունների կողմից պաշտոնական օգտագործման համար):

Այն անձինք, որոնց գործարքների հարկվող շրջանառությունը չի գերազանցում 115 մլն դրամը, համարվում են շրջանառության հարկ վճարողներ:

²⁷ «ՀՀ հարկային օրենսգիրք» ՀՀ 01.11.2016 թ. ՀՕ-165-Ն օրենք, հոդված 445, 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետ,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>

²⁸ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 30.05.2015 թ. ՀՕ-41-Ն օրենք, հոդված 1,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=98064>

²⁹ «Ավելացված արժեքի մասին» ՀՀ 16.06.1997 թ. ՀՕ-118 օրենք, հոդված 9,
<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80579>

2018 թ. հունվարի 1-ից «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքում սահմանվում են շրջանառության հարկի հետևյալ դրույքաչափերը³⁰.

- առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից, անշարժ գույքի և ավտոտրանսպորտային միջոցների օտարումից ստացվող եկամուտներ՝ 5 % («Շրջանառության հարկի մասին» ՀՀ 28.12.2012 թ. ՀՕ-236-Ն օրենքում՝ 3.5 %),
- Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ներառված երկրորդային հումքի առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից ստացվող եկամուտներ՝ 1.5 %,
- խմբագրությունների կողմից թերթերի օտարումից եկամուտներ՝ 1.5 %,
- արտադրական գործունեությունից ստացվող եկամուտներ՝ 3.5 %,
- վարձակալական վճար, տոկոս, ռոյալթի, անշարժ գույքի և ավտոտրանսպորտային միջոցների օտարումից ստացվող եկամուտներ՝ 10 %,
- նոտարական գործունեությունից ստացվող եկամուտներ՝ 10 % («Շրջանառության հարկի մասին» ՀՀ 28.12.2012 թ. ՀՕ-236-Ն օրենքում՝ 20 %),
- վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից ստացվող եկամուտներ՝ 25 %,
- այլ գործունեությունից ստացվող եկամուտներ՝ 5 %:

Այսպիսով, տեսնում ենք, որ նոտարական գործունեությունից ստացվող եկամուտները գանձվելու են ավելի ցածր դրույքաչափով (դրույքաչափը նվազելու է 50 %-ով), իսկ առևտրային գործունեությամբ զբաղվողների համար օրենքում տեղի ունեցած փոփոխությունները շահավետ չեն լինի. նրանց ստացած եկա-

³⁰ «ՀՀ հարկային օրենսգիրք», ՀՀ 01.11.2016 թ. ՀՕ-165-Ն օրենք, հոդված 258, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>

մուտները հարկվելու են ավելի բարձր դրույքաչափով:

2018 թ. հունվարի 1-ից, ըստ «ՀՀ հարկային օրենսգրքի», ԱԱՀ-ի մասով նախատեսվել են որոշակի փոփոխություններ³¹.

- ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը մուտքագրվելու է միասնական հաշվին ՀՀ կառավարության սահմանած ընթացակարգով և ժամկետներում, եթե հարկ վճարողը բավարարում է ՀՀ կառավարության կողմից սահմանած չափաբաժինները, և ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը կազմում է մինչև 20 մլն ՀՀ դրամ,

- մեքենա-սարքավորումների և հումքի ներմուծման դեպքում ԱԱՀ չի վճարվելու: ԱԱՀ վճարվելու է միայն դրանցով արտադրված ապրանքների իրացման դեպքում,

- արտահանողների համար ԱԱՀ-ի հետվերադարձը լինելու է 4 օրում՝ նախկին 90 օրվա փոխարեն:

«Գույքահարկի մասին օրենքը» ընդունվել է 13.01.1998 թ., սակայն ուժը կորցրած է համարվել, և 30.12.2002 թ. ընդունվել է գույքահարկի մասին նոր օրենքը: Գույքահարկը համարվում է ուղղակի հարկ, որը կախված չէ հարկ վճարողի տնտեսական գործունեության արդյունքից: Գույքահարկ հաշվարկվում է շինությունների և փոխադրամիջոցների համար: Շինությունների համար գույքահարկը սահմանվում է հետևյալ կերպ³².

- մինչև 3 մլն դրամը՝ 0 տոկոս,
- 3-10 մլն՝ 100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0,1 տոկոսը,
- 10-20 մլն՝ 7100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10 մլն դրամը գերազանցող մասի 0,2 տոկոսը,
- 20-30 մլն՝ 27100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0,4 տոկոսը,

³¹ «ՀՀ հարկային օրենսգրք», ՀՀ 01.11.2016 թ. ՀՕ-165-Ն օրենք, հոդված 348, 10-րդ կետ, հոդված 62, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>

³² «Գույքահարկի մասին» ՀՀ 30.12.2002 թ. ՀՕ-491-Ն օրենք, հոդված 6, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=68794>

- 30- 40 մլն՝ 67100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0,6 տոկոսը,
- 40 մլն դրամ և ավելի՝ 127100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 1 տոկոսը (հին օրենքում՝ 0.8 տոկոսը³³):

Այսինքն՝ վերջին կետով տեսնում ենք դրական տեղաշարժ՝ սոկոսադրույքը նվազել է: Այդուհանդերձ, 2020 թ. դրությամբ գույքահարկի մասով կրկին նախատեսվում են փոփոխություններ, որն իրականություն դառնալու պարագայում էապես նմեճանա գույքահարկի մասով հարկային բեռը բնակչության, հատկապես՝ անապահով հատվածի համար:

«Հողի հարկի մասին» օրենքը ընդունվել է 27.04.1994 թ.: Հողի հարկը հաշվարկվում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքի ձեռքբերման ամսվան հաջորդող ամսվա 1-ից և դադարում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքը դադարելու ամսվա հաջորդող ամսվա 1-ից³⁴: Այն կախված չէ վճարողի տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով՝ տարվա համար:

«Հաստատագրված վճարների մասին» օրենքը ընդունվել է 22.07.1998 թ., որն իրենից ենթադրում է ԱԱՀ և շահութահարկը փոխարինող պարտադիր և անհատույց վճար: Հաստատագրված վճար իրականացնող են համարվում իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք իրականացնում են ավտոտրանսպորտային գործունեություն, վիճակախաղերի կազմակերպում, ավտոտրանսպորտային միջոցների գազալցման գործունեություն³⁵:

2017 թ. հունվարի 1-ից գործում է «Բնքնագրադված անձանց

³³ «Գույքահարկի մասին» ՀՀ 13.01.1998 թ. ՀՕ-187 օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=493>

³⁴ «Հողի հարկի մասին» ՀՀ 27.04.1994 թ. ՀՕ-101 օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75283>

³⁵ «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ 22.07.1998 թ. ՀՕ-238 օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87126>

հարկային արտոնությունների մասին» ՀՀ օրենքը, ըստ որի՝ գործունեության որոշ տեսակների համար գործում են հարկային արտոնություններ³⁶.

1. Բնակչության պատվերով կատարվող՝

- կոշիկի և կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն, կոշիկի և կաշվե գալանտերեայի պարագաների արտադրություն, կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում,
- հագուստի արտադրություն և նորոգում,
- փայտյա իրերի պատրաստում, կահույքի և տան կահավորանքի նորոգում,
- ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և նորոգում,
- համակարգչային տեխնիկայի, հեռուստացույցների, լվացքի մեքենաների, օդորակիչների և այլ կենցաղային տեխնիկայի նորոգում, ծրագրային սպասարկում,
- հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն, անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում,
- տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն,
- այլ ձեռնապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն,
- թիթեղագործական գործունեություն և այլն,

2. Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում, երաժշտական գործիքների նորոգում,

3. լեզուների ուսուցման դասընթացներ,

4. Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ,

5. նեղ մասնագիտական գիտելիքների ձեռքբերման այլ դասընթացներ,

³⁶ «Ինքնագրադրված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ 30.12.2006 թ. ՀՕ-261-Ն օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110550>.

6. պարեր, երգեցողություն դասավանդողների գործունեություն,

7. ստեղծագործական գործունեություն,

8. կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում,

9. զբոսաշրջային տների միջոցով հյուրանոցային ծառայությունների մատուցում և այլն:

Այսպիսով, վերոնշյալ փոփոխությունները ամփոփելով, կարող ենք փաստել, որ 1998 թվականից սկսած՝ ՀՀ ում կարծես ավանդույթ է դարձել օրենքներում փոփոխություններ իրականացնելը: Սակայն օրենսդրաիրավական դաշտում իրականացված փոփոխությունների մեծ մասը ներդրողների համար սահմանում է ոչ շահավետ պայմաններ. հարկադրույքների հաճախակի փոփոխությունները, որոնք հիմնականում ներդրողների տեսանկյունից ոչ շահավետ ուղղությամբ են փոխվում, կարող են բերել նրան, որ տնտեսվարող սուբյեկտների մեծ մասը չցանկանա ՀՀ-ում ներդրում իրականացնել: Ավելին՝ անգամ հարկադրույքների հաճախակի փոփոխությունը ի նպաստ ներդրողի կարող է պատճառ դառնալ պոտենցիալ ներդրումների կրճատման: Թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրողը առավել նախապատվություն կտա կայուն միջավայրում գործունեություն ծավալելուն, քանի որ իր ձեռնարկության գործունեության հետ կապված գնահատականներն ու կանխատեսումներն իրականացնում է՝ ելնելով որոշակի գործոնների հիման վրա հաշվարկներից: Այդ գործոնների պարբերական փոփոխությունները, նախ, խախտում են ներդրողի սպասումներն ու կանխատեսումները և, բացի այդ, հիմք են տալիս ենթադրելու, որ փոփոխությունները եթե անգամ այսօր ի նպաստ են, ապա նույն հաջողությամբ վաղը կարող են կատարվել ի վնաս: Եթե երկիրը որդեգրել է անկայուն քաղաքականության վարում, ապա յուրաքանչյուր ներդրողի և հատկապես օտարերկրյա խոշոր ներդրողի հիմնական նպատակն է լինելու իր կողմից տնօրինվող միջոցների դուրսբերումը տվյալ երկրից:

Իհարկե, ներդրումային դաշտը կարգավորող օրենսդրությունը քննարկելիս չենք կարող ուշադրությունից բաց թողնել նաև

երկրում առկա մաքսային կարգավորումները, որոնք, ի դեպ, էականորեն փոփոխվել են ԵԱՏՄ անդամակցությունից հետո: Հիմնականում այդ փոփոխությունները ի վնաս ներմուծողի են, բնականաբար նաև՝ ի վնաս ներդրողի:

ԵԱՏՄ անդամակցությունից հետո՝ 2014 թ. դեկտեմբերի 17-ին ընդունված մաքսային կարգավորման մասին ՀՀ օրենքում կատարվեցին մի շարք փոփոխություններ: Մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամակցության պայմանագրի 42-44-րդ հոդվածների համաձայն՝ միության տարածքում կիրառվում է ԵԱՏՄ միասնական մաքսային սակագին, որը հաստատվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից:

Մինչև ԵԱՏՄ անդամակցությունը ՀՀ ներմուծման մաքսադրույքը կազմել է 0-10 %՝ կախված ապրանքախմբերից³⁷: Իսկ ԵԱՏՄ անդամակցությունից հետո ՀՀ ներմուծման մաքսադրույքները տարբերակվելու են հետևյալ կերպ.

- միության անդամ երկրներից ապրանք ներմուծելու դեպքում մաքսատուրքեր չեն գանձվում,
- երրորդ երկրներից ապրանքների ներմուծման դեպքում գործելու են միության միասնական մաքսատուրքերը՝ համաձայն ԵԱՏՄ հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54-րդ որոշման³⁸. դրանք տատանվում է 0-65 %-ի սահմաններում՝ կախված ապրանքախմբից:

Իհարկե, ԵԱՏՄ անդամակցությունից հետո միասնական մաքսադրույքների կիրառմանն անցնելու համար Հայաստանին տրամադրվել է մինչև 10 տարի արտոնյալ ժամանակահատված՝ 752 ապրանքի համար նախկին՝ ավելի ցածր, իսկ 18 ապրանքատեսակի համար՝ ավելի բարձր մաքսադրույքի պահպանման համար: Վերջիններս հիմնականում գյուղատնտեսական ապրանքներ են, որոնց համար ՀՀում սահմանված էր 10 տոկոս մաքսա-

³⁷ Հայաստանի Հանրապետության Մաքսային Օրենսգիրք, ընդունվել է 06.07.2000, հոդված 102, Մաքսատուրքի դրույքաչափերը:

³⁸ <http://www.eurasiancommission.org/hy/nae/events/Pages/78654254.aspx>, ԵԱՏՄ հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54-րդ որոշում:

դրույք՝ տեղական արտադրողին պաշտպանելու նպատակով, մինչդեռ ԵԱՏՄ միասնական սակագնով այն նվազելու է գրեթե կրկնակի՝ հարվածի տակ դնելով գյուղմթերք արտադրողների մրցունակությունը: Այդուհանդերձ, արտոնյալ ժամանակահատվածը միայն կարող է նպաստել, որպեսզի անցումները լինեն ավելի սահուն, սակայն ոչ մի կերպ չի նվազեցնի փոփոխությունների բացասական ազդեցությունը, որոնք օրեցօր սրվում են: Մասնավորապես՝ վերջին դժգոհությունները պայմանավորված են արդեն 2020 թ. ուժի մեջ մտած հավաքական բեռների ներմուծման նոր մաքսային կարգավորումներով, որոնց արդյունքում ներմուծման արժեքը թանկացել է գրեթե 6 անգամ:

Ոչ մաքսային կարգավորման գործիքներից կարևորվում են ԵԱՏՄ և ոչ ԵԱՏՄ երկրների համար լիցենզիաների տրամադրումը, ինչպես նաև մի շարք ապրանքների վրա որակի մասին հավաստող մակնշումը: ԵԱՏՄ անդամակցությունից ի վեր այն արտադրողները, որոնց արտադրանքն ուղղվում է ոչ միայն ԵԱՏՄ, այլև այլ երկրների շուկաներ, ստիպված են կրկնակի անցնել նշված գործընթացի փուլերով, որպեսզի ստանան լիցենզիա կամ որակի մակնշում ԵԱՏՄ և ոչ ԵԱՏՄ երկրների համար:

Անդրադառնալով լոգիստիկ ենթակառուցվածքի իրավական կարգավորման փոփոխություններին՝ նշենք, որ 1993 թվականից ՀՀ-ը միացել է Միջազգային ավտոմոբիլային տրանսպորտի մասին (TIR) կոնվենցիային, որի անդամ է նաև ՌԴ-ն: Սակայն 2013 թվականից ՌԴ-ն միակողմանի հրաժարվեց TIR գրքույկի կիրառմամբ բեռների միջազգային փոխադրման կոնվենցիայից՝ առաջարկելով իր կողմից մշակված առավել բարդ և ծախսային մաքսային ընթերցակարգ: Այսպիսով, ԵԱՏՄ անդամ երկրների տրանսպորտային հաղորդակցության խնդիրը դեռևս անորոշ է, ամենայն հավանականությամբ կմշակվի մեկ միասնական ընթերցակարգ ԵԱՏՄ անդամ երկրների համար:

Այսպիսով, թե՛ հարկային դաշտում մշտապես կատարվող փոփոխությունները, թե՛ ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված արտահանման և ներմուծման գործընթացների փոփոխությունները նվազեցնում են ՀՀ ներդրումային դաշտի գրավչու-

թյունը: Իհարկե, այն որոշակիորեն փոխհատուցվում է արտահանման մեծ շուկայի առկայությամբ, որն ապահովում է ԵԱՏՄ անդամակցությունը, սակայն իրավական կարգավորումների առումով փոփոխությունները խոստումնալից չեն:

Մեկ այլ էական խնդիր, որն առաջացել է բավականին վերջերս, Հայաստանի Հանրապետության գործարար միջավայրի բարելավման ռազմավարության նախագծի մշակումն է: Անշուշտ, նախագծի մշակումը կլիներ միանգամայն դրական քայլ, եթե նպաստեր գործարար միջավայրի բարելավմանը: Սակայն ներկայացված տեսքով նախագիծը պարունակում է այնքան խնդրահարույց դրույթներ, որ այն ավելի շուտ կարող է խոչընդոտել գործարար միջավայրի բարելավմանը:

Մեր կողմից արձանագրված խնդիրները ներկայացնում ենք ստորև:

Ռազմավարության տեսլականը՝ 2.3 բաժնում նշված է. «Ռազմավարության տեսլականն է՝ նախատեսվող միջոցառումների արդյունքում լինել գործարար և ներդրումային միջավայրի գրավչությամբ աշխարհի առաջին 15 երկրների շարքում»: Առաջին հայացքից շատ ողջունելի թիրախ է: Այդուհանդերձ, Ռազմավարության թիրախները՝ 4.2 բաժնում նշվում է միայն Doing business ինդեքսով առնվազն 15-րդ տեղը գրավելու մասին: Այսինքն՝ տվյալ պարագայում գործարար և ներդրումային միջավայրի գրավչությամբ աշխարհի առաջին 15 երկրների շարքում լինելը նույնականացված է Doing business ինդեքսով առնվազն 15-րդ տեղը գրավելու հետ: Առնվազն միամտություն է կարծել, որ Doing business-ում 15-րդ տեղը գրավելու արդյունքում ՀՀ-ն կդառնա ներդրումային գրավչություն ունեցող առաջին 15 երկրներից մեկը: Որպես սավաճի ապացույց նշենք, որ 2019 թ. Doing business-ի տվյալներով (սա գնահատվում է 2018-ի արդյունքների հիման վրա) Լիտվան զբաղեցնում է 14-րդ հորիզոնականը, Ադրբեջանը՝ 25-ը, իսկ օրինակ՝ Ճապոնիան՝ 39-ը, Բելգիան՝ 45-ը, Լյուքսեմբուրգը՝ 66-ը: Արդյո՞ք սա նշանակում է, որ վերջին 3 երկրները ներդրումային ավելի քիչ գրավչություն ունեն, քան Ադրբեջանն ու Լիտվան: Ընդ որում՝ 2018 թ. Ճապոնիայի ՕՈՒՆ զուտ ներհոս-

քը կազմել է 26 մլրդ դոլար՝ աճելով նախորդ տարվա համեմատ, երբ Ճապոնիան ավելի բարձր դիրք էր գրավում Doing business-ում (34-րդ տեղ), իսկ Լիտվայինը՝ 1 մլրդ դոլարից քիչ, ինչը նվազել է նախորդ տարվա համեմատ, երբ Լիտվան ավելի ցածր դիրքում էր (16-րդ տեղ), Ադրբեջանինը՝ 1.5 մլրդ դոլարից քիչ, որը նվազել է նախորդ տարվա համեմատ, երբ Ադրբեջանն անհամեմատ ցածր դիրքում էր (57-րդ հորիզոնական): Ինչպես տեսնում ենք, ավելի ցածր հորիզոնականներում գտնվող երկրներում ներդրումների ներհոսքն ավելի մեծ է եղել, քան ավելի բարձր դիրքում գտնվող երկրներում: Միննույն ժամանակ՝ նույն երկրում ներդրումների հոսքը մեծացել է այն պարագայում, երբ նրա դիրքերը Doing business վարկանիշային աղյուսակում վատացել են: Ուստիև ստիպված ենք փաստել, որ Doing business վարկանիշային աղյուսակում բարձր դիրք գրավելն ու դիրքի բարելավումը չեն կարող հանդիսանալ ներդրումային գրավչության վրա ազդող էական գործոն, հատկապես որ տվյալ ցուցանիշի շրջանակում դիտարկվում են հիմնականում ընթացակարգային խնդիրներ, այլ ոչ հիմնարար բարեփոխումներ:

Թիրախները և դրանց չափման մեթոդաբանությունը՝ 4.1, բաժնում նշվում է. «Սույն ռազմավարության շրջանակը միայն մասամբ է ներառված Գլոբալ մրցունակության ինդեքսի և Տնտեսական ազատության ինդեքսի հաշվարկման մեթոդաբանության հիմքում: Մասնավորապես՝ գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկման համակարգում սույն ռազմավարության շրջանակից ներառված գործոնների ընդհանուր կշիռը չի գերազանցում ինդեքսի հաշվարկման վրա ընդհանուր ազդեցության 15 %-ը»: Այս պնդումն անհասկանալի է, քանի որ գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկում ներառված 116 ցուցանիշներից 86-ը էականորեն ազդում են գործարար միջավայրի զարգացման վրա, և նրանց ազդեցությունը ընդհանուր ինդեքսի հաշվարկի վրա կազմում է ավելի քան 80 %: Ուստիև եթե տվյալ ռազմավարության շրջանակում ներառված են գլոբալ մրցունակության ինդեքսի հաշվարկման վրա ընդհանուր 15 % ազդեցություն ունեցող գործոններ, դա առնվազն նշանակում է, որ գործարար միջավայ-

րի զարգացման վրա ազդող շատ մեծ թվով գործոններ չեն քննարկվել տվյալ ռազմավարության շրջանակում:

Ռազմավարության թիրախները՝ 4.2 բաժնում փորձ է արվել թիրախավորել Doing business-ի ենթասյուններում ՀՀ դիրքն այնպես, որ վերջնական արդյունքում ՀՀ դիրքը Doing business վարկանիշային աղյուսակում լինի առնվազն 15-րդը: Ընդ որում՝ Ռազմավարության Հավելված 1-ում վերլուծվում է 15-րդ հորիզոնականում հայտնված երկրների միավորները մի քանի տարվա համար և նշվում է. «Բոլոր դեպքերում տարեցտարի աճում է տվյալ տեղում հայտնվելու համար անհրաժեշտ միավորի թիվը»: Այս ամենով հանդերձ՝ ՀՀ-ի համար ընտրված թիրախները ոչ մի պարագայում հնարավորություն չեն տա հայտնվել առնվազն 15-րդ հորիզոնականում: Քննարկենք դրանցից մեկը. շինարարական թույլտվությունների համար թիրախային միավոր է սահմանվել 80.83: 2019 թ. գեկույցում այս ցուցանիշի մասով 15-րդ հորիզոնականում գտնվում է Հյուսիսային Մակեդոնիան, որի միավորը 83.5 է: Ուստի հարց է առաջանում՝ ինչպե՞ս կարող է տարիներ անց ավելի ցածր միավոր հավաքած երկիրը զբաղեցնել առնվազն 15-րդ հորիզոնականը:

Ռազմավարության 5.11, 5.12, 5.13 բաժինները չունեն որևէ թիրախավորում, ներկայացված են խիստ վերացական, ուստիև հետագայում չափման և ստուգման հնարավորություն չեն տալու: Այս բաժիններում շարադրված տրամաբանությամբ տվյալ ոլորտում իրականացված կես քայից մինչև անթիվ քայլերով իրականացված բարեփոխումները պետք է դիտարկվեն որպես տվյալ բաժնով նախատեսված միջոցառումների իրականացում, ինչը անթույլատրելի է: Մասնավորապես՝ ռազմավարությունում ներկայացված ձևակերպմամբ անհասկանալի է՝ արդյո՞ք կարող ենք ՀՀ աշխատանքային օրենսգրքում մի բառի փոփոխությունը համարել տվյալ ոլջ բաժնով նախատեսված միջոցառումների ամբողջություն, թե՞ առավել մասշտաբային ու լուրջ փոփոխություններից հետո միայն կհամարենք, որ տվյալ բաժնով նախատեսված միջոցառումներն իրականացվել են: Մեկ այլ օրինակ. Կորպորատիվ կառավարում՝ 5.13 բաժնում նախատեսվում է «մշակել

մասնավոր հատվածում կանոնագրքի կիրառման և այն կիրառող ընկերությունների խրախուսման գործիքակազմ»: Տվյալ պարագայում ի նչ գործիքակազմի մասին է խոսքը: Դա կարող է լինել, օրինակ, պետական գնումների պարագայում կորպորատիվ կառավարման կանոնագիրք ներդրած ընկերություններին առաջնահերթություն տալը կամ այն ներդրած ընկերություններին հարկային և այլ արտոնություններ կամ նրանց նկատմամբ վերահսկողության մեղմ մեխանիզմներ կիրառելը: Բոլոր նշված միջոցառումները, սակայն, կա՛մ առաջացնելու են կոռուպցիոն ռիսկեր, կա՛մ նպաստելու են փոքր բիզնեսի համար անհավասար մրցակցության և ավելի խիստ վերահսկողության՝ այսպիսով վերացնելով այն: Հասկանալի է, որ փոքր բիզնեսի համար մեծ ճոխություն է կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրումն ու դրա կիրարկումը: Այսպիսով, սույն ռազմավարության մեջ ներկայացված վերացական գաղափարների արդյունքում կարող են հետագա տարիներին իրականացվել փոքր բիզնեսի վիճակի վատթարացմանն ուղղված կամ կոռուպցիոն նոր մեխանիզմներ առաջադրող միջոցառումներ՝ հիմնավորելով այն սույն ռազմավարության տվյալ բաժնով նախատեսված թիրախների իրագործմամբ:

Չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ այսօրվա ռազմավարության մշակողն ու վաղվա իրականացնողը կարող են տարբեր անձինք լինել, որոնք չեն կարող գուշակել, թե ինչ էին ենթադրել իրականացնել ռազմավարությունը մշակողները: Ուստի անհրաժեշտ է հստակ ներկայացնել թիրախները և ընտրել չափելի ցուցանիշներ: Միայն այդ դեպքում հնարավոր կլինի արդյունավետ գործողությունների իրականացման ծրագիր մշակել, իրականացնել և ստուգել՝ արդյո՞ք հասել ենք թիրախներին, թե՞ թերացել ենք:

Ռազմավարության մոնիտորինգ, գնահատում և հաշվետվողականություն՝ 6-րդ բաժնում նշվում է. «Ռազմավարության իրականացման մոնիտորինգի նպատակով գործողությունների իրականացման համար պատասխանատու կամ համակատարող մարմինները եռամսյակային պարբերականությամբ հաշվետվություններ

կտրամադրեն սույն ռազմավարության իրականացման համար պատասխանատու լիազոր մարմինին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը: Վերջինս կիրականացնի ընթացիկ մոնիտորինգ, որը ենթադրում է... գործողությունների կատարման ծավալից ելնելով, դրանց ազդեցության կանխատեսում միջազգային վարկանիշներում Հայաստանի դիրքի տեսանկյունից...»: Այս սկզբունքը ևս վկայում է այն մասին, որ ռազմավարությունն ուղղված է բացառապես միջազգային վարկանիշային աղյուսակներում ՀՀ դիրքի բարելավմանը, քանի որ թիրախավորման որևէ այլ տարբերակ չի նախատեսվում:

Ռազմավարության SWOT վերլուծություն՝ 7-րդ բաժնում ներկայացված է չափազանց մակերեսային վերլուծություն, որը չի ներառում խնդիրների մանրակրկիտ ուսումնասիրություն: Ընդ որում՝ SWOT վերլուծությունը պետք է իրականացվեր ոչ թե ռազմավարության վերջում, այլ սկզբում, և առհասարակ իմաստ չունի ռազմավարության մեջ այն ներառել: SWOT վերլուծությունը պետք է իրականացվի ռազմավարության մշակման նախնական փուլում, որի արդյունքում կբացահայտվեն ՀՀ գործարար միջավայրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները: Եվ միայն դրանց խորքային բացահայտումից հետո պետք է մշակվի ռազմավարությունը, որը միտված կլինի առկա ուժեղ կողմերի պահպանմանն ու կատարելագործմանը, թույլ կողմերի հնարավորինս առավելագույն չափով նվազեցմանը, հնարավորությունների օգտագործմանը և ռիսկերը մեղմելուն ուղղված քայլերի մշակմանը: SWOT վերլուծության խորքային իրականացումը անհրաժեշտաբար պետք է պարունակի առնվազն 3 փուլով վերլուծություն.

1. գործարարների խնդիրների բացահայտում նրանց շրջանում անցկացված սոցիոլոգիական հարցման միջոցով,
2. միջազգային վարկանիշային աղյուսակներում երկրի դիրքի և այն պայմանավորող գործոնների դինամիկայի, ինչպես նաև տարածաշրջանի կամ այլ թիրախային երկրների խմբի (օրինակ՝ ԵԱՏՄ) հետ համեմատական վերլուծություն,
3. գործարար միջավայրի վրա ազդող այլ ցուցանիշների դինա-

միկայի և երկրների թիրախային խմբի հետ համեմատական վերլուծություն:

Առնվազն այս 3 փուլերից հետո միայն դրանց արդյունքների ընդհանրացմամբ հնարավոր կլինի վեր հանել ՀՀ գործարար միջավայրի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու վտանգները: Հակառակ դեպքում, եթե խորապես բացահայտված չեն վերոնշյալները, ապա ինչի՞ բարելավմանն է ուղղված ռազմավարությունը՝ բացահայտ խնդիրների՞, որոնք առանց որևէ վերլուծության պարզ են: Մա անթույլատրելի մոտեցում է ռազմավարության մշակման համար, քանի որ ռազմավարության հիման վրա հետագա 5 տարիների ընթացքում մշակվելու են գործողությունների ծրագիր և ժամանակացույց, որոնք փաստորեն միայն ակնհայտ խնդիրների լուծմանն են ուղղվելու՝ բաց թողնելով ուշադրությունից շատ կարևոր խնդիրներ: Մրա արդյունքում տնտեսությունը կա՛մ շատ փոքր տեմպերով կզարգանա, կա՛մ չի զարգանա: Ուստիև նման ճոխություն մեզ թույլ տալ չենք կարող:

Այս ամենով հանդերձ անգամ՝ պետք է նշել, որ ներկայացված նախագիծը ուղղված չէ նույնիսկ ակնհայտ խնդիրների լուծմանը. այն մեծամասամբ նվիրված է Doing business վարկանիշային աղյուսակում ՀՀ դիրքերի բարելավմանը, քանի որ ռազմավարության 10 էջը նվիրված է Doing business-ում դիրքերի բարելավմանն ուղղված քննարկումներին, 0,5 էջը՝ աշխատանքային օրենսդրությանը, 1,5 էջը՝ տնտեսական մրցակցության պաշտպանությանը, 1 էջը՝ կորպորատիվ կառավարմանը, 0,5 էջը՝ ինտեգրված տվյալների համակարգին: Կրկին պետք է նշենք, որ Doing business ցուցանիշը բավական հեռու է գործարար միջավայրի զարգացման աստիճանի ցուցիչ լինելուց, որի պատճառներն արդեն իսկ քննարկվել են վերլուծությունում:

Այսպիսով, սույն ռազմավարությունը դեռևս շատ հեռու է արդյունավետ ռազմավարություն լինելուց: Դրանում ներկայացված թիրախային ցուցանիշները հնարավորություն չեն տալու առաջիկա 5 տարիների հասնելու գլխավոր թիրախին՝ գործարար և ներդրումային միջավայրի գրավչությամբ աշխարհի առաջին 15 երկրների շարքում ՀՀ-ի դիրքավորմանը: Առանձին բաժիններ

չունեն հստակ սահմանված թիրախներ և չափելի չեն, ուստի անհնար է դրանց իրականացումը գործնականում ստուգել: Ի վերջո, մի շարք բաժինների վերացական ներկայացումը ապագայում կարող է հնարավորություն տալ այնպիսի միջոցառումների իրականացման, որոնք ոչ թե կբարելավեն, այլ կվատթարացնեն ՀՀ գործարար միջավայրի և ներդրումային գրավչությունը:

1.4. ՀՀ-ում ներդրումային միջավայրի առավելություններն ու թերությունները

Հայաստանն այսօր աշխարհին հայտնի է որպես էներգիայի արտաքին աղբյուրներից ու շուկաներից կախում ունեցող, զարգացման մարտահրավերներով և աշխարհագրական սահմանափակումներով երկիր: Հայաստանի, ինչպես նաև գրեթե բոլոր երկրների հետագա զարգացման վրա իր անդառնալի հետքը թողեց 2008 թ. ֆինանսատեսական համաշխարհային ճգնաժամը՝ ազդելով թե՛ աղքատության, թե՛ գործազրկության վրա: Այնուհետև անցումային շրջանում բազմաթիվ երկրներ սկսեցին կարևորել և իրականացնել ներդրումների ներգրավմանը ուղղված մի շարք ռազմավարություններ և օրենքներ: Ներդրումների ուղիղ կապը տնտեսական բազմաթիվ ցուցանիշների հետ բազմաթիվ երկրների ստիպեց ստեղծել համապատասխան տնտեսական միջավայր ներդրումների ներգրավման համար:


Համաշխարհային փորձը վկայում է, որ յուրաքանչյուր երկրի ներդրումային միջավայր ունի երկու հիմնական բաղկացուցիչ՝ ներդրումային ներուժ և ներդրումային ռիսկ, որոնք էլ իրենց հերթին բաղկացած են առանձին տարրերից: Ուսումնասիրելով տարբեր տնտեսագետների վերլուծություններ՝ մենք ամփոփ ներկայացրել ենք ներդրումային ներուժի և ներդրումային ռիսկի առանձին տարրերի վրա ազդող հնարավոր գործոնները և սույն ենթագլխում կներկայացնենք ՀՀ առավելություններն ու թերությունները այդ գործոնների ձևավորման տեսանկյունից: ՀՀ ներդրումային միջավայրը ձևավորող գործոնների վերլուծության համար ընտրել ենք համեմատական վերլուծության մեթոդը³⁹, որի արդյունքում կներկայացնենք ԵԱՏՄ-անդամ, ինչպես նաև հարևան երկրների՝ Ադրբեջանի, Թուրքիայի, Իրանի և Վրաստանի համեմատ ՀՀ ներդրումային միջավայրի առավելություններն ու թե-

³⁹ Լ. Ն. Սարգսյան, Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 178:

րությունները: Համեմատական վերլուծության համար դիտարկվող երկրների ցուցանիշների տվյալները վերցված են հետևյալ կայքերից՝

- <http://wits.worldbank.org/>,
- <http://www.doingbusiness.org/>,
- <http://knoema.com>,
- <http://www.theglobaleconomy.com>,
- <http://www.tradingeconomics.com>:

Այսպիսով, փորձենք հասկանալ, թե որոնք են ՀՀ ներդրումային միջավայրը պայմանավորող գործոնների առավելություններն ու թերությունները: Այդ նպատակով մենք առանձին-առանձին կդիտարկենք գործարարություն իրականացնելու դյուրինության ինդեքսը՝ իր առանձին ենթապայուներով, ինչպես նաև ներդրումային ներուժի և ներդրումային ռիսկի գնահատման համար մասնագիտական գրականության հիման վրա մեր կողմից ընտրված 50 ցուցանիշներ:




Գծապատկեր 1.4.1. Բնակչության թվաքանակը (մլն մարդ)⁴⁰

Ըստ գծապատկեր 1.4.1-ի՝ բնակչության թվաքանակը բոլոր երկրներում աճել է, սակայն Հայաստանը իր բնակչության սակավաթիվ լինելով զգալի տարբերվում է մնացյալ 8 երկրներից: Հայաստանում 2018 թ. ապրում է 2951776 մարդ, սակայն հայերի ընդհանուր քանակը ամբողջ աշխարհում նվազագույնը կազմում

⁴⁰ <https://databank.worldbank.org/reports.aspx?source=2&series=SP.POP.TOTL&country=ARM>

է 10-12 մլն մարդ: 2018 թ., ի տարբերություն 2010 թ., ՀՀ-ում բնակչությունը աճել է 74457 մարդով: Բնակչության սակավ թվաքանակով ՀՀ-ին հաջորդում է Վրաստանը, որտեղ 2018 թ. ապրում էր 3731000 մարդ: 2018 թ., ի տարբերություն 2010 թ., Վրաստանի բնակչությունը նվազել է 55695 մարդով: Իսկ Ղրղզստանի բնակչությունը, ի տարբերություն ՀՀ-ի և Վրաստանի, փոքր-ինչ շատ է և 2010-2018 թթ. գրանցել է 867900 մարդով աճ: Անդրադառնալով Բելառուսի և Ադրբեջանին՝ նշենք որ Բելառուսի բնակչությունը աճ է գրանցել 2012-2016 թթ., որից հետո մինչև 2018 թ. բնակչությունը նվազել է: Սակայն Ադրբեջանի բնակչությունը 2010-2018 թթ. աճել է 888002 մարդով: Այնուամենայնիվ բնակչության մեծությամբ աչքի է ընկնում ՌԴ-ն, որտեղ 2010-2017 թթ. գրանցվել է բնակչության աճ, իսկ այնուհետև 2018 թ., համեմատած 2017 թ. հետ, եղել է բնակչության անկում 18690 մարդով: ՌԴ-ից հետո մեծաթիվ բնակչություն ունեն նաև Թուրքիան և Իրանը: Ինչպես Թուրքիան, այնպես էլ Իրանը 2010-2018 թթ. գրանցել են բնակչության աճ. 2018 թ., համեմատած 2010 թ. հետ, Թուրքիայի բնակչությունը աճել է 9992736 մարդով, իսկ Իրանինը՝ 8037750 մարդով:



Գծապատկեր 1.4.2. 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը (%)⁴¹


Ըստ վերը նշված վելուծության՝ պարզ է դառնում, որ ՀՀ

⁴¹ <https://databank.worldbank.org/reports.aspx?source=2&series=SP.POP.1564.TO.ZS&country=ARM>

դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից 2010-2018 թթ. թե՛ ԵԱՏՄ երկրների շարքում, թե՛ հարևան երկրների շարքում անբարենպաստ է, քանի որ դիտարկվող երկրների շարքում ապահովում է ամենաքիչ բնակչության թվաքանակը:

15-64 տարեկան բնակչության տեսակարար կշռի ցածր մակարդակ ունի Ղրղզստանը, որտեղ 2010-2018 թթ. 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը նվազել է 2,5 %-ով: Այստեղ ամենաբարձր ցուցանիշը եղել է 2010 թ.՝ 65,6 %: Վրաստանում 2010-2018 թթ. 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը նվազել է 2,5 %-ով: Ղազախստանի ցուցանիշը նույնպես նվազել է 5 %-ով 2010-2018 թթ.: Իրանում և Բելառուսում 2010-2018 թթ. 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը նվազել է համապատասխանաբար 2 և 3,4 %-ով: Հաջորդ երկիրը Թուրքիան է, որտեղ 2010-2018 թթ. աստիճանաբար աճել է 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը 0,9 %-ով: ՀՀ-ում 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը 2010-2012 թթ. աճել է 0,2 %-ով, իսկ սկսած 2012 թվականից մինչև 2018 թ. այն նվազել է 1,6 %-ով: 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը 2011 և 2012 թվականներին եղել է համեմատաբար ավելի բարձր՝ 69,7 %: 2010-2012 թթ. Ադրբեջանում 15-64 տարեկան բնակչության տեսակարար կշիռը աճել է 0,4 %-ով, այնուհետև 2012-2018 թթ. այն նվազել է 1,3 %-ով: Ամենաբարձր ցուցանիշը եղել է 2012 թ.՝ 71,7 %: Համաձայն վերը նշված վելուծության՝ ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում ավել բարենպաստ է քան Ղազախստանի ու Ղրղզստանի դիրքը, իսկ հարևան երկրների շարքում գերազանցում է Վրաստանին և Թուրքիային:


Համաձայն գծապատկեր 1.4.3-ի՝ 2010-2018 թթ. կյանքի սպասվող տևողությունը վերը նշված երկրներում ապահովել է աճ: ՀՀ-ում 2017 թ., ի տարբերություն 2010 թ., այս ցուցանիշը աճել է 1,4 տարով, ՀՀ-ում կյանքի սպասվող տևողությունը 2017 թ. 74,7 տարի է: ՌԴ-ում այս ցուցանիշը նույնպես աճել է և 2017 թ., ի տարբերություն 2010 թ., կյանքի սպասվող տևողությունը աճել է 3,3 տարով:



Գծապատկեր 1.4.3. Կյանքի սպասվող տևողությունը ծննդից (տարի)⁴²

Կյանքի սպասվող տևողության ցուցանիշը 2010-2017 թթ. աճել է նաև Թուրքիայում՝ 1,9, Վրաստանում՝ 0,8, Ղազախստանում՝ 4,6, Ղրղզստանում՝ 1,9, Իրանում՝ 2,2, Բելառուսում՝ 3,7 և Աղրբեջանում՝ 1,2 տարով:

Ըստ վերը նշված վերլուծության՝ ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում 2010-2018 թթ. գերազանցում է բոլորին, իսկ հարևան երկրների շարքում 2010-2018 թթ. զիջում է Իրանին և Թուրքիային:




Գծապատկեր 1.4.4. Բնակչության տարեկան աճը (%)

ՀՀ-ում 2010 և 2011 թթ. բնակչության աճի տեսակարար կշիռը

⁴² <https://databank.worldbank.org/reports.aspx?source=2&series=SP.DYN.LE00.IN&country=ARM>


կազմել է -0,4 և -0,02 %, այնուհետև 2011-2014 թթ. բնակչության տեսակարար կշիռը աճել է 0,48 %-ով, սակայն 2014-2018 թթ. այն նվազել է 0,3 %-ով: Այսպիսով, ՀՀ-ում բնակչության տարեկան բարձր աճ եղել է 2014 թ.: Բնակչության տարեկան աճի վատ ցուցանիշով աչքի են ընկնում նաև Վրաստանը և Բելառուսը: Այսպես, Վրաստանում 2010-2013 թթ. բնակչության աճը եղել է բացասական, համապատասխանաբար՝ -0,7, -0,8, -0,7, -0,3 %: Այնուամենայնիվ, մինչև 2018 թ. այս ցուցանիշով տվյալ երկրում զգալի փոփոխություններ չեն եղել: Իսկ Բելառուսում բնակչության տարեկան աճի ցուցանիշը 2010-2012 թթ. նույնպես եղել է բացասական՝ -0,1, -0,2, -0,1 %, իսկ արդեն 2013-2015 թթ. եղել է բնակչության տարեկան աճ, այնուհետև կրկին այս ցուցանիշը նվազել է: Բնակչության տարեկան աճի նվազում ունեցել են նաև Ռուսաստանը, Ադրբեջանը, Ղազախստանը, Ղրղզստանը և Թուրքիան: Բնակչության տարեկան աճ ունեցել է միայն Իրանը, որտեղ 2018 թ., ի տարբերություն 2010 թ., այն կազմել է 0,3 %: Համաձայն վերը շարադրված վերլուծության՝ ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում 2010-2018 թթ. զիջում է Ղազախստանին և Ղրղզստանին, իսկ հարևան երկրների շարքում գերազանցում է Վրաստանին:



Պատկեր 1.4.5. Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի տարեկան աճը (%)

Երկրի բնակչության կյանքի որակը գնահատելու համար օգտագործվում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը, որը


պատկերված է գծապատկեր 1.4.5-ում: ՀՀ-ում 2010-2012 թթ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն աճեց 4,5 %-ով, այնուհետև մինչև 2016 թ. այն անկում ապրեց 6,9 %-ով: 2017 թ. կտրուկ աճեց գրեթե 7 %-ով, սակայն 2018 թ. կրկին նվազեց 2,3 %-ով: Ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ամենաբարձր ցուցանիշը եղել է 2017 թ.: Ռուսաստանում տվյալ ցուցանիշը 2010-2015 թթ. նվազել է 6,9 %-ով, այնուհետև 2016-2018 թթ. աճել է 2,2 %-ով: Ադրբեջանում, Բելառուսում, Ղազախստանում, Ղրղզստանում և Իրանում եղել է տարի, որ այս ցուցանիշը գրանցել է բացասական արդյունք: Ադրբեջանում 2013-2016 թթ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն նվազել է 8,6 %-ով, որից հետո 2018 թ. աճել է 4,6 %-ով, Բելառուսում 2010-2015 թթ. նվազել է 11,8 %-ով, այնուհետև 2018 թ. աճել է 5,7 %-ով: Ղրղզստանում 2010 և 2012 թթ. ցուցանիշը եղել է բացասական, համապատասխանաբար՝ -1,6 և -1,8 %, իսկ 2018 թ. 2017 թ. համեմատ ցուցանիշը նույնպես նվազել է 1,1 %-ով: 2010-2012 թթ. Իրանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն նվազել է 13,1 %-ով, որից հետո 2014 թ. աճել է, 2015 թ. կրկին բացասական արդյունք է գրանցել, իսկ արդեն 2017-ին ունեցել է կտրուկ աճ 14,4 %-ով, բայց 2018-ին, ի տարբերություն 2017-ի, կրկին նվազել է 9,5 %-ով: 2013-2016 թթ. Ղազախստանում այս ցուցանիշը նվազել է 4,8 %-ով, այնուհետև 2017 և 2018 թթ. աճել է 0.04 %-ով: Այս ցուցանիշով բացասական արդյունք չեն ունեցել Վրաստանն ու Թուրքիան: Սակայն այս ցուցանիշով 2011 թվականից հետո Վրաստանում նկատվում է անկում, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, նվազել է 0,2 %-ով: Իսկ Թուրքիայում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2011 թվականից սկսած նվազել է, սակայն ակնառու է այն, որ 2018-ին, համեմատած 2017-ի հետ, այս ցուցանիշը նվազել է 4,7 %-ով: Այնուամենայնիվ, ըստ վերը շարադրված վելուծության, ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում 2017 և 2018 թթ. առավել բարենպաստ է, քան մնացած երկրներինը, իսկ հարևան երկրների շարքում 2017 և 2018 թթ. ՀՀ-ն կրկին գերազանցում է բոլոր վերը նշված երկրներին:



Գծապատկեր 1.4.6. Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն՝ ընթացիկ գներով (ԱՄՆ դոլար)


Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն հնարավորություն է տալիս գնահատել կյանքի որակը, ինչպես նաև պատկերացում կազմել տվյալ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին: ՀՀ-ում 2010-2014 թթ. այս ցուցանիշը աճել է 767,9 ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2016 թ. նվազել է 394,4 ԱՄՆ դոլարով, իսկ արդեն 2018 թ., ի տարբերություն 2016 թ., մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն աճել է 620,2 ԱՄՆ դոլարով: Ռուսաստանում 2010-2013 թթ. այս ցուցանիշը աճել է 5332,1 ԱՄՆ դոլարով, այնուհետև 2013 թվականից հետո մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն նվազել է մինչև 2018 թ. 4718,2 ԱՄՆ դոլարով: 2010-2014 թթ. Բելառուսում այս ցուցանիշը աճել է 2137,1 ԱՄՆ դոլարով: 2014 թվականից հետո մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն նվազել է մինչև 2018 թ. 2028,6 ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Ղազախստանում այս ցուցանիշը աճել է 4820,1 ԱՄՆ դոլարով, սակայն 2013 թվականից հետո մինչ 2018 թ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն նվազել է 4559,6 ԱՄՆ դոլարով: Նույն ժամանակահատվածում՝ 2010-2013 թթ., Ղրղզստանում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն աճել է 402,4 ԱՄՆ դոլարով: Այնուհետև 2013 թվականից հետո այս ցուցանիշը նվազել է մինչև 2018 թ.: 2010-2012 թթ. Իրանում տվյալ ցուցանիշը աճել է 1324,4 ԱՄՆ դոլարով: Սկսած 2012 թվականից մինչև 2017 թ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն նվազել է 2299,9 ԱՄՆ դոլարով: Ադրբեջանում 2010-2014 թթ. այս ցուցանիշը աճել է 2048,5 ԱՄՆ դոլարով: Սակայն սկսած 2014 թվականից մինչ 2018 թ. մեկ շնչին բաժին

ընկնող ՀՆԱ-ն նվազել է 3170,1 ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Թուրքիայում այս ցուցանիշը աճել է 1847,0 ԱՄՆ դոլարով, բայց 2013 թվականից հետո մինչև 2018-ը մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն նվազել է 3170,1 ԱՄՆ դոլարով: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից 2010-2018 թթ. ԵԱՏՄ երկրների շարքում գերազանցում է Ղրղզստանին, իսկ հարևան երկրների շարքում ՀՀ դիրքը անբարենպաստ է:



Գծապատկեր 1.4.7. Սպառողական գների ինդեքսը, բազային տարի 2010=100%


Սպառողական գների ինդեքսը ՀՀ-ում 2018 թ. 2010-ի համեմատ աճել է 27.3 %-ով: ՌԴ-ում 2018 թ. 2010-ի համեմատ գները աճել են 73 %-ով: Բելառուսում 2018 թ. 2010-ի համեմատ գները աճել են 379.6 %-ով: Ղազախստանում 2017 թ. 2010-ի համեմատ գները աճել են 69.2 %-ով: Ղրղզստանում 2017 թ. 2010-ի համեմատ գները աճել են 51.6 %-ով: Իրանում 2017 թ. 2010-ի համեմատ գները աճել են 237.1 %-ով: Վրաստանում 2018 թ. 2010-ի համեմատ գները աճել են 28.97 %-ով: Ադրբեջանում 2018 թ. 2010 -ի համեմատ գները աճել են 52.3 %-ով: Թուրքիայում 2018 թ. 2010-ի համեմատ գները աճել են 97 %-ով: ՀՀ-ն ԵԱՏՄ, ինչպես նաև հարևան երկրների շարքում ունի ամենացածր մակարդակը դիտարկվող ժամանակահատվածի համար:



Գծապատկեր 1.4.8. Գործադրկության տեսակարար կշիռը (%)

2010-2018 թթ. ՀՀ-ում ամենաբարձր գործադրկության մակարդակը եղել է 2010 թ.՝ 19%, իսկ ամենացածրը եղել է 2013 թ.՝ 16,1%, որից հետո մինչև 2015 թ.-ը աճել է 2,1 %-ով: Այնուամենայնիվ, 2010 թվականից սկսած գործադրկության մակարդակը ՀՀ-ում գնալով նվազում է և 2018 թ., համեմատած 2015-ի հետ, այն նվազել է 0,5 %-ով: Ռուսաստանում գործադրկության մակարդակը 2010 թվականից հետո նույնպես նվազել է և ամենաբարձր մակարդակը եղել է հենց այդ նույն տարում՝ 7,4%, իսկ ամենացածրը եղել է 4,7%: 2018 թ., ի տարբերություն 2010-ի, գործադրկությունը նվազել է 2,7 %-ով: Բելառուսում 2010-2012 թթ. եղել է գործադրկության միևնույն բարձր մակարդակը՝ 6%, իսկ ցածր մակարդակը եղել է 2017-ին՝ 5,6%: 2018 թ., համեմատած 2017-ի հետ, ավելացել է 0,1 %-ով: 2010 թ. Ղազախստանում նույնպես եղել է գործադրկության բարձր մակարդակ՝ 5,7%, իսկ գործադրկության ցածր մակարդակ եղել է 2018-ին՝ 4,8%: 2018 թ. համեմատած 2010-ի հետ, գործադրկությունը նվազել է 0,9 %-ով: Ղրղզստանում 2010-2017 թթ. գործադրկությունը նվազել է 1,8 %-ով, բայց 2018-ին, ի տարբերություն 2017-ի, աճել է 0,3 %-ով: 2010-2013 թթ. Իրանում գործադրկությունը նվազել է 3,1 %-ով, այնուհետև մինչև 2016 թ. այն աճել է 2 %-ով, իսկ 2017 և 2018 թթ. կրկին նվազել է: Վրաստանում 2010-2017 թթ. գործադրկությունը նվազել է 3,5 %-ով, սակայն 2018-ին, ի տարբերություն 2017-ի, այս ցուցանիշը աճել է 0,2 %-ով: 2010-2015 թթ. Ադրբեջանում գործադրկությունը նվազել է 0,7 %-ով, այնուհետև 2015-2018 թթ.

այն աճել է 0,3 %-ով: Թուրքիայում 2010-2012 թթ. գործազրկությունը նվազել է 2,5 %-ով, այնուհետև 2012-2018 թթ. այն աճել է 2,1 %-ով: Դեռևս Խորհրդային Միությունում գործազրկության մակարդակը կազմում էր 1-2 %, ընդ որում՝ Խորհրդային Հայաստանը գործազրկության ամենացածր մակարդակն ուներ, սակայն այսօր ԱՊՀ երկրների շարքում ՀՀ-ն ունի ամենաբարձր գործազրկության մակարդակը: Ըստ վերը շարադրված վելուծության՝ ՀՀ-ն 2010-2018 թթ. տվյալ ցուցանիշի տեսանկյունից թե՛ ԵԱՏՄ երկրների շարքում, թե՛ հարևան երկրների շարքում ունի գործազրկության ամենաբարձր մակարդակը:




Գծապատկեր 1.4.9. Աղքատության տեսակրար կշիռը (%)

2017 թ. ՀՀ տնտեսությունը, ունեցավ շոշափելի աճ՝ 7,5 %⁴³, որը նախադրյալներ է ստեղծել կենսապայմանների բարելավման և աղքատության մակարդակի կրճատման համար: Եվ այսպես, 2017-ին, ի տարբերություն 2016-ի, ՀՀ-ում աղքատության մակարդակը նվազել է 3,7 %-ով: Իսկ 2017 թ., համեմատած 2010-ի հետ, այն նվազել է 10,1 %-ով: Հարևան Ռուսաստանում, համեմատած Հայաստանի հետ, աղքատության մակարդակը զգալի ցածր է: Այստեղ ամենաբարձր աղքատության մակարդակ եղել է 2015 և 2016 թթ.՝ 13,3 %, իսկ ամենացածրը 2012-ին՝ 10,7 %: 2011-2014 թթ. Բելառուսում աղքատության մակարդակը նվազել է 2,5 %-ով, այնուհետև մինչև 2017 թ. այն աճել է 1,1 %-ով, իսկ 2018 թ., ի

⁴³ https://www.armstat.am/file/article/poverty_2018-arm.pdf, էջ 43

տարբերություն 2017-ի, այն աճել է 0,3 %-ով: Ղազախստանում սկսած 2010 թվականից մինչև 2017 թ. աղքատության մակարդակը նվազել է 4 %-ով: Դրոզստանում աղքատության ամենաբարձր մակարդակը եղել է 2012 թ.՝ 38 % իսկ ամենացածրը 2016 թ.՝ 25,4 %: Այնուամենայնիվ, 2012 թվականից հետո աղքատության բարձր մակարդակ չի եղել: Վրաստանը իր աղքատության բարձր մակարդակով, որը եղել է 2010 թ., գերազանցել է Հայաստանին՝ 37,3 %: Այստեղ ամենացածր ցուցանիշը եղել է 2018 թ.՝ 20,1 %, որը, ի տարբերություն 2010-ի, նվազել է 17,2 %-ով: Համաձայն հավաքագրված տվյալների՝ Ադրբեջանում աղքատությունը 2010-2012 թթ. նվազել է 3,1 %-ով: 2010-2017 թթ. Թուրքիայում այս ցուցանիշը ևս նվազել է և 2017-ին, ի տարբերություն 2010-ի, այն նվազել է 3,4 %-ով: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է Դրոզստանին, իսկ հարևան երկրների շարքում ունի համեմատաբար բարձր աղքատության մակարդակ:




Գծապատկեր 1.4.10. ՕՈԻՆ-ի գուտ ներհոսքը՝ ըստ վճարային հաշվեկշռի ընթացիկ գներով (ԱՄՆ դոլար)

Հայաստանի իրական հատվածում կատարված ընդհանուր օտարերկրյա ներդրումները 2010-2018 թթ. ամենաշատը եղել է 653.3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենաքիչը եղել է 2015-ին՝ 178,3 մլն ԱՄՆ դոլար: Այնուամենայնիվ, 2015 թվականից հետո ՀՀ-ում եղել է ՕՈԻՆ-ի աճ 45,03 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Ռուսաս-

տանում եղել է ՕՈԻՆ-ի աճ 26051,1 մլն ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2018 թ. այն սկսեց կտրուկ նվազել 60402,7 մլն ԱՄՆ դոլարով: Իսկ ամենաքիչ ներդրումները եղել են 2015-ին՝ 6852,97 մլն ԱՄՆ դոլար: 2011 թ. Բելառուսում եղան ամենաշատ ներդրումները՝ կազմելով 4002,4 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենաքիչը՝ 2016-ին՝ 124,9 մլն ԱՄՆ դոլար: Սակայն ներդրումները 2011 թվականից հետո մինչև 2018 թ. կտրուկ նվազել են 2527,5 մլն ԱՄՆ դոլարով: Ղազախստանում 2016 թ. գրանցվել է ՕՈԻՆ ներհոսքի ամենաբարձր մակարդակը՝ 17220,9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ 2018-ին՝ 2080,6 մլն ԱՄՆ դոլար: 2015 թ. Ղրղզստանում գրանցվել է ներդրումների ներհոսքի ամենաբարձր ցուցանիշը՝ 1144,1 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը եղել է 2012-ին՝ 260,9 մլն ԱՄՆ դոլար: Սակայն 2017-ին գրանցվել է ներդրումների բացասական ցուցանիշ՝ -107,2 մլն ԱՄՆ դոլար, ինչը նշանակում է, որ դրդական ներդրումների գծով մարումները (արտահոսքը) գերազանցել են ստացումները (ներհոսքը): Իրանում 2010-2017 թթ. ամենաշատ ՕՈԻՆ ներհոսք եղել է 2017 թ.՝ 5019 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ 2015-ին՝ 2050 մլն ԱՄՆ դոլար: Սակայն այստեղ, սկսած 2015-ից, ներդրումները աճման միտում ունեն: 2017 թ. Վրաստանում գրանցվել է ՕՈԻՆ ներհոսքի աճ՝ 1829,9 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենաքիչը եղել է 2012-ին՝ 942,9 մլն ԱՄՆ դոլար: Իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այս ցուցանիշը նվազել է 645,8 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2012 թթ. Ադրբեջանում ներդրումները աճել են 1940,2 մլն ԱՄՆ դոլարով, իսկ հետո մինչև 2018 թ. այն նվազել է 3890,2 մլն ԱՄՆ դոլարով: Թուրքիայում 2015 թ. եղել է ամենաշատ ՕՈԻՆ ներհոսք՝ 19274 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենաքիչը 2010 թ.՝ 9099 մլն ԱՄՆ դոլար: Եվ այսպիսով, 2015-ի համեմատ, 2018-ին ներդրումները նվազել են 6250 մլն ԱՄՆ դոլարով: 2014 թվականից հետո, երբ ՀՀ-ն անդամակցեց ԵԱՏՄ-ին, ակնկալվում էր օտարերկրյա ներդրումների ներհոսք, սակայն, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, ԵԱՏՄ անդամակցության 4 տարիների ընթացքում ՕՈԻՆ-ի ներգրավման տեսանկյունից դեռևս չի ապահովվել ներհոսքի ակնկալվող և ցանկալի արդյունք: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից


ինչպես ԵԱՏՄ, այնպես էլ հարևան երկրների շարքում զիջում է բոլորին:



Գծապատկեր 1.4.11. ՕՈՒՆ-ի գուտ ներհոսքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ (%)

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում 2011-2013 թթ. նվազել է 3,3 %-ով, որից հետո 2014 թ. այն աճել է 0,3 %-ով, իսկ 2015-ին այն կրկին նվազել է 1,8 %-ով, այնուհետև 2016-2018 թթ. կրկին նվազել է 1,6 %-ով: ՌԴ-ում օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում ամենաբարձր ցուցանիշը գրանցել է 2013 թ.՝ 3 %, իսկ ամենացածրը՝ 2015-ին՝ 0,5 %: ՌԴ-ում կտրուկ աճ եղել է 2016 թ.՝ համեմատած 2015-ի հետ՝ գրեթե 2 %-ով, իսկ 2016-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 2 %-ով: Բելառուսում 2010-2011 թթ. օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է 4,1 %-ով, որից հետո մինչև 2018 թ. այն նվազման միտում ունի և 2018-ին 6,4 %-ից այն նվազել է մինչև 2,4 %: Ղազախստանում օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում ամենամեծ ցուցանիշը գրանցել է 2016 թ.՝ 12,5 %, իսկ ամենացածրը՝ 2018-ին՝ 0,1 %: 2018 թ., ի տարբերություն 2016-ի, այն նվազել է 12,4 %-ով: Ղրղզստանում 2017 թ. այս ցուցանիշը եղել է բացասական՝ -1,4 %: 2015 թ., համեմատած 2017-ի հետ, այն նվազել է 18,5 %-ով: Իրանում 2014-2017 թթ. օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է 0,6 %-ով: 2012-2015 թթ. Վրաստանում այս ցուցանիշը աճել է 6 %-ով, այնուհետև 2017-ին գրանցել է իր ամենաբարձր ցուցանիշը՝ շուրջ 12 %, սակայն 2018-ին,


ի տարբերություն 2017-ի, այն նվազել է 4,8 %-ով: 2010-2012 թթ. Ադրբեջանում օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է 1,3 %-ով, այնուհետև 2013 թ. այն կրճատվել է 4 %-ով: Սակայն 2013-2016 թթ. այս ցուցանիշը կրկին աճել է 8,3 %-ով, բայց 2018-ին, համեմատած 2016-ի հետ, այն նվազել է 8,9 %-ով: Թուրքիայում օտարերկրյա ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում ամենամեծ ցուցանիշը գրանցել է 2015 թ.՝ 2,2 %, իսկ ամենացածրը՝ 2010-ին՝ 1,7 %: Սակայն 2018-ին, համեմատած 2017-ի հետ, այն աճել է 0,3 %-ով: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է ՌԴ-ին և 2018 թ. գերազանցում է Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում՝ Թուրքիային և Իրանին:



Գծապատկեր 1.4.12. Գրագիտությունը 15 և բարձր տարիքային խմբի համար (%)

ՀՀ-ում 2011 թ. և 2017 թ. գրագիտության մակարդակը 15 և բարձր տարիքային խմբում գրեթե փոփոխության չի ենթարկվել՝ կազմելով 99,7 %: ՌԴ-ում 2018 թ., ի տարբերություն 2010-ի, այս ցուցանիշը աճել է 0,1 %-ով: Բելառուսում 2018 թ. գրագիտության մակարդակը կազմել է 99,7 %: Ղազախստանում 2010 թ. այս ցուցանիշը եղել է 99,8 %: Ղրղզստանում 2018 թ. գրագիտության մակարդակը եղել է 99,6 %: Իրանում 2012-2014 թթ. այս ցուցանիշը աճել է 1,1 %-ով, իսկ արդեն 2016 թ., համեմատած 2014-ի հետ այն աճել է 1,4 %-ով՝ կազմելով 85,5 %: Վրաստանում 2014 թ. գրագիտության մակարդակը եղել է 99,6 %, իսկ 2017-ին՝ 99,4 %:


Աղբրեջանում 2010-2017 թթ. այս ցուցանիշը աճել է 0,02 %-ով: 2010-2017 թթ. Թուրքիայում գրագիտության մակարդակը աճել է 3,5 %-ով: Այնուամենայնիվ, ԵԱՏՄ երկրների շարքում ՀՀ-ն զիջում է միայն Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում այս ցուցանիշով գերազանցում է Իրանին, Վրաստանին և Թուրքիային:



Գծապատկեր 1.4.13. Ստարտափ գրանցելու ընթացակարգերի թվաքանակը

ՀՀ-ում 2010 թ. ստարտափ գրանցելու գործընթացները կազմված են եղել 6 փուլերից, սակայն 2018 թ. գործընթացի փուլերը նվազել են 3-ով: 2013 թ. ՌԴ-ում ստարտափ գրանցելու գործընթացները կազմված են եղել 6 փուլերից, իսկ 2018 թ. այն նվազել է 2-ով: Բելառուսում 2018 թ., համեմատած 2010-ի հետ, այս ցուցանիշը նվազել է 3-ով: Ղազախստանում 2010-2018 թթ. ստարտափ գրանցելու ընթացակարգերի գործընթացը նվազել է 2 փուլով: Ղրղզստանում այս ցուցանիշը նշված ժամանակահատվածում չի ենթարկվել փոփոխությունների, այսինքն՝ ստարտափ գրանցելու ընթացակարգերի գործընթացը Ղրղզստանում բաղկացած է 4 փուլերից: 2010-2017 թթ. Իրանում այս ցուցանիշը աճել է 2-ով, իսկ այնուհետև 2018 թ. այն նվազել է 1-ով: Վրաստանում 2010 թվականից այս գործընթացը բաղկացած էր 3 փուլից, սակայն 2018 թ. այն նվազել է 2-ով: Նշված երկրներից միայն Վրաստանում է, որ ստարտափ գրանցելու ընթացակարգերի գործընթացը բաղկացած է միայն 1 փուլից: Աղբրեջանում

2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 3-ով: Այսինքն՝ եթե 2010 թ. ստարտափ գրանցելու համար անհրաժեշտ էր 6 փուլ, ապա 2018 թ. այն բաղկացած էր 3 փուլից: Թուրքիայում պատկերը մի փոքր այլ է. 2010 թվականից մինչև 2013 թ. ստարտափ գրանցելու համար անհրաժեշտ էր 10 փուլ, այնուհետև 2010 և 2015 թթ. այս գործընթացը ավելացավ ևս 1 փուլով, որից հետո 2016 և 2017 թթ. այն կրճատվեց 1-ով, իսկ արդեն 2018 թ. այս գործընթացի փուլերը կրճատվեցին 4-ով: Այսպիսով, ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից, համեմատած ԵԱՏՄ երկրների հետ, բարենպաստ է, իսկ հարևան երկրների հետ համեմատության մեջ զիջում է միայն Վրաստանին:




Գծապատկեր 1.4.14. Ապրանքների ու ծառայությունների արտահանման կառուցվածքը, ԱՄՆ դոլար

2018 թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է 11251,6 մլն ԱՄՆ դոլար, որից 4668,9 մլն ԱՄՆ դոլարը բաժին է ընկնում արտահանմանը⁴⁴: ՀՀ-ում 2018 թ., համեմատած 2010-ի հետ, արտահանումը ավելացել է 2458,3 մլն ԱՄՆ դոլարով: 2018 թ. Հայաստանից արտահանվող ապրանքների հիմնական գործընկերները շարունակում են մնալ ԵԱՏՄ երկրները և ԵՄ մի քանի երկրներ՝ Բուլղարիան, Նիդեռլանդները, Իտալիան, Բելգիան և այլն: 2012 թվականից հետո ՌԴ-ի արտահանումը նվազել է մինչև 2016 թ. 257421,4 մլն ԱՄՆ դոլարով, այնուհետև 2018 թ., համե-

⁴⁴ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf

մատած 2016-ի հետ, արտահանումը աճել է 175476,3 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2012 թթ. Բելառուսի արտահանումը աճել է 22584,3 մլն ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2016 թ. այն նվազել է 48893,3 մլն ԱՄՆ դոլարով: Իսկ արդեն 2018 թ., համեմատած 2016-ի հետ, այն աճել է 12043,3 մլն ԱՄՆ դոլարով: Ղազախստանում արտահանման ամենամեծ ծավալը եղել է 2012 թ.՝ 91925,3 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենափոքրը՝ 2016-ին՝ 41570,3 մլն ԱՄՆ դոլար: 2018 թ., համեմատած 2016-ի հետ, արտահանումը աճել է 25334,7 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Ղրղզստանում արտահանումը աճել է 1613,7 մլն ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2017 թ. նվազել է 1242,6 մլն ԱՄՆ դոլարով: Իրանում 2011 թվականից հետո մինչև 2016 թ. արտահանումը նվազել է 249,7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2017 թ., համեմատած 2016-ի հետ, աճել է 193,7 մլն ԱՄՆ դոլարով: Վրաստանում արտահանման բարձր ցուցանիշ եղել է 2018 թ.՝ 8896,6 մլն ԱՄՆ դոլար, իսկ ցածր ցուցանիշ եղել է 2010 թ.՝ 4034,1 մլն ԱՄՆ դոլար: 2011-2016 թթ. Ադրբեջանի արտահանումը նվազել է 19460,1 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2016-ի, արտահանումը աճել է 7905,7 մլն ԱՄՆ դոլարով: Թուրքիայում արտահանման բարձր ցուցանիշ եղել է 2018 թ.՝ 223458 մլն ԱՄՆ դոլար, իսկ ցածրը՝ 2010-ին՝ 157445 մլն ԱՄՆ դոլար:




Գծապատկեր 1.4.15. Ապրանքների ու ծառայությունների արտահանման տեսակարար կշիռը

Այսպիսով, ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից թե՛ ԵԱՏՄ, թե՛ հարևան երկրների հետ համեմատած գտնվում է ոչ բարենպաստ պայմաններում:

2010-2015 թթ. ՀՀ-ում արտահանումը նվազել է 21,6 %-ով, որից հետո 2016 թ., ի տարբերություն 2015-ի, այն աճել է 14,2 %-ով: Իսկ արդեն 2018 թ., համեմատած 2017-ի հետ, արտահանումը նվազել է 13,5 %-ով: ՌԴ-ում արտահանման մեծ ծավալ եղել է 2010 թ.՝ 7 %, իսկ 2012 թ.՝ ամենացածր ծավալը՝ 0,3 %, սակայն սկսած 2016 թվականից արտահանման ծավալը գրանցել է աճ 2,3 %-ով: 2011 թ. Բելառուսում գրանցվել է արտահանման 30 % աճ, իսկ 2013 թ. այնտեղ եղել է արտահանման բացասական ցուցանիշ՝ -14,6 %, ինչը նշանակում է, որ ավելի շատ ապրանք ներմուծվել է քան արտահանվել: Այնուհետև մինչև 2017 թ. արտահանումը աճել է 2,9 %-ով, իսկ 2018 թ. հետ համեմատած այն նվազել է 4 %-ով: 2014-2016 թթ. Ղազախստանի արտահանման ցուցանիշը եղել է բացասական, համապատասխանաբար -2,5 %, -4 % և -4,5 %: Իսկ արդեն 2017 թ. արտահանման աճը կազմել է 6,4 %: Արտահանման դրական ցուցանիշներ Ղրղզստանը ունեցել է 2011, 2013 և 2017 թթ. համապատասխանաբար 15,7 %, 12,3 % և 6,1 %: Իսկ մնացած տարիներին ներմուծումը գերազանցել է արտահանմանը, այդ իսկ պատճառով ցուցանիշները բացասական են: Իրանում ամենաբարձր բացասական ցուցանիշը եղել է 2012 թ.՝ -25,7 %: 2014-2016 թթ. արտահանման ծավալները աճել են 34,1 %-ով, իսկ 2017 թվականի հետ համեմատած այն նվազել է 39,5 %-ով: 2013 թ. Վրաստանում գրանցվել է արտահանման բարձր ցուցանիշ 20,8 %, իսկ 2014 թ.՝ 0,4 % ցածր ցուցանիշ: 2013-2017 թթ. այս ցուցանիշը աճել է 10,1 %-ով: Ադրբեջանում 2010-2014 թթ. արտահանման բարձր ցուցանիշ եղել է 2010 թ.՝ 24,2 %, իսկ 2014 թ. եղել է արտահանման ցածր ցուցանիշ՝ -1,1 %: Թուրքիայում 2016 թ. ներմուծումը գերազանցել է արտահանմանը և գրանցել արտահանման բացասական ցուցանիշ՝ -1,8 %, իսկ արտահանման բարձր ցուցանիշ եղել է 2012 թ.՝ 14,9 %: Տվյալ ցուցանիշի տեսանկյունից ՀՀ դիրքը, համեմատած ԵԱՏՄ երկրների հետ, 2013-2018 թթ. գերազանցում է բոլորին, իսկ հարևան երկրների հետ

համեմատած ՀՀ-ն ունի բարենպաստ դիրք Ադրբեջանից և Թուրքիայից:




Գծապատկեր 1.4.16. Ապրանքների և ծառայությունների ներմուծման կառուցվածքը, ԱՄՆ դոլար

2018 թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ 6582,7 մլն ԱՄՆ դոլարը բաժին է ընկնում ներմուծմանը⁴⁵: 2010-2014 թթ. ՀՀ-ում ներմուծումը ավելացել է 950,1 մլն ԱՄՆ դոլարով, իսկ արդեն 2018 թ., ի տարբերություն 2015 թ., ներմուծման ծավալը աճել է 2164,6 մլն ԱՄՆ դոլարով: 2013 թ. ՌԴ-ում եղել է ներմուծման մեծ ծավալ՝ 281789 մլն ԱՄՆ դոլար, իսկ ցածր ներմուծման ծավալ եղել է 2016 թ.՝ 266096,6 մլն ԱՄՆ դոլար: 2018 թ., համեմատած 2016 թ. հետ, ներմուծումը աճել է 77225,5 մլն ԱՄՆ դոլարով: Բելառուսում 2012-2016 թթ. ներմուծումը նվազել է 19093,1 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., համեմատած 2016-ի հետ, այս ցուցանիշը աճել է 11317,5 մլն ԱՄՆ դոլարով: Ղազախստանում 2013 թ. գրանցվել է ներմուծման բարձր ցուցանիշ՝ 63249,5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծման ցածր ցուցանիշ՝ 2016 թ.՝ 36079,4 մլն ԱՄՆ դոլար: 2018 թ., համեմատած 2016-ի հետ, ներմուծումը աճել է 9062,5 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Ղրղզստանում ներմուծումը աճել է 2903,6 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2013-2016 թթ. նվազել է 1886,5 մլն ԱՄՆ դոլարով: 2017 թ., համեմատած 2016 թ.-ի հետ, այս ցուցանիշը աճել է 3218,1 մլն ԱՄՆ դոլարով: Իրանում

⁴⁵ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_411.pdf

2010-2016 թթ. ներմուծման ծավալները նվազել են 93478,1 մլն ԱՄՆ դոլարով, սակայն 2017 թ., համեմատած 2016-ի հետ, ներմուծումը աճել է 210,4 մլն ԱՄՆ դոլարով: Վրաստանում 2010-2014 թթ. ներմուծումը աճել է 3904,5 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2014-2016 թթ. այս ցուցանիշը նվազել է 1535,1 մլն ԱՄՆ դոլարով, որից հետո 2016-2018 թթ. ներմուծումը կրկին աճել է 2280,6 մլն ԱՄՆ դոլարով: Ադրբեջանում ներմուծման բարձր ցուցանիշ էղել է 2014 թ.՝ 19718,7 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծման ցածր ցուցանիշ էղել է 2010 թ.՝ 10236,4 մլն ԱՄՆ դոլար: 2010-2013 թթ. Թուրքիայում ներմուծման ծավալը աճել է 69264 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2013-2016 թթ. ներմուծման ծավալը կրճատվել է 52690 մլն ԱՄՆ դոլարով: 2018 թ. ներմուծման ցուցանիշը, համեմատած 2017-ի հետ, նվազել է 9452 մլն ԱՄՆ դոլարով: Համաձայն վերը շարադրված վերլուծության՝ ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից թե՛ ԵԱՏՄ, թե՛ հարևան երկրների շարքում բարենպաստ չէ:




Գծապատկեր 1.4.17. Ապրանքների և ծառայությունների ներմուծման տեսակարար կշիռը

ՀՀ-ում 2011-2015 թթ. ներմուծման տեսակարար կշիռը էղել է բացասական, համապատասխանաբար -2,3 %, -2,7 %, -2,1 %, -1,0 % և -15,1 %, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, նվազել է 13,7 %-ով: ՌԴ-ում 2010-2013 թթ. ներմուծման տեսակարար կշիռը նվազել է 22,3 %-ով, իսկ 2014-2016 թթ. այս ցուցանիշը էղել է բացասական, համապատասխանաբար -7,3 %, -25 % և -3,6 %: Այնուհետև 2018 թ.,


համեմատած 2017-ի հետ, ներմուծման տեսակարար կշիռը նվազել է 14,6 %-ով: Բելառուսում 2013-2016 թթ. ներմուծման տեսակարար կշիռը եղել է բացասական, համապատասխանաբար -4,2 %, -10,6 % և -1,4 %, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այս ցուցանիշը նվազել է 4,2 %-ով: Ղազախստանում 2012 թ. ներմուծման տեսակարար կշիռը եղել է 24,8 %, իսկ 2017 և 2018 թթ. այս ցուցանիշը եղել է բացասական, համապատասխանաբար -2 % և -1,4 %: Ղրղզստանում 2011-2014 թթ. ներմուծման տեսակարար կշիռը նվազել 1,3 %-ով, 2010, 2015 և 2016 թթ. այս ցուցանիշը եղել է բացասական՝ -6,8 %, -13,2 % և -1,05 %: Իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, ներմուծման ցուցանիշը նվազել է 0,7 %-ով: Իրանում ներմուծման տեսակարար կշռի դրական ցուցանիշ եղել է միայն 2010, 2016 և 2017 թթ., համապատասխանաբար 2,3 %, 6,1 % և 13,4 %: Վրաստանում 2011-2017 թթ. ներմուծման տեսակարար կշռի տեմպը ունի նվազման միտում և 2017 թ., ի տարբերություն 2011-ի, այն նվազել է 17 %-ով: Ադրբեջանում ներմուծման տեսակարար կշռի բարձր ցուցանիշ եղել է 2012 թ.՝ 35,6 %, իսկ ամենացածր ցուցանիշ եղել է 2010 թ.՝ 1,4 %: 2014 թ., համեմատած 2015-ի հետ, այն նվազել է 5,8 %-ով: 2010-2012 թթ. Թուրքիայում այս ցուցանիշը նվազել է 18,8 %-ով, իսկ 2014 և 2018 թթ. ներմուծման տարեկան աճը եղել է բացասական, համապատասխանաբար -0,4 % և -7,9 %: Համաձայն վերը շարադրված վերլուծության՝ ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից թե՛ ԵԱՏՄ և թե՛ հարևան երկրների շարքում բարենպաստ չէ:

ՀՀ-ում արտահանման ծախսը 1 բեռնարկի համար 2010 թ. կազմել է 1735 ԱՄՆ դոլար, իսկ 2011-2014 թթ. եղել է միևնույն արժեքը՝ 1885 ԱՄՆ դոլար, այսինքն՝ այս ցուցանիշը 2011-2014 թթ. աճել է 150 ԱՄՆ դոլարով: ՌԴ-ում 2014 թ., ի տարբերություն 2011-ի, արտահանման ծախսը 1 բեռնարկի համար աճել է 713,5 ԱՄՆ դոլարով:




Գծապատկեր 1.4.18. Արտահանման ծախսը 1 բեռնարկի համար, ԱՄՆ դոլար

Բելառուսում 2011 թ., ի տարբերություն 2010-ի, արտահանման ծախսը 1 բեռնարկի համար աճել է 388 ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2012 թ. այն նվազել է 700 ԱՄՆ դոլարով, և այդ նույն արժեքը պահպանվել է մինչև 2014 թ.: Ղազախստանում 2010-2014 թթ. արտահանման ծախսը 1 բեռնարկի համար աճել է 2280 ԱՄՆ դոլարով: Իրանում 2010-2013 թթ. այս ցուցանիշը աճել է 380 ԱՄՆ դոլարով, իսկ 2014 թ., ի տարբերություն 2013-ի, արտահանման ծախսը 1 բեռնարկի համար նվազել է 120 ԱՄՆ դոլարով: Վրաստանում 2010 թ. այդ ծախսը կազմել է 1329 ԱՄՆ դոլար, իսկ 2011-ին, ի տարբերություն 2010-ի, այն աճել է 26 ԱՄՆ դոլարով և մինչև 2014 թ. պահպանել է միննույն 1355 ԱՄՆ դոլար արժեքը: Ադրբեջանում 2011-2013 թթ. արտահանման ծախսը 1 բեռնարկի համար աճել է 195 ԱՄՆ դոլարով, իսկ 2014 թ., ի տարբերություն 2013-ի, այն նվազել է 80 ԱՄՆ դոլարով: Թուրքիայում 2010-2014 թթ. արտահանման ծախսը 1 բեռնարկի համար պահպանել է միննույն 990 ԱՄՆ դոլար արժեքը: Ըստ վերը շարադրվածի՝ ԵՄԵՄ երկրների շարքում ամենաբարձր արտահանման ծախս ունեն Ղազախստանն ու Ղրղզստանը, իսկ ամենացածր ծախսն ունի Բելառուսը, որին հաջորդում է ՀՀ-ն, այնուհետև՝ ՌԴ-ն: Իսկ հարևան երկրների շարքում բարձր արտահանման ծախսն ունի Ադրբեջանը, որին հաջորդում է ՀՀ-ն:



Պատկեր 1.4.19. Արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը, ԱՄՆ դոլար


Արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը ՀՀ-ում 2014 թ. կազմել են 250 ԱՄՆ դոլար, որից հետո մինչև 2018 թ. դրանք եղել են նույնը՝ 100 ԱՄՆ դոլար, այսինքն՝ նվազել են 150 ԱՄՆ դոլարով: 2014-2016 թթ. ՌԴ-ում այս ցուցանիշը եղել է նույնը՝ 680 ԱՄՆ դոլար, այնուհետև 2017 և 2018 թթ. այն նվազել է 100 ԱՄՆ դոլարով: Բելառուսում 2014-2018 թթ. արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը եղել են նույնը՝ 108 ԱՄՆ դոլար: Ղազախստանում 2014-2017 թթ. այս ցուցանիշը եղել է 494 ԱՄՆ դոլար, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն նվազել է 24 ԱՄՆ դոլարով: Ղրղզստանում 2014 և 2015 թթ. արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը եղել են 485 ԱՄՆ դոլար, իսկ 2016-2018 թթ. դրանք նվազել են 40 ԱՄՆ դոլարով: Իրանում արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը 2014-2018 թթ. եղել են նույնը՝ 415 ԱՄՆ դոլար: Վրաստանում 2014-2018 թթ. այս ցուցանիշը եղել է նույնը՝ 112 ԱՄՆ դոլար: Ադրբեջանում արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերը 2014-2018 թթ. եղել են նույնը՝ 214 ԱՄՆ դոլար: 2014- 2017 թթ. Թուրքիայում այս ցուցանիշը եղել է 376 ԱՄՆ դոլար, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն նվազել է 18 ԱՄՆ դոլարով: ԵԱՏՄ երկրների շարքում արտահանմանն առնչվող մաքսային և այլ ծախսերի ցածր մակարդակ ունեն ՀՀ-ն և Բելառուսը, իսկ հարևան երկրների շարքում՝ ՀՀ-ն և Վրաստանը:



Գծապատկեր 1.4.20. Արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը, ԱՄՆ դոլար

2014-2018 թթ. ՀՀ-ում արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է 150 ԱՄՆ դոլար: ՌԴ-ում 2014-2018 թթ. այս ցուցանիշը եղել է 92 ԱՄՆ դոլար: 2014-2018 թթ. Բելառուսում արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է 60 ԱՄՆ դոլար: Ղազախստանում 2014 և 2015 թթ. այս ցուցանիշը եղել է 310 ԱՄՆ դոլար, իսկ 2016-2018 թթ. այն նվազել է 90 ԱՄՆ դոլարով: Ղրղզստանում 2014 և 2015 թթ. արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է 190 ԱՄՆ դոլար, որից հետո 2016 և 2017 թթ. այն նվազել է 45 ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը կրկին նվազել է 35 ԱՄՆ դոլարով: Իրանում 2014-2017 թթ. այս ցուցանիշը եղել է 125 ԱՄՆ դոլար, իսկ արդեն 2018 թ. այն նվազել է 65 ԱՄՆ դոլարով: Վրաստանում 2017 և 2018 թթ. արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է 35 ԱՄՆ դոլար: 2014-2018 թթ. Ադրբեջանում արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է միևնույն 250 ԱՄՆ դոլարը: Թուրքիայում նշված բոլոր տարիներին այս ցուցանիշը եղել է միևնույն 55 ԱՄՆ դոլարը: ԵԱՏՄ երկրների շարքում արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսի ցածր մակարդակ ունի Բելառուսը, որից հետո՝ ՌԴ-ն, այնուհետև՝ ՀՀ-ն: Իսկ հարեվան երկրների շարքում արտահանման փաստաթղթավորման հետ


կապված ծախսի բարձր մակարդակ ունեն Ադրբեջանը և ՀՀ-ն:



Գծապատկեր 1.4.21. Ներմուծման փաստաթղթավորման հետ կապված, ԱՄՆ դոլար


ՀՀ-ում ներմուծման փաստաթղթավորման հետ կապված ծախսը 2014-2018 թթ. եղել է 100 ԱՄՆ դոլար: ՌԴ-ում 2014-2018 թթ. այս ցուցանիշը եղել է 152,5 ԱՄՆ դոլար: Արդգստանում 2014-2018 թթ. ներմուծման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է 200 ԱՄՆ դոլար: 2014-2018 թթ. այս ցուցանիշը Իրանում եղել է 200 ԱՄՆ դոլար: Վրաստանում 2014-2018 թթ. ներմուծման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է 189 ԱՄՆ դոլար: Ադրբեջանում 2014-2018 թթ. այս ցուցանիշը եղել է 200 ԱՄՆ դոլար, իսկ Թուրքիայում այդ նույն ժամանակահատվածում ներմուծման փաստաթղթավորման հետ կապված ծախսը եղել է 142 ԱՄՆ դոլար: ԵԱՏՄ երկրների և հարևան երկրների շարքում ներմուծման փաստաթղթավորման հետ կապված ծախսի ցածր մակարդակ ունի ՀՀ-ն:

2014-2018 թթ. ՀՀ-ում ներմուծմանը առնչվող մաքսային և այլ ծախսերը եղել են 100 ԱՄՆ դոլար, իսկ ՌԴ-ում դրանք եղել են 1125 ԱՄՆ դոլար: Արդգստանում 2014-2018 թթ. այս ցուցանիշը եղել է 512 ԱՄՆ դոլար, իսկ Իրանում՝ 660 ԱՄՆ դոլար: Վրաստանում ներմուծմանը առնչվող մաքսային և այլ ծախսերը եղել են 396 ԱՄՆ դոլար: Ադրբեջանում 2014-2017 թթ. այս ցուցանիշը եղել է 423 ԱՄՆ դոլար, իսկ արդեն 2018 թ. այն նվազել է 123 ԱՄՆ դոլարով:



Գծապատկեր 1.4.22. Ներմուծմանը առնչվող մաքսային և այլ ծախսեր, ԱՄՆ դոլար


Թուրքիայում 2014-2018 թթ. ներմուծմանը առնչվող մաքսային և այլ ծախսերը եղել են 655 ԱՄՆ դոլար: ԵԱՏՄ և հարևան երկրների շարքում ներմուծմանը առնչվող մաքսային և այլ ծախսի ցածր մակարդակ ունի ՀՀ-ն:



Գծապատկեր 1.4.23. Ներմուծման ծախսը 1 բեռնարկի համար, ԱՄՆ դոլար

2010 թ. ՀՀ-ում ներմուծման ծախսը 1 բեռնարկի համար կազմել է 2025 ԱՄՆ դոլար, իսկ 2011-2015 թթ. այն ավելացել է 150 ԱՄՆ դոլարով: ՌԴ-ում 2011-2015 թթ. այս ցուցանիշը աճել է 848,5 ԱՄՆ դոլարով: Բելառուսում 2011 թ., համեմատած 2010-ի հետ, ներմուծման ծախսը 1 բեռնարկի համար աճել է 450 ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2015 թ. այն նվազել է 300 ԱՄՆ դո-


լարով: Ղազախստանում 2010-2015 թթ. այս ցուցանիշը աճել է 2210 ԱՄՆ դոլարով: Դրոզստանում ևս ներմուծման ծախսը 1 բեռնարկի համար աճել է 2720 ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Իրանում այս ցուցանիշը աճել է 365 ԱՄՆ դոլարով, իսկ 2014 և 2015 թթ. այն նվազել է 545 ԱՄՆ դոլարով: 2011 թ., ի տարբերություն 2010-ի, Վրաստանում այս ցուցանիշը աճել է 399 ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2015 թ. այն նվազել է 120 ԱՄՆ դոլարով: 2011-2013 թթ. Ադրբեջանում ներմուծման ծախսը 1 բեռնարկի համար աճել է 155 ԱՄՆ դոլարով, այնուհետև մինչև 2015 թ. այն նվազել է 110 ԱՄՆ դոլարով: Թուրքիայում 2010 և 2011թթ. այս ցուցանիշը կազմել է 1063 ԱՄՆ դոլար, իսկ 2012-2015 թթ. այն աճել է 172 ԱՄՆ դոլարով: Համաձայն վերը շարադրված վերլուծության՝ ԵԱՏՄ երկրների շարքում ՀՀ-ն ունի 1 բեռնարկի համար ներմուծման ցածր ծախսի մակարդակ, իսկ հարևան երկրների շարքում ներմուծման բարձր ծախսի մակարդակ անեն Ադրբեջանն ու ՀՀ-ն:



Գծապատկեր 1.4.24. Գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանը (1=լավագույն արդյունք)

ՀՀ-ն գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանով 2013 թ., համեմատած մնացած տարիների հետ, զբաղեցրել է 32-րդ տեղը, իսկ 2012 թ.՝ 55-րդ տեղը: ՌԴ-ն այս ցուցանիշով 2011 թ. զբաղեցրել է 123-րդ տեղը, որից հետո մինչև 2018 թ. այս հորիզոնականը կրճատվել է 88-ով, և 2018 թ. ՌԴ-ն գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանով գտնվում է 35-րդ տեղում:

Բեյլառուսը այս ցուցանիշով զբաղեցնում է 37-րդ տեղը 2017 թ., սակայն 2018 թ. այս ցուցանիշը աճել է 1-ով: Ղազախստանը՝ 2010-2018 թթ. համար լավագույն ցուցանիշ ապահովել է 2017 թ.՝ զբաղեցնելով 35-րդ տեղը, իսկ վատագույնը եղել է 2015 թ.՝ 77-րդ տեղը: Ղրղզստանը գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանով նշված ժամանակահատվածում իր լավագույն հորիզոնականը զբաղեցրել է 2010 թ.՝ 41-րդ տեղը, իսկ վատագույնը՝ 2015թ.՝ 102-րդ տեղը: Իրանը տվյալ ցուցանիշով իր լավագույն արդյունքը ունեցել է 2016 թ.՝ զբաղեցնելով 118-րդ տեղը, իսկ վատագույն արդյունքը՝ 2014 թ.՝ 152-րդ տեղը: Վրաստանը գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանով նշված երկրներից ունի մեծ առավելությունը և 2010-2018 թթ. հիմնականում զբաղեցրել է լավագույն հորիզոնականները. 2014 թ. զբաղեցրել է 8-րդ հորիզոնականը, իսկ վատագույն արդյունք գրանցվել է 2016 թ.՝ 24-րդ տեղը: Ադրբեջանը իր լավագույն հորիզոնականը զբաղեցրել է 2010 թ.՝ 38-րդ տեղը, իսկ վատագույնը եղել է 2015 թ.՝ 80-րդ տեղը: Թուրքիան գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանով իր վատագույն հորիզոնականը զբաղեցրել է 2010 թ.՝ 73-րդ տեղը, իսկ 2015 և 2016 թթ. այդ հորիզոնականը կրճատվել է 18-ով:




**Գծապատկեր 1.4.25. Վերջնական սպառման ծախսը
ընթացիկ գներով, ԱՄՆ դոլար**

Այսպիսով, ԵԱՏՄ երկրների շարքում գործարարությամբ զբաղվելու ամենադյուրին մակարդակն ունի ՀՀ-ն, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Վրաստանին:


ՀՀ-ում 2010-2014 թթ. վերջնական սպառման ծախսերը աճել են 2531,1 մլն ԱՄՆ դոլարով, այնուհետև 2014-2016 թթ. այս ծախսերը նվազել են 1764,1 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, աճել են 8768,3 մլն ԱՄՆ դոլարով: ՌԴ-ում 2010-2013 թթ. այս ցուցանիշը աճել է 571240 մլն ԱՄՆ դոլարով, այնուհետև 2013-2016 թթ. այն նվազել է 726428 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, նվազել է 105898 մլն ԱՄՆ դոլարով: Բելառուսում վերջնական սպառման ծախսերը 2011-2014 թթ. աճել են 14090,5 մլն ԱՄՆ դոլարով, 2014-2016 թթ.՝ նվազել 18991,8 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն կրկին նվազել է 3112,1 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Ղազախստանում այս ցուցանիշը աճել է 58954 մլն ԱՄՆ դոլարով, այնուհետև 2013-2016 թթ. նվազել է, իսկ արդեն 2017 թ., համեմատած 2016-ի հետ, աճել է 11391 մլն ԱՄՆ դոլարով: Դրդգստանում 2010-2014 թթ. վերջնական սպառման ծախսերը աճել են 3549,3 մլն ԱՄՆ դոլարով, որից հետո 2014-2016 թթ. այս ցուցանիշը նվազել է 1645,2 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այս ծախսերը աճել են 3894,3 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2012 թթ. Իրանում վերջնական սպառման ծախսերը աճել են 80416,7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2012-2017 թթ. այս ծախսերը նվազել են 64910,5 մլն ԱՄՆ դոլարով: Վրաստանում 2010-2014 թթ. վերջնական սպառման ծախսը աճել է 3282,4 մլն ԱՄՆ դոլարով, այնուհետև այն նվազել է, իսկ արդեն 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այս ցուցանիշը աճել է 6916,4 մլն ԱՄՆ դոլարով: Ադրբեջանում ևս 2010-2014 թթ. վերջնական սպառման ծախսերը աճել են 15799,8 մլն ԱՄՆ դոլարով, այնուհետև 2014-2016 թթ. դրանք նվազել են 15289,6 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այս ցուցանիշը աճել է 1569,3 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Թուրքիայում վերջնական սպառման ծախսերը աճել են 120444,3 մլն ԱՄՆ դոլարով, որից հետո մինչև 2018 թ. այս ցուցանիշը նվազել է 170952,9 մլն ԱՄՆ դոլարով: Ըստ վերը շարադրված վերլու-

ծուրյան՝ ԵԱՏՄ և հարևան երկրների շարքում ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից զիջում է բոլորին:



Գծապատկեր 1.4.26. Համացանցից օգտվող անհատների տեսակարար կշիռը (%)

ՀՀ-ում 2010-2017 թթ. համացանցից օգտվողների քանակը աճել է 39,7 %-ով, ՌԴ-ում այս ցուցանիշը աճել է նշված ժամանակահատվածում 37,8 %-ով: Բելառուսում, Ղազախստանում և Ղրղզստանում նույնպես այս ցուցանիշի տեսանկյունից գրանցվել է աճ, համապատասխանաբար 47,4 %, 47,3 % և 21,7 %: 2010-2018 թթ. Իրանում և Վրաստանում համացանցից օգտվողների քանակը աճել է 54,1 և 37 %-ով: Ադրբեջանում և Թուրքիայում այս ցուցանիշը աճել է 33,8 և 31,2 %-ով: ԵԱՏՄ երկրների շարքում համացանցից օգտվող ամենաշատ անհատներ եղել են ՌԴ-ում, Բելառուսում, Ղազախստանում այնուհետև ՀՀ-ում, իսկ հարևան երկրների շարքում ՀՀ-ն այս ցուցանիշով զիջում է Իրանին և Ադրբեջանին:




Գծապատկեր 1.4.27. Ջինի ինդեքսը, %

ՀՀ-ում Ջինի գործակիցը 2011-2017 թթ. աճել է 3,6 %-ով, սա ցույց է տալիս երկրի ներսում եկամուտների անհավասարաչափ բաշխումը: ՌԴ-ում 2010-2013 թթ. այս գործակիցը աճել է 1,4 %-ով, այնուհետև 2013-2015 թթ. նվազել է 3,2 %-ով: 2010-2017 թթ. Ջինի գործակիցը նվազել է 3,2 %-ով և 28,6 %-ից դարձել է 25,4 %: 2012-2015 թթ. Ղազախստանում այս ցուցանիշը նվազել է 1,4 %-ով, որից հետո 2015-2017 թթ. այն աճել է 0,7 %-ով:

2010-2012 թթ. Ղրղզստանում Ջինի գործակիցը նվազել է 2,7 %-ով, որից հետո 2013 թ., համեմատած 2012-ի հետ, այն աճել է 1,4 %-ով, այնուհետև 2014 թ. կրկին նվազել է և 2015 թ.՝ աճել, իսկ 2017 թ., ի տարբերություն 2016-ի, այն աճել է 0,5 %-ով: Իրանում 2013-2016 թթ. Ջինի գործակիցը աճել է 2,6 %-ով: 2010-2015 թթ. Վրաստանում այս գործակիցը նվազել է 3 %-ով, իսկ 2017 թ., համեմատած 2016-ի հետ, այն աճել է 1,3 %-ով: Ադրբեջանի մասով տվյալ ցուցանիշի տեսանկյունից հրապարակվել է միայն 2018 թ. տվյալ՝ 28,6 %: Թուրքիայում 2010-2016 թթ. Ջինի գործակիցը աճել է 4,1 %-ով, իսկ 2017 թ., ի տարբերություն 2016-ի, այն աճել է 1 %-ով: ԵՍՏՍ երկրների շարքում եկամուտների անհավասարաչափ բաշխման բարձր ցուցանիշով ՀՀ-ն զիջում է ՌԴ-ին, իսկ հարևան երկրների շարքում ՀՀ-ին գերազանցում են Թուրքիան, Վրաստանը և Իրանը:

ՀՀ-ում 2010-2012 թթ. այս ցուցանիշը աճել է 5 %-ով, որից հետո 2012-2015 թթ. ՀՆԱ տարեկան աճը նվազել է 4 %-ով, իսկ


2016 թ. ՀՆԱ-ի տարեկան աճը եղել է 0,2 %, որը համեմատած 2015 թ. հետ, կտրուկ աճել է 7,3 %-ով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն կրկին նվազել է 2,3 %-ով: 2010-2014 թթ.-ին ՀՆԱ-ի տարեկան աճը ՌԴ-ում նվազել է 3,8 %-ով, իսկ 2015 թ. ՌԴ-ում այն ունեցել է բացասական ցուցանիշ՝ -2,3 %, այնուհետև 2016, 2017 և 2018 թթ. այն կրկին աճել է 1,9 %-ով: 2010-2013 թթ. Բելառուսում ՀՆԱ-ի տարեկան աճը նվազել է 6,8 %-ով, 2014 թ., ի տարբերություն 2013-ի, այն աճել է 0,7 %-ով: 2015 և 2016 թթ. այս ցուցանիշը եղել է բացասական՝ -3,8 և -2,5 %, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն կրկին աճել է 0,5 %-ով:



Գծապատկեր 1.4.28. ՀՆԱ տարեկան աճը, %

Ղազախստանում սկսած 2011 թվականից ՀՆԱ-ի տարեկան աճը սկսել է նվազել, 2012 թ., ի տարբերություն 2011-ի, այն նվազել է 2,6 %-ով, 2013-2016 թթ. այն կրկին նվազել է 4,9 %-ով, բայց 2018 թ., համեմատած 2016-ի հետ, այն աճել է 3 %-ով: Արդգստանում 2010 և 2012 թթ. ՀՆԱ-ի տարեկան աճը եղել է բացասական, համապատասխանաբար -0,4 և -0,2 %, բայց 2013 թ. գրանցել է իր ամենաբարձր ցուցանիշը՝ 10,9 %, այնուհետև մինչև 2018 թ. նվազել է 7,4 %-ով: Իրանում 2010-2012 թթ.-ին ՀՆԱ-ի տարեկան աճը նվազել է 13,2 %-ով, իսկ 2017 թ., համեմատած 2016-ի հետ, այն նվազել է 9,6 %-ով: Վրաստանում ՀՆԱ-ի տարեկան աճ եղել է միայն 2010-2011 թթ.՝ 1 %, և 2011 թ. այն գրանցել է իր բարձր՝ 7,2 % ցուցանիշը, որից հետո մինչև 2018 թ. այն հիմ-


նականում նվազման միտում ունի: 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն նվազել է 0,2 %-ով: Ադրբեջանում 2010-2011 թթ. ՀՆԱ-ի տարեկան աճը նվազել է 6,3 %-ով, որից հետո 2011- 2013 թթ. այն աճել է 7,4 %-ով, իսկ 2013-2016 թթ. այն կրկին նվազել է 8,9 %-ով, և 2016-2018 թթ. այս ցուցանիշը կրկին աճել է 1,7 %-ով: Թուրքիայում ՀՆԱ-ի տարեկան աճի բարձր ցուցանիշ եղել է 2011 թ.՝ 11,1 %, որից հետո մինչև 2018 թ. այն հիմնականում նվազման միտում ունի: 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն նվազել է 4,8 %-ով: ԵԱՏՄ և հարևան երկրների շարքում 2017 և 2018 թթ. ՀՆԱ-ի տարեկան աճով ՀՀ-ն գերազանցում է բոլորին:



Գծապատկեր 1.4.29. ՕՈՒՆ-ի զուտ արտահոսքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, %

ՀՀ-ում օտարերկրյա ներդրումների արտահոսքի մասնաբաժինը ՀՆԱ-ում 2010-2018 թթ. իր բարձր ցուցանիշն է գրանցել 2011 թ.՝ 2,1 %, իսկ ամենացածրը 2018 թ.՝ 0,05 %: 2016-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 0,6 %-ով: 2010-2012 թթ. ՌԴ-ում այս ցուցանիշը նվազել է 1,2 %-ով, իսկ 2013 թ. այն աճել է 1,5 %-ով: 2013-2015 թթ. այս ցուցանիշը նվազել է 2,1 %-ով, իսկ 2015-2017 թթ. այն կրկին աճել է 0,7 %-ով: Բելառուսում 2010-2013 թթ. օտարերկրյա ներդրումների արտահոսքի մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է 0,3 %-ով, այնուհետև 2014 թ. այն նվազել է 0,2 %-ով, իսկ 2016-2018 թթ. այս ցուցանիշը կրկին նվազել է 0,05 %-ով: 2012-2016 թթ. Ղազախստանում օտարերկրյա ներդրումների արտահոսքի


մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է 1,7 %-ով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2016-ի, այս ցուցանիշը նվազել է 5,3 %-ով: Ղրղզստանում 2010-2012 թթ. այս ցուցանիշը նվազել է 0,6 %-ով, իսկ 2012-2015 թթ. այն աճել է 2,3 %-ով: Այնուհետև 2015-2017 թթ. այն նվազել է 2,4 %-ով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն աճել է 0,3 %-ով: Իրանում 2011-2012 թթ. օտարերկրյա ներդրումների արտահոսքի մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է 0,2 %-ով և 2011 թ. գրանցել այս ցուցանիշով ամենամեծ արժեքը՝ 0,2 %, իսկ ամենացածրը՝ 2014 թ.՝ 0,0008 %: 2015-2017 թթ. այս ցուցանիշը նվազել է 0,01 %-ով: Վրաստանում օտարերկրյա ներդրումների արտահոսքի մասնաբաժինը ՀՆԱ-ում ամենամեծը եղել է 2016 թ.՝ 2,8 %, իսկ ամենաքիչը՝ 2013 թ.՝ 0,8 %: 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այս ցուցանիշը աճել է 0,4 %-ով: 2013-2016 թթ. Ադրբեջանում օտարերկրյա ներդրումների արտահոսքի մասնաբաժինը ՀՆԱ-ում աճել է 4,8 %-ով, իսկ 2016-2018 թթ. այն նվազել է 3,1 %-ով: 2010-2014 թթ. Թուրքիայում այս ցուցանիշը աճել է 0,6 %-ով, իսկ 2014-2017 թթ. այն նվազել է 0,4 %-ով, սակայն 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն այն աճել է 0,1 %-ով: Տվյալ ցուցանիշի տեսանկյունից ՀՀ դիրքը, համեմատած ԵԱՏՄ երկրների հետ, գերազանցում է Բելառուսին և Ղրղզստանին, իսկ հարևան երկրների հետ համեմատության մեջ զիջում է բոլորին:



Գծապատկեր 1.4.30. Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսը ընթացիկ գներով, (ԱՄՆ դոլար)

ՀՀ-ում 2010-2014 թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 2338,4 մլն ԱՄՆ դոլարով, որից հետո 2014-2016 թթ. դրանք նվազել են 1779,8 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2017 թ., ի տարբերություն 2016-ի, այս ծախսերն աճել են 767,9 մլն ԱՄՆ դոլարով: ՌԴ-ում 2011 թ. գրանցվել է տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի ցածր ցուցանիշ՝ 102663 մլն ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձր ցուցանիշը եղել է 2013 թ.՝ 121627 մլն ԱՄՆ դոլար: 2013-2016 թթ. այս ցուցանիշը նվազել է 12699,3 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2017 թ., համեմատած 2016-ի հետ, աճել է 150697 մլն ԱՄՆ դոլարով: Բելառուսում 2011-2014 թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 11555,7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2014-2016 թթ.՝ նվազել 15621,6 մլն ԱՄՆ դոլարով: Սակայն 2017 թ., ի տարբերություն 2016-ի, այս ցուցանիշը նվազել է 3868 մլն ԱՄՆ դոլարով: Ղազախստանում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 2010-2013 թթ. 50888,4 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2013-2016 թթ.՝ նվազել 43195,5 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2014 թթ. Ղրղզստանում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 3113,5 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2014-2016 թթ.՝ նվազել 1528,1 մլն ԱՄՆ դոլարով: Սակայն 2017 թ., համեմատած 2016-ի հետ, այս ցուցանիշը աճել է 496 մլն ԱՄՆ դոլարով: Իրանում 2010-2012 թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 76400 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2012-2015 թթ.՝ նվազել 91372 մլն ԱՄՆ դոլարով: Սակայն 2015-2017 թթ. այս ցուցանիշը աճել է 30222 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2014 թթ. Վրաստանում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 2979,3 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2014-2017 թթ.՝ նվազել 2208,7 մլն ԱՄՆ դոլարով: Ադրբեջանում 2010-2014 թթ. տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել են 13986,3 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2014-2016 թթ.՝ նվազել 12926,9 մլն ԱՄՆ դոլարով: Սակայն 2017 թ., համեմատած 2016-ի հետ, այս ցուցանիշն աճել է 1591,4 մլն ԱՄՆ դոլարով: 2010-2013 թթ. Թուրքիայում տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերն աճել է 101753 մլն ԱՄՆ դոլարով, իսկ 2013-2017

թթ. նվազել 85221 մլն ԱՄՆ դոլարով: ԵԱՏՄ երկրների և հարևան երկրների շարքում վերջնական սպառման ծախսի ցածր մակարդակ ունի ՀՀ-ն:



Գծապատկեր 1.4.31. Աշխատուժի ազատության ինդեքսը (0-100 միավոր)⁴⁶


ՀՀ-ում 2010-2014 թթ. աշխատուժի ազատության ինդեքսը աճել է 8 միավորով և դարձել 79, այնուհետև 2014-2016 թթ. նվազել է 17 միավորով: 2017 թ., համեմատած 2016-ի հետ, այն աճել է 10 միավորով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն նվազել է 2 միավորով, և ՀՀ-ի աշխատուժի ազատության ինդեքսը 2018 թ. եղել է 70 միավոր: 2010-2012 թթ. ՌԴ-ում աշխատուժի ազատության ինդեքսը աճել է 4 միավորով և դարձել է 64, այնուհետև 2013 թ., համեմատած 2012-ի հետ, այն նվազել է 11 միավորով և դարձել 53: 2013-2015 թթ. այս ցուցանիշը աճել է 6 միավորով, որից հետո հաջորդող տարիներին այն կրկին նվազել է և 2018 թ., համեմատած 2017-ի հետ, աճել 1 միավորով: Այսպիսով, ՌԴ-ում աշխատուժի ազատության ինդեքսը 2018 թ. 52 միավոր է: Բելառուսում 2010-2013 թթ. աշխատուժի ազատության ինդեքսը նվազել է 8 միավորով և 85-ից դարձել է 77, իսկ 2013-2015 թթ. այս ցուցանիշը նվազել է 3 միավորով: 2013-2015 թթ. այն աճել է 3

⁴⁶ https://www.theglobaleconomy.com/rankings/herit_labor_freedom/, 0-100 միավոր, որքան միավորը մոտ է 100-ին, այնքան աշխատուժը ազատ է:

միավորով, 2015-2018 թթ.՝ նվազել 7 միավորով, և 2018 թ. աշխատուժի ազատության ինդեքսը Բելառուսում եղել է 73: Ղազախստանում 2010-2012 թթ. աշխատուժի ազատության ինդեքսը աճել է 6 միավորով և 83 միավորից դարձել է 89: 2012-2017 թթ. այս ցուցանիշը նվազել է 6 միավորով և 89 միավորից դարձել է 83, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն աճել է 4 միավորով: Այսպիսով, Ղազախստանում աշխատուժի ազատության ինդեքսը 87 միավոր է: 2010-2013 թթ. Ղրղզստանում այս ցուցանիշը աճել է 6 միավորով, որից հետո 2013-2018 թթ. աշխատուժի ազատության ինդեքսը նվազել է 11 միավորով: Այսպիսով, Ղրղզստանում 2018 թ. այս ցուցանիշը 78 միավոր է: Իրանում 2010-2012 թթ. աշխատուժի ազատության ինդեքսը նվազել է 3 միավորով և 55 միավորից դարձել 52 միավոր, իսկ 2013 թ., համեմատած 2012-ի հետ, այն աճել է 3 միավորով և կրկին դարձել 55 միավոր: 2016-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 9 միավորով, և 2018 թ. Իրանում աշխատուժի ազատության ինդեքսը եղել է 58 միավոր: Վրաստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 17 միավորով և 94 միավորից դարձել է 77 միավոր: Այսպիսով, Վրաստանում աշխատուժի ազատության ինդեքսը 2018 թ. եղել է 77: Ադրբեջանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 11 միավորով և 83 միավորից դարձել է 72: Այսպիսով, Ադրբեջանում աշխատուժի ազատության ինդեքսը 2018 թ. եղել է 72: 2010-2014 թթ. Թուրքիայում այս ցուցանիշը աճել է 19 միավորով և 41 միավորից դարձել 60 միավոր, այնուհետև 2014-2018 թթ. նվազել է 12 միավորով: Այսպիսով, Թուրքիայում աշխատուժի ազատության ինդեքսը 2018 թ. եղել է 48: ՀՀ-ի դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում գերազանցում է ՌԴ-ին, իսկ հարևան երկրների շարքում գերազանցում է Թուրքիային:

ՀՀ-ում 2010-2018 թթ. առևտրի ազատության ինդեքսի բարձր միավորը եղել է 2014 և 2016 թթ.՝ 86, իսկ ամենացածրը եղել է 2017 և 2018 թթ.՝ 80 միավոր: ՌԴ-ում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 11 միավորով՝ 68 միավորից դառնալով 79 միավոր: Բելառուսում 2010-2012 թթ. առևտրի ազատության ինդեքսը եղել է 80

միավոր, որից հետո 2013 թ. այն աճել է 1 միավորով և հաջորդող 2013-2015 թթ. ևս այն եղել է 81: 2016 թ., համեմատած նախորդող տարիների հետ, այս ցուցանիշը նվազել է 2 միավորով, այնուհետև 2017 և 2018 թթ. առևտրի ազատության ինդեքսը Բելառուսում կրկին եղել է 81 միավոր:




Գծապատկեր 1.4.32. Առևտրի ազատության ինդեքսը, 0-100 միավոր⁴⁷

Ղազախստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 10 միավորով և 86 միավորից դարձել 76: Ղրղզստանում առևտրի ազատության ինդեքսի բարձր՝ 80 միավոր եղել է 2015 թ., իսկ ցածր՝ 63 միավոր՝ 2011 և 2012 թթ.: 2018 թ. Ղրղզստանում այս ցուցանիշը եղել է 75 միավոր: Իրանում 2010-2015 թթ. առևտրի ազատության ինդեքսը նվազել է 9 միավորով և 50 միավորից դարձել 41, այնուհետև հաջորդող տարիներին այս ցուցանիշը աճել է 14 միավորով և դարձել 55: Վրաստանում 2010-2018 թթ. առևտրի ազատության ինդեքսը եղել է 89 միավոր: 2010-2014 թթ. Ադրբեջանում այս ցուցանիշը եղել է 77 միավոր, այնուհետև 2015, 2016 և 2017 թթ. այն նվազել է 1-ական միավորով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, աճել 1 միավորով: Այսպիսով, Ադրբեջանում 2018 թ. առևտրի ազատության ինդեքսը եղել է 75: 2011-2015

⁴⁷ https://www.theglobaleconomy.com/rankings/herit_trade_freedom/, 0-100 միավոր, որքան միավորը մոտ է 100-ին, այնքան առևտուրը ազատ է:

թթ. Թուրքիայում այս ցուցանիշը եղել է 85, իսկ 2017 թ., ի տարբերություն 2016-ի, այն նվազել է 7 միավորով, սակայն 2018 թ., համեմատաբար 2017-ի հետ, առևտրի ազատության ինդեքսը աճել է 10 միավորով և կազմել 89: Այսպիսով, ՀՀ-ի դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵՍՏ երկրների շարքում գերազանցում է բոլորին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է միայն Վրաստանին:




Գծապատկեր 1.4.33. Առևտրի բացվածության ինդեքսը, %⁴⁸

2010-2013 թթ. ՀՀ առևտրի բացվածության ինդեքսը աճել է 10,4 %-ով, իսկ 2013-2015 թթ.՝ նվազել 4,9 %-ով: 2017 թ., համեմատաբար 2016-ի հետ, այն նվազել է 10,8 %-ով: 2010-2013 թթ. ՌԴ-ում այս ցուցանիշը նվազել է 4,1 %-ով, իսկ 2013-2015 թթ.՝ աճել 3,1 %-ով, բայց 2015-2017 թթ. այս ինդեքսը կրկին նվազել է 3,5 %-ով: 2011-2014 թթ. Բելառուսի առևտրի բացվածության ինդեքսը նվազել է 47,3 %-ով, այնուհետև 2014-2017 թթ. այն աճել է 23,3 %-ով: 2012-2015 թթ. Ղազախստանի առևտրի բացվածության ինդեքսը նվազել է 20,6 %-ով, իսկ 2015-2017 թթ.՝ աճել 7,5 %-ով: Դրոգաստանում 2010-2012 թթ. այս ցուցանիշը աճել է 6,4 %-ով, իսկ 2012-2017 թթ.՝ նվազել 37,2 %-ով: 2011-2013 թթ. առևտրի բացվածության ինդեքսը աճել է 7,1 %-ով, իսկ 2013-2015 թթ.՝ նվազել 11,3 %-ով, սակայն 2015-2017 թթ. այս ցուցանիշը աճել է 9,7 %-ով: 2010-2017 թթ. Վրաստանում առևտրի բացվածության ինդեքսը աճել է 24,7 %-ով:

⁴⁸ https://www.theglobaleconomy.com/rankings/trade_openness/


ով: 2011-2014 թթ. Ադրբեջանում այս ցուցանիշը նվազել է 11,3 %-ով, իսկ 2014-2017 թթ.՝ աճել 21,1 %-ով: Թուրքիայում 2011-2016 թթ. բացվածության ինդեքսը նվազել է 5,8 %-ով, իսկ 2017թ., համեմատած 2016-ի հետ, այն աճել է 7,3 %-ով: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵՍՏՄ երկրների շարքում գերազանցում է ՌԴ-ին և Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում գերազանցում է Իրանին և Թուրքիային:



Չճապատկեր 1.4.34. Մասնավոր հատվածին տրամադրող բանկային վարկի տոկոսադրույքը

ՀՀ-ում 2010-2018 թթ. բանկային վարկի տոկոսադրույքը նվազել է 6,4 %-ով, և 2018 թ. այն կազմում է 12,8 %: ՌԴ-ում 2011-2015 թթ. բանկային վարկի տոկոսադրույքը աճել է 7, 2%-ով, իսկ 2015-2018 թթ.՝ նվազել 6,9 %-ով, և 2018 թ. այն եղել է 8,8 %: 2010-2012 թթ.՝ Բելառուսում այս ցուցանիշը աճել է 10,2 %-ով, իսկ 2012-2018 թթ.՝ նվազել 10,7 %-ով, և 2018 թ. բանկային վարկի տոկոսադրույքը եղել է 8,7 %: 2010-2014 թթ. Ղրղզստանում այս ցուցանիշը նվազել է 3,5 %-ով, իսկ 2014-2016 թթ.՝ աճել 4,4 %-ով, սակայն 2016-2018 թթ.-ին այն կրկին նվազել է 5 %-ով: Ղրղզստանում բանկային վարկի տոկոսադրույքը 2018 թ. կազմել է 19,5 %: 2011-2016 թթ. Իրանում այս ցուցանիշը աճել է 7 %-ով, և 2016 թ. Իրանում բանկային վարկի տոկոսադրույքը եղել է 18 %: Վրաստանում 2010-2017 թթ. այս ցուցանիշը նվազել է 4,4 %-ով, և 2017 թ. այն կազմել է 11,4 %: 2010-2017 թթ. Ադրբեջանում բանկային վարկի տոկոսադրույքը նվազել է 11,3 %-ով, իսկ 2014-2017 թթ.՝ աճել 21,1 %-ով: Թուրքիայում 2011-2016 թթ. բացվածության ինդեքսը նվազել է 5,8 %-ով, իսկ 2017թ., համեմատած 2016-ի հետ, այն աճել է 7,3 %-ով:

է 4,1 %-ով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն աճել է 1 %-ով և կազմել 17,4 %: ԵԱՏՍ երկրների շարքում բանկային վարկի տոկոսադրույքը բարձր է Ղրղզստանում և ՀՀ-ում, իսկ հարևան երկրների շարքում ՀՀ-ին գերազանցում է Ադրբեջանը:




Չճապատկեր 1.4.35. Բիզնես ազատության ինդեքսը, 0-100 միավոր⁴⁹

ՀՀ-ում 2012-2018 թթ. բիզնեսի ազատության ինդեքսը նվազել է 9 միավորով, և 2018 թ. այն եղել է 79 միավոր: ՌԴ-ում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 25 միավորով, և 2018 թ. այն եղել է 77 միավոր: 2013-2016 թթ. Բելառուսում բիզնեսի ազատության ինդեքսը նվազել է 6 միավորով, իսկ 2016-2018 թթ.՝ աճել 5 միավորով, և 2018 թ. այն եղել է 74 միավոր: Ղազախստանում այս ցուցանիշը 2011-2013 թթ. նվազել է 2 միավորով, իսկ 2013-2014 թթ.՝ աճել 2 միավորով, և 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն նվազել է 1 միավորով և կազմել 74: 2010-2013 թթ. Ղրղզստանում բիզնեսի ազատության ինդեքսը նվազել է 4 միավորով, իսկ 2016-2017 թթ.՝ աճել 9 միավորով, սակայն 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այս ցուցանիշը նվազել է 1 միավորով և կազմել 73: Իրանում 2010-2015 թթ. բիզնեսի ազատության ինդեքսը նվազել է 13 միավորով, իսկ 2015-2017թթ.՝ աճել 8 միավորով, սակայն 2018 թ., ի տարբերու-

⁴⁹ https://www.theglobaleconomy.com/rankings/herit_business_freedom/

թյուն 2017-ի, այս ցուցանիշը նվազել է 1 միավորով և կազմել է 64: Վրաստանում 2013 թ. բիզնեսի ազատության ինդեքսը եղել է 91 միավոր, իսկ 2016, 2017 և 2018 թթ. այս ցուցանիշը եղել է 87 միավոր: 2010-2013 թթ. բիզնեսի ազատության ինդեքսը Ադրբեջանում նվազել է 6 միավորով, այնուհետև 2013-2015 թթ. այն աճել է 6 միավորով, իսկ 2017 և 2018 թթ. այս ցուցանիշը եղել է 72 միավոր: Թուրքիայում 2015-2017 թթ. բիզնեսի ազատության ինդեքսը նվազել է 2 միավորով և 2018 թ. կազմել 63 միավոր: ՀՀ դիրքը սովյալ ցուցանիշի տեսանկյունից EUSU երկրների շարքում գերազանցում է բոլորին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է միայն Վրաստանին:




Պատկեր 1.4.36. Բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը⁵⁰

ՀՀ-ում 2010-2018 թթ. բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը ամենաշատը եղել է 2010 թ.՝ 54, իսկ ամենաքիչը՝ 2013-2018 թթ.՝ 14: ՈՂ-ում 2013-2018 թթ բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը եղել է 7: 2010-2018 թթ. Բեւառուսում բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը ամենաշատը եղել է 2010 թ.՝ 82, իսկ ամենաքիչը՝ 2014-2018 թթ.՝ 7: Ղազախաստանում բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը ամենաշատը եղել է 2010, 2015-2018 թթ.՝ 7, իսկ ամենաքիչը՝ 2011-2014 թթ.՝ 6: Ղրղզստանում բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը ամենաշատը եղել է 2011-

⁵⁰ https://www.theglobaleconomy.com/Number_of_taxes/

2013 թթ.՝ 52, իսկ ամենաքիչը՝ 2010 թ.՝ 48: Իրանում 2010-2018 թթ. բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը եղել է 20: Վրաստանում 2010-2018 թթ. բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը ամենաշատը եղել է 2010 թ.՝ 30, իսկ ամենաքիչը՝ 2011-2018 թթ.՝ 5: Ադրբեջանում բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը ամենաշատը եղել է 2010- 2013 թթ.՝ 18, իսկ ամենաքիչը՝ 2016-2018 թթ.՝ 6: Թուրքիայում 2010-2018 թթ. բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակը եղել է 10: ԵԱՏՄ երկրների շարքում բիզնեսի կողմից վճարվող հարկերի ամենաշատ քանակով ՀՀ-ին գերազանցում է Ղրղզստանը, իսկ հարևան երկրների շարքում ամենաշատ վճարվող հարկերի քանակ ունի ՀՀ-ն:




Գծապատկեր 1.4.37. Կառավարության գործունեության արդյունավետության ինդեքսը (-2.5՝ ցածր, 2.5՝ բարձր)⁵¹

ՀՀ-ում 2010-2017 թթ. կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2013 թ.՝ 0,07 միավոր, իսկ ամենացածրը եղել է 2010 թ.՝ -0,78 միավոր: ՌԴ-ում կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2017 թ.՝ -0,08 միավոր, իսկ ամենացածրը՝ 2010 և 2011 թթ.՝ -0,47 միավոր: Բելառուսում կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2017 թ.՝ -0,35, իսկ ամենացածրը եղել է 2010 թ.՝ -1,11: Ղազախստանում կառավարության գործունեության բարձր

⁵¹ https://ru.theglobaleconomy.com/rankings/wb_government_effectiveness/

արդյունավետություն եղել է 2013 թ.՝ 0,53 միավոր, իսկ ամենացածրը՝ 2010 թ.՝ -0,44 միավոր: Ղրղզստանում կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2011 թ.՝ -0,645 միավոր, իսկ ամենացածրը՝ 2015 թ.՝ -0,91 միավոր: Իրանում կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2017 թ.՝ -0,19 միավոր, իսկ ամենացածրը՝ 2013 թ.՝ -0,68 միավոր: Վրաստանում կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2012 թ.՝ 0,61 միավոր, իսկ ամենացածրը՝ 2010 թ.՝ 0,31 միավոր: Ադրբեջանում կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2017 թ.՝ -0,16 միավոր, իսկ ամենացածրը եղել է 2010 թ.՝ -0,81 միավոր: Թուրքիայում կառավարության գործունեության բարձր արդյունավետություն եղել է 2012 թ.՝ 0,41 միավոր, իսկ ամենացածրը՝ 2016 թ.՝ 0,04 միավոր: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Վրաստանին և Թուրքիային:




Գծապատկեր 1.4.38. Կոռուպցիայի ազատության ինդեքսը⁵², 0-100 միավոր

ՀՀ-ում կոռուպցիայի ազատության ինդեքսը 2010-2017 թթ. աճել է 14 միավորով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն նվազել է 2 միավորով և կազմել 41: ՌԴ-ում 2010-2018 թթ. այս

⁵² https://www.theglobaleconomy.com/rankings/herit_corruption/

ցուցանիշը աճել է 17 միավորով և 2018 թ. կազմել 38: Բելառուսում 2010-2018 թթ. կոռուպցիայի ազատության ինդեքսը աճել է 22 միավորով և 2018 թ. կազմել 42: Ղազախստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 23 միավորով և 2018 թ. դարձել 45: Ղրղզստանում 2010-2018 թթ. կոռուպցիայի ազատության ինդեքսը աճել է 11 միավորով և 2018 թ. կազմել 29 միավոր: Իրանում 2011-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 15 միավորով և 2018 թ. դարձել 33: Վրաստանում 2011-2017 թթ. կոռուպցիայի ազատության ինդեքսը աճել է 26 միավորով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն նվազել է 3 միավորով և դարձել 62: Ադրբեջանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 21 միավորով, և 2018 թ. այն եղել է 40: Թուրքիայում 2010-2018 թթ. կոռուպցիայի ազատության ինդեքսը նվազել է 8 միավորով, և 2018 թ. այն եղել է 42: Տվյալ ցուցանիշով ԵՍՏՄ երկրների շարքում ՀՀ-ն գերազանցում է բոլորին, իսկ հարևան երկրների շարքում գերազանցում է Վրաստանին ու Թուրքիային:




Գծապատկեր 1.4.39. Կոռուպցիայի վերահսկողության ինդեքսը⁵³ (-2.5՝ թույլ, 2.5՝ ուժեղ)

ՀՀ-ում 2010-2017 թթ. կոռուպցիայի ուժեղ վերահսկողություն եղել է 2014 թ.՝ -0,54 միավոր, իսկ թույլ վերահսկողություն եղել է 2010 թ.՝ -0,7 միավոր: ՌԴ-ում 2010-2017 թթ. կոռուպցիայի ուժեղ


⁵³ https://www.theglobaleconomy.com/rankings/wb_corruption/

վերահսկողության եղել է 2016 թ.՝ -0,82 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2010 թ.՝ -1,09 միավոր: Բելառուսում 2010-2017 թթ. կոռուպցիայի ուժեղ վերահսկողության եղել է 2017 թ.՝ -0,2 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2010 թ.՝ -0,68 միավոր: Ղազախստանում կոռուպցիայի ուժեղ վերահսկողության եղել է 2014 թ.՝ -0,83 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2010 թ.՝ -1 միավոր: Ղրղզստանում կոռուպցիայի ուժեղ վերահսկողության եղել է 2017 թ.՝ -1,05 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2011 թ.՝ -1,22 միավոր: Իրանում կոռուպցիայի ուժեղ վերահսկողության եղել է 2015 թ.՝ -0,6 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2010 թ.՝ -0,95 միավոր: Վրաստանում կոռուպցիայի ուժեղ վերահսկողության եղել է 2014 թ.՝ 0,79 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2010 թ.՝ 0,01 միավոր: Ադրբեջանում կոռուպցիայի ուժեղ վերահսկողության եղել է 2016 թ.՝ -0,84 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2010 թ.՝ -1,24 միավոր: Թուրքիայում կոռուպցիայի ուժեղ վերահսկողության եղել է 2012 թ.՝ 0,16 միավոր, իսկ թույլ վերահսկողությունն եղել է 2017 թ.՝ -0,19 միավոր: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է միայն Բելառուսին, իսկ հարևան երկրների շարքում ՀՀ-ն զիջում է Թուրքիային և Վրաստանին:




Փճապատկեր 1.4.40. Ներդրումների ազատության ինդեքսը, 0-100 միավոր

ՀՀ-ում ներդրումների ազատության ինդեքսը 2010-2013 թթ. եղել է 75 միավոր, իսկ 2014-2017 թթ. այն աճել է 5 միավորով, սակայն 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այս ցուցանիշը նվազել է 5 միավորով և դարձել 75: ՌԴ-ում 2010-2016 թթ. ներդրումների ազատության ինդեքսը եղել է 25 միավոր, իսկ 2017 և 2018 թթ. այն աճել է 5 միավորով և դարձել 30: Բելառուսում 2010-2013 թթ. ներդրումների ազատության ինդեքսը եղել է 20, իսկ 2017 և 2018 թթ. այն աճել է 10 միավորով և դարձել 30: Ղազախստանում 2010-2018 թթ. ներդրումների ազատության ինդեքսը աճել է 20 միավորով, և 2018 թ. այն եղել է 50 միավոր: Դրոգատանում 2010-2018 թթ. ներդրումների ազատության ինդեքսը աճել է 10 միավորով, և 2018 թ. այն եղել է 60 միավոր: Վրաստանում 2010-2018 թթ. ներդրումների ազատության ինդեքսը աճել է 10 միավորով, և 2018 թ. եղել է 80 միավոր: Ադրբեջանում 2010-2014 թթ. այս ցուցանիշը աճել է 5 միավորով, իսկ 2016-2018 թթ. ներդրումների ազատության ինդեքսը նվազել է ևս 5 միավորով, և 2018 թ. այն եղել է 55: Թուրքիայում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 10 միավորով, և 2018 թ. այն եղել է 75 միավոր: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում գերազանցում է բոլոր երկրներին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է միայն Վրաստանին:




Փճապատկեր 1.4.41. Նորարարությունների համաթիվը, 0-100 միավոր

ՀՀ-ում նորարարությունների համաթիվը 2011-2013 թթ. աճել է 4.6 միավորով, իսկ 2013-2018 թթ.՝ նվազել 4.8 միավորով, և 2018 թ. այն եղել է 32.8 միավոր: ՌԴ-ում 2011-2015 թթ. այս ցուցանիշը աճել է 3.4 միավորով, իսկ 2015-2018 թթ.՝ նվազել 1.4 միավորով, և 2018 թ. այն եղել է 37.9 միավոր: Բելառուսում 2012-2015 թթ. նորարարությունների համաթիվը աճել է 5.3 միավորով, իսկ 2015-2018 թթ.՝ նվազել 8.8 միավորով, և 2018 թ. այն եղել է 29.4 միավոր: Ղազախստանում 2011-2014 թթ. նորարարությունների համաթիվը աճել է 2.5 միավորով, իսկ 2014-2018 թթ.՝ նվազել 1.4 միավորով, և 2018 թ. այն եղել է 31.4 միավոր: Ղրղզստանում 2011-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 2.2 միավորով, և 2018 թ. այն եղել է 27.6 միավոր: Իրանում 2011-2018 թթ. նորարարությունների համաթիվը աճել է 5 միավորով, և 2018 թ. այն եղել է 33.4 միավոր: Վրաստանում 2011-2013 թթ. այս ցուցանիշը աճել է 3.7 միավորով, 2013-2015 թթ.՝ նվազել 1.8 միավորով, այնուհետև 2015-2018 թթ. աճել է 1.2 միավորով: Ադրբեջանում 2013-2017 թթ. նորարարությունների համաթիվը աճել է 1.6 միավորով, և 2018 թ. այն եղել է 30.2 միավոր: Թուրքիայում այս ցուցանիշը 2011-2017 թթ. աճել է 4.7 միավորով, և 2018 թ. այն եղել է 37.4 միավոր: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵՍՏՍ երկրների շարքում զիջում է միայն ՌԴ-ին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Թուրքիային:



Գծապատկեր 1.4.42. Տնտեսական ազատության ինդեքսը, 0-100 միավոր


ՀՀ-ում տնտեսական ազատության ինդեքսը 2010-2011 թթ. աճել է 1 միավորով, այնուհետև 2011-2016 թթ. նվազել է 3 միավորով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, այն նվազել է 1 միավորով և դարձել 69: ՌԴ-ում 2010-2018 թթ. տնտեսական ազատության ինդեքսը աճել է 8 միավորով և 2018 թ. դարձել 58: Բելառուսում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 9 միավորով և 2018 թ. դարձել 58: Ղազախստանում 2010-2018 թթ. տնտեսական ազատության ինդեքսը աճել է 8 միավորով և 2018 թ. դարձել 69: Ղրղզստանում 2010-2018 թթ. տնտեսական ազատության ինդեքսը աճել է 2 միավորով և 2018 թ. դարձել 63: Իրանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 8 միավորով և 2018 թ. դարձել 51 միավոր: Վրաստանում 2010-2018 թթ. տնտեսական ազատության ինդեքսը աճել է 6 միավորով և 2018 թ. դարձել 76 միավոր: Ադրբեջանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 15 միավորով և 2018 թ. դարձել 64 միավոր: Թուրքիայում 2010-2013 թթ. տնտեսական ազատության ինդեքսը նվազել է 1 միավորով, իսկ 2016-2018 թթ.՝ աճել 3 միավորով, և 2018 թ. այն դարձել է 65: ՀՀ դիրքը սովյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում գերազանցում է բոլոր երկրներին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է միայն Վրաստանին:



Պատկեր 1.4.43. Քաղաքական կայունության ինդեքսը (-2.5՝ թույլ, 2.5՝ ուժեղ)

ՀՀ-ում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2012 թ.՝ 0.15, իսկ քաղաքական թույլ կայունություն եղել է 2017


թ.՝ -0.71: ՌԴ-ում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2013 թ.՝ -0.74, իսկ քաղաքական թույլ կայունություն եղել է 2015 թ.՝ -1.03: Բելառուսում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2014 թ.՝ 0.18, իսկ քաղաքական թույլ կայունություն եղել է 2010 և 2011 թթ.՝ -0.09: Ղազախստանում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2010 թ.՝ 0.52, իսկ թույլ կայունություն եղել է 2012 թ.՝ 0.41: Արդգստանում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2017 թ.՝ -0.43, իսկ թույլ կայունություն եղել է 2010 թ.՝ -1.04: Իրանում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2012 թ.՝ -0.72, իսկ թույլ կայունություն եղել է 2010 թ.՝ -1.63: Վրաստանում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2014 թ.՝ -0.32, իսկ թույլ կայունություն եղել է 2012 թ.՝ -1.22: Ադրբեջանում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2010 թ.՝ -0.24, իսկ թույլ կայունություն եղել է 2016 թ.՝ -0.8: Թուրքիայում 2010-2017 թթ. քաղաքական ուժեղ կայունություն եղել է 2010 թ.՝ -0.92, իսկ թույլ կայունություն եղել է 2016 թ.՝ -2.01: ՀՀ-ն տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է միայն Բելառուսին և Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում գտնվում է բարենպաստ պայմաններում:



Գծապատկեր 1.4.44. Ֆինանսական ազատության ինդեքսը, 0-100 միավոր⁵⁴

⁵⁴ https://www.theglobaleconomy.com/Armenia/herit_financial_freedom/

ՀՀ-ում 2010-2018 թթ. ֆինանսական ազատության ինդեքսը եղել է 70 միավոր: ՌԴ-ում 2010-2012 թթ. այս ցուցանիշը եղել է 40 միավոր, իսկ 2012-2018 թթ. նվազել է 10 միավորով և դարձել 30: Բելառուսում 2010-2018 թթ. ֆինանսական ազատության ինդեքսը եղել է 10 միավոր: Ղազախստանում 2010-2018 թթ. ֆինանսական ազատության ինդեքսը եղել է 50 միավոր: Ղրղզստանում ֆինանսական ազատության ինդեքսը եղել է 50 միավոր: Իրանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը եղել է 10 միավոր: Վրաստանում 2010-2018 թթ. ֆինանսական ազատության ինդեքսը եղել է 60 միավոր: Ադրբեջանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 20 միավորով և 2018 թ. դարձել 60: Թուրքիայում 2010-2018 թթ. ֆինանսական ազատության ինդեքսը աճել է 10 միավորով և 2018 թ. դարձել 60: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից թե՛ ԵԱՏՄ երկրների և թե՛ հարևան երկրների շարքում գերազանցում է բոլորին և ունի բարենպաստ դիրք:




Գծապատկեր 1.4.45. Սեփականության իրավունքի ինդեքսը, 0-100 միավոր⁵⁵

ՀՀ-ում սեփականության իրավունքի ինդեքսը 2010-2016 թթ. նվազել է 10 միավորով, իսկ 2016-2018 թթ.՝ աճել 35 միավորով, և 2018 թ. այն եղել է 55 միավոր: ՌԴ-ում այս ցուցանիշը 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 24 միավորով և 2018 թ. դարձել 49 միա-

⁵⁵ https://www.theglobaleconomy.com/Armenia/herit_property_rights/

վոր: Բելառուսում սեփականության իրավունքի ինդեքսը 2010-2018 թթ. աճել է 34 միավորով և 2018 թ. դարձել 54: Ղազախստանում այս ցուցանիշը 2010-2018 թթ. աճել է 26 միավորով և 2018 թ. դարձել 56: Դրդգստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 26 միավորով և 2018 թ. դարձել 50: Իրանում 2010-2018 թթ. սեփականության իրավունքի ինդեքսը աճել է 23 միավորով և 2018 թ. դարձել 33 միավոր: Վրաստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 23 միավորով և 2018 թ. դարձել 63 միավոր: Ադրբեջանում 2010-2017 թթ. սեփականության իրավունքի ինդեքսը աճել է 11 միավորով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, նվազել է 5 միավորով և դարձել 55: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Թուրքիային և Վրաստանին:




Գծապատկեր 1.4.46. Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության ինդեքսը⁵⁶, %

ՀՀ-ում մտավոր սեփականության պաշտպանության ինդեքսը 2012-2014 թթ. աճել է 1 %-ով, այնուհետև 2014-2016 թթ. նվազել է 0.1 %-ով: ՌԴ-ում 2012-2016 թթ. այս ցուցանիշը աճել է 0.62 %-ով: Ղազախստանում մտավոր սեփականության պաշտպանության ինդեքսը 2012-2016 թթ. աճել է 1.2 %-ով: Դրդգստանում այս ցուցանիշը 2012-2016 թթ. աճել է 1.24 %-ով: Իրանում 2012-2016 թթ.

⁵⁶ https://todata360.worldbank.org/indicators/entrp.ip?country=ARM&indicator=3375&countries=RUS,BLR&viz=line_chart&years=2012,2016

մտավոր սեփականության պաշտպանության ինդեքսը աճել է 0.4 %-ով: Վրաստանում 2012-2016 թթ. այս ցուցանիշը աճել է 0.58 %-ով: Ադրբեջանում 2013-2016 թթ. մտավոր սեփականության պաշտպանության ինդեքսը նվազել է 0.4 %-ով: Թուրքիայում 2012-2016 թթ. այս ցուցանիշը աճել է 0.96 %-ով: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Թուրքիային:




Գծապատկեր 1.4.47. Վարկերի մատչելիության ինդեքսը⁵⁷, %

ՀՀ-ում վարկերի մատչելիության ինդեքսը 2010-2017 թթ. աճել է գրեթե 2 %-ով, և 2017 թ. այն եղել է 4 %: ՌԴ-ում այս ցուցանիշը 2010-2017 թթ. աճել է 1 %-ով և 2017 թ. կազմել 3.2 %: Ղազախստանում վարկերի մատչելիության ինդեքսը 2010-2017 թթ. աճել է 1.3 %-ով և 2017 թ. կազմել 3.5 %: Ադրբեջանում 2010-2017 թթ. այս ցուցանիշը աճել է 1.6 %-ով և 2017 թ. կազմել 3.4 %: Իրանում 2010-2017 թթ. վարկերի մատչելիության ինդեքսը աճել է 1.2 %-ով և 2017 թ. դարձել 2.8 %: Վրաստանում 2010-2017 թթ. այս ցուցանիշը աճել է 1.6 %-ով և 2017 թ. կազմել 2.8 %: Ադրբեջանում 2010-2017 թթ. վարկերի մատչելիության ինդեքսը աճել է 1.2 %-ով և 2017 թ. կազմել 4 %: Թուրքիայում 2010-2017 թթ. այս ցուցանիշը աճել է 1.6 %-ով և 2017 թ. կազմել 4.1 %: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է Թուրքիային, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Իրանին:

⁵⁷ https://tcdata360.worldbank.org/indicators/inv.acc.loan?country=TUR&indicator=527&countries=ARM,RUS,BLR&viz=line_chart&years=2010,2017

ցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում 2010-2015 թթ. զիջում է ՌԴ-ին և Ղազախստանին, իսկ 2015-2017 թթ. գերազանցում է ԵԱՏՄ բոլոր երկրներին: Հարևան երկրների շարքում ՀՀ դիրքը բարենպաստ է համեմատած Իրանի հետ:




Պճապատկեր 1.4.48. Ընկերության կողմից կատարած ծախսը գիտահետազոտական աշխատանքների վրա (դիրք)⁵⁸

ՀՀ-ում ընկերության կողմից կատարած ծախսը գիտահետազոտական աշխատանքների վրա 2010-2017 թթ. նվազել է 56-ով և 2017 թ. զբաղեցրել 71-րդ դիրքը: ՌԴ-ում այս ցուցանիշը 2010-2012 թթ. աճել է 29-ով, իսկ 2012-2014 թթ.՝ նվազել 17-ով, սակայն 2015 թ., ի տարբերություն 2014-ի, այն աճել է 13-ով: 2015-2017 թթ. ՌԴ-ում այս ցուցանիշը նվազել է 21-ով և 2018 թ. զբաղեցրել 54-րդ դիրքը: Ղազախստանում 2011-2015 թթ. ընկերության կատարած ծախսը գիտահետազոտական աշխատանքների վրա նվազել է 52-ով, իսկ 2015-2017 թթ. աճել է 40-ով և 2017 թ. զբաղեցրել 95-րդ դիրքը: Ղրղզստանում 2010-2013 թթ. այս ցուցանիշը աճել է 6-ով, իսկ 2013-2015 թթ. նվազել է 21-ով, այնուհետև 2015-2017 թթ. աճել է 11-ով և 2017 թ. զբաղեցրել 134-րդ դիրքը: Իրանում 2010-2017 թթ. ընկերության կողմից կատարած ծախսը գիտահետազոտական աշխատանքների վրա նվազել է 41-ով և 2017 թ. զբաղեցրել է 41-րդ դիրքը: Վրաստանում 2010-2017 թթ. այս ցուցանիշը նվազել է

⁵⁸ https://todata360.worldbank.org/indicators/hd5c48fc8?country=TUR&indicator=602&countries=ARM,BLR&viz=line_chart&years=2007,2017

10-ով և 2017 թ. զբաղեցրել 122-րդ դիրքը: Ադրբեջանում 2010-2017 թթ. ընկերության կողմից կատարած ծախսը գիտահետազոտական աշխատանքների վրա նվազել է 58-ով և 2017 թ. զբաղեցրել 30-րդ դիրքը: Թուրքիայում 2010-2014 թթ. այս ցուցանիշը աճել է 27-ով, իսկ 2014-2017 թթ. այն նվազել է 20-ով և 2017 թ. զբաղեցրել 69-րդ դիրքը: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է միայն Ղազախստանին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Վրաստանին:




Չճապատկեր 1.4.49. Բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործարքների քանակը⁵⁹

ՀՀ-ում 2010-2018 թթ. բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործարքների ամենաշատ քանակը եղել է 2010 և 2011 թթ.՝ 6, իսկ քիչ գործարքների քանակ եղել է 2014-2016 թթ.՝ 2, 2018 թ. այն եղել է 4: ՌԴ-ում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 5-ով, և 2018 թ. այն եղել է 4: Բելառուսում 2010-2018 թթ. բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործարքների քանակը եղել է 5, միայն 2016 թ. այն եղել է 3: Ղազախստանում 2010-2018 թթ. բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործարքների ամենաշատ քանակը եղել է 2012 թ.՝ 11, իսկ քիչ գործարքների քանակ եղել է 2016 թ.՝ 4, 2018 թ. այն եղել է 5: Ղրղզստանում 2010-2015 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-

⁵⁹ <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB10-FullReport.pdf>


ով, իսկ 2015-2018 թթ. աճել է 2-ով, և 2018 թ. այն եղել է 4: Իրանում 2010-2018 թթ. բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործարքների քանակը աճել է 1.5 միավորով, և 2018 թ. այն եղել է 8.5: Վրաստանում 2010-2016 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-ով, իսկ 2016-2017 թթ.՝ աճել 1-ով, այնուհետև 2018 թ. այն նվազել է և դարձել 2: Ադրբեջանում 2010-2017 թթ. բիզնես սկսելու համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 4-ով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն աճել է 2-ով և դարձել 4: Թուրքիայում 2010-2016 թթ. այս ցուցանիշը աճել է 2-ով, իսկ 2016-2018 թթ.՝ նվազել 1-ով և դարձել 7: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում բարենպաստ է, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Վրաստանին:



Գծապատկեր 1.4.50. Շինարարության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործարքների քանակը

ՀՀ-ում շինարարության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործարքների քանակը 2010-2013 թթ. նվազել է 3-ով, 2014 թ., համեմատած 2013-ի հետ, այն աճել է 4-ով, այնուհետև 2014-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 2-ով և դարձել 19: ՌԴ-ում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 39.6-ով և 2018 թ. դարձել 14.4: Բելառուսում 2011-2014 թթ. շինարարության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 4-ով, իսկ 2014-2018 թթ. աճել է 4-ով և դարձել 16: Ղազախստանում այս ցուցանիշը 2010-2018 թթ. նվազել է 18-ով և 2018 թ. դար-


ձեռնարկում 2010-2013 թթ. շինարարության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործարքների քանակը աճել է 11-ով, իսկ 2013-2018 թթ. նվազել է 12-ով և 2018 թ. դարձել 11: Իրանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 2-ով և 2018 թ. դարձել 15: Վրաստանում 2010-2017 թթ. շինարարության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 3-ով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, այն աճել է 4-ով և դարձել 11: Ադրբեջանում 2010-2017 թթ. այս ցուցանիշը նվազել է 13-ով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ այն աճել է 3-ով և դարձել 21: Թուրքիայում 2010-2018 թթ. շինարարության թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 7-ով և 2018 թ. դարձել 18: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում բարենպաստ է ՌԴ-ի և Ղազախստանի համեմատ, իսկ հարևան երկրների շարքում բարենպաստ է Թուրքիայի և Ադրբեջանի համեմատ:



Գծապատկեր 1.4.51. Էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը


ՀՀ-ում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 2010-2018 թթ. նվազել է 5-ով, նշված ժամանակահատվածում կրճատվել է նաև օրերի քանակը 115 օրով: Այսպիսով, ՀՀ-ում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 2018 թ. 3 է, իսկ օրերի քանակը՝ 127: ՌԴ-ում 2010-2013 թթ. այս ցուցանիշը աճել է 2-ով, իսկ 2013-

2018 թթ. նվազել է 7-ով, նշված ժամանակահատվածում նվազել է նաև օրերի քանակը 189-ով: Այսպիսով, ՌԴ-ում 2018 թ. էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 3 է, իսկ օրերի քանակը՝ 83: Բելառուսում 2010-2016 թթ. այս ցուցանիշը աճել է 1-ով, իսկ 2016-2018 թթ. նվազել է 3-ով, նշված ժամանակահատվածում կրճատվել է նաև օրերի քանակը 149-ով: Այսպիսով, Բելառուսում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 2018 թ. 4 է, իսկ օրերի քանակը՝ 105: Ղազախստանում այս ցուցանիշը 2010-2018 թթ. աճել է 2-ով, իսկ օրերի քանակը նվազել է 26-ով: Այսպիսով, Ղազախստանում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 2018 թ. եղել է 7, իսկ օրերի քանակը՝ 77: Ղրղզստանում 2011-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-ով, իսկ օրերի քանակը՝ 200-ով: Այսպիսով, Ղրղզստանում 2018 թ. էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը եղել է 7, իսկ օրերի քանակը՝ 127: Իրանում 2011-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-ով, իսկ օրերի քանակը՝ 66-ով: Այսպիսով, 2018 թ. Իրանում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 6 է, իսկ օրերի քանակը՝ 77: Վրաստանում 2011-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 2-ով, իսկ օրերի քանակը՝ 26-ով: Այսպիսով, Վրաստանում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 2018 թ. եղել է 6, իսկ օրերի քանակը՝ 71: Ադրբեջանում 2011-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 2-ով, իսկ օրերի քանակը՝ 156-ով: Այսպիսով, Ադրբեջանում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 2018 թ. 7 է, իսկ օրերի քանակը՝ 69: Թուրքիայում այս ցուցանիշը 2011-2018 թթ. նվազել է 1-ով, իսկ օրերի քանակը՝ 15-ով: Այսպիսով, Թուրքիայում էլեկտրաէներգիայի միացումների համար անհրաժեշտ գործարքների քանակը 2018 թ. 4 է, իսկ օրերի քանակը՝ 55: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում զիջում է ՌԴ-ին, իսկ հարևան երկրների շարքում բարենպաստ է Ադրբեջանի և Իրանի հետ համեմատ:




Գծապատկեր 1.4.52. Սեփականության գրանցման համար անհրաժեշտ գործարքների քանակը

ՀՀ-ում սեփականության գրանցման համար անհրաժեշտ գործարքների քանակը 2010-2018 թթ. եղել է 3: ՌԴ-ում այս ցուցանիշը 2010-2017 թթ. նվազել է 3-ով, իսկ 2018 թ., ի տարբերություն 2017-ի, աճել է 1-ով և դարձել 4: Բելառուսում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-ով և 2018 թ. դարձել 2: Ղազախստանում 2010-2018 թթ. սեփականության գրանցման համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 2-ով և 2018 թ. դարձել 3: Ղրղզստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-ով և 2018 թ. դարձել 3: Իրանում 2010-2018 թթ. սեփականության գրանցման համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 2-ով և 2018 թ. դարձել 7: Վրաստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-ով և 2018 թ. դարձել 1: Ադրբեջանում 2010-2018 թթ. սեփականության գրանցման համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 1-ով և 2018 թ. դարձել 3: Թուրքիայում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 1-ով և 2018 թ. դարձել 7: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵՄՏՄ երկրների շարքում զիջում է Բելառուսին, իսկ հարևան երկրների շարքում զիջում է Վրաստանին:



Պատկեր 1.4.53. Վարկ ստանալու դիրքը


ՀՀ-ում վարկ ստանալու դիրքը 2010-2012 թթ. աճել է 107-ով, իսկ 2012-2018 թթ. նվազել 108-ով, և 2018 թ. ՀՀ-ն զբաղեցրել է 42-րդ տեղը: ՌԴ-ում 2010-2014 թթ. այս ցուցանիշն աճել է 22-ով, իսկ 2014-2018 թթ. նվազել է 80-ով և 2018 թ. զբաղեցրել 80-րդ տեղը: Բեյլառուսում 2010-2018 թթ. վարկ ստանալու դիրքը նվազել է 23-ով և 2018 թ. զբաղեցրել 90-րդ տեղը: Ղազախստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշն աճել է 34-ով և 2018 թ. զբաղեցրել 77-րդ տեղը: Ղրղզստանում 2010-2018 թթ. վարկ ստանալու դիրքն աճել է 14-ով և 2018 թ. զբաղեցրել 29-րդ տեղը: Իրանում այս ցուցանիշը 2010-2018 թթ. նվազել է 23-ով և 2018 թ. զբաղեցրել 90-րդ տեղը: Վրաստանում 2010-2018 թթ. վարկ ստանալու դիրքը նվազել է 18-ով և 2018 թ. զբաղեցրել 12-րդ տեղը: Աղրբեջանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 107-ով և 2018 թ. զբաղեցրել 122-րդ տեղը: Թուրքիայում 2010-2015 թթ. վարկ ստանալու ցուցանիշը աճել է 18-ով, իսկ 2015-2018 թթ. նվազել է 12-ով և 2018 թ. զբաղեցրել է 77-րդ դիրքը: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ավելի բարենպաստ է Ղրղզստանի համեմատ, իսկ հարևան երկրների շարքում նվազ բարենպաստ է Վրաստանի համեմատ և ավելի բարենպաստ է մնացածների համեմատ:



Գծապատկեր 1.4.54. Փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության դիրքը

ՀՀ-ում 2010-2012 թթ. փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության դիրքն աճել է 4-ով, իսկ 2012-2018 նվազել է 35-ով, և 2018 թ. այն ՀՀ-ն զբաղեցրել է 62-րդ դիրքը: ՌԴ-ում 2010-2013 թթ. այս ցուցանիշն աճել է 24-ով, իսկ 2013-2018 թթ. նվազել է 66-ով և 2018 թ. զբաղեցրել 51-րդ դիրքը: Բեկառուսում 2010-2018 թթ. փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության դիրքը նվազել է 69-ով և 2018 թ. զբաղեցրել 40-րդ տեղը: Ղազախստանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 56-ով և 2018 թ. զբաղեցրել առաջին դիրքը: Արդգստանում 2010-2018 թթ. փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության դիրքն աճել է 39-ով և 2018 թ. զբաղեցրել 51-րդ տեղը: Իրանում 2010-2014 թթ. այս ցուցանիշը նվազել է 18-ով, իսկ 2014-2018 թթ. աճել է 23-ով և 2018 թ. զբաղեցրել 170-րդ դիրքը: Վրաստանում 2010-2018 թթ. փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության դիրքը նվազել է 39-ով և 2018 թ. զբաղեցրել 2-րդ տեղը: Ադրբեջանում 2010-2015 թթ. այս ցուցանիշն աճել է 31-ով, իսկ 2015-2018 թթ. նվազել է 41-ով և 2018 թ. զբաղեցրել 10-րդ դիրքը: Թուրքիայում 2010-2013 թթ. փոքր բաժնետերերի շահերի պաշտպանության դիրքն աճել է 13-ով, իսկ 2013-2018 թթ. նվազել է 50-ով և 2018 թ. զբաղեցրել 20-րդ տեղը: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում նվազ բարենպաստ է Ղազախստանի համեմատ և ավելի բարենպաստ է, քան մնացած երկրներին, իսկ հարևան երկրների շարքում ավելի բարեն-

նպաստ է Իրանի համեմատ և պակաս բարենպաստ՝ մնացած երկրների համեմատ:




Պճապատկեր 1.4.55. Վճարվող հարկերի դիրքը

ՀՀ-ում վճարվող հարկերի դիրքը 2010-2018 թթ. նվազել է 66-ով, նվազել է նաև վճարվող հարկերի քանակը և ժամանակը, համապատասխանաբար 36 և 645 ժամ՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, ՀՀ-ում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 87-րդ տեղը, քանակը՝ 14, իսկ ժամը՝ 313: ՌԴ-ում այս ցուցանիշը 2010-2018 թթ. նվազել է 51-ով, նվազել են նաև հարկերի քանակը և ժամանակը, համապատասխանաբար 4 և 152 ժամ՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, ՌԴ-ում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 52-րդ տեղը, քանակը՝ 7, իսկ ժամը՝ 168: Բելառուսում վճարվող հարկերի դիրքը 2010-2018 թթ. նվազել է 87-ով, նվազել են նաև վճարվող հարկերի քանակը և ժամանակը, համապատասխանաբար 100 և 716 ժամ՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, Բելառուսում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 96-րդ տեղը, քանակը՝ 7, իսկ ժամը՝ 184: Ղազախստանում վճարվող հարկերի դիրքը 2010-2016 թթ. նվազել է 35-ով, իսկ 2016-2018 թթ.՝ 32-ով, նվազել են նաև վճարվող հարկերի քանակը և ժամանակը, համապատասխանաբար 2 և 93 ժամ՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, Ղազախստանում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 50-րդ տեղը, քանակը՝ 7, իսկ ժամը՝ 178: Ղրղզստանում 2013-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է

17-ով, նվազել է նաև վճարվող հարկերի քանակը 24, իսկ ժամանակը աճել է 23 ժամով: Այսպիսով, Ղրղզստանում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 151-րդ տեղը, քանակը՝ 51, իսկ ժամը՝ 225: Իրանում վճարվող հարկերի դիրքը 2010-2018 թթ. աճել է 33-ով, իսկ քանակը նվազել է 2-ով, սակայն ժամանակային առումով այն մնացել է անփոփոխ՝ 344 ժամ տարեկան կտրվածքով: Այսպիսով, Իրանում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 150-րդ տեղը, քանակը՝ 20, իսկ ժամը՝ 344: Վրաստանում այս ցուցանիշը 2010-2018 թթ. նվազել է 42-ով, նվազել են նաև վճարվող հարկերի քանակը և ժամանակը, համապատասխանաբար 13 և 118 ժամ՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, Վրաստանում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 22-րդ տեղը, քանակը՝ 5, իսկ ժամը՝ 269: Ադրբեջանում 2010-2018 թթ. վճարվող հարկերի դիրքը նվազել է 73-ով, նվազել են նաև վճարվող հարկերի քանակը և ժամանակը, համապատասխանաբար 16 և 181 ժամ՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, Ադրբեջանում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 35-րդ տեղը, քանակը՝ 6, իսկ ժամը՝ 195: Թուրքիայում այս ցուցանիշը 2010-2017 թթ. աճել է 53-ով, իսկ 2018 թ., համեմատած 2017-ի հետ, նվազել է 40-ով, նվազել են նաև վճարվող հարկերի քանակը և ժամանակը, համապատասխանաբար 4 և 8 ժամ՝ տարեկան կտրվածքով: Այսպիսով, Թուրքիայում վճարվող հարկերի դիրքը 2018 թ. զբաղեցրել է 88-րդ տեղը, քանակը՝ 11, իսկ ժամը՝ 215: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից ԵԱՏՄ երկրների շարքում ավելի բարենպաստ է Բելառուսի ու Ղրղզստանի համեմատ, իսկ հարևան երկրների շարքում ավել բարենպաստ է Իրանի համեմատ:

ՀՀ-ում արտաքին առևտրի դիրքը 2011-2014 թթ. աճել է 35-ով, իսկ 2014-2018 թթ. նվազել է 65-ով և 2018թ. զբաղեցրել 52-րդ տեղը: ՌԴ-ում այս ցուցանիշը 2010-2016 թթ. աճել է 8-ով, իսկ 2016-2018 թթ. նվազել է 70-ով և 2018 թ. զբաղեցրել 100-րդ դիրքը: Բելառուսում 2010-2012 թթ. արտաքին առևտուրը աճել է 23-ով, իսկ 2012-2018 թթ. նվազել է 122-ով, և 2018 թ. Բելառուսն զբաղեցրել է 30-րդ դիրքը:




Գծապատկեր 1.4.56. Արտաքին առևտրի դիրքը

Ղազախստանում 2010-2012 թթ. այս ցուցանիշը նվազել է 6-ով, իսկ 2012-2014 թթ. աճել է 10-ով, այնուհետև 2014-2018 թթ. նվազել է 63-ով և 2018 թ. զբաղեցրել է 123-րդ դիրքը: Արդգստանում արտաքին առևտրի դիրքը 2010-2015 թթ. աճել է 29-ով, իսկ 2015-2018 թթ. նվազել է 99-ով և 2018 թ. զբաղեցրել է 84-րդ տեղը: Իրանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 35-ով և 2018 թ. զբաղեցրել է 166-րդ դիրքը: Վրաստանում 2010-2016 թթ. արտաքին առևտրի դիրքն աճել է 48-ով, իսկ 2016-2018 թթ. նվազել է 16-ով և 2018 թ. զբաղեցրել է 62-րդ տեղը: Աղրբեջանում 2011-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 94-ով և 2018 թ. զբաղեցրել է 83-րդ դիրքը: Թուրքիայում 2010-2015 թթ. արտաքին առևտրի դիրքն աճել է 23-ով, իսկ 2015-2019 թթ. նվազել է 19-ով և 2018 թ. զբաղեցրել է 71-րդ տեղը: ՀՀ դիրքը սովյալ ցուցանիշի տեսանկյունից թե՛ ԵԱՏՄ երկրների շարքում և թե՛ հարևան երկրների շարքում առավել բարենպաստ է բոլոր երկրներից:

ՀՀ-ում պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործարքների քանակը 2010-2015 թթ. ավելացել է 1-ով, ավելացել է նաև օրերի քանակը 2010-2018 թթ. 285-ով, և 2015 թ. գործարքների քանակը դարձել է 49, իսկ օրերի քանակը 2018 թ.՝ 570 օր: ՌԴ-ում այս ցուցանիշը 2010-2015 թթ. նվազել է 2-ով, հակառակ դրա՝ ավելացել է օրերի քանակը 2010-2018 թթ. 56-ով, և 2015 թ. գործարքների քանակը դարձել է 35, իսկ օրերի քանակը 2018 թ.՝ 337:


Բելառուսում պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործարքների քանակը 2010-2015 թթ. աճել է 1-ով, աճել է նաև օրերի քանակը 2010-2018 թթ. 50-ով, և 2015 թ. գործարքների քանակը դարձել է 29, իսկ օրերի քանակը 2018 թ.՝ 275:



Գծապատկեր 1.4.57. Պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործարքների քանակը

Ղազախստանում 2010-2015 թթ. այս ցուցանիշը նվազել է 2-ով, նվազել է նաև օրերի քանակը 2010-2018 թթ. 20-ով, և 2015 թ. գործարքների քանակը եղել է 36, իսկ օրերի քանակը 2018 թ.՝ 370: Ղրղզստանում 2010-2015 թթ. պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործարքների քանակը նվազել է 1-ով, իսկ օրերի քանակը 2010-2018 թթ. ավելացել է 150-ով: Այսպիսով, 2015 թ. գործարքների քանակը եղել է 38, իսկ օրերի քանակը՝ 410: Իրանում այս ցուցանիշը 2010-2015 թթ. աճել է 1-ով, իսկ օրերի քանակը 2010-2018 թթ. նվազել է 176-ով: Այսպիսով, Իրանում 2015 թ. գործարքների քանակը եղել է 40, իսկ 2018 թ. օրերի քանակը՝ 344: Վրաստանում պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործարքների քանակը 2010-2015 թթ. նվազել է 3-ով, իսկ օրերի քանակը 2010-2018 թթ. աճել է 27-ով: Այսպիսով, Վրաստանում գործարքների քանակը 2015 թ. եղել է 33, իսկ օրերի քանակը 2018 թ. եղել է 285: Ադրբեջանում 2010-2015 թթ. պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործարքների քանակը աճել է 1-ով, իսկ օրերի քանակը 2010-2018 թթ. աճել է 40-ով: Այսպիսով, Ադրբե-

ջանում գործարքների քանակը 2015 թ. եղել է 40, իսկ օրերի քանակը 2018 թ. եղել է 277: Թուրքիայում 2010-2015 թթ. այս ցուցանիշը նվազել է 1-ով, իսկ օրերի քանակը 2010-2018 թթ. աճել է 160-ով: Այսպիսով, Թուրքիայում գործարքների քանակը 2015 թ. եղել է 35, իսկ օրերի քանակը 2018 թ.՝ 580: ՀՀ դիրքը տվյալ ցուցանիշի տեսանկյունից թե՛ ԵԱՏՄ երկրների շարքում և թե՛ հարևան երկրների շարքում մնացած երկրների համեմատ պակաս բարենպաստ է:



Պատկեր 1.4.58. Վեճերի լուծման դիրքը

ՀՀ-ում վեճերի լուծման դիրքը 2010-2018 թթ. աճել է 48-ով և 2018 թ. զբաղեցրել է 97-րդ տեղը, իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 1.9 տարի: ՌԴ-ում այս ցուցանիշը 2011-2018 թթ. նվազել է 49-ով և 2018 թ. զբաղեցրել է 54-րդ դիրքը, իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 2 տարի: Բելառուսում 2011-2018 թթ. վեճերի լուծման դիրքը նվազել է 25-ով և 2018 թ. զբաղեցրել է 68-րդ տեղը, իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 1.5 տարի: Ղազախստանում այս ցուցանիշը նվազել է 14-ով և 2018 թ. զբաղեցրել է 39-րդ դիրքը իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 1.5 տարի: Արդգաստանում 2010-2018 թթ. վեճերի լուծման դիրքը նվազել է 21-ով և 2018 թ. զբաղեցրել է 119-րդ տեղը, իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 1.5 տարի: Իրանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը աճել է 51-ով և 2018 թ. զբաղեցրել է 160-րդ դիրքը, իսկ ժամանակային առումով 2018 թ.

այն տևում է 4.5 տարի: 2010-2015 թթ. Վրաստանում վեճերի լուծման դիրքը աճել է 27-ով, իսկ 2015-2018 թթ. նվազել է 65-ով և 2018 թ. զբաղեցրել 57-րդ տեղը, իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 2 տարի: Ադրբեջանում 2010-2018 թթ. այս ցուցանիշը նվազել է 37-ով և 2018 թ. զբաղեցրել 47-րդ դիրքը, իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 1.5 տարի: Թուրքիայում 2010-2018 թթ. վեճերի լուծման դիրքը աճել է 18-ով և 2018 թ. զբաղեցրել 139-րդ տեղը, իսկ ժամանակային առումով 2018 թ. այն տևում է 5 տարի: ԵՄՏՄ երկրների շարքում վեճերի լուծման բարձր դիրք ունի Ղրղզստանը, այնուհետև ՀՀ-ն, իսկ հարևան երկրների շարքում՝ Իրանը և Թուրքիան:

Այսպիսով, ամփոփելով վերը ներկայացված վերլուծությունը, հանգում ենք այն եզրակացությանը, որ կան ցուցանիշներ, որոնցում ՀՀ դիրքը նշված ժամանակահատվածում, համեմատած ԵՄՏՄ և հարևան երկրների հետ, ունի բարենպաստ դիրք, սակայն քիչ չեն նաև այն ցուցանիշները, որոնցով ՀՀ-ի դիրքը մնացած երկրների համեմատ անբարենպաստ է:

ԳԼՈՒԽ 2. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

2.1. ՕՈՒՆ ազդեցությունը տնտեսական զարգացման վրա աշխարհում

Օտարերկրյա ներդրումների ազդեցությունը երկրների տնտեսության վրա գնահատվել է բավական ուշ ժամանակաշրջանում, քանի որ նախկինում տնտեսագիտության տեսությունները արտարահվում էին երկրների միջև ռեսուրսների շարժի գաղափարից և վերլուծություններն իրականացնում էին միայն երկրի ներսում ռեսուրսների շարժի հիպոթեզի հիման վրա: Առաջին անգամ երկրների միջև ռեսուրսների շարժի հնարավորությունը տեսականորեն դիտարկվեց 1930-ականներին: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմից հետո երկրները դեռևս գտնվում էին ֆինանսական ծանր կացության մեջ, ուստի այլ երկրներում ներդրումներ կատարելու մասին խոսք անգամ լինել չէր կարող: ՕՈՒՆ-ը մեկնաբանող առաջին տեսությունները ծագել են 1950-60-ականներին եվրոպական և Լատինական Ամերիկայի շուկաներում Ամերիկյան դուստր ընկերությունների ակտիվության մեծացման արդյունքում: Այդ պահից սկսած՝ ուղղակի ներդրումների ծավալները զգալիորեն մեծացան և շարունակում են մեծանալ:

Ռ.Վերնոնն ուսումնասիրել է առևտրի ծավալների աճի և օտարերկրյա ներդրումների միջև առկա փոխկապվածությունը Եվրոպայում հետպատերազմյան վերակառուցման ժամանակաշրջանում: Ըստ այս տեսության՝ ապրանքի կյանքի բնական տևողության և ծախսերի համապատասխան փոփոխությունների փաստից ելնելով՝ ներդրողները ընտրություն են կայացնում ապրանքի արտադրության հետևյալ ռազմավարությունների միջև. ապրանքը արտադրել ներքին շուկայում և արտահանել այն կամ դրա ար-

տադրությունը տեղափոխել արտասահմանյան շուկա⁶⁰:

Ճապոնացի տնտեսագետ Ակամացուն «Թռչող սագերի» տեսությամբ ներկայացրել է տնտեսական զարգացման, ներդրումների և արտահանման կապը⁶¹: Համաձայն նրա տեսության՝ տնտեսության յուրաքանչյուր ոլորտի զարգացման սկզբնական փուլում տվյալ ոլորտի արտադրանքը ներհոսում է շուկա արտերկրից՝ ներմուծման միջոցով, հետագայում, ներքին պահանջարկի աճին զուգընթաց, տվյալ ոլորտում հայտնվում են տեղական արտադրողներ, իսկ ահա զարգացման հաջորդ փուլում արդեն տեղական պահանջարկը բավարարելուց զատ տեղի է ունենում նաև արտաքին պահանջարկի բավարարում արտահանման միջոցով, և նույն գործընթացը տեղափոխվում է արդեն տվյալ երկիր:

Ամակացուն կառուցել է իր պարադիգման Ճապոնիայի տեքստիլ արդյունաբերության ոլորտում կատարած մոտ 50 տարվա ուսումնասիրությունների հիման վրա: Նա պնդում էր, որ գոյություն ունեն օրինաչափություններ ներմուծման աճի, ազգային արտադրության և արտահանման մեջ: Գրաֆիկորեն դրանց փոխկապվածությունը հիշեցնում է սագերի թռիչք:

Հետագայում այս տեսությունը լրամշակվեց Օզավայի և Կոջիմայի կողմից⁶²: Օզավան այս տեսության իրավացիությունն ապացուցեց ճապոնական այն կազմակերպությունների օրինակի հիման վրա, որոնք իրենց կապիտալն արտահանել էին հարևան Չինաստան և Արևելյան Ասիայի այլ երկրներ: Կոջիմայի կողմից որոշակիորեն լրացվեց «Թռչող սագերի» պարադիգման՝ տարանջատելով ՕՈՒՆ-ը որպես «առևտրամետ» և «առևտրախույս» տեսակների: Ըստ այդմ՝ առևտրամետ են համարվում այն ՕՈՒՆ-

⁶⁰ R. Vernon, «International Investment and International Trade in the Product Cycle», *Quarterly Journal of Economics*, 1966, No. 2, pp. 190-207.

⁶¹ Akamatsu K., *The Flying Geese Pattern of Industrial Development in Newly Industrializing Countries*, *Essays in Honor of Dr. Ueda Teijir*, vol. 4, *Research on Population and the East Asian Economy*, 1943, pp. 565-577.

⁶² Kojima, K. and T. Ozawa, «A macroeconomic approach to foreign direct investment», *Hitotsubashi Journal of Economics*, 1973, vol. 14, No. 1.

ները, որոնք իրականացվում են համեմատական կամ մրցակցային առավելություն ունեցող ոլորտներում և նպաստում են արտահանման աճին, իսկ առևտրախույս ՕՈՒՆ-ները իրականացվում են համեմատական կամ մրցակցային առավելություն չունեցող ոլորտներում և միտված են ներմուծման փոխարինմանը:

Մեկ այլ հետաքրքիր օրինաչափություն է ներկայացվում Նիկերբոկերի և Գրեմի տեսական մոդելներում⁶³: 1948-1967 թթ. ամերիկյան 187 կորպորացիաների գործունեության էմպիրիկ հետազոտության արդյունքում նրանք ցույց տվեցին, որ օլիգոպոլ ոլորտներում գործող կազմակերպությունները հետևում են շուկայի առաջատարի վարքագծին. եթե շուկայի առաջատարը արտադրանքը որևէ երկիր արտահանելու փոխարեն կատարում է օտարերկրյա ներդրում, ապա նույնն անում են նաև շուկայի մյուս մասնակիցները մոտակա 3 տարիների ընթացքում՝ 45 % դեպքում, կամ մոտակա 7 տարիների ընթացքում՝ 75 % դեպքում:

Հետագայում արդեն ՕՈՒՆ և արտաքին առևտրի փոխկապվածությունն առավել հանգամանալից ուսումնասիրվեց այլ տնտեսագետների կողմից: Այս փոխկապվածությունը գիտականորեն առաջին անգամ մեկնաբանվեց 1970-ականներին Կորդենի կողմից, որը փորձեց Հեքշեր-Օհլին-Սամուելսոն թեորեմին տալ նոր ձևակերպում՝ ներմուծելով դրանում նոր գործոնի՝ ինտելեկտուալ կապիտալի և ռեսուրսների կատարյալ շարժունության գաղափարները: Ըստ Կորդենի՝ ՕՈՒՆ-ը և արտահանումը հանդիսանում են միմյանց փոխարինող երևույթներ, և ձեռնարկությունը, որն արտադրում է տարբերակված արտադրանք, մշտապես ընտրություն է կատարում արտահանման կամ ՕՈՒՆ ռազմավարությունների միջև⁶⁴:

Արտաքին առևտրի և ՕՈՒՆ փոխկապվածությունը բացատրելու համար մեկ այլ հետաքրքիր տեսակետ է առաջադրել Հիրշը⁶⁵: Ըստ

⁶³ Knickerbocker F.T., *Oligopolistic Reaction and Multinational Enterprise*, Boston, 1973.

⁶⁴ Corden W. Max, *The theory of International Trade*, In: Dunning/H. (ed.) *Economic Analysis and the Multinational Enterprise*, London, 1974, pp. 209-232.

⁶⁵ Hirsch S., *An International Trade and Investment Theory of the Firm*. Oxford Economic Papers. Vol. 28, 1976, pp. 258-270.

նրա՝ անհրաժեշտ է համեմատել ապրանքի արտադրության և որևէ a երկիր արտահանման ծախսը տվյալ a երկրում ձեռնարկության մասնաճյուղի բացելու ծախսի հետ, որի հիման վրա էլ ձեռնարկությունը կընտրի արտահանման կամ ՕՈՒՆ համապատասխան ռազմավարությունը: Այլիքերը պնդում է, որ օտարերկրյա ներդրողների համար շատ կարևոր է այն երկրի վարած արժույթային քաղաքականությունը, որտեղ նրանք պատրաստվում են ներդրում իրականացնել⁶⁶: Տվյալ պարագայում ՕՈՒՆ կատարելու որոշումը կայացվում է հոգուտ թույլ և արժեզրկման միտում ունեցող երկրների, քանզի այս երկրներում օտարերկրյա ներդրողը իր ազգային արժույթով ավելի փոքր գումար պետք է ներդնի, բացի այդ արժեզրկվող ազգային արժույթը նպաստում է նաև արտահանման էժանացմանը, ուստի տվյալ երկրից օտարերկրյա ներդրողը ավելի դյուրին կկազմակերպի իր արտահանման գործընթացը:

1970-ականների վերջում Բակլին և Կաստնը իրենց կողմից ներկայացված միջազգայնացման տեսության շրջանակներում քննադատում են Հիրշի տեսությունն այն հիմքով, որ նա ողջ ուշադրությունը կենտրոնացնում է արտադրական գործընթացի վրա՝ նշելով միայն առկա ծախսերի տարբերության արդյունքում հոգուտ արտահանման կամ ՕՈՒՆ-ի վերաբերյալ որոշումների կայացումը: Սակայն Հիրշը, ըստ նրանց, հաշվի չի առնում այն հանգամանքը, որ վերազգային կորպորացիաները նախ և առաջ օգուտ են ստանում մասշտաբի դրական էֆեկտից, և արտադրության միջազգայնացման արդյունքում արտադրության ծախսերն իրականում նվազում են, ուստի ՎԱԿ-երի համար ՕՈՒՆ ռազմավարությունը միանշանակ առաջնային տեղ ունի⁶⁷:

ՕՈՒՆ-ի ազդեցությունը ազգային տնտեսության վրա բացահայտելու համար էմպիրիկ վերլուծություն են իրականացրել

⁶⁶ Aliber R.Z., A Theory of Direct Investment, In. Kindelberger C.P. (ed.), The International Corporation. Cambridge, Mass 1970, pp. 17-34.

⁶⁷ Buckley P. J. and Casson M.. The Future of the Multinational Enterprise. New York: Holmes and Meier, 1976.

Գիատակը և Հալիչիօղլուն⁶⁸ և եկել են այն եզրակացության, որ ՕՈԻՆ-ը դրական կապի մեջ է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի հետ: Ասաֆու-Աջայը⁶⁹ եկել է այն եզրակացության, որ ՕՈԻՆ-ը և մարդկային կապիտալի պաշարները դրական են ազդում տնտեսական աճի վրա:

Ներկայումս ՕՈԻՆ-ները զարգանում են ավելի արագ, քան ներքին ներդրումները և արտաքին առևտուրը: Նրանք դարձել են համաշխարհային առևտրի գլոբալիզացիայի հիմնական գործոնը: ՕՈԻՆ-ները օգնում են տնտեսությանն ապահովել կայուն տնտեսական աճ և արդյունավետորեն ինտեգրվել համաշխարհային տնտեսության մեջ⁷⁰: Դրանց հիմնական առավելությունը այն է, որ դրանք ապահովում են նոր աշխատատեղերի ստեղծում, տեխնոլոգիաների ներմուծման հնարավորություն, ինչը գլոբալ մակարդակով կարող է բերել երկրի մրցունակության բարձրացմանը:

Ժամանակակից գլոբալ տնտեսությունում անհնար է պատկերացնել տեխնոլոգիաների զարգացումը առանց կապիտալի հոսքի: ՕՈԻՆ-ները, ինչպես արդեն նշել ենք, իրենցից ներկայացնում են ոչ միայն ֆինանսական միջոցների հոսքեր, այլ նաև գիտելիքների, կառավարչական հմտությունների հոսք զարգացած երկրներից զարգացող երկրներ⁷¹:

Զարգացող երկրների կարևոր խնդիրներից մեկը բավարար խնայողություններ, հետևաբար նաև՝ ներդրումներ չունենալն է: Սա ստիպում է երկրներին ներգրավել օտարերկրյա ներդրումներ և հետամուտ լինել տնտեսական զարգացմանը: Խնդրի կա-

⁶⁸ Ghatak A., Halicioglu F., Foreign direct investment and economic growth: some evidence from across the world, 2007, p. 15.

⁶⁹ Asafu-Adjaye J., The effect of foreign direct investment on Indonesian economic growth, 2000, p. 62.

⁷⁰ Муха Д., Влияние экономических и институциональных факторов на привлечение прямых иностранных инвестиций, Беларусь, 2014, стр. 40.

⁷¹ Саргсян Л., Влияние ПИИ на внешнюю торговлю Армении, XXXII Международная научно-прак. конф. «Современная экономика: Актуальные вопросы, достижения и инновации», 25 ноября 2019 г., стр. 92-95.

ընտրությունը դիտարկելու նպատակով բազմաթիվ հեղինակներ ուսումնասիրել են առանձին երկրներում ՕՈՒՆ-ների ազդեցությունը տնտեսական աճի վրա: Հեղինակներից շատերը էկոնոմետրիկ վերլուծության արդյունքում բացահայտել են դրական կապ, ինչը բացատրում են տարբեր հանգամանքներով: Մասնավորապես Արևելյան Աֆրիկայի երկրները ՕՈՒՆ ներգրավման համար ստիպված են եղել բարելավել ներդրումային միջավայրը, ընդլայնել տարածաշրջանային ինտեգրումը, զարգացնել մարդկային կապիտալը և հիմնական ենթակառուցվածքները, ինչպես նաև որդեգրել արտահանմանը խթանող քաղաքականություն⁷²: Այս ամենը նպաստել է տնտեսական աճի տեմպերի ավելացմանը:

Մեկ այլ հեղինակ ուսումնասիրության առարկա է դարձրել 1980-2014 թթ. Կամբոջայի տվյալները⁷³՝ դիտարկելով ՕՈՒՆ և ՀՆԱ փոխկապվածությունը: Արդյունքում ստացվել է, որ ՀՆԱ-ն կախված է ՕՈՒՆ փոփոխությունից, իսկ ՕՈՒՆ-ը ՀՆԱ փոփոխությունից՝ ոչ: Հեղինակը սա բացատրում է ենթակառուցվածքների և մարդկային կապիտալի զարգացման ոչ բավարար մակարդակով:

Հեղինակների մեկ այլ խմբի կողմից գնահատվել է ՕՈՒՆ ազդեցության չափը ՀՆԱ-ի վրա: Հարավային Կորեայի 1980-2009 թթ. տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է ՀՆԱ-ի աճին 61,9 միավորով⁷⁴:

Իռլանդիայի 1975-2006 թթ. տվյալները վկայում են, որ թե՛ եր-

⁷² Seiko Minota Zekariaz, «The impact of FDI on Economic Growth in Eastern Africa», Applied Economics and Finance. Vol. 3, No. 1; February 2016 ISSN 2332-7294 E-ISSN 2332-7308 Published by Redfame Publishing URL: <http://aef.redfame.com>, pp. 145-160.

⁷³ Seng Sothan, Causality between foreign direct investment and economic growth for Cambodia», Sothan, Cogent Economics & Finance (2017), 5: 1277860, Econometrics | research article, pp. 1-13.

⁷⁴ Dr. Sauwaluck Koojaroenprasit, «The Impact of Foreign Direct Investment on Economic Growth: A Case Study of South Korea », International Journal of Business and Social Science. Vol. 3, No. 21; November 2012, pp. 8-19.

կարածամկետ, թե՛ կարճաժամկետ հատվածում կա դրական կապ ՕՈՒՆ-ի և տնտեսական աճի միջև: Ընդ որում՝ 1 % ՕՈՒՆ-ի աճը նպաստում է 0.3281 % տնտեսական աճի⁷⁵:

Լիմամ Օուլդը, վերցնելով 1976-1995 թթ. Մավրիտանիայի տվյալները, ուսումնասիրել է ՕՈՒՆ-ի ազդեցությունը տնտեսական աճի վրա⁷⁶: Արդյունքները բավական ուշագրավ են. պարզվում է, որ 1 % ՕՈՒՆ աճը հանգեցնում է 1 % ՀՆԱ աճի:

Առավել լայնածավալ հետազոտություն է իրականացվել հեղինակների մեկ այլ խմբի կողմից՝ հիմք ընդունելով Հյուսիսային Աֆրիկայի, Աֆրիկայի, Ասիայի, Մերձավոր Արևելքի, Հյուսիսային Ամերիկայի և Լատինական Ամերիկայի 65 երկրների 1980-2010 թթ. պանելային տվյալները⁷⁷: Արդյունքում ստացվել է, որ 1 % ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է Հյուսիսային Աֆրիկայի 0.32 % տնտեսական աճի, 0.26 %՝ Աֆրիկայի, 0.24 %՝ Ասիայի, 0.17 %՝ Մերձավոր Արևելքի, 0.35 %՝ Հյուսիսային Ամերիկայի, 0.29 %՝ Լատինական Ամերիկայի տնտեսական աճի:

Հետազոտությունները վկայում են, որ ՕՈՒՆ-ը բավականին փոքր ազդեցություն ունի Մալայզիայի ՀՆԱ-ի վրա: Համաձայն 1970-2010 թթ. տվյալների վերլուծության՝ այդ ազդեցության չափը կազմում է ընդամենը 0.058 %⁷⁸: Ռումինիայի 2000-2009 թթ. տվյալների վերլուծության արդյունքում այդ ազդեցության չափը

⁷⁵ Kyuntae Kim and Hokyung Bang, «The Impact of Foreign Direct Investment on Economic Growth: A Case Study of Ireland», KIEP Working Paper 08-04 Published July 25, 2008 in Korea by KIEP, pp. 1-56.

⁷⁶ Limam Ould, «An Investigation of the Impact of Foreign Direct Investment on Economic Growth: A Case Study of Mauritania», Int J Econ Manag Sci Volume 4 • Issue 2 • 1000224, ISSN: 2162-6359 IJEMS, an open access journal, pp. 1-5.

⁷⁷ Sahraoui Mohammed Abbes a*, Belmokaddem Mostéfaa , Guellil Mohammed Seghir a , Ghouali Yassine Zakarya, «Causal Interactions between FDI, and Economic Growth: Evidence from Dynamic Panel Co-Integration», Procedia Economics and Finance 23 (2015), pp. 276-290.

⁷⁸ Derrick Tanggapan, Caroline Geetha, Rosle Mohidin, Vivin Vincent, «The relationship between economic growth and foreign direct investment in Malaysia: analysis based on location advantage theory», International Journal of Economics and Management Sciences. Vol. 1, No. 2, 2011, pp. 24-31.

գնահատվել է 0,085 %⁷⁹, իսկ Գանայի 1980-2010 թթ. տվյալների արդյունքում տնտեսաչափական գնահատականի հիման վրա այդ ազդեցության չափը 0,194 % է⁸⁰:

Այսպիսով, ՕՈՒՆ ազդեցությունը տնտեսական աճի վրա գնահատող վերլուծությունների ընդհանրացմամբ կարելի է դուրս բերել տնտեսական աճի վրա ՕՈՒՆ ազդեցության հետևյալ հնարավոր վարկածները.

- ՕՈՒՆ ներհոսքը նպաստում է արտադրության աճի, որն էլ իր հերթին հանգեցնում է տնտեսական աճի:
- ՕՈՒՆ աճի արդյունքում ավելանում են արտահանման ծավալները, ինչը լրացուցիչ արտարժույթի ներհոսքի աղբյուր է: Այդ լրացուցիչ արտարժույթը նոր տեխնոլոգիաների ձեռքբերման նպատակով ծախսելու պարագայում կմեծանա արտադրողականությունը, ինչն էլ անխուսափելիորեն կհանգեցնի տնտեսական աճի:
- Եվ, ի վերջո, ՕՈՒՆ ներհոսքը մեծացնում է մրցակցությունը տնտեսությունում, ինչի արդյունքում մինչ այդ գործող ձեռնարկությունները ստիպված են լինում նոր տեխնոլոգիաներ ներդնել արտադրության մեջ, որն էլ նպաստում է տնտեսական աճին:

Այժմ դիտարկենք ՕՈՒՆ ազդեցությունը արտաքին առևտրի վրա գնահատող մի շարք հետազոտություններ: Հասկանալի է, որ ՕՈՒՆ-ի արդյունքում երկիր են ներհոսում նոր զարգացած տեխնոլոգիաներ, ինչն էլ հանգեցնում է արտադրանքի մրցունակության բարձրացմանը և արտահանման ծավալների աճին:

ՕՈՒՆ-ի և արտահանման միջև կապի առկայությունը տուգելիս հեղինակները հանգել են հակասական եզրակացությունների: Մասնավորապես 1996-2013 թթ. տվյալների հիման վրա ՕՈՒՆ-ի և արտահանման միջև դրական կապ է արձանագրվել Մլովենիա-

⁷⁹ Gheorghe Ruxanda Andreea Muraru, «FDI and economic growth. evidence from simultaneous equation models», Romanian Journal of Economic Forecasting – 1/2010, pp. 45-58.

⁸⁰ Baba Insah, « Foreign Direct Investment Inflows and Economic Growth in Ghana», International Journal of Economic Practices and Theories. Vol. 3, No. 2, 2013 (April), e-ISSN 2247-7225, pp. 115-121.

յում, Բուլղարիայում և Մակեդոնիայում, իսկ ասիա Ալբանիայում և Սերբիայում այդ կապը բավականին թույլ է և բացասական⁸¹: Հեղինակները բացասական կապը փորձում են մեկնաբանել որպես թույլ զարգացած արդյունաբերության հետևանք: Այդուհանդերձ, դա ընդամենը վարկած է, որը հետագա ստուգման անհրաժեշտություն ունի:

ՕՈՒՆ ազդեցությունը արտահանման վրա գնահատող էկոնոմետրիկ մոդելների արդյունքում ևս բացահայտվել են մի շարք հետաքրքիր օրինաչափություններ. ազդեցության չափը տարբեր երկրներում տատանվում է 0.11-14.9 միջակայքում, և բոլոր հետազոտողները վստահ են, որ կայուն և դինամիկ արտահանում ապահովելու համար երկիրը պետք է վարի ՕՈՒՆ ներգրավման առավելագույնս արդյունավետ քաղաքականություն: Մասնավորապես Հնդկաստանի 1991-2006 թթ. տվյալների հիման վրա կատարված վերլուծության արդյունքում բացահայտվում է, որ ՕՈՒՆ ազդեցությունը արտահանման վրա 0,241 է⁸²: Ղազախստանի տվյալներով վերլուծությունը ցույց է տալիս, որ ՕՈՒՆ 1 միավոր աճը հանգեցնում է արտահանման 2.6 միավոր աճին⁸³: Պակիստանի 1977-2005 թթ. տվյալներով վերլուծությունը վկայում է 0.11 միավոր ազդեցության մասին⁸⁴: Չինաստանի տվյալներով վերլուծությունը հետաքրքրական է նրանով, որ հեղինակը դիտարկել է, որ ՕՈՒՆ ազդեցությունը ավելի մեծ է աշխատատար ոլորտների

⁸¹ Nasir Selimi, Kushtrim Reçi, Luljeta Sadiku, «The Impact of Foreign Direct Investment on the Export Performance: Empirical Evidence for Western Balkan Countries», *ILIRIA International Review*. Vol 6, No 1 (2016), pp. 58-66.

⁸² N. Prasanna, «Impact of Foreign Direct Investment on Export Performance in India», *J Soc Sci*, 24(1): pp. 65-71 (2010).

⁸³ Tolkyin Azatbek , Altay Ramazanov, «Assessment of foreign direct investment, export and economic growth on the example of Kazakhstan», *Investment Management and Financial Innovations*. Volume 13, Issue 4, 2016 , pp. 129-135.

⁸⁴ Dr. Niaz Ahmed Bhutto, Abdul Khaliq Daudpota , Raja Shahzad , Maria Tabassum and Asma Malik Dr. Niaz Ahmed Bhutto, Abdul Khaliq Daudpota, Raja Shahzad, Maria Tabassum and Asma Malik, «The Impact of Foreign Direct Investment (FDI) on Pakistan Exports:», *Journal of Independent Studies and Research (JISR) - Management and Social Sciences & Economics*. Volume 6, No. 2, July 2008, pp. 13-18.

արտահանման վրա՝ 0.91, քան կապիտալատար՝ 0.73⁸⁵։ Իսկ ահա Նիգերիայի 1987-2006 թթ. տվյալների արդյունքում հեղինակների մի խումբ բացահայտել է արտահանման վրա ՕՈՒՆ ազդեցության բավական մեծ չափ՝ 14.9 միավոր⁸⁶։

Այսպիսով, արտահանման վրա ՕՈՒՆ ազդեցության հնարավոր վարկածները հետևյալն են.

- ՕՈՒՆ իրականացվում է արդեն իսկ գործող և արտահանող ձեռնարկության կապիտալում՝ հնարավորություն տալով ավելի շատ արտադրել և արտահանել,
- ՕՈՒՆ շնորհիվ ստեղծվում են նոր ձեռնարկություններ, որոնք միտված են արտահանման և դրանով մեծացնում են արտահանումը,
- և ի վերջո՝ ՕՈՒՆ իրականացվում է նախկինում արտաքին շուկայում ոչ շատ մրցունակ ոլորտում, և ներդրված նոր տեխնոլոգիաների արդյունքում մեծանում են դրա մրցունակությունն ու արտահանումը։

Հասկանալի է, սակայն, որ ՕՈՒՆ-ը ազդում է նաև ներմուծման վրա՝ կրճատելով կամ ավելացնելով ներմուծումը։ Մասնավորապես՝ զարգացած երկրներում օտարերկրյա ներդրողները մրցունակ արտադրանք թողարկելու համար հիմնականում օգտագործում են զարգացող երկրներից ներմուծվող էժան հումք, իսկ զարգացող երկրներում օտարերկրյա ներդրողները օգտագործում են տեղական էժան հումքը՝ վերամշակելով այն ներմուծվող նոր տեխնոլոգիաների և մեքենա-սարքավորումների միջոցով։ Բացի այդ, ՕՈՒՆ-ի արդյունքում կարող է կրճատվել ներմուծումը, եթե այդ ներդրումները կատարվում են ներմուծմանը փոխարինվող ոլորտում։ Այսպիսով, ՕՈՒՆ ազդեցությունը ներմուծման վրա ևս միանշանակ չէ։ Մասնավորապես՝ Թուրքիայի 1950-2004 թթ. տվյալների հիման վրա վերլուծությունը փաստում

⁸⁵ Zhang, Kevin H., “How Does FDI Interact with Economic Growth in A Large Developing Country? The Case of China”, *Economic Systems*, 21 (4), 1999, pp. 291-303.

⁸⁶ E.O. Oyatoye, K.K. Arogundade, S.O. Adebisi, E.F. Oluwakayode, «Foreign Direct Investment, Export and Economic Growth in Nigeria», *JournalsBank.com* (2011), ISSN 2220-9425. Vol. 2, No. 1 (2011).

է, որ ՕՈՒՆ-ի 1 % աճը հանգեցնում է ներմուծման ավելացմանը 0.6 %-ով⁸⁷: Հնդկաստանում այդ ցուցանիշը 0.19 % է⁸⁸: 1980-2012 թթ. Պակիստանի տվյալների համաձայն՝ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 2.78 միավոր ներմուծման ավելացման⁸⁹: Իսկ, օրինակ, ԱՊՀ երկրների տվյալների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ ՕՈՒՆ ազդեցությունը ներմուծման վրա բացասական է՝ -0.91 %⁹⁰:

Ներկայացված երկակի ազդեցությունը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

- ներդրումների իրականացման սկզբնական փուլում տեղի է ունենում ներմուծման ավելացում՝ կապված հումքի, տեխնոլոգիաների և այլ անհրաժեշտ միջոցների ներմուծմամբ, որոնք չեն արտադրվում ընդունող երկրում:
- Երկարաժամկետ հատվածում ներդրումը խթանում է ներմուծման փոխարինման զարգացումը, որը, իհարկե, բերում է ներմուծման նվազման:

Կան բազմաթիվ կարծիքներ և համոզումներ, որ ՕՈՒՆ-ը աղքատության կրճատման կարևորագույն գործիքներից է: Բազմաթիվ հեղինակներ անդրադարձել են այս խնդրին և իրենց ուսումնասիրությունների միջոցով բացահայտել ՕՈՒՆ-ի և աղքատության փոփոխությունների չափը: Դրանցից շատ քչերն են արձանագրում ՕՈՒՆ-ի և աղքատության միաժամանակյա աճ: Մասնավորապես՝ 1996-2000 թթ. Վիետնամի տվյալների վերլուծությամբ պարզ է դառնում, որ ՕՈՒՆ-ի 1 միավոր աճը հանգեցնում

⁸⁷ Kevin O. Onwuka*, Kutlu Yaşar Zoral, «Foreign direct investment and imports growth in Turkey», Journal of Yasar University, pp.2357-2380.

⁸⁸ Mayank Nagpal, «FDI And Trade In India – A Gravity Model Analysis», pp. 1-14.

⁸⁹ Muhammad Abdul Kamal, Zhaohua Li, Sara Rafiq , Amna Nazeer, Khalid Khan, Khuram Shafi, «Inter-Linkage between FDI, Imports and Exchange Rate: An Empirical Evidence from Pakistan», Developing Country Studies www.iiste.org ISSN 2224-607X (Paper) ISSN 2225-0565 (Online). Vol. 4, No. 21, 2014, pp. 122-130.

⁹⁰ Սարգսյան Լ., Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 86:

է աղքատության 0.429 միավոր աճի⁹¹: Սա, թերևս, եզակի դեպքերից է, երբ տնտեսությունում արտադրության հիմնական մասը տեղի է ունենում ձեռքի աշխատանքի արդյունքում, որը ՕՈՒՆ ներհոսքի պարագայում փոխարինվում է մեքենայական արտադրությամբ՝ արտադրությունից դուրս մղելով մարդկանց մի զգալի խմբի, որոնք էլ, աշխատանքը կորցնելով, համալրում են աղքատների շարքերը:

Հետազոտությունների զգալի մասը փաստում է, որ ՕՈՒՆ-ը նվազեցնում է աղքատությունը և բարձրացնում բարեկեցությունը⁹²:

Նիգերիայի տվյալներով կատարված գնահատումը ցույց է տալիս, որ ՕՈՒՆ-ի աճը 1 տոկոսով հանգեցնում է աղքատության կրճատման 0.05 տոկոսով⁹³: Իսկ ահա 26 զարգացող երկրների տվյալների հիման վրա կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ որ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը կրճատում է աղքատների քանակը տվյալ երկրներում միջին հաշվով 2207-ով⁹⁴:

Աղքատության վրա ՕՈՒՆ-ի ազդեցությունը բնորոշվում է հետևյալ վարկածներով.

- ՕՈՒՆ-ը նպաստում է նոր աշխատատեղերի ստեղծմանը կամ աշխատավարձերի բարձրացմանը, ինչի արդյունքում կրճատվում է աղքատությունը,
- ՕՈՒՆ-ը նպաստում է աշխատատար եղանակով արտադրան-

⁹¹ Nguyen Thi Phuong Hoa, «Contribution of FDI to poverty Reduction:The case of Vietnam in the 1990s».

⁹² Gohou, G. and Soumaré, I. (2009). Impact of FDI on Poverty Reduction in Africa: Are There Regional Differences?. Working Paper, African Development Bank. Retrieved from <http://www.afdb.org/fileadmin/uploads/afdb/Documents/Knowledge/2009%20AEC-%20Impact%20of%20FDI%20on%20Welfare%20and%20Regional%20Integration%20in%20Africa.pdf>

⁹³ Anigbogu, Theresa Ukamaka (Ph.D) , Edoko, Tonna David, Okoli, Ikechukwu Moses, «Foreign Direct Investment and Poverty Reduction in Nigeria», International Journal of Business and Management Invention ISSN (Online): 2319 – 8028, ISSN (Print): 2319 – 801X www.ijbmi.org || Volume 5, Issue 6 || June. 2016 || pp. 19-28.

⁹⁴ Meltem Şengün Ucal, «Panel Data Analysis of Foreign Direct Investment and Poverty from the Perspective of Developing Countries», Procedia - Social and Behavioral Sciences 109 (2014) 1101 – 1105.

քի փոխարինմանը կապիտալատար եղանակով, ինչի հետևանքով կրճատվում են աշխատատեղերը, և ավելանում է աղքատությունը:

Բնականաբար ՕՈՒՆ-ը որոշակի ազդեցություն է ունենում նաև գործազրկության վրա: Մի շարք հետազոտություններ փաստում են, որ երբեմն ՕՈՒՆ-ը նշանակալի ազդեցություն չի ունենում գործազրկության մակարդակի վրա: Մասնավորապես՝ 1993-2012 թթ. Կենտրոնական Եվրոպայի երկրների տվյալների վերլուծության արդյունքում պարզվել է, որ ՕՈՒՆ-ը նշանակալի ազդեցություն չունի գործազրկության վրա: Հեղինակները սա բացատրում են այն հանգամանքով, որ տվյալ ժամանակահատվածում ՕՈՒՆ-ի զգալի մասն ուղղվել է ոչ թե նոր ձեռնարկությունների ստեղծմանը, այլ արդեն իսկ գործող պետական ձեռնարկությունների մասնավորեցմանը, ինչի արդյունքում զբաղվածների ընդհանուր քանակը էական փոփոխության չի ենթարկվել⁹⁵: Այդուհանդերձ, հետազոտությունների հիմնական մասը վկայում է, որ ՕՈՒՆ-ը նպաստում է զբաղվածության աճին կամ գործազրկության կրճատմանը: Մասնավորապես՝ Պակիստանի 1995-2011 թթ. տվյալներով՝ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 2.75 միավոր գործազրկության կրճատման⁹⁶: Համաձայն Լեհաստանի 1995-2000 թթ. տվյալների վերլուծության՝ 1 միավոր ՕՈՒՆ-ի աճը կրճատում է գործազուրկների քանակը 804,55-ով⁹⁷: Առավել ընդգրկուն վերլուծությունները ներառում են ոչ թե մեկ երկրի, այլ երկրների խմբի տվյալներ: Օրինակ՝ Աֆրիկյան մի շարք երկրներ 1991 - 2009 թթ. տվյալների վերլուծությամբ պարզվել է, որ 1 տոկոսով ՕՈՒՆ-

⁹⁵ Zuzana Brincikova, Lubomir Darmo, «The impact of fdi inflow on employment in v4 countries», European Scientific Journal February 2014 /SPECIAL/ edition vol.1 ISSN: 1857 – 7881 (Print) e - ISSN 1857- 7431, pp. 245-252.

⁹⁶ Fu Qiang and Muhammad Suhail Sharif , Nayyra Zeb, «Foreign direct investment and unemployment reduction in Pakistan», Int.J.Eco. Res., 2014, v. 5i2, 10-17 ISSN: 2229-6158, pp. 10-17.

⁹⁷ Adam P. Balcerzak, Mirosława Żurek, «Foreign Direct Investment and Unemployment: VAR Analysis for Poland in the Years 1995-2009», European Research Studies. Volume XIV, Issue (1), 2011, pp. 4-12.

ի աճը հանգեցրել է 0,007 տոկոսով գործազրկության կրճատման⁹⁸: Իսկ Բալկանյան երկրներում այդ ցուցանիշը 0.6 է⁹⁹: Ինչպես և աղքատության պարագայում, այստեղ ևս հնարավոր են դեպքեր, որ ՕՈՒՆ-ի աճը նպաստի գործազրկության աճին: Մակեդոնիայի 1999-2013 թթ. տվյալների հիման վերլուծությամբ պարզ է դարձել, որ 1 տոկոսով ՕՈՒՆ-ի աճը հանգեցնում է 0.067 տոկոսով գործազրկության աճի¹⁰⁰:

Այսպիսով, ՕՈՒՆ-ի ազդեցությունը զբաղվածության վրա կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական:

Դրական ազդեցություններից կարող ենք նշել.

- աշխատատար ոլորտում իրականացրած ներդրումները բերում են աշխատատեղերի ավելացման,
- ՕՈՒՆ-ը մեծ չափով է կրճատում գործազրկությունը այն երկրներում, որոնք ունեն գործազրկության բարձր մակարդակ,
- ի վերջո, ՕՈՒՆ-ի ազդեցությունը զբաղվածության վրա կարող է լինել նաև անուղղակի՝ նպաստելով հարակից ոլորտներում աշխատատեղերի ստեղծմանը:

Բացասական ազդեցություններից են.

- աշխատատար արտադրությունը ՕՈՒՆ ներհոսքի արդյունքում փոխարինվում է կապիտալատար եղանակով արտադրության դուրս մղելով մի շարք աշխատողների արտադրության գործընթացից,
- օտարերկրյա ներդրումների արդյունքում մի շարք տեղական արտադրողներ դառնում են ոչ մրցունակ և դուրս են մղվում շուկայից: Այդպիսով, եթե ՕՈՒՆ ներհոսքի արդյունքում ավե-

⁹⁸ David Mayom, «The Impact of Foreign Direct Investment on Labor Market Measures: Evidence from Sub-Saharan Africa», pp. 1-28.

⁹⁹ Safet Kurtovic, Boris Siljkovic, Milos Milanovic, «Long-term impact of foreign direct investment on reduction of unemployment: panel data analysis of the Western Balkans countries», Journal of Applied Economics and Business Research JAEBR, 5 (2): 112-129 (2015), pp. 112-129.

¹⁰⁰ Elizabeta Djambaska, Aleksandra Lozanoska, «Foreign direct investment and unemployment evidence from the Republic of Macedonia», International Journal of Economics, Commerce and Management, United Kingdom. Vol. III, Issue 12, December 2015 Licensed under Creative Common, page 73 <http://ijecm.co.uk/> ISSN 2348 0386, pp. 73-85.

լացած աշխատատեղերի քանակը նվազ է կրճատվածից, կրճատվում է զբաղվածությունը:

Անփութելով տնտեսության զարգացման վրա օտարերկրյա ներդրումների վերաբերյալ առկա տեսական և էմպիրիկ վերլուծությունների հիմնադրույթները՝ կարելի է ասել, որ ՕՈՒՆ ներհուքը շատ մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման համար: Ասվածը հատկապես կարևորվում է զարգացող տնտեսություն ունեցող երկրների համար, ինչպիսին է Հայաստանը, քանի որ այսօր ՀՀ-ն չունի բավարար ներքին միջոցներ նորագույն տեխնիկայի և տեխնոլոգիաների ձեռքբերման և ներդրման համար, ինչի արդյունքում էլ զգալիորեն մեծանում է ՕՈՒՆ-ի կարևորությունը: Բացի այդ, ՀՀ զարգացման տեսանկյունից շատ է կարևորվում նաև արտաքին առևտուրը, և հատկապես՝ արտահանումը, քանի որ այն հնարավորություն կտա օգտվելու մասշտաբի դրական էֆեկտից և նվազեցնելու միավոր արտադրանքի ծախսերը՝ այսպիսով բարձրացնելով ապրանքի մրցունակությունը: Հայաստանի տեսանկյունից արտահանման կարևորությունը պայմանավորված է նաև ներքին սպառողական շուկայի խիստ սահմանափակ լինելով, որը հնարավորություն չի տա միայն ներքին պահանջարկի վրա հիմնվելով երկարաժամկետ կայուն աճի ապահովման:

2.2. ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա ՕՈՒՆ ազդեցության շղթաների բացահայտումը

Բազմիցս խոսվեց այն մասին, որ օտարերկրյա ներդրումները զգալի ազդեցություն են ունենում տնտեսության զարգացման վրա: Հասկանալի է, սակայն, որ այդ ազդեցության չափը տարբեր է՝ կախված տնտեսության զարգացման մակարդակից, արտաքին տնտեսական կապերից և այլ գործոններից: Ուստի յուրաքանչյուր երկրի տնտեսության վրա ազդեցության չափը որոշելու համար անհրաժեշտ է հանգամանակից վերլուծություն իրականացնել տվյալ երկրի վիճակագրական տվյալների հիման վրա:

Դիտարկենք ՕՈՒՆ-ի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Այդ նպատակով կիրականացնենք էկոնոմետրիկ վերլուծություն հետևյալ քայլերի հաջորդականությամբ. ՀՀ-ում ՕՈՒՆ-ի և այլ տնտեսական ցուցանիշների միջև կորելացիոն վերլուծություն, Գրեյնջեր-պատճառականության բացահայտում և ՕՈՒՆ-ի ազդեցության չափը ՀՀ տնտեսական աճի և այլ ցուցանիշների վրա բնութագրող լավագույն մոդելի ընտրություն:

Դիտարկման համար ընտրվել են հետևյալ ցուցանիշները՝ ՕՈՒՆ, ՀՆԱ, արտահանում, ներմուծում՝ արտահայտված ՀՀ դրամով, դրամ-դոլար փոխարժեք, աղքատություն, գործազրկություն: Դիտարկումը կիրականացվի հետևյալ ժամանակահատվածի համար՝ 01.01.1998 թ. - 31.12.2019 թ.՝ ըստ եռամսյակային տվյալների: Ժամանակային շարքերի ստացիոնարության պահպանման համար վերլուծությունում կօգտագործենք դրանց տարբերությունները, կամ այլ կերպ ասած՝ ՕՈՒՆ-ի, ՀՆԱ-ի, արտահանման, ներմուծման, փոխարժեքի, աղքատության և գործազրկության աճերի ժամանակային շարքերը:

Դիտարկենք ՕՈՒՆ և այլ տնտեսական ցուցանիշների աճի միջև կորելացիոն գործակիցները.

	<i>Արտահանում</i>	<i>Փոխարժեք</i>	<i>ՕՈՒՆ</i>	<i>ՀՆԱ</i>	<i>Ներմուծում</i>	<i>Աղքատություն</i>	<i>Գործազրկություն</i>
Արտահանում	1	-0.31	0.49	0.91	0.71	0.14	-0.54
Փոխարժեք	-0.31	1	-0.13	-0.25	-0.22	0.17	0.07
ՕՈՒՆ	0.49	-0.13	1	0.38	0.36	-0.08	-0.49
ՀՆԱ	0.91	-0.25	0.38	1	0.83	0.21	-0.56
Ներմուծում	0.71	-0.22	0.36	0.83	1	0.25	-0.49
Աղքատություն	0.14	0.17	-0.08	0.21	0.25	1	0.15
Գործազրկություն	-0.54	0.07	-0.49	-0.56	-0.49	0.15	1

Ինչպես նկատում ենք, ՕՈՒՆ աճը դիտարկվող ժամանակահատվածում զուգորդվում է ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման աճով և փոխարժեքի, աղքատության և գործազրկության մակարդակների նվազմամբ: Հարկ է նշել, որ փոխարժեքի նվազում ասելով տվյալ պարագայում նկատի ունենք ՀՀ դրամի արժևորումը: Այդուհանդերձ, կորելացիոն գործակիցները ցույց են տալիս միայն ցուցանիշների փոփոխման միտումները, սակայն չեն վկայում դրանցում առկա պատճառական կապի մասին: Ցուցանիշների միջև պատճառական կապի բացահայտման համար անհրաժեշտ է վերլուծություն իրականացնել Գրեյնջեր-պատճառականության թեստի միջոցով:

Մինչ պատճառական կապի վերլուծությանն անդրադառնալը առաջադրենք մի քանի վարկած, որոնց ստուգման համար էլ կկիրառենք Գրեյնջեր-պատճառականության թեստը:

Վարկած 1. ՕՈՒՆ ներհոսքի աճը նպաստում է արտարժույթի ներհոսքի, որի արդյունքում ազգային արժույթն արժևորվում է: Արժույթի արժևորման հետևանքով՝ 1. աճում է ներմուծումը, 2. նվազում է արտահանումը: Կախված այն հանգամանքից՝ արտահանումն է ավելի զգայուն արժույթի արժևորման նկատմամբ, թե՞ ներմուծումը՝ կաճի կամ կնվազի զուտ արտահանումը, ինչն էլ կազդի ՀՆԱ փոփոխության վրա: Միևնույն ժամանակ արժույթի արժևորումը որոշակի ժամանակ անց կհանգեցնի ՕՈՒՆ-ի աճի տեմպի կրճատման, ինչն էլ կհանգեցնի հակառակ արդյունքի:

Վարկած 2. Արժույթի արժեզրկումը նպաստում է ՕՈԻՆ ներհոսքի աճին, որը սկիզբ է դնում վարկած 1-ում քննարկված շղթային: Այդուհանդերձ, արժույթի արժեզրկման հետևանքով նաև աճում է արտահանումն, ու նվազում՝ ներմուծումը, ինչի արդյունքը գուգորդելով վարկած 1-ից բխող հետևանքների հետ՝ կունանանք ՀՆԱ փոփոխության այլ պատկեր:

Վարկած 3. ՕՈՒՆ ներհոսքը չի նպաստում արտահանման աճին և արտադրում է բացառապես ներքին շուկայի համար նախատեսված ապրանքներ, ինչը ՀՀ սահմանափակ շուկայի պարագայում քիչ հավանական է, բայց, այնուամենայնիվ, անհրաժեշտ է ստուգել:

Վարկած 4. ՕՈԻՆ ներհոսքի աճը նպաստում է արտահանման աճին, որոնք գուգորդվելով հանգեցնում են ՀՆԱ աճին: Այդուհանդերձ, ՕՈԻՆ և արտահանման աճերը որոշակի ժամանակ անց հանգեցնում են արժույթի արժևորմանը, ինչն էլ սկիզբ է դնում վարկած 1-ի շղթայի իրագործմանը:

Վարկած 5. ՕՈԻՆ ներհոսքը նպաստում է ներմուծման կրճատմանը, եթե ՕՈԻՆ հիմնականում իրականացվում է ներմուծմանը փոխարինող ճյուղերում, ուստի նպաստում է ՀՆԱ-ի աճին:

Վարկած 6. ՕՈԻՆ ներհոսքը նպաստում է ներմուծման աճին, եթե ՕՈԻՆ հիմնականում իրականացվում է ներմուծող կամ ներմուծվող հումք օգտագործող ոլորտներում, ուստի ՀՆԱ-ի վրա ազդեցությունը կախված կլինի այն հանգամանքից, թե որքանով է ՕՈԻՆ ներհոսքի աճը տարբերվում ներմուծման աճից:

Վարկած 7. ՕՈԻՆ ներհոսքը նպաստում է նոր աշխատատեղերի բացմանը և, բնականաբար, գործազրկության կրճատմանը, որն էլ որպես հետևանք կարող է հանգեցնել աղքատության կրճատման:

Տվյալ դեպքում մեր խնդիրն է բացահայտել՝ արդյո՞ք այս վարկածները գործում են ՀՀ տնտեսության համար, կա՞ն արդյոք խզումներ նշված շղթաներում և, եթե կան, ապա ո՞ր օղակում է տեղի ունենում խզումը:

Դիտարկենք Գրեյնջեր-պատճառականության թեստի արդյունքները համապատասխան փոփոխականների միջև:

Վարկած 1-ի ստուգում

Աղյուսակ 2.2.1.

ՕՈՒՆ և փոխարժեքի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

Վարկած	1 լագ	2 լագ	3 լագ	4 լագ	5 լագ	6 լագ
Փոխարժեքի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է
ՕՈՒՆ փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում փոխարժեքի փոփոխության համար	-	-	Մերժվում է	Մերժվում է	-	-

Ժամանակային 3-4 լագերի համար, այսինքն՝ 3-4 եռամսյակ անց ՕՈՒՆ աճը նպաստում է փոխարժեքի փոփոխությանը: Ինչպես ցույց է տալիս կորելացիայի գործակիցը, ՕՈՒՆ և փոխարժեքը փոխվում են տարբեր ուղղություններով, ուստի կարող ենք ասել, որ ՕՈՒՆ աճը նպաստում է փոխարժեքի նվազմանը, այլ կերպ ասած՝ արժույթի արժևորմանը:

Աղյուսակ 2.2.2.

Արտահանման և փոխարժեքի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

Վարկած	1 լագ	2 լագ	3 լագ	4 լագ	5 լագ	6 լագ
Փոխարժեքի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման փոփոխության համար	-	-	-	-	-	-
Արտահանման փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում փոխարժեքի փոփոխության համար	-	-	Մերժվում է	-	-	-

Իսկ ժամանակային 1-6 լազի համար փոխարժեքի արժեգրկումը նպաստում է ՕՈՒՆ աճին (վարկած 2):

Փոխարժեքի փոփոխությունը արտահանման պատճառ չի հանդիսանում, սակայն ժամանակային 3 լազի պարագայում արտահանման աճը հանգեցնում է փոխարժեքի նվազման, այսինքն՝ արժույթի արժևորման (վարկած 4):

Աղյուսակ 2.2.3.

Ներմուծման և փոխարժեքի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լազ</i>	<i>2 լազ</i>	<i>3 լազ</i>	<i>4 լազ</i>	<i>5 լազ</i>	<i>6 լազ</i>
Փոխարժեքի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ներմուծման փոփոխության համար	-	-	-	-	-	-
Ներմուծման փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում փոխարժեքի փոփոխության համար	-	-	-	-	-	-

Փոխարժեքի փոփոխությունը չի նպաստում ներմուծման փոփոխությանը, իսկ ներմուծման փոփոխությունը ևս չի նպաստում փոխարժեքի փոփոխությանը:

Վարկած 2-ի երկրորդ մասն արդեն իսկ հերքվեց վարկած 1-ի վերլուծության արդյունքում:

Վարկած 3-4-ի ստուգում

Աղյուսակ 2.2.4.

ՕՈՒՆ և արտահանման միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լազ</i>	<i>2 լազ</i>	<i>3 լազ</i>	<i>4 լազ</i>	<i>5 լազ</i>	<i>6 լազ</i>
Արտահանման փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ փոփոխության համար	-	-	-	-	-	-
ՕՈՒՆ փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-

Ստացվում է, որ ՕՈՒՆ ներհոսքը ժամանակային 1-2 լագի պարագայում նպաստում է արտահանման աճին:

Աղյուսակ 2.2.5.

ՕՈՒՆ և ՀՆԱ-ի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>
ՀՆԱ-ի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ փոփոխության համար	-	-	-	-	-	-
ՕՈՒՆ փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՀՆԱ-ի փոփոխության համար	-	Մերժվում է	-	-	-	-

Աղյուսակ 2.2.6.

Արտահանման և ՀՆԱ-ի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>
Արտահանման փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՀՆԱ-ի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	-	-	-
ՀՆԱ-ի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման փոփոխության համար	-	-	-	-	-	-

Ստացվում է, որ ՕՈՒՆ-ը ժամանակային 2, իսկ արտահանումը 1-3 լագերի պարագայում հանգեցնում են ՀՆԱ-ի աճի:

Վարկած 5-6-ի ստուգում

Աղյուսակ 2.2.7.

Ներմուծման և ՀՆԱ-ի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>
Ներմուծման փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՀՆԱ-ի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	-	-
ՀՆԱ-ի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ներմուծման փոփոխության համար	-	-	-	-	-	-

ՕՈՒՆ ներհոսքը նպաստում է ներմուծման աճին ժամանակային 1-2 լագի պարագայում:

ՕՈՒՆ ներհոսքը ազդում է ՀՆԱ-ի վրա ժամանակային 2 լագի պարագայում, իսկ ներմուծման փոփոխությունը՝ ժամանակային 1-4 լագի պարագայում: Երկու դեպքում էլ ՀՆԱ-ն աճում է:

Վարկած 7-ի ստուգում

Աղյուսակ 2.2.8.

ՕՈՒՆ և աղքատության միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>	<i>7 լագ</i>	<i>8 լագ</i>
Աղքատության փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ փոփոխության համար	-	-	-	-	-	-	-	-
ՕՈՒՆ փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում աղքատության փոփոխության համար	-	-	-	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է

Աղյուսակ 2.2.9.


ՕՈՒՆ և գործազրկության միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>	<i>7 լագ</i>	<i>8 լագ</i>
Գործազրկության փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ փոփոխության համար	-	-	-	-	-	-	-	-
ՕՈՒՆ փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում գործազրկության փոփոխության համար	-	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-

Ինչպես տեսնում ենք, ՕՈՒՆ-ը պատճառ է հանդիսանում աղքատության կրճատման ժամանակային 4-8 լագերի համար, իսկ գործազրկության կրճատման՝ 2-4 լագերի համար:

Այսպիսով, կարող ենք ներկայացնել ՀՀ տնտեսության վրա ՕՈՒՆ ազդեցության մի քանի մեխանիզմներ:

ՕՈՒՆ ներհոսքի աճը 2-4 եռամսյակի ընթացքում նվազեցնում է գործազրկության մակարդակը, իսկ 4-8 եռամսյակների ընթացքում՝ աղքատության մակարդակը: Գործազրկության անկումը 4, ինչպես նաև 8 եռամսյակ անց նպաստում է աղքատության նվազմանը:



Ուստի ստացվում է, որ ՕՈՒՆ ներհոսքը աղքատության նվազման վրա ունենում է ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդա-

վորված ազդեցություն՝ գործազրկության մակարդակի անկման միջոցով:

ՕՈՒՆ ներհոսքը 1-2 եռամսյակ անց նպաստում է ներմուծման աճին, հավանաբար այն պատճառով, որ ՕՈՒՆ հիմնականում իրականացվում է ներմուծող կամ ներմուծվող հումք օգտագործող ոլորտներում: Իսկ 2 եռամսյակ անց ՕՈՒՆ ներհոսքը նպաստում է ՀՆԱ աճին: Ընդ որում՝ ներմուծման աճն էլ իր հերթին 1-4 եռամսյակների ընթացքում նպաստում է ՀՆԱ աճին: ՀՆԱ-ն ներմուծման հետևանքով աճում է ավելի երկար ժամանակահատվածի համար, քան ՕՈՒՆ ազդեցությամբ: Սա նշանակում է, որ ՀՆԱ-ն միայն ՕՈՒՆ ներհոսքի արդյունքում ավելացած արտադրության քանակով չի աճում, այլև այլ պատճառներով: Մասնավորապես՝ նման իրավիճակ կարող է լինել, եթե, օրինակ, ներմուծման աճի արդյունքում արտադրվեն արտահանվող ապրանքներ, ինչն էլ, մասշտաբի էֆեկտ ապահովելով, թույլ կտա արտադրության քանակն է՛լ ավելի մեծացնել: Այդուհանդերձ, սա նոր վարկած է, և անհրաժեշտ է այն հաստատել կամ ժխտել՝ կրկին օգտագործելով Գրեյնջեր-պատճառականության թեստը:

Աղյուսակ 2.2.10.


Արտահանման և ներմուծման միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

Վարկած	1 լագ	2 լագ	3 լագ	4 լագ	5 լագ	6 լագ	7 լագ	8 լագ
Արտահանման փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ներմուծման փոփոխության համար	-	-	-	-	-	-	-	-
Ներմուծման փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է


Այսպիսով, ստացվում է, որ ներմուծման աճը դիտարկվող ողջ ժամանակահատվածում (ստուգվել է ընդհուպ մինչև 12 եռամսյակ) մշտապես նպաստում է արտահանման աճին, իսկ արտահանման աճը 1-3 եռամսյակի ընթացքում նպաստում է ՀՆԱ աճին:

Այդուհանդերձ, վարկածի ստուգման արդյունքում մենք առերեսվեցինք ևս մեկ կարևոր հանգամանքի հետ. դիտարկվող ողջ ժամանակահատվածի ընթացքում արտահանման աճը մշտապես նպաստել է ներմուծման աճին: Այս հանգամանքը կարելի է բացատրել հետևյալ կերպ. արտահանման աճը նպաստում է լրացուցիչ արժույթի հոսքին դեպի ՀՀ, որն էլ եթե ուղղվի նոր տեխնոլոգիաների և հումքի ներմուծմանը, կարող է հանգեցնել ՀՆԱ ավելացման: Փաստորեն այս վարկածը ևս հաստատվեց: Հատկանշական է, որ եթե վարկածի ստուգման արդյունքում մենք հաստատեինք, որ ներմուծումը արտահանման պատճառ է հանդիսանում, իսկ արտահանումը ներմուծման պատճառ չի հանդիսանում, ապա սա կնշանակեր, որ գործ ունենք ներմուծվող, վերամշակվող և արտահանվող ապրանքի հետ, որի պարագայում հետադարձ կապ չկա (օր.՝ ադամանդի ներմուծում և արտահանում): Մակայն քանի որ արդեն իսկ պարզեցինք, որ արտահանումը ևս ներմուծման պատճառ է հանդիսանում, ուստի մենք գործ ունենք ոչ միայն արտահանման համապատասխան քանակ ապահովող, այլև լրացուցիչ ներմուծման հետ, որը որոշակի ժամանակ անց է՛լ ավելի է մեծացնում ՀՆԱ-ն: Բացի այդ, վարկած 3, 4-ի ստուգման ժամանակ էլ մենք պարզել էինք, որ ՕՈՒՆ աճը 1-2 եռամսյակի ընթացքում նպաստում է արտահանման աճին:

Այսպիսով, ՀՀ տնտեսության մի քանի ցուցանիշի վրա ՕՈՒՆ ազդեցության հետևյալ մեխանիզմը ևս կարող ենք համարել հաստատված.



Այսպիսով, կարող ենք ասել, որ ՕՌԻՆ աճը ՀՀ ՀՆԱ-ի աճի վրա ունենում է ինչպես ուղղակի, այնպես էլ մի քանի եղանակով միջնորդավորված ազդեցություն: Եվս մեկ կարևոր մեխանիզմ, որ բացահայտվել է վարկած 1, 2, 3, 4-ի ստուգման արդյունքում:



Այսպիսով, ստացվում է հետևյալ մեխանիզմը. տարեսկզբին ՕՌԻՆ աճը 3-4 եռամսյակում նպաստում է արժույթի արժևորմանը, 1-2 եռամսյակում՝ արտահանման աճին: Արտահանման

աճը 3 եռամսյակ անց ևս նպաստում է արժույթի արժևորմանը:

Իսկ ժամանակային 1-6 լագի համար փոխարժեքի արժեզրկումը նպաստում է ՕՈԻՆ աճին, ինչպես նաև՝ արժևորումը՝ ՕՈԻՆ կրճատմանը:

Այսինքն՝ ՀՀ-ում դիտարկվող ժամանակահատվածում ՕՈԻՆ աճն ու նվազումն ունեցել են ցիկլային բնույթ, որը բացատրելի է տնտեսագիտական օրենքներով: Ընդ որում՝ արժույթի արժևորումից մինչև ՕՈԻՆ կրճատում փուլի տևողության շարունակականությունը կարելի է կրճատել, եթե համապատասխան փուլում ՀՀ ԿԲ-ն իրականացնի արժույթային ինտերվենցիա՝ արժեզրկելով ազգային արժույթը:

Հարկ է նշել նաև, որ բոլոր վարկածները ի սկզբանե ստուգվել են նշված ժամանակային շարքերի աճը բնութագրող ստացիոնար ժամանակային շարքերի համար: Արդյունքները նույնն են, ու քանի որ աճի ժամանակային շարքերի դեպքում որոշակի իմաստային փոփոխություն տեղի կունենար, այդ պատճառով Գրեյնջեր-պատճառականության թեստը ներկայացվել է տվյալ շարքերի համար:

Այդուհանդերձ, հետաքրքիր է նաև, թե ՕՈԻՆ-ը ինչպես է ազդում նշված փոփոխականների աճի տեմպի վրա: Ինչպես արդեն նշեցինք, ազդեցության պատճառական կապը նույն բնութագիրն ունի, սակայն աճի տեմպի փոփոխությունը ըստ եռամսյակների տարբեր է: Դիտարկենք այս կապը:

Անդրադառնանք ՕՈԻՆ և փոխարժեքի աճի տեմպերի փոփոխության միջև առկա կապին:

Աղյուսակ 2.2.11.

ՕՈՒՆ և փոխարժեքի աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 յազ</i>	<i>2 յազ</i>	<i>3 յազ</i>	<i>4 յազ</i>	<i>5 յազ</i>	<i>6 յազ</i>
Փոխարժեքի աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ աճի փոփոխության համար	-	Մերժվում է	-	-	-	-
ՕՈՒՆ աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում փոխարժեքի աճի փոփոխության համար	-	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	-	-

Ինչպես տեսնում ենք, փոխարժեքի արժևորման տեմպի փոփոխությունը պատճառ է հանդիսանում ՕՈՒՆ աճի տեմպի փոփոխության միայն 2 եռամսյակ անց, իսկ ՕՈՒՆ աճի տեմպի փոփոխությունը նպաստում է արժույթի ավելի արագ տեմպով արժևորմանը 2-4-րդ եռամսյակներում:

Աղյուսակ 2.2.12.

Արտահանման և փոխարժեքի աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 յազ</i>	<i>2 յազ</i>	<i>3 յազ</i>	<i>4 յազ</i>	<i>5 յազ</i>	<i>6 յազ</i>
Փոխարժեքի աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման աճի փոփոխության համար	-	-	-	-	-	-
Արտահանման աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում փոխարժեքի աճի փոփոխության համար	-	Մերժվում է	-	-	-	-

Արտահանման աճի տեմպի մեծացումը 2 եռամսյակ անց նպաստում է արժույթի արժևորման տեմպի արագացմանը: Մաքսը և էություն հասկանալի է, քանի որ արտահանման աճի տեմպի արագացումը նպաստում է ավելի մեծ քանակի արտարժույթի ներհոսքին, ինչը տեղական արժույթի հաստատուն քանակի պարագայում պետք է մեծացնի արժույթի զինը, այսինքն՝ նպաստի արժևորմանը:

Աղյուսակ 2.2.13.

Ներմուծման և փոխարժեքի աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 յազ</i>	<i>2 յազ</i>	<i>3 յազ</i>	<i>4 յազ</i>	<i>5 յազ</i>	<i>6 յազ</i>
Փոխարժեքի աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառչի հանդիսանում ներմուծման աճի փոփոխության համար	-	-	-	-	-	-
Ներմուծման աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառչի հանդիսանում փոխարժեքի աճի փոփոխության համար	-	Մերժվում է	-	-	-	-

Համաձայն աղյուսակ 2.2.13-ի՝ ներմուծման աճի տեմպի արագացումը նպաստում է արժույթի արժևորման տեմպի արագացմանը 2 եռամսյակ անց: Հասկանալի է, որ ներմուծման աճի տեմպը պետք է մեծացնի փողի պահանջարկը երկրի ներսում, ինչն էլ կհանգեցնի արժույթի արժևորման ավելի մեծ չափի:

Ինչպես տեսնում ենք, արտահանման աճի փոփոխությունը նպաստում է ՕՈՒՆ աճի փոփոխությանը ընդհուպ մինչև 3 եռամսյակ անց, իսկ ՕՈՒՆ աճի փոփոխությունը հանգեցնում է արտահանման աճի փոփոխության միայն 1 եռամսյակ անց:

Աղյուսակ 2.2.14.

ՕՈԻՆ և արտահանման աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 յազ</i>	<i>2 յազ</i>	<i>3 յազ</i>	<i>4 յազ</i>	<i>5 յազ</i>	<i>6 յազ</i>
Արտահանման աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈԻՆ աճի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	Մերժվում է	-	-	-
ՕՈԻՆ աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման աճի փոփոխության համար	Մերժվում է	-	-	-	-	-

Արտահանման աճի տեմպի մեծացմանը հետևող ՕՈԻՆ աճի տեմպը կարող է պատճառ լինել ավելի շատ արտահանման միջոցով ավելի մեծ շահույթ ստանալու օտարերկրյա ներդրողների ձգտմանը, որը, սակայն, արդարացվում է միայն 1 եռամսյակ անց, մյուս ժամանակահատվածներում ՕՈԻՆ աճի հետևանքով ներհոսած կապիտալը հավանաբար ուղղվում է այլ նպատակների իրագործմանը և արտահանման աճի տեմպի մեծացման վրա այլևս չի ազդում:

Աղյուսակ 2.2.15.

ՕՈԻՆ և ՀՆԱ-ի աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 յազ</i>	<i>2 յազ</i>	<i>3 յազ</i>	<i>4 յազ</i>	<i>5 յազ</i>	<i>6 յազ</i>
ՀՆԱ-ի աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈԻՆ աճի փոփոխության համար	Մերժվում է	-	-	-	-	-
ՕՈԻՆ աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՀՆԱ-ի աճի փոփոխության համար	Մերժվում է	-	-	-	-	-

Ինչ վերաբերում է ՕՈՒՆ և ՀՆԱ աճի տեմպերի կապվածությանը, ապա վերլուծությունը ցույց է տալիս, որ ՕՈՒՆ-ի աճի տեմպն ազդում է ՀՆԱ-ի աճի տեմպի վրա 1 եռամսյակ անց, ինչպես նաև նույն ժամանակային լագի պարագայում առկա է հակառակ կապը:

Աղյուսակ 2.2.16.

Արտահանման և ՀՆԱ-ի աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>
Արտահանման աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՀՆԱ-ի աճի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-
ՀՆԱ-ի աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման աճի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-

Իսկ արտահանման ու ՀՆԱ-ի աճի տեմպերն ազդում են միմյանց վրա 1-2 եռամսյակ անց:

Աղյուսակ 2.2.17.

Ներմուծման և ՀՆԱ-ի աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>
Ներմուծման աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՀՆԱ-ի աճի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-
ՀՆԱ-ի աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ներմուծման աճի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-

Համանման պատկեր է նաև ներմուծման և ՀՆԱ-ի աճի տեմպերի փոխառնչության պարագայում. երկուսն էլ ազդում են միմյանց վրա 1-2 եռամսյակ անց: Սա կարող է ներմուծման մեջ առավելապես հումքի և սարքավորումների գերակշռման հետևվանք լինել, որոնց աճի տեմպի մեծացումը նպաստում է որոշակի ժամանակահատված անց է՛լ ավելի մեծ քանակի ապրանքների և ծառայությունների արտադրությանը: Իսկ ՀՆԱ աճի տեմպի մեծացումն էլ հակառակ էֆեկտով նպաստում է է՛լ ավելի մեծ քանակի հումք և սարքավորում ներմուծելուն:

Աղյուսակ 2.2.18.

ՕՈՒՆ և աղքատության աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 յազ</i>	<i>2 յազ</i>	<i>3 յազ</i>	<i>4 յազ</i>	<i>5 յազ</i>	<i>6 յազ</i>	<i>7 յազ</i>	<i>8 յազ</i>
Աղքատության աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ աճի փոփոխության համար	-	-	-	-	-	-	-	-
ՕՈՒՆ աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում աղքատության աճի փոփոխության համար	Մերժվում է	-	-	-	-	-	-	-

Աղքատության աճի տեմպի կրճատումը պայմանավորվում է նախորդ եռամսյակում ՕՈՒՆ աճի տեմպի մեծացմամբ: Այս փաստը կարող է ունենալ ամենատարբեր բացատրություններ: Օրինակ՝ տվյալ պարագայում հնարավոր է, որ խոսքը գնում է աշխատող աղքատների մասին, որոնք մինչև ՕՈՒՆ աճը ստանում էին այնքան աշխատավարձ, որը նրանց ընտանիքին հնարավորություն չէր տալիս գտնվելու աղքատության գծից վեր: Իսկ ՕՈՒՆ աճի տեմպի մեծացման արդյունքում ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել նրանց աշխատավարձերի բարձրացում, որի շնորհիվ նրանց ընտանիքի մեկ շնչի բաժին ընկնող եկամուտը թույլ է տվել նրանց գտնվելու աղքատության գծից վեր: Բացի

այդ, աղքատության և ՕՈՒՆ աճի տեմպի փոխառնչությունը կարող է բացատրվել նաև ՕՈՒՆ աճի տեմպի մեծացման հետևանքով ընդհանուր գների անկմամբ կամ լայն սպառման ապրանքների գների անկմամբ, ինչի արդյունքում մի խումբ անձանց եկամտի գնողունակությունը հնարավորություն է տվել նրանց բարձրանալու աղքատության գծից վեր:

Աղյուսակ 2.2.19.

ՕՈՒՆ և գործազրկության աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 յազ</i>	<i>2 յազ</i>	<i>3 յազ</i>	<i>4 յազ</i>	<i>5 յազ</i>	<i>6 յազ</i>	<i>7 յազ</i>	<i>8 յազ</i>
Գործազրկության աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ՕՈՒՆ աճի փոփոխության համար	-	Մերժվում է	-	-	-	-	-	-
ՕՈՒՆ աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում գործազրկության աճի փոփոխության համար	Մերժվում է	-	-	-	-	-	-	-

ՕՈՒՆ աճի տեմպի արագացումը նպաստում է հաջորդ եռամսյակում գործազրկության նվազման տեմպի արագացմանը, իսկ գործազրկության նվազման տեմպի արագացումը նպաստում է ՕՈՒՆ աճի տեմպի արագացմանը 2 եռամսյակ անց: Մա ըստ էության կարող է պայմանավորված լինել նոր ընդունված աշխատակիցների վերապատրաստման ծախսերի նպատակով նոր ներդրումների իրականացմամբ:

Արտահանման և ներմուծման աճի տեմպերը ևս փոխազդում են միմյանց վրա 1-2 եռամսյակ անց:

Ինչպես նկատում ենք, դիտարկվող ցուցանիշների աճի տեմպերի փոխառնչությունների ստուգման պարագայում մենք արձանագրում ենք նույն պատկերը, պարզապես փոխվում են ազդեցության ժամանակահատվածները, իսկ ազդեցության մեխանիզմը մնում է նույնը:

Արտահանման և ներմուծման աճի տեմպերի միջև Գրեյնջեր-պատճառականության կապի բացահայտումը

<i>Վարկած</i>	<i>1 լագ</i>	<i>2 լագ</i>	<i>3 լագ</i>	<i>4 լագ</i>	<i>5 լագ</i>	<i>6 լագ</i>	<i>7 լագ</i>	<i>8 լագ</i>
Արտահանման աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում ներմուծման աճի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-	-	-
Ներմուծման աճի փոփոխությունը Գրեյնջեր պատճառ չի հանդիսանում արտահանման աճի փոփոխության համար	Մերժվում է	Մերժվում է	-	-	-	-	-	-

Միակ տարբերությունը, որ կարող ենք նշել, այն է, որ արտահանման աճը դիտարկվող որևէ ժամանակահատվածում չէր նպաստում ներմուծման աճին, իսկ արտահանման աճի տեմպի մեծացումը նպաստում է ներմուծման աճի տեմպի մեծացմանը: Սա թերևս կարող է պայմանավորված լինել լրացուցիչ արտարժույթի ներհոսքով, որը տնտեսվարողներն օգտագործում են ներմուծվող հումքի ավելի մեծ քանակություն ձեռք բերելու նպատակով:

Այսպիսով, ի լրումն տնտեսագիտական գրականության մեջ առկա բազմաթիվ վերլուծությունների, ՀՀ տվյալների հիման վրա մենք բացահայտեցինք ՕՈՒՆ ազդեցության հնարավոր մեխանիզմները ՀՀ տնտեսության զարգացումն արձանագրող մի շարք ցուցանիշների վրա: Եվ այժմ առավել, քան երբևէ կարող ենք փաստել, որ ՕՈՒՆ ներհոսքը շատ կարևոր դերակատարություն կարող է ունենալ ՀՀ տնտեսության հետագա զարգացման հարցում, և սա պետք է ազդակ հանդիսանա ՀՀ կառավարության համար լրջագույն միջոցառումներ իրականացնելու ՕՈՒՆ ներհոսքի տարերային և պատահական բնույթը փոխելու և այն կայուն ու կանխատեսելի դարձնելու համար:

2.3. Տնտեսության վրա ՕՈԻՆ ազդեցության քանակական գնահատումը ՀՀ-ում և աշխարհում

Աշխատանքի նախորդ շարադրանքում մենք բացահայտեցինք ՀՀ-ում ՕՈԻՆ պատճառահետևանքային կապը այլ գործոնների հետ: Այդուհանդերձ, առավել խոր վերլուծության համար անհրաժեշտ է գնահատել նաև ՕՈԻՆ ազդեցության չափը այս կամ այն գործոնի վրա: Վերլուծությունը կկատարենք ինչպես Հայաստանի, այնպես էլ աշխարհի համար, այդ թվում՝ տարանջատելով բարձր և միջին եկամտով երկրներում ազդեցության չափը: Ցածր եկամտով երկրների տվյալների սղության պատճառով դիտարկումների ընդհանուր քանակը չի բավարարում անհրաժեշտ նվազագույնին, ուստի այս երկրների խումբը դուրս կմնա մեր հետազոտությունից:

ՕՈԻՆ ազդեցության չափը ՀՆԱ-ի, արտահանման, ներմուծման, աղքատության և գործազրկության վրա գնահատելու համար կօգտագործենք համապատասխան ցուցանիշների տվյալները 1970-2019 թթ.՝ շուկայական գներով (գործազրկության և աղքատության ցուցանիշը արտահայտված է տոկոսով), իսկ ՀՀ-ի պարագայում՝ 1992-2019 թթ. տարեկան տվյալները: Այդուհանդերձ, հարկ է նշել, որ մի շարք տվյալների բացակայության արդյունքում դիտարկումների քանակը կտարբերվի՝ կախված երկրների խմբից: Վերլուծությունն իրականացվել է 2020 թ. հունիսի 13-ի դրությամբ հավաքագրված տվյալների արդյունքում: Տվյալների բազան ՀՀ-ի համար Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից ներկայացվող վիճակագրական տվյալներն են, իսկ մյուս երկրների համար՝ Համաշխարհային բանկի էլեկտրոնային տվյալների շտեմարանը:

Նախ և առաջ պարզենք ՕՈԻՆ և այլ ցուցանիշների միջև առկա կորելացիոն կապը Հայաստանում և աշխարհում (աղյուսակ 2.3.1)

Աղյուսակ 2.3.1.

ՕՌԻՆ և այլ ցուցանիշների միջև կորելացիայի գործակիցների գնահատում

	Կորելացիայի գործակիցը աշխարհում	Կորելացիայի գործակիցը բարձր եկամտով երկրներում	Կորելացիայի գործակիցը միջին եկամտով երկրներում	Կորելացիայի գործակիցը Հայաստանում
ՕՌԻՆ-ի և ՀՆԱ-ի	0.45	0.77	0.58	0.38
ՕՌԻՆ-ի և արտահանման	0.50	0.54	0.72	0.49
ՕՌԻՆ-ի և ներմուծման	0.49	0.78	0.71	0.36
ՕՌԻՆ-ի և գործազրկության	-0.60	-0.50	-0.62	-0.49
ՕՌԻՆ-ի և աղքատության	-0.26	-0.35	-0.12	-0.08

Այսպիսով, ստացվում է, որ ՕՌԻՆ-ը բարձր աստիճանի կորելացված է ինչպես աշխարհի, այնպես էլ բարձր և միջին եկամտով երկրների համար գրեթե բոլոր դիտարկվող ցուցանիշների հետ, բացառությամբ աղքատության: Սակայն Հայաստանում այն բարձր կորելացվածություն ունի միայն արտահանման և գործազրկության ցուցանիշների հետ՝ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը ներկայումս համարվում է միջին եկամտով երկիր: ՕՌԻՆ կորելացիայի աստիճանը ՀՆԱ-ի հետ ամենաբարձրը բարձր եկամտով երկրներում է: Մա, թերևս, հետևանք է այն բանի, որ բարձր եկամտով երկրներում ՕՌԻՆ յուրաքանչյուր միավորի ավելացումը նպաստում է ՀՆԱ-ի ավելի մեծ չափով ավելացման, քան այլ երկրներում՝ շնորհիվ նորագույն տեխնոլոգիաների առկայության: ՕՌԻՆ և արտահանման կորելացիայի գործակիցն ամենաբարձրն է միջին եկամտով երկրների համար, քանի որ այս երկրներում օտարերկրյա ներդրումները հիմնականում իրականացվում են արտահանելի ոլորտներում: ՕՌԻՆ և ներմուծման միջև կորելացիոն կապը հատկապես ուժեղ է բարձր եկամտով երկրներում, քանի որ դրանցում օտարերկրյա ներդրումներ կա-

տարվում են տվյալ երկրի տեխնոլոգիաներին հասանելիություն ստանալու և շուկայի գրավման համար, իսկ արտադրության նպատակով օգտագործվում է ոչ թե տեղական թանկ, այլ զարգացող երկրներից ներմուծված համեմատաբար էժան հումքը¹⁰¹: Գործազրկության և ՕՈՒՆ կորեկացիայի բացասական գործակիցն ամենաբարձրը միջին եկամտով երկրներում է, քանի որ այստեղ արտադրության աճը նպաստում է ավելի մեծ չափով աշխատուժի ներգրավման՝ ի տարբերություն բարձր եկամտով երկրների, որտեղ արտադրության աճը ավելի մեծ չափով նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունք է: Իսկ աղքատության հետ համեմատաբար ուժեղ բացասական կապը կրկին բարձր եկամտով երկրներում է, որը, կարծում ենք, ածանցվում է ՕՈՒՆ և ՀՆԱ կապվածությունից:

Գնահատենք ՕՈՒՆ ազդեցությունը ՀՆԱ-ի վրա՝ կիրառելով փոքրագույն քառակուսիների մեթոդը (աղյուսակ 2.3.2):

Աղյուսակ 2.3.2.

ՕՈՒՆ ազդեցությունը ՀՆԱ-ի վրա բնութագրող մոդելի արդյունքները

	Աշխարհում	Բարձր եկամտով երկրներում	Միջին եկամտով երկրներում	Հայաստանում
Հաստատունի գործակից	2.92	2.62	4.18	5.16
ՕՈՒՆ-ի գործակից	2.15E-12	2.42E-12	1.35E-11	2.28E-08
R քառակուսի	0.26	0.29	0.27	0.25
Դիտարկումների քանակ	49	49	49	27

Աղյուսակում ներկայացված արդյունքները վկայում են այն մասին, որ ՀՆԱ-ի փոփոխությունը աշխարհում 26 %-ով է պայմանավորված ՕՈՒՆ փոփոխությամբ, բարձր եկամտով երկրները

¹⁰¹ Սարգսյան Լ., Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 143:

րում՝ 29 %-ով, միջին եկամտով երկրներում՝ 27 %-ով, իսկ Հայաստանում՝ 25 %-ով: Ընդ որում՝ յուրաքանչյուր 100 մլն դոլարով ՕՌԻՆ աճը նպաստում է ՀՆԱ-ի աճին համաշխարհային մակարդակով 0.000215 %-ով, Բարձր եկամտով երկրներում՝ 0.000242 %-ով, միջին եկամտով երկրներում՝ 0.00135 %-ով և Հայաստանում՝ 2.28 %-ով: Հասկանալի է, որ հաշվարկված տվյալները տվյալ երկրների խմբի համար միջինացված ցուցանիշ են: Այդուհանդերձ, պետք է նշել, որ Հայաստանում ՀՆԱ-ի աճի վրա ՕՌԻՆ փոփոխության ազդեցության չափը անհամեմատ մեծ է նույն եկամտային խմբի միջին ցուցանիշից: Սա թերևս բացատրվում է փոքր երկիր լինելու և սակավ ֆինանսական ռեսուրսների տիրապետելու հանգամանքով: ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ ՀՆԱ-ի աճին նպաստող ամենակարևոր գործոններից մեկը բնականաբար ներդրումներն էր: Եվ հաշվի առնելով ներքին ներդրումների խիստ սահմանափակ քանակը՝ պետք է փաստենք, որ օտարերկրյա ներդրումները տարիներ շարունակ հանդիսացել են ՀՀ տնտեսական աճին նպաստող կարևորագույն գործոններից մեկը: Թերևս վերլուծության տրամաբանությունը ստիպում է, որ տարեկան տվյալներով ՕՌԻՆ ազդեցության չափը գնահատելուց և համաշխարհային տվյալներին այն համադրելի դարձնելուց զատ իրականացվի նաև առավել խորքային վերլուծություն ՀՀ-ի համար: Ուստի աշխատանքի հետագա շարադրանքում ՕՌԻՆ ազդեցության չափը ՀՀ տնտեսության վրա առավել հանգամանակից դիտարկելու համար կներկայացնենք եռամսյակային տվյալների վրա հիմնված էկոնոմետրիկ վերլուծություն:

Հաջորդ ցուցանիշը, որի փոփոխության վրա ՕՌԻՆ ազդեցության չափը գնահատվել է մեր կողմից, արտահանումն է (աղյուսակ 2.3.3):

Այսպիսով, աղյուսակից երևում է, որ ՕՌԻՆ փոփոխությամբ պայմանավորված է համաշխարհային արտահանման փոփոխության 15 %-ը, բարձր եկամտով երկրների արտահանման՝ 12 %-ը, միջին եկամտով երկրների՝ 63 %-ը, իսկ ՀՀ արտահանման 32 %-ը:

Աղյուսակ 2.3.3.

**ՕՈԻՆ ազդեցությունը արտահանման վրա 1 տարի անց
բնութագրող մոդելի արդյունքները**

	Աշխարհում	Բարձր եկամտով երկրներում	Միջին եկամտով երկրներում	Հայաստանում
Հաստատունի գործակից	4.12E+11	3.15E+11	7.14E+10	1.41E+08
ՕՈԻՆ-ի գործակից	1.42	1.10	4.62	-0.95
R քառակուսի	0.15	0.12	0.63	0.32
Դիտարկումների քանակ	42	44	37	26

Ընդ որում՝ ՕՈԻՆ աճը 1 միավորով նպաստում է հաջորդ տարվա արտահանման աճին 1.42 միավորով՝ աշխարհում, 1.1 միավորով՝ բարձր եկամտով երկրներում, 4.62 միավորով՝ միջին եկամտով երկրներում: Փաստորեն ՕՈԻՆ աճը միջին եկամտով երկրներում անհամեմատ մեծ չափով է նպաստում արտահանման աճին, քան բարձր եկամտով երկրներում: Սա հիմնականում պայմանավորված է նրանով, որ միջին եկամտով երկրներում տեղական ներդրողները չեն տիրապետում արտադրական մեծ հզորությունների և, որպես կանոն, հնարավորություն չունեն բարձր տեխնոլոգիաների ներդրման: Մինչդեռ այդ երկրներում օտարերկրյա ներդրողներն իրենց հետ բերում են նոր՝ առավել զարգացած տեխնոլոգիաներ, ինչն էլ նպաստում է արտաքին շուկաներում ավելի մեծ մրցունակություն ունեցող արտադրանքի թողարկմանը և, բնականաբար, արտահանման աճին: Իսկ Հայաստանում 1 միավորով ՕՈԻՆ աճը հանգեցնում է հաջորդ տարվա արտահանման աճի տեմպի նվազմանը 0.95 միավորով: Թերևս այս ֆենոմենը առավել հստակ հնարավոր է վերլուծել եռամսյակային տվյալներով վերլուծության պարագայում: Մակայն նախնական կարելի է առաջ քաշել արտահանման տեմպի նվազման մի քանի հնարավոր վարկած.

1. ՕՈԻՆ ներհոսքն առավել մեծ է եղել ոչ արտահանելի ոլորտում,
2. ՕՈԻՆ ներհոսքը եղել է արտահանման աճի նվազող տեմպ ունեցող ոլորտներում,
3. վերոնշյալ ոլորտներում ՕՈԻՆ աճի հետևանքով արտադրության աճը ստիպել է ռեսուրսներին արտահանելի հատվածից ներհոսել դեպի սվյալ ոլորտներ:

Այդուհանդերձ, անպատասխան է մնում մեկ հարց. ի՞նչ նպատակով օտարերկրյա ներդրողը կարող էր ներդրում իրականացնել ՀՀ ոչ արտահանելի կամ արտահանման աճի նվազող տեմպ ունեցող ոլորտներում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի ներքին սպառման շուկան բավական փոքր է, կարելի է պնդել, որ միայն սվյալ ոլորտներում վարվող պետական հովանավորչական քաղաքականությունը խթան կհանդիսանա այդ ոլորտներում ՕՈԻՆ ներհոսքի համար: Ուստի այս ցուցանիշը պետք է դեղին լույս հանդիսանա ՀՀ կառավարության համար՝ հետագայում հովանավորչության ենթակա ոլորտների ընտրության պարագայում:

ՕՈԻՆ ազդեցության չափը ներմուծման վրա ներկայացված է աղյուսակ 2.3.4-ում:

Աղյուսակ 2.3.4.

ՕՈԻՆ ազդեցությունը ներմուծման վրա բնութագրող մոդելի արդյունքները

	Աշխարհում	Բարձր եկամտով երկրներում	Միջին եկամտով երկրներում	Հայաստանում
Հաստատունի գործակից	3.12E+11	2.84E+11	6.99E+10	1.62E+08
ՕՈԻՆ-ի գործակից	2.10	1.41	5.42	2.25
R քառակուսի	0.29	0.23	0.63	0.41
Դիտարկումների քանակ	36	44	37	26

Ակնհայտ է, որ ներմուծման փոփոխությունը աշխարհում պայ-

մանավորվում է ՕՈԻՆ փոփոխությամբ 29 %-ով, բարձր եկամտով երկրներում՝ 23 %-ով, միջին եկամտով երկրներում՝ 63 %-ով, իսկ Հայաստանում՝ 41 %-ով: Ինչ վերաբերում է ներմուծման վրա ՕՈԻՆ ազդեցության չափին, ապա ստացված արդյունքները վկայում են, որ 1 միավոր ՕՈԻՆ աճը նպաստում է 2,1 միավոր ներմուծման աճին աշխարհում, 1.41 միավորով՝ բարձր եկամտով, 5.42 միավորով՝ միջին եկամտով երկրներում և 2.25 միավորով՝ Հայաստանում:

Համանման եղանակով ներկայացնենք նաև ՕՈԻՆ ազդեցությունը աղքատության և գործազրկության վրա: Աղյուսակ 2.3.5-ում ներկայացված է ՕՈԻՆ ազդեցությունը գործազրկության վրա:

Աղյուսակ 2.3.5.

ՕՈԻՆ ազդեցությունը գործազրկության վրա 1 տարի անց բնութագրող մոդելի արդյունքները

	Աշխարհում	Բարձր եկամտով երկրներում	Միջին եկամտով երկրներում	Հայաստանում
Հաստատունի գործակից	0.008	0.06	0.02	0.15
ՕՈԻՆ-ի գործակից	-2.90E-13	-7.66E-13	-1.33E-12	-1.07E-08 (p=0.64)
R քառակուսի	0.52	0.42	0.23	0.07
Դիտարկումների քանակ	28	27	27	27

Աղյուսակի վերլուծությունից պարզ է դառնում, որ աշխարհում գործազրկության փոփոխությունը 52 %-ով բացատրվում է նախորդ տարվա ՕՈԻՆ փոփոխությամբ, բարձր եկամտով երկրներում այս ցուցանիշը 42 % է, միջին եկամտով երկրներում՝ 23 %, Հայաստանում՝ 7 %: Թերևս նման փաստերի պարագայում կարելի է ենթադրել, որ գործազրկության փոփոխությունը ՕՈԻՆ փոփոխությամբ ամենաշատը բացատրվում է ցածր եկամտով երկրներում, որոնք ներառված չեն տվյալ վերլուծության մեջ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա նման փոքր ցուցանիշը կարելի է բացատրել ներդրումների անկայունությամբ: Ինչ վերաբերում է

ազդեցության չափին, ապա 100 մլրդ դոլարով ՕՈՒՆ աճի փոփոխությունը հանգեցնում է գործազրկության կրճատման աշխարհում՝ 0,029, բարձր եկամտով երկրներում՝ 0,076, միջին եկամտով երկրներում՝ 0,13 տոկոսային կետով: Հայաստանի տվյալը թեպետ այուսակում ներկայացված է, այնուամենայնիվ ստացված գործակցի հավանականությունը 0,05-ից մեծ է, ինչ վկայում է, որ ստացված արդյունքն արժանահավատ չէ: Այս հանգամանքը կարող էր պայմանավորվել բազմաթիվ գործոններով, սակայն, կարծում ենք, ամենամեծ ազդեցությունն ունեցել է ՀՀ-ում գործազրկության հաշվարկման մեթոդաբանության փոփոխությունը՝ սկսած 2008 թվականից, ինչի արդյունքում էլ մինչև 2008 թ. և դրանից հետո ներկայացված տվյալները համադրելի չեն եղել, իսկ 2008-2019 թթ. տարեկան տվյալները քիչ են վիճակագրորեն նշանակալի արդյունք ստանալու համար: Այդ պատճառով գործազրկության ու ՕՈՒՆ-ի կախվածությունը ՀՀ-ի համար աշխատանքի հետագա շարադրանքում կներկայացնենք եռամսյակային տվյալների վերլուծությամբ:

Աղքատության տարեկան համադրելի տվյալները բավական քիչ էին Համաշխարհային բանկի տվյալների շտեմարանում: Այդ պատճառով էլ աղքատության կախվածությունը ՕՈՒՆ-ից երկրների որևէ խմբի համար նշանակալի արդյունք ցույց չտվեց, ուստի այն կփորձենք վերլուծել միայն ՀՀ-ի համար՝ եռամսյակային տվյալների հիման վրա:

Այսպիսով, մենք վերլուծեցինք ՕՈՒՆ ազդեցությունը մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների վրա տարբերի երկրների խմբի և Հայաստանի համար՝ նշելով ընդհանուր միտումից ՀՀ արձանագրած ցուցանիշների տարբերության հնարավոր պատճառները:

Առավել խորքային վերլուծության համար գնահատենք նաև ՕՈՒՆ ազդեցությունը ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների վրա՝ վերլուծության համար հիմք ընդունելով եռամսյակային տվյալները:

Նախ և առաջ գնահատենք ՕՈՒՆ ազդեցությունը ՀՆԱ-ի վրա: Փոքրագույն քառակուսիների մեթոդով գնահատված և ՕՈՒՆ ազդեցությունը ՀՆԱ-ի վրա ցույց տվող լավագույն հավասարումը ներ-

կայացված է ստորև: Դիտարկումների քանակը 82 է, ճշգրտված R-քառակուսին՝ 0,36, հետևաբար դիտարկվող փոփոխականները բացատրում են ՀՆԱ-ի փոփոխությունը միայն 36 տոկոսով:

$$\text{ՀՆԱ} = 18686.73 + 2.4 \cdot \text{ՕՈՒՆ} + 5.3 \cdot \text{ՕՈՒՆ}(-3) + 4.6 \cdot \text{ՕՈՒՆ}(-4)$$

Այսպիսով, ունենք հետևյալ պատկերը. ՕՈՒՆ աճը 1 միավորով նպաստում է ՀՆԱ աճին 2,4 միավորով նույն ժամանակահատվածում, 5,3 միավորով՝ 3 եռամսյակ անց և 4,6 միավորով՝ 4 եռամսյակ անց:

Բազմիցս քննարկվել է, որ ՕՈՒՆ ներհոսքի վրա ազդում է արժույթային փոխարժեքի փոփոխությունը: Հայաստանի տվյալների հիման վրա մենք բացահայտել ենք հետևյալ փոխառնչությունը.

$$\text{ՕՈՒՆ} = 121028.7 - 682,1 \cdot \text{Փոխարժեք}(-1) + 936,2 \cdot \text{Փոխարժեք}(-2)$$

Ստացվում է, որ արժույթի արժեզրկումը 1 միավորով հաջորդ եռամսյակում նպաստում է ՕՈՒՆ ներհոսքի նվազմանը համապատասխանաբար 682,1, իսկ 2 եռամսյակ անց այն նպաստում է ՕՈՒՆ ներհոսքի աճին 936,2 միավորով: Տվյալ պարագայում դիտարկումների քանակը 72-ն է, իսկ ճշգրտված R-քառակուսին՝ 0,32, հետևաբար՝ դիտարկվող փոփոխականները բացատրում են ՕՈՒՆ-ի փոփոխությունը միայն 32 տոկոսով:

Ինչպես արդեն ցույց տվեցինք նախորդ ենթազվխում, ՕՈՒՆ ներհոսքն էլ իր հերթին ազդում է փոխարժեքի փոփոխության վրա: ՀՀ եռամսյակային տվյալների հիման վրա կառուցված էկոնոմետրիկ մոդելը վկայում է այն մասին, որ ՕՈՒՆ աճը 1000 միավորով նպաստում է արժույթի արժևորմանը դրան հաջորդող 2-4 եռամսյակների ընթացքում յուրաքանչյուր եռամսյակում 1-ական միավորով:

$$\text{Փոխարժեք} = 572.5 - 0.001 \cdot \text{ՕՈՒՆ}(-2) - 0.001 \cdot \text{ՕՈՒՆ}(-3) - 0.001 \cdot \text{ՕՈՒՆ}(-4)$$

Տվյալ պարագայում դիտարկումների քանակը 76-ն է, իսկ ճշգրտված R-քառակուսին՝ 0,59, հետևաբար դիտարկվող փոփոխականները բացատրում են փոխարժեքի փոփոխությունը միայն 59 տոկոսով:

Փոխարժեքի փոփոխության վրա ազդում է նաև արտաքին առևտուրը: Ներմուծման ազդեցությունը փոխարժեքի վրա բնութագրող

մողելները վիճակագրորեն նշանակալի չեն, այդ պատճառով դրանք չենք ներկայացնի տվյալ վերլուծության շրջանակներում: Արտահանման ազդեցությունը փոխարժեքի վրա զգալի չէր և ընդամենը 1 տոկոսով է բացատրում փոխարժեքի փոփոխությունը: Այդուհանդերձ, արտահանման ազդեցությունը փոխարժեքի փոփոխության վրա ներկայացված է ստորև.

$$\text{Փոխարժեք} = 501.1 - 0.0001 * \text{Արտահանում}$$

Բանաձևը փաստում է, որ արտահանման աճը 10000 միավորով հանգեցնում է արժույթի արժևորման 1 միավորով:

Իսկ ինչպե՞ս է ազդում արտահանման վրա ՕՈՒՆ ներհոսքը: 87 դիտարկման պարազայում R-քառակուսու արժեքը 0,06 է, հետևաբար դիտարկվող փոփոխականը բացատրում է արտահանման փոփոխությունը միայն 6 տոկոսով.

$$\text{Արտահանում} = 309631.2 + 2.3 * \text{ՕՈՒՆ}$$

Էկոնոմետրիկ մողելի արդյունքը վկայում է այն մասին, որ ՕՈՒՆ աճը 1 միավորով նպաստում է նույն ժամանակահատվածում արտահանման աճին 2,3 միավորով:

Արտահանման աճն էլ իր հերթին 3 եռամսյակ անց նպաստում է ՀՆԱ-ի աճին 2,2 միավորով՝

$$\text{ՀՆԱ} = 171509.2 + 2,2 * \text{Արտահանում}(-3)$$

Քննարկվող մողելում դիտարկումների քանակը 84 է, իսկ R-քառակուսու արժեքը 0,75 է, հետևաբար դիտարկվող փոփոխականը բացատրում է ՀՆԱ-ի փոփոխությունը 75 տոկոսով:

Այսպիսով, ստացվում է, որ ՕՈՒՆ ներհոսքը ՀՀ-ում ոչ միայն ուղղակիորեն է նպաստում ՀՆԱ-ի աճին, այլև նպաստում է արտահանման աճին, որն էլ 3 եռամսյակ անց կրկին նպաստում է ՀՆԱ-ի աճին: Այսպիսով, հստակ կարող ենք նշել, որ ՕՈՒՆ ներհոսքը ՀՀ-ում ՀՆԱ-ի աճի վրա ունի ուղղակի և միջնորդավորված ազդեցություն:

Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա բազմիցս ենք փաստել, որ եթե ՕՈՒՆ ներհոսքը տեղի է ունենում ներմուծող ոլորտներում կամ այն ոլորտներում, որոնք օգտագործում են ներմուծված հումք, ապա դա հանգեցնում է ներմուծման աճին, իսկ եթե տեղի է ունենում ներմուծմանը փոխարինող ոլորտներում, ապա

նպաստում է ներմուծման կրճատմանը: Հայաստանի պարագայում վերլուծությունը ցույց է տալիս, որ ՕՈՒՆ ներհոսքը հիմնականում տեղի է ունենում արտահանող ոլորտներում, որոնք օգտագործում են ներմուծված հումք և սարքավորումներ: Էկոնոմետրիկ մեթոդով գնահատման արդյունքում ստացվում է, որ ՕՈՒՆ ներհոսքի աճը 1 միավորով նպաստում է նույն ժամանակահատվածում ներմուծման աճին 0,7 միավորով և 3 եռամսյակ անց՝ 0,6 միավորով:

$$\text{Ներմուծում} = 8090.1 + 0,7 * \text{ՕՈՒՆ} + 0,6 * \text{ՕՈՒՆ}(-3)$$

Տվյալ դեպքում դիտարկումների քանակը 86 է, իսկ ճշգրտված R-քառակուսու արժեքը 0,19 է, հետևաբար դիտարկվող փոփոխականները բացատրում են ներմուծման փոփոխությունը միայն 19 տոկոսով:

Հիմնական մակրոտնտեսական նույնությունը վկայում է այն մասին, որ ներմուծման աճը բացասաբար է ազդում ՀՆԱ-ի վրա: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հիմնական մակրոտնտեսական նույնությունը վերաբերում է միայն նույն ժամանակահատվածի ներմուծման և ՀՆԱ-ի փոխառնչությանը: Մինչդեռ տնտեսագիտական գրականությունում բազմաթիվ են վերլուծություններն առ այն, որ հումքի և սարքավորումների ներմուծումը որոշակի ժամանակ անց կարող է հանգեցնել ՀՆԱ-ի աճին: Մասնավորապես՝ Հայաստանի եռամսյակային տվյալների հիման վրա կատարված 84 դիտարկումից բաղկացած վերլուծությունը վկայում է այն մասին, որ ներմուծումը ՀՀ ՀՆԱ-ի վրա ազդում է ինչպես դրական, այնպես էլ բացասական: Մասնավորապես՝ ներմուծման աճը 1 միավորով հանգեցնում է ՀՆԱ-ի նվազման 4,2 միավորով՝ 2 եռամսյակ անց, իսկ 1 և 3 եռամսյակ անց այն նպաստում է ՀՆԱ-ի աճին համապատասխանաբար 4,1 և 2,6 միավորով:

$$\text{ՀՆԱ} = 234222.9 + 4,1 * \text{Ներմուծում}(-1) - 4,2 * \text{Ներմուծում}(-2) + 2,6 * \text{Ներմուծում}(-3)$$

Այսպիսով, նախ և առաջ կարող ենք փաստել, որ 3 եռամսյակների գումարային մեծությամբ ՀՆԱ-ն աճում է ներմուծման աճի արդյունքում: Եվ բացի այդ, առաջ է գալիս ՀՆԱ-ի վրա ՕՈՒՆ միջնորդավորված ազդեցության ևս մեկ դրսևորում. ՕՈՒՆ աճը

նպաստում է ներմուծման աճին, որն էլ իր հերթին վերջնական արդյունքում հանգեցնում է ՀՆԱ-ի աճին:

ՕՈՒՆ ներհոսքի ազդեցությունը աղքատության կրճատման վրա ՀՀ եռամսյակային տվյալներով ևս հնարավոր չեղավ գնահատել, քանի որ ստացված էկոնոմետրիկ մոդելներից ոչ մեկը վիճակագրորեն նշանակալի չէր: Այդուհանդերձ, մենք կարողացանք գնահատել ՕՈՒՆ ներհոսքի ազդեցությունը գործազրկության մակարդակի վրա՝ հիմնվելով 51 դիտարկումից բաղկացած ՀՀ եռամսյակային տվյալների վրա: Տվյալ դեպքում R-քառակուսու արժեքը 0,18 է, հետևաբար դիտարկվող փոփոխականները բացատրում են ներմուծման փոփոխությունը միայն 18 տոկոսով:

$$\text{Գործազրկություն} = 0.14 - 0.00002 * \text{ՕՈՒՆ} (-4)$$

Ստացվում է, որ ՕՈՒՆ աճը 10000 միավորով 4 եռամսյակ անց նպաստում է գործազրկության կրճատման 0,2 տոկոսային կետով:

Այսպիսով, էկոնոմետրիկ մոդելով գնահատման արդյունքում մենք ցույց տվեցինք ՕՈՒՆ ազդեցությունը ՀՆԱ-ի, արտահանման, ներմուծման, փոխարժեքի և գործազրկության վրա ինչպես աշխարհում՝ ընդհանրապես, այնպես էլ բարձր ու միջին եկամտով երկրներում՝ մասնավորապես:

Վերլուծության արդյունքը ցույց տվեց, որ ՀՀ տնտեսության վրա ՕՈՒՆ ազդեցությունը բավական մեծ է: Հատկապես ՀՆԱ-ի աճի տեսանկյունից ՕՈՒՆ ներհոսքն ունի ինչպես ուղղակի, այնպես էլ բազմապարֆիլ միջնորդավորված ազդեցություն, և դիտարկվող ժամանակահատվածում ՀՆԱ-ն աճում է ոչ միայն ՕՈՒՆ ներհոսքի գնահատված գործակցի չափով, այլև բազմարկչի էֆեկտով այն մեծանում է՝ շնորհիվ արտահանման և հումքի ու սարքավորումների ներմուծման:

Հաշվարկված ցուցանիշները շատ կարևոր են և կարող են ուղենիշային լինել ՀՀ կառավարության համար՝ ՕՈՒՆ ներգրավման ռազմավարություն մշակելիս:


ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Տեղական և օտարերկրյա ներդրողների հիմնախնդիրները ՀՀ-ում

Տնտեսագետների կողմից բազմիցս է բարձրաձայնվում, որ խիստ սահմանափակ ներքին ֆինանսական կարողություններ ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, ներդրումները և հատկապես օտարերկրյա ներդրումները կարող են հանդիսանալ տնտեսական աճի հիմնական հենասյուներից մեկը: Հասկանալի է, իհարկե, որ օտարերկրյա ներդրողների որոշումները կայացվում են հաշվի առնելով ոչ միայն տնտեսական գործոնները: Մասնավորապես՝ Հայաստանի պարագայում օտարերկրյա ներդրողների որոշումների վրա ազդում են այնպիսի էական հանգամանքներ, ինչպիսիք են քաղաքական և օրենսդրական դաշտերի փոփոխությունները, ինչպես նաև մշտապես առկախված պատերազմի վտանգը: Այսուհանդերձ, մասնագետները միակարծիք են, որ անգամ նման իրավիճակում հնարավոր է արդյունավետորեն ներգրավել օտարերկրյա ներդրումներ՝ համապատասխան քաղաքականության իրականացման և ներդրումային միջավայրի բարելավման շնորհիվ: ՀՀ ներդրումային դաշտի լավարկմանն ուղղված գործնականում կիրառելի առաջարկներ հնարավոր է մշակել միայն այն պարագայում, եթե խորությամբ վերլուծվեն ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնները, հստակ նշվեն վարվող տնտեսական քաղաքականության թերություններն այս առումով: Թերևս մենք արդեն իսկ նշել ենք ներդրումային միջավայրի վրա ազդող գործոնների, ինչպես նաև օրենսդրաիրավական վերլուծության տեսանկյունից ՀՀ արձանագրած հաջողություններն ու թերացումները: Դրանով հանդերձ վստահաբար կարելի է ասել, որ այդ վերլուծությունը հիմնականում բնորոշում է ներդրումային միջավայրը մակրոտնտեսական հարթությունում: Մակայն դա բավարար չէ, քանի որ դեռևս չեն վերլուծվել

միկրոտնտեսական բնույթի խնդիրները, որոնց բախվում են գործարարներն իրենց առօրյա գործունեության ժամանակ:

Այդ նպատակով 2017-2020 թթ. ընթացքում մենք իրականացրել ենք անանուն սոցիոլոգիական հարցում 1832 կազմակերպության շրջանում, որոնցից 521-ը՝ օտարերկրյա կապիտալով: Հարցմանը մասնակցած ռեսպոնդենտների քանակը հնարավորություն է տալիս ապահովել 99 % վստահելիության մակարդակ և առավելագույնը 3 % սխալի հավանականություն: Հարցումն իրականացվել է երեք հիմնական եղանակով՝ linkedin սոցիալական կայքի միջոցով, հեռախոսազրույցի և գործարարների հետ իրենց կազմակերպություններում, ինչպես նաև արտադրական ցուցահանդեսների ընթացքում դեմ առ դեմ հանդիպումների ժամանակ:




Գծապատկեր 3.1.1. Անանուն սոցիոլոգիական հարցմանը մասնակցած կազմակերպությունները բաշխումն՝ ըստ ոլորտների

Այս համատեքստում համագործակցել ենք նաև ՀՀ-ում գործող տարբեր պետական և միջազգային կազմակերպությունների հետ՝ ՀՀ ԱԱՊ, Արդյունաբերողների և գործարարների միություն, Գործարարության աջակցման գրասենյակ՝ հարցվողների քանակը հնարավորինս ընդգրկուն դարձնելու և իրենց տրամադրության տակ եղած կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ևս հարցում իրականացնելու նպատակով:


Գծապատկեր 3.1.1-ում ներկայացված է հարցմանը մասնակցած կազմակերպությունների ոլորտային բաշխումը:

Հարցմանը մասնակցած կազմակերպությունների 22 %-ը հիմնադրվել է թավշյա հեղափոխությունից հետո, իսկ 33 %-ը գործում է 10 տարուց ավելի (գծապատկեր 3.1.2):




Գծապատկեր 3.1.2. Հարցմանը մասնակցած կազմակերպության գործունեության տևողությունը ՀՀ-ում

Գծապատկեր 3.1.3-ում ներկայացված են կազմակերպություններն՝ ըստ մեծության:



Գծապատկեր 3.1.3. Հարցմանը մասնակցած կազմակերպությունների չափը

Գծապատկեր 3.1.4-ում ներկայացված են այն խոչընդոտները, որոնց կազմակերպությունները հանդիպել են գրանցման գործընթացն իրականացնելիս:




Գծապատկեր 3.1.4. Կազմակերպության գրանցման ընթացքում հանդիպող խոչընդոտները

Այս տեսանկյունից, թերևս, առավել մտահոգիչ են պատկան մարմինների դանդաղ աշխատանքը և ոչ օրինական ճնշումները մրցակիցների կողմից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018 թ. տեղի ունեցած թավշյա հեղափոխությունը կարող էր զգալի ազդեցություն ունենալ ներդրողների կողմից բարձրաձայնվող խնդիրների վրա, մենք նպատակահարմար ենք համարում ներկայացնել ներդրողների կողմից բարձրաձայնված խնդիրները հետևյալ ժամանակահատ-

վածների համար՝ մինչև 2018 թ. և 2018-2020 թթ.: Նշենք, որ առաջին ակնհայտ տարբերությունը, որ նշվել է կազմակերպությունների հարցման ժամանակ մինչև 2018 թ. և դրանից հետո, այն է, որ մինչև 2018 թ. շատ էր բարձրաձայնվում պետական մարմիններում կոռուպցիայի առկայության մասին, որը զգալիորեն խոչընդոտում էր կազմակերպությունների զարգացմանը: 2018 թվականից սկսած էականորեն նվազել է այս խնդիրը բարձրաձայնողների քանակը:


Վերոնշյալ մեթոդաբանությամբ գծապատկեր 3.1.5.-ում ներկայացված են աշխատուժի հետ կապված խոչընդոտները:



Գծապատկեր 3.1.5. Հարցմանը մասնակցած կազմակերպությունների արձանագրած խոչընդոտները աշխատուժի ներգրավման տեսանկյունից, %

Այս տեսանկյունից հատկանշական է այն հանգամանքը, որ մինչև 2018 թ. աշխատողների արտագաղթը որպես խնդիր նշել է հարցվողների 25,6, իսկ 2018-2020 թթ.՝ 13,6 տոկոսը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018-2020 թթ. հարցմանը մասնակցել է 1445, իսկ մինչ այդ՝ 387 կազմակերպություն, կարող ենք փաստել, որ 2018 թվականից սկսած՝ անհամեմատ կրճատվել է աշխատող բնակչության արտագաղթը:


Կապիտալի ներգրավմանն առնչվող խնդիրները ևս զգալիորեն փոփոխվել են մինչև 2018 թ. և դրանից հետո (գծապատկեր 3.1.6):



Գծապատկեր 3.1.6. Կապիտալի ներգրավմանն առնչվող խնդիրները, %


Մասնավորապես՝ ավելի մեծ թվով տնտեսվարող սուբյեկտներ են բախվել վարկավորման համար գրավադրվող գույքի անհամապատասխանությանն իրենց տնօրինածի համեմատ: Մրա հիմնական պատճառներից է այն, որ 2018 թվականից սկսած մեծացել է մարզերում տեղի բնակիչների կողմից միջին չափի ձեռնարկություններ հիմնելու ձգտումը, մինչդեռ նրանց տնօրինած գույքը բավարար չի եղել ակնկալվող չափի վարկ ստանալու համար: Բնականաբար այստեղ խոսքը վերաբերում է ոչ միայն նոր ձեռնարկությունների հիմնադրմանը, այլև նախկինում հիմնած փոքր կամ գերփոքր ձեռնարկության զարգացմանը՝ այն հասցնելու միջին ձեռնարկության չափի: Հակառակ այս հանգամանքին՝ 2018 թվականից սկսած նվազել է վարկի բարձր տոկոսադրույթից դժգոհող տնտեսվարող սուբյեկտների տեսակարար կշիռը, ինչպես նաև նվազել են նոր ներդրողների ներգրավման դժվարությունները:

Հարկային վարչարարության և հարկային օրենսդրության հետ կապված խնդիրները ներկայացված են գծապատկեր 3.1.7-ում:



Գծապատկեր 3.1.7. Հարկային վարչարարությանը և հարկային օրենսդրությանն առնչվող խնդիրները, %

Այս տեսանկյունից հատկանշական է, որ էականորեն նվազել է հարկային մարմինների կողմից ոչ օրինական ճնշումների խնդիրը, թեպետ այն դեռևս առկա է և բարձրաձայնվել է 2018-2020 թթ. հարցմանը մասնակցած ռեսպոնդենտների 9,8 %-ի կողմից: Նվազել են նաև բարձր հարկադրույքների և հարկադրույքների փոփոխությունից առաջացող անորոշություններին առնչվող դժգոհությունները:



Գծապատկեր 3.1.8. Մրցակիցներին առնչվող խնդիրները

Ինչ վերաբերում է մրցակիցներին առնչվող խնդիրներին, ապա այստեղ 2018 թվականից ակնհայտորեն նվազել է մաքսային մարմինների կողմից այս կամ այն կազմակերպության նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումը, որոշակիորեն նվազել է նաև մրցակիցների կողմից գերիշխող դիրքի չարաշահումը (զճապատկեր 3.1.8):

Այսպիսով, սրանք այն հիմնական խնդիրներն են, որոնք արձանագրվել են անանուն սոցիոլոգիական հարցմանը պատասխանող կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: Այդուհանդերձ, նրանք բարձրաձայնել են նաև այնպիսի խնդիրներ, որոնց լուծումը խիստ էական է նրանց հետագա զարգացման համար: Ի թիվս բարձրաձայնված բազմաթիվ հիմնախնդիրների՝ մեր կողմից հատկապես առանձնացվել են մի քանիսը, որոնց լուծման ուղիներն էլ կմշակենք հետագա ենթազուխներում:

Նախ և առաջ, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ կազմակերպություններին մտահոգում է մակրոտնտեսական առումով տիրող անորոշությունը: Յուրաքանչյուր կառավարություն, իշխանության գալով, փոխում է տնտեսության զարգացման տեսլականը: Ավելին, այն փոխվում է ոչ միայն կառավարության փոփոխությանը համընթաց, այլև նույնիսկ նախարարի մակարդակով փոփոխության պարագայում: Ուստի գործարարը գտնվում է անորոշության միջավայրում և չի կարողանում կանխատեսել մակրոտնտեսական միջավայրում ակնկալվող փոփոխությունը, որը նրան հնարավորություն կտա ընտրելու ձեռնարկության զարգացման ճիշտ ռազմավարություն և դրան հասնելու արդյունավետ մարտավարություն:

Հարցվողների մի մասը սեփական նախաձեռնությամբ բացահայտել է իր կազմակերպության անունը, որպեսզի հստակ հասկանալի լինի, թե որ ոլորտի և որ շրջանի կազմակերպություններն են առնչվում այս խնդրին: Մենք կազմակերպության անանունության սկզբունքը չենք խախտի, սակայն կներկայացնենք նրանց խնդիրը հանգամանորեն: Մասնավորապես՝ քաղցրավենիքի

արտադրությամբ զբաղվող մի ընկերություն, որ ներկայումս գործում է միայն Երևան քաղաքում, ունի հստակ հաշվարկած բիզնես պլան, որը նրան թույլ կտա համապատասխան ֆինանսավորման պարագայում գործարաններ բացել նաև մարզերում՝ յուրաքանչյուր գործարանում 100 աշխատակցի համար աշխատատեղի ապահովմամբ: Նմանատիպ խնդրի առջև է կանգնած պահածոների արտադրությամբ զբաղվող մի ընկերություն: Բանն այն է, որ մինչև ֆինանսատնտեսական ճգնաժամը ունենալով պահածոների գործարան՝ գործարարը աշխատանքով էր ապահովել 350 աշխատակցի: Հետագայում արտահանման ընդլայնման նպատակով կազմակերպության գույքի գրավով վարկ վերցնելով Առեքսիմբանկից՝ ընդլայնել է արտահանումը դեպի ՌԴ: Սակայն ռուսական կողմը ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով չի վճարել կազմակերպության կողմից արտահանված բավական մեծ խմբաքանակի դիմաց, որն էլ աստիճանաբար հանգեցրել է կազմակերպության կողմից վարկի մարման դժվարությունների: Արդյունքում Առեքսիմբանկին է անցել կազմակերպության գույքը, իսկ Առեքսիմբանկի գործունեության դադարումից հետո այն փոխանցվել է իրավահաջորդին՝ Գազպրոմին: Այսօր կազմակերպության ողջ գույքը գտնվում է օտարերկրյա տնտեսվարող սուբյեկտի՝ Գազպրոմի տնօրինության ներքո, որը, ի դեպ, պատրաստ է հետ վաճառելու այն՝ համապատասխան ֆինանսավորման պարագայում: Այս դեպքում ևս գործարարը ունի համապատասխան բիզնես պլան կազմակերպության գույքը հետ ստանալու և գործարանը նոր թափով շահագործելու համար, սակայն չունի համապատասխան գույք՝ անհրաժեշտ չափով վարկավորում ստանալու համար:

Բելառուսական գյուղտեխնիկա արտադրող կազմակերպության Հայաստանյան ներկայացուցիչը մատնանշում է շինարարական թույլտվության ձգձգման գործընթացը՝ որպես իր գործունեության անմիջական խոչընդոտ: Մասնավորապես՝ կազմակերպությունը ձեռք է բերել համապատասխան չափի հողատա-

րածք՝ գյուղտեխնիկա արտադրող մի քանի գործարան, պաշտոնական ներկայացուցչություն, ուսումնական կենտրոն և մասնագիտացված պաշտոնական սպասարկման կենտրոն կառուցելու համար: Շինթույլտվության գործընթացը, ըստ գործարարի, ձգձգվում է գրեթե 1 տարի, ինչի օբյեկտիվությունը, բնականաբար, բավական դժվար է բացատրել բելառուսական կողմին:

Սրանք թերևս միջին և խոշոր ձեռնարկությունների մի քանի օրինակներ էին, որոնց զարգացումը հատկապես ՀՀ մարզերում կնպաստեր տվյալ մարզի բնակչության բարեկեցության էական բարձրացմանը:

Այդուհանդերձ, մենք փորձել ենք տարանջատել գործարարների կողմից բարձրաձայնված խնդիրները նաև ըստ ոլորտների և ըստ ձեռնարկության չափի:

Մասնավորապես՝ ՓՄՁ-ները որպես հիմնական խոչընդոտ ներկայացնում են բարձր հարկադրույթները: Խնդիրն առավել սուր է ներկայացվում ստարտափ կազմակերպությունների կողմից, որոնց մեծ մասը նշում է, որ բարձր հարկադրույթները սպանում են կազմակերպությանը սաղմնային փուլում: Մինչդեռ սկզբնական շրջանում արտոնյալ հարկերը հնարավորություն կտային նրանց զարգանալու:

Մեկ այլ հիմնախնդիր է առկա շրջանառության հարկով հարկվող ձեռնարկությունների համար: Նախ և առաջ օրենսդրությունը թույլ է տալիս բոլոր ապրանքները փաստաթղթավորելու պարագայում շրջանառության հարկով աշխատող կազմակերպություններին վճարել 1,5 տոկոս հարկ, իսկ փաստաթղթերի բացակայության պարագայում՝ 5 տոկոս: Նախ և առաջ այստեղ խնդրահարույց է այն դրույթը, որ փաստացի օրենքով թույլատրվում է չփաստաթղթավորված ապրանք ունենալ, ուստիև որևէ այլ կազմակերպություն, մատակարարելով չփաստաթղթավորված ապրանքը, թաքցնում է շրջանառությունը, որը չի արգելում օրենսդրությունը: Իհարկե, առաջին հայացքից թվում է, թե կազմակերպությունը ինքը պետք է շահագրգռված լինի ներկայացնել փաստա-

թղթավորված ապրանք և վճարել 1,5 տոկոս հարկ 5 տոկոսի փոխարեն: Սակայն այստեղ ի հայտ է գալիս մեղալի մյուս կողմը. կազմակերպությունը, գնելով միայն փաստաթղթավորված ապրանք, ստիպված է լինելու նաև տրամադրել փաստաթղթավորված ապրանք, որի դեպքում հնարավոր է, որ գերազանցի 115 մլն շրջանառության շեմը: Իսկ այդ շեմը անգամ 1 դրամով գերազանցելու պարագայում կազմակերպության հարկային դաշտը կտրուկ փոխվում է՝ վճարելով շահութահարկ և ԱԱՀ: Այդ պատճառով կազմակերպությունը թաքցնում է շրջանառությունը՝ հարկային բեռը կտրուկ չփոխելու համար: Ինչո՞ւ: Հարկային բեռի փոփոխության պարագայում կազմակերպությունը ստիպված կլինի բարձրացնել ապրանքի գները ու դառնալ ոչ մրցունակ այն կազմակերպությունների համեմատ, որոնք թաքցնում են շրջանառությունը: Ուստի ստացվում է, որ կազմակերպությունները լուր համաձայնության են գալիս և թաքցնում են շրջանառությունը՝ իրար մատակարարելով առանց փաստաթղթի ապրանք, որը չի արգելվում օրենսդրությամբ:

Ֆինանսական միջոցների սղությունը որպես իրենց զարգացման հիմնական խոչընդոտ ներկայացրել են դեղատնային բիզնեսի ներկայացուցիչները:

Վարկային բարձր տոկոսադրույքը որպես հիմնախնդիր բարձրաձայնվել է բոլոր ոլորտների և բոլոր չափերի կազմակերպությունների կողմից, ուստի այս խնդրի լուծման համար կառաջարկենք ընդհանուր մոտեցում:

Մասնագետների հմտությունների անհամապատասխանությունը կազմակերպության պահանջներին մեծամասամբ բարձրաձայնվել է ՏՏ ոլորտի կազմակերպությունների կողմից, որոնց մտահոգում է բուհ-մասնավոր ոլորտ կապի անբավարար մակարդակը:

Որպես նշված խնդրի շարունակություն՝ արդեն ոչ միայն ՏՏ ոլորտի ներկայացուցիչների կողմից բարձրաձայնվում է կադրերի վերապատրաստման համակարգի պետական մոտեցման բացակայությունը:

Պարսկաստանից և Թուրքիայից ներմուծվող անորակ և էժան ապրանքների ներմուծման սահմանափակումների բացակայությունը մտահոգում է հատկապես խողովակներ արտադրող մի շարք կազմակերպությունների, որոնց արտադրանքի որակը էապես գերազանցում է ներմուծված արտադրանքին, սակայն որակից բացի բարձր է նաև տեղական որակյալ ապրանքի գինը:

ՀՀ-ի՝ ԵԱՏՄ անդամակցությունից հետո մի շարք ենթասկզբի-զային ապրանքների համար սկզբիզային հարկի բարձրացումը մտահոգում է բազմաթիվ ձեռնարկությունների: Ուստի այս խնդրի լուծումը ևս կներկայացնենք առանց ոլորտային տարանջատման:

Արտաքին շուկաների և արտահանման գործընթացի վերաբերյալ տեղեկատվության պակասը մատնանշվում է հատկապես սկսնակ գործարարների կողմից: Կրկին արտահանման տեսանկյունից հատկապես փոքր ձեռնարկությունները մատնանշում են մատչելի գնով միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող ընկերությունների բացակայության խնդիրը:

Ճանապարհների և ենթակառուցվածքների անբարենպաստ վիճակը զբոսաշրջային ընկերությունների հիմնական մտահոգություններից է:

Եվ, ի վերջո, թեպետ արդեն իսկ նշեցինք մակրոտնտեսական անորոշ միջավայրի վտանգավոր ազդեցության մասին, այդուհանդերձ հարցվող կազմակերպության ներկայացուցիչները հատկապես կարևորում են հարկային փոփոխությունների տեսանկյունից կանխատեսելիության կարևորությունը: Նրանք հատուկ շեշտադրում են, որ անգամ եթե փոփոխությունները հոգուտ գործարարի են կատարվում, այնուամենայնիվ բավական բարդ է մի քանի տարին մեկ հսկայածավալ հարկային օրենսդրության լիարժեք ուսումնասիրությունը և ըստ օրենքի գործունեության շարունակականության ապահովումը: Առավել ևս սա մտահոգիչ է այն պարագայում, որ գործարարը չունի վստահություն, որ իր կողմից արդեն ընդունված հարկային օրենսդրությունը, որի շրջանակներում նա ձևավորել է նաև կազմակերպության զարգացման

ռազմավարությունը, չի փոխվելու մոտ ժամանակներս:

Սրանք թերևս այն հիմնական մտահոգություններն էին, որ բարձրաձայնվել են գործարարների կողմից: Այս խնդիրների լուծման ուղիները մատնանշելով՝ մենք կկարողանանք էական բեկում մտցնել ներդրումային դաշտի բարելավմանն ուղղված քաղաքականության մեջ: Ուստի հաջորդ ենթագլխում հանգամանորեն կանդրադառնանք հենց այս խնդիրների լուծման հնարավոր ուղիներին՝ հիմք ընդունելով միջազգային փորձը և լավագույն արդյունքներ գրանցած երկրների կողմից վարվող համապատասխան քաղաքականությունը:

3.2. Ներդրումային դաշտի բարելավման ուղիները ՀՀ-ում

Ներդրումային միջավայրի ձևավորման և զարգացման վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնցից էլ կախված է երկրի ներդրումային գրավչությունը: Մենք արդեն իսկ քննարկել ենք ՀՀ ներդրումային դաշտի թեր և դեմ կողմերը, ուստի այս ենթագլխում կներկայացնենք ՀՀ-ում ներդրողների կողմից բարձրաձայնված խնդիրների լուծման ուղիներ՝ հիմք ընդունելով միջազգային փորձը:

Ֆինանսական տեսանկյունից կազմակերպության գործունեությանը կարող են խոչընդոտել հարկային բարձր տոկոսադրույքները, հարկային վարչարարությունը, կոռուպցիան և այլն: ՀՀ-ում բանկերի կողմից ՓՄՁ-ների վարկավորումն իրականացվում է հետևյալ կերպ. ՀՀ դրամի դեպքում՝ սկսած 9 % տարեկան տոկոսադրույքից, ԱՄՆ դոլարի դեպքում՝ սկսած 6.5 %, իսկ եվրոյի դեպքում՝ սկսած 5.5 % տարեկան տոկոսադրույքից¹⁰²: Այս վարկերը բանկերը տրամադրում են կարճաժամկետ հատվածի համար, մինչև 12 ամիս գործողության ժամկետով: Բանկերը վարկավորման համար պահանջում են անշարժ գույքի գրավ: Հիմնականում վարկը տրամադրվում է անշարժ գույքի շուկայական արժեքի 70-80 %-ի չափով: Այստեղ առավել խոցելի խնդիրը վերաբերում է մարզերում գործող ՓՄՁ-ներին. բանկերը մեծամասամբ հրաժարվում են տրամադրել վարկ գույքի դիմաց՝ համարելով, որ այն իրացվելի չէ և ունի ցածր արժեք, և նույնիսկ եթե տրամադրում են վարկ, ապա վարկի չափը կազմում է անշարժ գույքի շուկայական արժեքի 60 %-ի չափով: Մեր կողմից առաջարկվում է աստիճանաբար նվազեցնել անշարժ գույքի՝ որպես գրավի միջոց լինելու փաստը, ինչը հնարավոր է անշարժ գույքին այլընտրանք հանդիսացող այլ պրոդուկտների դիմաց վարկի տրամադրումը, օրինակ՝ տվյալ ընկերությանը պատկանող սարքերը, հաշիվների շարժը, բիզնես պլանի առկայությունը կամ տրանսպոր-

¹⁰² <https://www.hsbc.am/loans/products/property/>

տային միջոցները: ՓՄՁ-ների զարգացման խորչընդոտներից է վարկի բարձր տոկոսադրույքը: Այս մասով առաջարկում ենք պետության կողմից աջակցություն ՓՄՁ ոլորտին, այսինքն՝ պետության կողմից կարող է ստեղծվել հարթակ ֆինանսական միջոցներ հավաքագրելու նպատակով, որն էլ բավականին ցածր տոկոսադրույքով և ժամկետներով կտրամադրվի բանկերին ՓՄՁ ոլորտին զարկ տալու նպատակով: Իսկ բանկերը կընտրվեն պետության կողմից կազմակերպված մրցութային տարբերակով: Սա նաև ենթադրում է մարզերի ներգրավվածությունը, այս դեպքում արդեն ՓՄՁ-ին տրվող վարկի տոկոսադրույքը, համեմատած Երևանի հետ, կլինի փոքր-ինչ նվազ: Անդրադառնալով արտերկրյա փորձին՝ ունենք հետևյալ վերլուծությունը, որը նաև կփորձենք կիրառել ՀՀ-ում: Ֆինլանդիայում «Ֆինվեռա» պետական ֆինանսական ընկերությունը 2016 թվականից ներդրեց «mezzanine» ֆինանսական պրոդուկտը, ըստ այս վարկի տեսակի՝ այն կարելի է օգտագործել նոր ձեռնարկություն ֆինանսավորելու համար: Այն Ֆինլանդիայում օգտագործվեց մինչև 3 տարեկան ՓՄՁ-ներին աջակցելու ու ֆինանսավորելու և միջազգային ներդրումների համար:

ՓՄՁ-ների զարգացումը նաև կապված է միջազգային շուկաներ դուրս գալու հետ: Եվրոպական ՓՄՁ-ների 25 %-ն է իր ապրանքը կարողանում արտահանել, իսկ սա նշանակում է, որ շատ ՓՄՁ-ներ բաց են թողնում միասնական շուկայի առաջարկած լայն հնարավորությունները: Այս համատեքստում Եվրոպական հանձնաժողովը ստեղծեց «Your Europe Business» հարթակը¹⁰³: Վերջինս առաջարկում է օգնություն այն գործարարներին և ձեռնարկատերերին, ովքեր ցանկանում են իրենց գործունեությունը տարածել ԵՄ և ԵԱՏՄ երկրներում: «Your Europe Business»-ը տրամադրում է գործնական տեղեկատվություն ԵՄ կանոնակարգի մասին, ինչպես նաև տվյալ երկրի ազգային կանոնների և իշխանությունների մասին: Այս հարթակը նպաստում է մրցունակության և աճի բարելավմանը, ինչպես նաև դյուրինացնում է ՓՄՁ-ների մուտքը

¹⁰³ <https://een.ec.europa.eu/success-story/traditional-irish-aquaculture-explores-new-markets>

դեպի միջազգային շուկաներ¹⁰⁴: Լատվիայում գործում է ALTUM-ը, որը պետական զարգացման ֆինանսական հաստատություն է և իրականացնում է պետական ծրագրեր, և որի օգնությամբ ուսումնասիրվում են շուկայի թերությունները: ALTUM-ը տրամադրում է վարկեր և վարկային երաշխիքներ, առաջարկում է արտահանման համար ապահովագրություն և ներդրումներ վենչուրային ֆոնդերում: Մինչև 2023 թ. ՓՄՁ-ների հասանելի կլինի 190 մլն եվրո¹⁰⁵: Գործարարներին հասանելի է վարկի երաշխիքներ մայր գումարի մինչև 80 %-ի չափով, և արդյունքում 2018 թ. ավարտին գրեթե 400 ընկերություններ վարկի երաշխիքներ են ստացել ավելի քան 64 մլն եվրոյի չափով: Սկսնակ բիզնեսի զարգացման համար ձեռնարկատերերը հնարավորություն ունեն ստանալու միկրովարկեր մինչև 150 հազար եվրոյի չափով, ինչպես նաև այլ միջանկյալ վարկեր, որոնք ծառայում են բանկի համար որպես համաֆինանսավորման գործիք այն դեպքում, երբ բանկերը վարկեր տրամադրում են բարձր տոկոսադրույքով, քան ձեռնարկատերը կարող է սալ: ALTUM-ը տրամադրում է սեփական կապիտալի գործիքներ և ընտրել է կառավարության կողմից համաֆինանսավորվող վենչուրային կապիտալի ֆոնդի կառավարիչներ նախնական փուլում ռիսկային ներդրումներին աջակցելու համար. դրանք են՝ «Builit Latvia», «Commercialization reactor» և «Overkill Ventures»: «Builit Latvia»-ն նախատեսված է համացանցի ոլորտում աշխարհի բոլոր նոր ստարտափերի համար: Պայմաններից մեկն այն է, որ ամբողջ ծրագրի ընթացքում նախատեսվում է, որ մասնակիցները կապրեն և կաշխատեն Լիտվիայում: Թիմը պետք է, առաջարկի նորարարական լուծումներ հետևյալ ոլորտներում՝ արտադրություն, համացանց, էներգետիկա, տնտեսություն և այլն: Սկսնակ բիզնեսի համար «Builit Latvia»-ն կատարում է ներդրում մինչև 50 հազար եվրոյի չափով, իսկ ոչ սկսնակներին՝ մինչև 250 հազար եվրոյի: «Overkill Ventures» ծրագիրը հիմնականում ուղղված է

¹⁰⁴ https://ec.europa.eu/growth/smes/support/networks_en

¹⁰⁵ <https://ceec-china-sme.org/latvia/>

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայից ժամանած նոր ընկերություններին, որոնք աշխատում են աշխատանքային միջավայրի արդյունավետության և ավտոմատացման բարելավման ոլորտում և ունեն որոշակի եկամուտ: Հիմնադրամը եռամսյա զարգացման ծրագրին մասնակցելու ընթացքում ընկերություններին կտրամադրի նախնական ներդրումներ: «Overkill Ventures»-ը կատարում է ներդրում մինչև 40 հազար եվրոյի չափով, իսկ ոչ սկսնակներին՝ մինչև 250 հազար եվրոյի: Իսկ «Commercialization reactor» ծրագիրը բարձր տեխնոլոգիական ստարտափների համար առաջարկում է արագացման ծրագրեր: Այս ծրագրի տևողությունը 3 ամիս է (նախնական փուլ), իսկ հետո արդեն հաջորդ՝ բարձր մակարդակը ևս 3 ամիս է: Բիզնես գաղափարը պետք է հիմնված լինի գիտության կամ տեխնոլոգիայի վրա: Այն պետք է ունենա ինչպես հստակ վերլուծություն, այնպես էլ պարունակի գիտական նորույթ: Ծրագիրը պետք է լինի պատրաստի և հաջողակ հիմք, որը կզարգացնի նոր տեխնոլոգիաների, ապրանքատեսակների և ծառայությունների բիզնեսը: Թիմը պետք է ներկայացվի առնվազն 2 հոգով, որոնցից մեկը ձեռնարկատերն է, իսկ մյուսը՝ տեխնոլոգիա մշակողը: «Commercialization reactor»-ը կատարում է ներդրում մինչև 50 հազար եվրոյի չափով, իսկ ոչ սկսնակներին՝ մինչև 250 հազար եվրոյի¹⁰⁶: Այսպիսով, բոլոր այս ծրագրերն էլ միտված են զարկ տալու Լատվիայում ինչպես սկսնակ բիզնեսին, այնպես էլ ՓՄՁ ոլորտին: Իսկ ԵՄ-ում ձևավորված հատուկ հանձնաժողովը, որը զբաղվում է ՓՄՁ-ների առաջխաղացմամբ, աշխատում է տարբեր ֆինանսական հաստատությունների հետ, ինչպիսիք են Եվրոպական ներդրումային բանկի խումբը և տեղական ֆինանսական միջնորդները եվրոպական երկրներում: Արդյունքում ՓՄՁ-ներին ֆինանսական օգնություն տալու համար տրամադրվում են երաշխիքներ բանկերի, լիզինգային ընկերությունների, ինչպես նաև վենչուրային կապիտալի ֆոնդերի միջո-

¹⁰⁶ <https://www.altum.lv/en/services/business-start-ups/accelerator-funds-programme/acceleration-funds/>

ցով: Այդ հանձնաժողովը կարգավորող նախաձեռնությունների, գրագետ փորձի և իրազեկության բարձրացման միջոցով բարձրացնում է ՓՄՁ-ների արդյունավետությունը: ԵՄ-ն ՓՄՁ բիզնեսի համար վարկերի երաշխավորման գործիքի միջոցով հասանելի է դարձնում բանկերի կողմից տրամադրվող վարկերի հասանելիությունը մոտավորապես 20 մլրդ եվրոյի վարկային երաշխիք «COSME» ծրագրի միջոցով, որը նաև նվազեցնում է վարչական բեռը¹⁰⁷: ՀՀ-ի մակարդակով առաջարկվում է սկսնակ գործարարներին տրամադրել ամբողջական տեղեկատվություն հարկային մարմինների հետ աշխատելու մասին, ինչպես նաև առաջարկում ենք ՓՄՁ-ների հետ անընդհատ անցկացնել առցանց վեբինարներ:

Զբոսաշրջությունը տնտեսությունների զարգացման համար գերակա ճյուղերից մեկն է: Այդ իսկ պատճառով այս ոլորտում առկա մի շարք խնդիրներին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել: Կարևորագույն խնդիրներից մեկն այն է, որ զբոսաշրջիկներին գրավող հայկական պատմամշակութային հուշարձանների, եկեղեցիների ու կոթողների, առողջարանային համալիրների գերակա մասը սփռված է հանրապետության ողջ տարածքում, հիմնականում լեռնային և հեռավոր շրջաններում: Այս խնդիրը շատ զբոսաշրջիկների մոտ հանգեցնում է դժգոհության, քանի որ Երևանից դուրս հյուրանոցների, ժամանցի վայրերի, սննդի օբյեկտների սակավության և ոչ բավարար որակի ծառայություններ առաջարկելու պատճառով նրանք ստիպված են մեկ օրվա ընթացքում կազմակերպել իրենց շրջագայությունները: Մա բացասական հետևանք է թողնում Հայաստանում զբոսաշրջության զարգացման վրա: Մեկ այլ խոչընդոտ է հասարակական սննդի և զվարճանքի օբյեկտների անհամաչափ տեղաբաշխումը: Երևանում օրեցօր ավելանում են հանրային սննդի կետերը, սրճարանները, ռեստորանները, իսկ մարզերում, հակառակ դրա, այս տենդենցը չի նկատվում, ինչը նաև խիստ բացասական է անդրադառնում զբո-

¹⁰⁷ https://ec.europa.eu/growth/access-to-finance/funding-policies_en

սաշրջության զարգացման վրա: Մարզերում դրանց խիստ սահմանափակ լինելը բացատրվում է բնակչության խիստ ցածր եկամտով: Այս ոլորտում խոչընդոտներից է նաև «գին-որակ» հարաբերակցությունը. կան մի շարք տուր օպերատորներ, որոնց առաջարկած ծառայությունը չի համապատասխանում սահմանված գնին, և սա առաջացնում է դժգոհություն զբոսաշրջիկների մոտ: Գնագոյացման հարցում պետությունը չի միջամտում, բայց կարող է սահմանել օրենք, որով կկարողանա վերահսկել տուր օպերատորներին՝ սահմանելով կարգավորումներ՝ սերտիֆիկատներ, որակավորումներ և այլն: Չնայած այս ամենը կարող է բարձրացնել առաջարկված ծառայությունների գինը, այնուամենայնիվ զբոսաշրջիկների շրջանում կձևավորվի վստահություն առաջարկված ծառայության որակի հարցում: Մա կարող է տարածվել սննդի կետերի, հյուրատների և հյուրանոցների վրա:

Խոչընդոտներից են նաև տրանսպորտը և ճանապարհների ոչ բարվոք վիճակը: Թեև վերջին տարիներին նկատվում են կառավարության կողմից խոշորածավալ ներդրումներ ՀՀ ճանապարհային տնտեսության վերականգնման և զարգացման գործում, այնուամենայնիվ դեռևս շատ անելիքներ կան: Պետությունը պետք է մշակի և կազմի ճանապարհային քարտեզ, որը կօգնի ձևավորել տրանսպորտի ոլորտի համար մասնավոր հատվածի ընդգրկուն մասնակցություն: Այսինքն՝ պետությունը ոչ թե իր վրա պետք է վերցնի ամբողջ ֆինանսական և ռիսկային բեռը, այլ այն պետք է բաշխվի մասնավորի և պետության միջև, ինչը կբարձրացնի այս ոլորտում արդյունավետությունը: Այս ոլորտում կարելի է դիմել օգնության տեղեկատվական տեխնոլոգիաներին, օրինակ՝ բարվոք ճանապարհ ունենալու համար կարելի է Հայաստանում միջպետական մայրուղիների որոշակի հատվածներ դարձնել վճարովի, ինչպես ՌԴ-ում է: ՌԴ-ում սկսեցին գործել տարածաշրջանային ճանապարհային ֆոնդեր, որոնք ստեղծվել են դաշնային ճանապարհային ֆոնդերի փորձի հիման վրա, ինչպես նաև գործարկվել են տեղական ֆոնդեր, որոնք նույն

գործառույթն են իրականացնում: Սա գործնականում կրկնապատկեց տարածաշրջանային ճանապարհների վերանորոգման ֆինանսավորման աղբյուրները և այդպիսի ֆինանսավորումը դարձրեց ավելի արդիական, կայուն և թափանցիկ¹⁰⁸: Կամ զբոսաշրջային ընկերությունների հարկման արդյունքում պետությունը կարող է այդ գումարով ամեն տարի վերանորոգել մեկ կամ երկու ճանապարհ, որը տանում է դեպի պատմամշակութային հուշարձան: Զբոսաշրջության ոլորտում անհրաժեշտ է շեշտը դնել երիտասարդ զբոսաշրջիկների վրա, որոնք նախընտրում են առավել ակտիվ արձակուրդը, մասնավորապես՝ արկածային ճանապարհորդությունը, իսկ առավել տարեցները նախընտրում են առողջարանային հանգիստը: Այս երկուսի պարագայում էլ Հայաստանը ակնհայտորեն ունի բավարար ռեսուրսներ, սակայն ոչ ճիշտ մարքեթինգային ռազմավարության պատճառով զբոսաշրջությունը այս ուղղություններով չի տալիս սպասված արդյունք: Ճիշտ մարքեթինգային ռազմավարություն ասելով հասկանում ենք այն, որ Հայաստանը իր սահմաններից դուրս չի կարողանում իր հարուստ պատմամշակութային արժեքները ներկայացնել հանրությանը. այս պարագայում ՀՀ-ն կարող է ամբողջովին կիրառել իր ուժեղ լծակներից մեկը՝ Միջուռքը: Պետության կողմից կարելի է ստեղծել մարքեթինգային ֆոնդ՝ երկրի սահմաններից դուրս ակտիվ գովազդային արշավ սկսելու համար: Այսինքն, բացի կառավարական հատկացումներից, ֆոնդի առկայությունը հնարավորություն կտա ունենալ լրացուցիչ գումար: Կամ լուծման այլ տարբերակ կարող է լինել համաշխարհային զբոսաշրջային շուկայում միջազգային հեղինակավոր ցուցահանդեսների մասնակցելը: Հաղթելու դեպքում հնարավորություն կընձեռվի գովազդելու Հայաստանի զբոսաշրջային գրավչությունները: Հայաստանը, ունենալով արժեքներ, այն կարող է օգտագործել տարբեր միջազգային փառատոներ կազմակերպելու համար,

¹⁰⁸ [https://www.ey.com/Publication/vwLUAssets/EY - Infrastructure in Russia: the road to_2030/\\$FILE/EY-the-road-to-2030-survey-of-infrastructure-development-in-russia.pdf](https://www.ey.com/Publication/vwLUAssets/EY - Infrastructure in Russia: the road to_2030/$FILE/EY-the-road-to-2030-survey-of-infrastructure-development-in-russia.pdf)

օրինակ՝ առկա «Նոան», «Ծիրանի», «Գինու», «Տոլմայի», «Խորովածի» և այլնի փառատոնը դարձնել առավել մեծ՝ հասնելով միջազգային մակարդակի, ինչն էլ կխթանի մեծ թվով զբոսաշրջիկների աճը: Հաջորդ կարևոր կետերից է անգլերեն լեզվի իմացության բարձրացումը, որը գրավիչ կլինի օտարերկրյա այցելուների համար: Իսկ ինչ վերաբերում է մարզային զբոսաշրջության զարգացմանը, ապա կարելի է ստեղծել տարածքային կառույցներ, որոնք կգրադվեն տվյալ մարզում զբոսաշրջության զարգացմամբ և կհամագործակցեն տուրիստական ընկերությունների հետ: Հնդկաստանում զբոսաշրջության կոմիտեն ձեռնարկել է ուխտագնացություն դեպի պատմական և հոգևոր կենտրոններ՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին զբոսաշրջիկներին կրոնական ուղղությամբ գրավելու նպատակով: Մխեմայի նպատակն է ընդլայնել ուխտատեղիների զբոսաշրջությունը, ինչպես նաև զբոսաշրջիկների համար ապահովել լավ պայմաններ: Հայաստանում նույնպես կարող ենք հնագույն կոթողները օգտագործելով մեծացնել հավատացյալ ժողովրդի հոսքը դեպի առաջին երկիր, որն ընդունել է քրիստոնեությունը: Հաջորդ քայլը, որ արել է Հնդկաստանը, բջջային հավելվածի գործարկումն է՝ “Swachh Paryatan”-ը, որը նախատեսված է անդրոիդ հավելվածի համար և թույլ է տալիս ոչ միայն գրանցել պատահականորեն հայտնաբերված կեղտոտ վայրերը կամ աղբը և ոչ միայն աղբը, այլև զբոսաշրջիկները կարող են անել իրենց առաջարկությունները և դիտողությունները և ուղարկել հատուկ կազմավորված զբոսաշրջության կոմիտեին կամ մարմիններին: Ստացված տվյալների հիման վրա անհապաղ գործողություններ են ձեռնարկվում՝ ըստ Հնդկաստանի զբոսաշրջության նախարարության գեկույցի, և 1-2 ժամվա ընթացքում այդ տարածքը ենթարկվում է մաքրության: Այնուհետև ստեղծվեց անվճար բազմալեզու աջակցման կենտրոն՝ օգնելու զբոսաշրջիկներին, որը գործում է շուրջօրյա և 12 լեզուներով՝ արաբերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, ճապոներեն, կորեերեն, չինարեն, պորտուգալերեն, ռուսերեն, իսպաներեն և այլն: «Adarsh

Smarak»-ը նախատեսված է հուշարձանների պահպանման և վերանորոգման համար և ստեղծվել է մշակույթի նախարարության աջակցությամբ: Այս հուշարձանները հագեցած կլինեն զբոսաշրջային անհրաժեշտ հարմարություններով, ներառյալ գուգարաններ, խմելու ջուր, ճաշարան, սրճարան, տեսալսողական կենտրոն, ինտերնետի հասանելիություն, թարգմանչական կենտրոն և այլն: Հուշարձանները հարմարեցված են նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար¹⁰⁹:

Մարդկային ռեսուրսների կառավարումը անձնակազմի կառավարման գործընթացն է, որն անհրաժեշտ է զարգացնել՝ կազմակերպության ռազմավարական նպատակներին հասնելու համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այս ոլորտում ևս արդյունքի հասնելու համար անհրաժեշտ է պետություն-մասնավոր հատվածի սերտ համագործակցություն: Այսօր համալսարան ավարտած շատ «մասնագետներ» գործազուրկ են, և այստեղ հարց է առաջանում՝ արդյոք համալսարանը չի տալիս այնքան գիտելիք, որ ավարտելուն պես ուսանողները անցնեն աշխատանքի, թե՞ աշխատաշուկան զարգացած չէ: Համալսարաններում այսօր դասավանդում են հիմնականում հիմնվելով տեսական գիտելիքի վրա, այստեղ պակասում է գործնական աշխատանքը: Եթե պետական համալսարանները համագործակցեն մասնավոր հատվածի հետ, այսինքն՝ գոնե ուսանողները կարողանան ստանալ իրենց մասնագիտությանը համապատասխան գործնական գիտելիքներ, ապա գործազրկության բարձր մակարդակ միզուցե չլինի, և մասնավոր հատվածը իրեն կարողանա ապահովել մասնագետներով իր իսկ աշխատատեղին համապատասխան: Պետք է ներդրվի մասնավոր հատվածի հետ համագործակցության մոդելը: Այսօր ահռելի անդունդ առաջացնող տարանջատվածություն կա բարձրագույն կրթության և աշխատաշուկայի միջև, քանի որ հիմնականում գործում է այն կարծրատիպը, որ եթե ավարտել ես բուհ, ապա

¹⁰⁹ <https://www.financialexpress.com/india-news/five-significant-steps-taken-by-modi-government-to-promote-tourism-hospitality-sector/379469/>

ստացած դիպլոմով, միննույնն է, կգտնես աշխատանք, սակայն այսօր հակառակն է ապացուցվում. աշխատաշուկային մասնագետներ են անհրաժեշտ: Ուսանողների ներգրավվածությունը հանրային և հասարակական գործունեության ոլորտներում ընդհանուր առմամբ շատ սահմանափակ է: Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտի կրթական մոդելի խոշոր թերություններից է բարձրագույն ուսումնական հաստատություններում գիտահետազոտական գործունեության բացակայությունը, որն էլ իր հերթին հանգեցնում է միջազգային շուկայում ոչ մրցունակ լինելուն: Մեր օրերում մրցակցությունն իրականանում է գիտելիքահենք տնտեսության զարգացման ուղղությամբ: Իսկ դա կատարվում է ոչ միայն համալսարանների օգնությամբ, այլ նաև գիտահետազոտական գործունեությամբ: Այն նաև ներգրավում և պահում է տաղանդավոր մասնագետներին, դասախոսներին և ուսանողներին: Հայաստանը ունի բացառիկ մարդկային պոտենցիալ բարձրագույն կրթության ոլորտում, սակայն ակնհայտ է և այն, որ ունենք «ուղեղների արտահոսք», այսինքն՝ ՀՀ-ից հեռանում են լավ մասնագետները և զգալի հաջողությունների հասնում արտերկրում: Մրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ չկան համապատասխան վարձատրություն և պայմաններ: ՄՌԿ-ի ամենաազդեցիկ և նշանակալից մոդելներից է Հարվարդի մոդելը, որը գործում է 5 նշանակալից բաղադրիչներով՝ իրավիճակային գործոններ, շահագրգիռ կողմերի շահեր, ՄՌԿ-ի քաղաքականության տարբերակներ, ՄՌԿ-ի արդյունքներ և երկարաժամկետ հետևանքներ, որոնք նախատեսվում է իրականացնել կազմակերպության կողմից: Համաձայն այս ՄՌԿ-ի շրջանակի՝ իրավիճակային գործոնների և շահագրգիռ կողմերի շահերի փոխկապակցվածությունը խիստ ազդում և օգնում է ձևավորել ՄՌԿ քաղաքականությունը: Համաձայն այս մոդելի՝ այն կհանգեցնի անհատական բարեկեցության, սոցիալական բարեկեցության և կազմակերպչական արդյունավետության: Հարվարդի մոդելը խթանում է համագործակցությունն ու մոտիվացիան, իսկ

գլխավոր մենեջերներին իրավունք է տալիս զբաղվել բիզնեսի կադրային ապահովմամբ: Այն հիմնված է այն համոզմունքի վրա, որ մարդկային ռեսուրսները կարող են ցանկացած կազմակերպության համար զգալի մրցակցային առավելություն ապահովել, ուստի աշխատողներին պետք է վերաբերվել որպես ակտիվների, այլ ոչ թե որպես ծախսերի: Այսինքն՝ մրցակցության բնույթից համագործակցության բնույթի վերափոխումն է, որը նախատեսում է երկու կողմերի ներգրավվածությունը բանակցություններում: Այս մոդելում դիմացինին վերաբերվում են որպես ոչ թե մրցակցի, այլ որպես դաշնակցի: Այս մոդելում հարաբերությունների հեռանկարը նույնպես շատ կարևոր է, այն ենթադրում է երկարատև համագործակցություն: Հաջորդ մոդելը «The Warwick Model»-ն է. այն ավելի վերլուծական մոդել է, որն իր մեջ ներառում է ևս 5 տարր՝ արտաքին ենթատեքստ, որն իր մեջ ներառում է քաղաքական, տեխնիկական և մրցակցային գործոնները, ներքին ենթատեքստ, որը ներառում է կառուցվածքի, ղեկավարության, մշակույթի, առաջադրանքների տեխնոլոգիայի վերաբերյալ բիզնես ռազմավարություն՝ ներկայացնելով ընկերության նպատակները, ապրանքների շուկան և ընդհանուր ռազմավարությունը, ՄՌԿ համատեքստ (ներառյալ դերը, սահմանումը, կազմակերպումը, ՄՌ արդյունքները), ՄՌԿ բովանդակություն և բիզնեսի ռազմավարության համատեքստ: «The 5P's Model»-ը, մոդելը հիմնված է հինգ ասպեկտների վրա՝ նպատակը, սկզբունքները, գործընթացները, մարդիկ և կատարումը: Այս մոդելի համաձայն՝ այս հինգ սկզբունքների հավասարեցումը և հավասարակշռումը հանգեցնում է ընկերության հաջողության հասնելուն: Նպատակը կազմակերպության տեսլականը, առաքելությունը և հիմնական նպատակներն են, սկզբունքները ստեղծվել են նպատակին հասնելու համար, գործընթացները ներառում են աշխատանքային մեթոդները, մարդիկ կենսական նշանակության ՄՌ ռեսուրս են, որոնք կատարում են առաջադրանքներ՝ համապատասխանեցված սկզբունքներին և գործընթացներին, արդյունավետու-

թյունը, ի վերջո, արդյունք է, որը կարելի է չափել համապատասխան ստանդարտներով: Ռազմավարությունը հուշում է համակարգին, համակարգը ազդում է անձնակազմի վարքի վրա, իսկ անձնակազմի պահվածքը մղում է արտադրողականության բարձրացմանը: Մի խոսքով՝ 5P Մարդկային ռեսուրսների կառավարման մոդելի համաձայն՝ կազմակերպության արդյունավետությունն ուղղակիորեն կախված է գործընթացներում ներգրավված մարդկանց արդյունավետությունից և առաջնորդվում է կազմակերպության նպատակներով և սկզբունքներով: «The ASTD Competency Model»-ը հաջողության հասնելու ճանապարհային քարտեզ է, որը ցույց է տալիս կատարողականը՝ հիմնված բնութագրիչների ուժեղ բազմության վրա: Այս մոդելը հիմնված է հետևյալ երեք բաղադրիչների վրա. Հիմնարար մակարդակը ներառում է էական իրավասություններ՝ անձնական, միջանձնային և կառավարչական, Ֆոկուսի մակարդակը ներկայացնում է փորձաքննության այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են մարզչական գործունեությունը, աշխատողների աշխատանքի բարելավումը, սոցիալական ուսուցումը, կարիերայի պլանավորումը և գնահատումը, իրականացման մակարդակը կենտրոնանում է չորս կարևոր մասնագիտական դերերի վրա՝ ուսուցման ռազմավարություն, ծրագրի ղեկավար, բիզնես գործընկեր և ոլորտի մասնագետ: Այս մոդելը մասնագիտական զարգացումը դիտում է որպես անձնական և ընկերության հաջողության բանալին: Այն կենտրոնանում է հետևյալ հարցին. «Ի՞նչ կարողություններ ունեն և ինչպե՞ս են զարգանում մարդիկ՝ իրենց ոլորտում հաջողակ լինելու և կազմակերպության մեջ արժեքավոր ներդրում ունենալու համար»: Այսօր շատ երկրներ հետաքրքրված են որակյալ կադրերի վերապատրաստմամբ՝ հետագա արդյունավետ գործունեության և երկրում բազմաթիվ ոլորտների զարգացման համար: Կազմակերպվում են բազմաթիվ սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ՝ որոշ լրացուցիչ հմտություններ սովորեցնելու և մասնագիտական հմտությունները խորացնելու համար: Որոշակի

վարձատրության դեպքում մարդը կարող է սովորել անհրաժեշտ և եզակի հմտություն՝ դրանով իսկ դառնալով ավելի մրցունակ այլ աշխատողների շրջանում: Պետական ֆինանսավորմամբ պետք է կազմակերպվեն առաջնային կարևորություն համարվող ոլորտներում սեմինարներ և դասընթացներ՝ տվյալ ոլորտում մասնագետների կողմից կամ արտերկրից հրավիրված մասնագետների կողմից, ինչպես նաև ուշադրություն է պետք դարձնել այն մասնագիտություններին, որոնք այս պահին կորցրել են իրենց պահանջարկը, և տվյալ մասնագետներին տալով մի շարք սեմինարների մասնակցելու հնարավորություն՝ կարող ենք լուծել նաև գործազրկության հարցը: Շատ կարևոր է, որ թե՛ դպրոցներում և թե՛ համալսարաններում շարունակաբար անցկացվեն թեստավորումներ ուսուցիչների և դասախոսների կրթական մակարդակները հասկանալու համար. սա կօգնի կրթական համակարգը վերազինել որակյալ երիտասարդ մասնագետներով: Ինդոնեզիայում աշխատանքի նախարարության կողմից ստեղծվել է եռակողմ մարմին՝ Ուսուցման ազգային կենտրոնը, որը պլանավորվում և ֆինանսավորվում է Ինդոնեզիայի կառավարության կողմից՝ բյուջեից և Կենտրոնական ֆոնդից: Հիմնականում այդ եկամուտը կուտակվում է օտարերկրյա աշխատողների աշխատավարձերի պահումներից: Կադրերի պատրաստման հարցերով զբաղվող մեկ այլ պետական մարմին կրթության և մշակույթի նախարարությունն է, որը մասնակցում է միջնակարգ կրթության համակարգի և երկակի կրթության համակարգի մշակմանը, պլանավորմանը և իրականացմանը¹¹⁰: Ինդոնեզիայի աշխատանքի նախարարությունը վերապատրաստում է 156 ուսումնական հաստատություններից կադրեր հետևյալ առաջնային զարգացման ոլորտներում՝ էլեկտրոնիկա, համակարգչայնացում, շինարարություն, արտադրության ավտոմատացում, բիզնեսի կառավարում և գյուղատնտեսություն: Նախարարությունը պատասխանատու է պետական մակարդակով վերապատրաստման համար: Ինստիտուտ-

¹¹⁰ <https://mgimo.ru/upload/iblock/323/323820d24a69fb4cc55ed06dab487547.pdf>

ներն օգտագործում են երեք տեսակի ծրագրեր. 1) ստանդարտ ծրագրեր, 2) ուսումնական կենտրոնների կողմից իրականացվող ծրագրեր, 3) մարզերի կողմից իրականացվող ծրագրեր՝ հաշվի առնելով տեղական առանձնահատկությունները: Հաստատությունները կենտրոնանում են գործնական հմտությունների վրա՝ տեսական ուսուցման համար ավելի քիչ դասաժամեր ունենալով: Ուսուցման ոլորտում մեկ այլ պետական գործակալություն Ինդոնեզիայի գյուղական բնակավայրերում կազմակերպում է դասընթացներ, որոնք բնութագրվում են շարժունակությամբ: Նրանց նպատակն է վերապատրաստել կադրերին մասնագիտական հմտություններով՝ հաշվի առնելով տեղական աշխատաշուկայի կարիքները: Ինդոնեզիայում մեծ է արհմիությունների դերը աշխատողների իրավունքների պաշտպանության հարցում: Պետական ուսուցման կենտրոնները արտաքին ֆինանսավորման համար օգտագործում են դոնորական միջոցներ և օտարերկրյա ֆինանսներ:

Պետությունը պետք է կարողանա իր ներքին արտադրողին պաշտպանել և խթանել՝ ի տարբերություն ներմուծողի: Այսօր շատ ապրանքներ, որ արտադրվում են նաև ՀՀ-ում, չեն կարողանում սպառվել ներքին շուկայում, քանի որ ներմուծվող ապրանքները ավելի էժան են: Պարսկաստանից և Թուրքիայից ներմուծվում են անորակ և էժան խոդովակներ չնչին մաքսատուրքերով, ինչը հնարավորություն է տալիս դրանք վաճառել 2 անգամ էժան, քան տեղական արտադրողինը: Արդյունքում էականորեն կրճատվել են տեղական խոդովակների սպառման ծավալները, քանի որ տեղական արտադրողը աշխատուժի, հումքի, հարկերի, կոմունալ և այլ ծախսերի պատճառով չի կարող առաջարկել վերոնշյալ գնին նույնիսկ մոտ գին, որպեսզի իր ապրանքը մրցունակ լինի, իսկ պետությունը չի ձեռնարկում համապատասխան միջոցառումներ ներմուծված ապրանքի գները մոտեցնելու տեղական ապրանքի գնին: Առաջարկում ենք բարձրացնել ներմուծվող ապրանքի մաքսատուրքերը, ինչը հնարավորություն կտա տեղական արտադրողին

ավելի շատ իրացնել, ավելի շատ հարկ վճարել և ավելացնել աշխատատեղեր: Այլ կերպ ասած՝ պետք է պետությունը առավել արտոնյալ պայմանների հնարավորություն ընձեռի տեղական արտադրողներին՝ արտադրանքի անհամեմատ ցածր ինքնարժեք ձևավորելու և արդյունքում մրցունակ լինելու ներմուծվող համանման ապրանքների նկատմամբ: ՀՀ-ն ունի մի շարք ոլորտներ, որոնցում կարող է հմտանալ, զարգացնել և արտադրանք արտահանել: Օրինակ՝ ՀՀ-ն կաշվե իրերի ոլորտում միշտ ունեցել է բացարձակ համեմատական առավելություն. ենթադրում ենք, որ մի քանի տարի հետո ևս կոշիկի արտադրությամբ ՀՀ-ն կունենա համեմատական առավելություն դեպի ԵԱՏՄ շուկա: Այժմ շատ փոքր և միջին ձեռնարկություններ ունեն հնարավորություն՝ արտադրելու և վերամշակելու կաշի, և այստեղ պետությունը պետք է խթանի իր արտադրողներին, այլ ոչ թե ներմուծողներին: Գյուղատնտեսական ոլորտում անհրաժեշտ է կրթական մակարդակի բարելավում, որին համահունչ է ամերիկայյն «Lend grant» մոդելը, որում ինտեգրված են կրթությունն ու գիտությունը և սերտորեն աշխատում են ֆերմերների հետ: ԱՄՆ-ում համալսարաններին կից գործում են սերմերի սետիֆիկատացման, հողի, ջրի և գյուղմթերքի լաբորատորիաներ: Այսինքն՝ ոչ միայն սպասարկում են ֆերմերներին, այլև օգնում են բացահայտել և դուրս բերել առկա խնդիրները և տալ լուծումներ: Լաբորատորիաները, սպասարկելով ֆերմերին, պարզապես ծառայում են գիտակրթական համակարգին: Իսկ ֆերմերը միայն մի մասն է վճարում տվյալ սպասարկման համար: Այս մոդելի շնորհիվ բոլոր գործընթացներում իրենց մասնակցությունն են ունենում ուսանողը, ֆերմերը, գիտնական և դասախոսը:

Հայաստանում գործող ձեռնարկությունները զգալի դժգոհություն են արտահայտում նաև բարձր հարկադրույքների հետ կապված: Այս տեսանկյունից հատկապես ուսանելի կարող է լինել Էստոնիայի փորձը: Էստոնիան մշակել է հարկման մեխանիզմ, որը միտված է աջակցելու տնտեսվարող սուբյեկտների զարգացմա-

նը: Նախ և առաջ՝ Էստոնիայում վերաներդրվող շահույթի համար հարկ չկա: Ձեռնարկատերերի համար գրավիչ է ոչ միայն հարկային համակարգը, այլ նաև վճարման հեշտությունը: Էստոնիայի հարկային և մաքսային վարչության կողմից ներկայումս առաջարկվող էլեկտրոնային լուծումները թույլ են տալիս ամեն ինչ իրականացնել թվային տիրույթում: Այս տիրույթում անընդհատ կատարվում են թարմացումներ, օրինակ՝ անընդհատ ավելացվում են տարբեր օտար լեզուներ: Էստոնիայի հարկման մեխանիզմը հետևյալն է. եկամտահարկը ենթակա չէ տարեկան հարկման, այլ հարկվում է ամսական և միայն շահույթը բաշխելուց հետո: Կորպորատիվ հարկի դրույքաչափը հիմնականում 20 % է և հաշվարկվում է 20/80 հարաբերակցությամբ սկսած հարկվող վճարից: Բացի այս հարկատեսակներից, Էստոնիայում բիզնես վարելիս պետք է հաշվի առնել հետևյալ հարկերը նույնպես. 20 % եկամտահարկ տնօրենի վարձավճարից և 33 % սոցիալական հարկ տնօրենի վարձատրությունից¹¹¹: Այս հարկատեսակները փոփոխվում են՝ կախված ոլորտից: Եթե բիզնեսի տարեկան շրջանառությունը ցածր է 40000 եվրոյից, ապա ԱԱՀ վճարողի գրանցումը պարտադիր չէ: Ֆիզիկական անձին շահաբաժին վճարելու համար նախատեսվում է ցածր տոկոսադրույք՝ 7 %, եթե նախկինում դա 14 % էր: Օրինակ՝ եթե ընկերության համահիմնադիրն իրավունք ունի 1000 եվրո շահաբաժին վճարելու, պետք է բյուջե փոխանցել 162,79 (1000 × 14/86) եվրո և 70 եվրո ստացողի հաշվին (1000 * 7 %): Ընկերության համահիմնադիրը «մաքուր» ստանում է 930 եվրո¹¹²: 2019 թվականից սկսեց գործել տարեկան եկամտի չհարկվող մասի միասնական մոտեցման սկզբունքը: Ազատված մասի առավելագույն չափը 6000 եվրո է՝ այն պայմանով, որ տարեկան եկամուտը չի գերազանցում 14400 եվրոն՝ 6000/10800* փաստացի եկամուտ 14400: 25000 եվրոյից բարձրի դեպքում չկա հարկվող մաս, անձնական եկամուտը հաշվարկվում է ընդհա-

¹¹¹ <https://learn.e-resident.gov.ee/hc/en-us/articles/360000721597-Estonian-tax-basics>

¹¹² <https://zagranportal.ru/estoniya/finansy-estoniya/nalogi-v-estonii.html>

նուր գումարից: Այստեղ կան նաև լրացուցիչ պահումներ. եթե ընտանիքում կան մեկից ավելի երեխաներ, սկսած 2-րդ երեխայից անձնական եկամտահարկը չի հարկվում: Մինչև 300 եվրո կարելի է հանել բնակարանային վարկի տոկոսներից, ուսման վարձի և նվիրատվության ծախսեր՝ տարեկան մինչև 1200 եվրո: Աշխատողները վճարում են նաև սոցիալական հարկ՝ 33 % և գործազրկության ապահովագրավճար գործատուի աշխատավարձի 0,8 %-ի չափով և 1,6 %-ի չափով պահում աշխատակցից: Ընկերության շահույթի մի մասը, որը ստացվում է շահաբաժնի տեսքով՝ այլ բիզնեսի մասնակցությունից, ազատված է հարկ վճարելուց: Արժեքավոր գույքի կամ ոչ նյութական ակտիվների օտարման բոլոր գործարքները, որոնց արդյունքում նախկին սեփականատերը ստացել է ֆինանսական օգուտներ, համարվում են ստանդարտ վաճառք՝ կորպորատիվ շահույթով: Գործարքների մեծ մասը հարկվում է 20 % հիմնական դրույքաչափով: 9 % իջեցված սակագին տարածվում է հետևյալ ապրանքների վաճառքի վրա՝ գրքեր, դեղեր և սանիտարահիգիենիկ ապրանքներ հաշմանդամների համար, պարբերականներ, եթե դրանք չեն պարունակում մեծահասակների գովազդային կամ ժամանցային բովանդակություն և այլն: Զրոյական դրույքաչափ տարածվում է այն ապրանքների վրա, որոնք արտահանվում են Էստոնիայի տարածքից դուրս: ԱԱՀ-ից ազատվում են՝ փոստային ծառայություններ, բժշկական ծառայություններ՝ կապված արյան և դրա բաղադրիչների օգտագործման հետ, ինչպես նաև մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստում, պրոֆեսիոնալ ատամնաբույժների ծառայություններ, քաղաքապետարանի կողմից կազմակերպված սոցիալական ծառայությունների աշխատանքը, հիվանդների, վիրավորների և հաշմանդամների տեղափոխում, ապահովագրական ծառայություններ, անշարժ գույքի վարձույթ և լիզինգ և վիճակախաղի տոմսերի վաճառք և խաղերի կազմակերպում: Որպես ԱԱՀ վճարող՝ պարտադիր գրանցում է տրամադրվում այն տնտեսվարող սուբյեկտների համար, որոնց հարկվող շրջանա-

ռությունը տարվա սկզբին գերազանցել է 40000 եվրոն: Տեղացիներին ապրանքներ և ծառայություններ վաճառող օտարերկրյա ընկերությունները պարտավոր չեն վճարել և զեկուցել ԱԱՀ-ի մասին: Բացառություն է նախատեսված միայն նրանց համար, որոնք վաճառում են ենթասկզբիզային ապրանքներ: Հարկ է նշել, որ Էստոնիայի հարկային քաղաքականության մեջ շրջանառության հարկը տարեկան առնվազն 1 % -ով իջեցնելու միտում կա: Ի տարբերություն եվրոպական երկրների մեծ մասի՝ Էստոնիան անշարժ գույքի հարկ չի գանձում: Այնուամենայնիվ, գույքի գնման կամ օտարման գործարքներ կատարելիս ստիպված են լինում վճարել դրոշմանիշի տուրք՝ գործարքի գումարի մինչև 0,04 % -ի չափով: Ձևականորեն հարկ են վճարում այն անշարժ գույքի սեփականատերերը, ովքեր հողամասեր ունեն: Հողի հարկը պետք է վճարեն իրենց հատկացված տարածքների սեփականատերերը, մշտական օգտագործողները և մշակողները: Հողի հարկի դրույքաչափը հաստատվում է քաղաքապետարանի մակարդակով և գտնվում է հողի հարկման արժեքի 0,1-2,5 % -ի սահմաններում: Եթե հողատարածքը գտնվում է բնակելի շենքի տակ՝ 0,15-2 հա, ապա դրա մի մասն է ազատվում հարկումից: Բայց մի պայմանով, որ այս շենքը հողամասի սեփականատիրոջ պաշտոնական գրանցման վայրն է¹¹³: Էստոնիան այսօր առաջարկում է բիզնես վարելու համար հարմարավետ պայմաններ. 20 % կորպորատիվ հարկի դրույքաչափ, որը տարածվում է միայն շահույթի բաշխման վրա, 20 % եկամտահարկի դրույքաչափ, որը չի տարածվում մասնավոր շահաբաժնի եկամտի վրա, գույքահարկ, որը կախված է հողի արժեքից, ոչ թե անշարժ գույքի կամ կապիտալի արժեքից, վերջապես, գոյություն ունի տարածքային հարկման համակարգ, որը եկամտահարկից ազատում է այն տեղական ընկերություններին, որոնք ունեն օտարերկրյա ֆինանսավորման աղբյուր: Այլ երկրներից՝ Նոր Զելանդիան նույնպես ունի ցածր եկամտահարկի դրույքաչափ, որը նաև բացառում է կապիտալի

¹¹³ <https://zagranportal.ru/estoniya/finansy-estoniya/nalogi-v-estonii.html>

շահույթի հարկումը (տոկոսադրույքը՝ 33 %), ինչպես նաև համակարգված գույքահարկի մեխանիզմ և ԱԱՀ: Շվեյցարիան կարող է առաջարկել համեմատաբար ցածր կորպորատիվ հարկի դրույքաչափ (21,1 %), ցածր սպառման հարկեր (ավելացված արժեքի հարկ՝ 8 %) և համեմատաբար գրավիչ անձնական եկամտահարկ, որը չի տարածվում կապիտալի շահույթի վրա (ընդհանուր առավելագույն դրույքաչափը՝ 36 %): Շվեդիան ունի միջինից ցածր կորպորատիվ եկամտահարկի դրույքաչափ՝ 22 %, իսկ գույքի կամ հարստության հարկեր չկան: Նիդեռլանդները ունի միջազգային մրցակցային հարկային կանոնակարգեր: Բացի այդ, ինդեքսի լավագույն հնգյակում գտնվող յուրաքանչյուր երկիր ունի տարածքային հարկային համակարգ: Թերևս հարկադրույքների նվազեցումն ու հարկային արտոնությունների նշված համակարգերը կարող են տեղայնացվել նաև ՀՀ-ում:

Դեղատնային բիզնեսի ֆինանսական միջոցների սղությունը լրջորեն խոչընդոտում է ոչ միայն տվյալ բիզնեսի, այլև ոլորտի զարգացմանը: Սկսնակ դեղատնային բիզնեսի գլխավոր խոչընդոտներից մեկը, եթե ոչ ամենագլխավորը, ֆինանսական միջոցների սղությունն է ինչպես ներդրման միանվագ ծախսերը հոգալու, այնպես էլ բիզնեսը ընդլայնելու և մրցակիցների պարտադրած գնային և ոչ գնային մրցակցությանը դիմակայելու համար: Այս առումով հարցվածների առաջարկը, որի իմաստը ավելի քիչ գումարի գրավադրման դիմաց արժեքով մի քանի անգամ ավելի մեծ քանակի դեղերի մատակարարումն է, կարող է որոշակի ելք լինել իրավիճակից: Այդ նպատակին կարող է ծառայել նաև ապրանքի մեծածախ մատակարարումը դեղատնային ցանցերին վճարման հետաձգման ռեժիմով: Այս պրակտիկան գործում է աշխարհի բազմաթիվ երկրներում: Մասնավորապես՝ այդպիսի փորձ առկա է Ուկրաինայում, հատկապես 2008-2009 թթ. հետձգնաժամային ժամանակահատվածներում, երբ դեղատները ֆինանսական միջոցների զգալի կարիք ունեին՝ պայմանավորված դեղերի

նկատմամբ բնակչության ցածր վճարունակությամբ¹¹⁴: Իհարկե, այս իրավիճակում նաև հնարավոր է՝ չվճարումների ռիսկեր ծագեն բնակչության վճարունակ պահանջարկի սահմանափակության պատճառով, սակայն նույն փորձը հուշում է, որ այդպիսի իրավիճակներից նույնպես հնարավոր են որոշակի ելքեր, որոնք կարող են երկու կողմին էլ ձեռնտու լինել: Այդ ելքերն են.

1. դեղերի մանրածախ և մեծածախ վաճառահանման ցանցերի միավորումը մեկ միասնական վաճառքի համակարգի մեջ,
2. բանկային կարճաժամեկտ վարկավորման ինստիտուտի ներդրումը մասնավոր դեղատներ-խոշոր դիստրիբյուտորներ շղթայում, որտեղ պետությունը (կառավարությունը), որոշակի սոցիալական նկատառումներից ելնելով, կարող է հանդես գալ այդօրինակ վարկավորման տոկոսների սուբսիդավորողի դերում: Այդ գործիքը նաև հնարավորություն կտա զսպել դեղերի գների աճը:

Այս առաջարկը կարող է արդյունավետ լինել, եթե սկսնակ դեղատնային բիզնեսի դեպքում շահագրգռեն դեղամիջոցների մեծածախ վաճառողներին (ինչպես տեղական արտադրողներին, այնպես էլ խոշոր ներկրողներին) կանխավճարային ավելի նվազ գումարի դիմաց մատակարարել ավելի մեծ արժեքով դեղամիջոցներ: Մեծ հաշվով՝ այստեղ հնարավոր է նաև հարկային խնդիրներ ծագեն, սակայն այդօրինակ գործարքները ուղղակի որպես ապրանքային վարկեր պետք է ձևակերպվեն: Տվյալ դեպքում այդպիսի գործարքների (ապրանքային վարկի մասով) հարկերից ժամանակավորապես ազատումը նաև կարող է նպաստել դեղերի գների կայունացմանը և դրանց աճի զսպմանը: Մա ամենայն հավանականությամբ կարող է նպաստել վաճառքի ծավալների ավելացմանը, ցանցի ընդլայնմանը և վաճառքի ավելի բազմազան՝ դիվերսիֆիկացված մեթոդների կիրառմանը: Օրինակ՝ այս պայմաններում փոքր, սկսնակ դեղատնային ընկերությունները կարող են ավելի ճկուն ու մրցունակ լինել դեղերի օն-լայն առև-

¹¹⁴ «Сколько стоит отсрочка платежа?» <https://www.apteka.ua/article/1014>

տրի զարգացման մեջ ու հաջողությամբ մրցել խոշոր դեղատնային ցանցերի ու ընկերությունների հետ:

ՀՀ-ում պետությունը այսպես թե այնպես կարգավորում է դեղերի գները՝ պետական կարիքների համար գնվող կամ այսպես կոչված փոխհատուցվող դեղերի նկատմամբ սահմանելով այսպես կոչված հենակետային (բազային) գներ, ինչպես նաև դեղերի մեծածախ ու մանրածախ գների վրա սահմանելով հավելումների առավելագույն չափեր¹¹⁵: Այդուհանդերձ, ՀՀ դեղերի շուկայում մինևնույն դեղի գների չափազանց մեծ տատանում կա, ինչը պայմանավորված է ինֆորմացիոն ասիմետրիայով: Այս խնդիրը լուծելու համար, մեր կարծիքով, կարելի է օգտվել միջազգային պրակտիկայում առավել լայն տարածում գտած գործիքակազմերի՝ մեզ համար առավել նախընտրելի տարրերից:

Հատկապես ուշագրավ են Եվրոպական միության երկրներում գործող տարբեր կարգավորման գործիքակազմերը: Մեծ Բրիտանիայում, օրինակ, գործում է դեղագործական արտադրանքի շահույթի կարգավորման սկզբունքը, որի համաձայն՝ շահութաբերության առավելագույն մակարդակը սահմանված է 20 տոկոս¹¹⁶: Իտալիայում, Իռլանդիայում և Ֆրանսիայում օգտագործվում է գնագոյացման համեմատական մեթոդը, երբ որոշումները կայացվում են դեղորայքի ներքին գները համեմատելով արտաքին շուկաներում եղած համանման դեղերի գների հետ՝ հիմք ընդունելով դրանց միջինացված տարբերակը: Նման դեպքերում գները ուղղակի միջինացվում են, կամ հիմք են ընդունվում այսպես կոչված ռեֆերենտային գները¹¹⁷: Հայաստանի Հանրապետությունում գնագոյացման այսպիսի սխեմայի որոշակի տարր ևս օգտագործվում է: ՀՀ-ի համար որպես դեղորայքի գնագոյացման համար հա-

¹¹⁵ «Դեղերի մասին» ՀՀ օրենքը, հոդված 11, հոդված 5, 2-րդ կետ:
<https://www.arlis.am/documentview.aspx?docID=120774>

¹¹⁶ Ахметов А.Е., Мировой опыт регулирования цен на фармацевтическую продукцию. Вестник РУДН, серия Экономика, 2012, № 2, стр. 41. <https://www.apteka.ua/article/13798>

¹¹⁷ <https://cyberleninka.ru/article/n/mirovoy-opyt-regulirovaniya-tsen-na-farmatsevticheskuyu-produktsiyu-na-primere-stran-evropy>

մադրելի կամ ռեֆերենտ երկրներ ընդունվել են Լատվիան, Մոլդովան, Վրաստանը և Դրոգստանը¹¹⁸: Ինչ վերաբերում է դեղերի ռեֆերենտային գների սահմանմանը, ապա ՀՀ-ում փոխահատուցվող դեղերի մանրածախ գների մակարդակը որոշվում է հենակետային գների նկատմամբ 15-ից մինչև 35 տոկոսի հավելում (վերադիր) սահմաններով¹¹⁹: Դեղերի գների կարգավորման եվրոպական փորձը նաև վկայում է, որ դրանց մեծ մասում հարկային մեխանիզմներով վերահսկվում են նաև դեղերի արտադրության և վաճառահանման շղթայի օղակներում կատարվող ծախսերը: Այս գործելաոճի նպատակը ոչ միայն դեղորաքի գների չհիմնավորված բարձրացումը կանխելն է, այլև կեղծ կամ անորակ փոխարինիչների առաջացումը զսպելը: Հայաստանյան շուկայում, որպես կանոն, ավելի շատ վաճառվում են ոչ թե զարգացած երկրներում արտադրված օրիգինալ դեղերը, այլև դրանց անալոգները՝ ջեներիկների տեսքով, որոնք շատ դեպքերում իրենց որակով և առողջապահական այլևայլ պարամետրերով էապես զիջում են օրիգինալներին: Եվ այն, որ այս բացասական երևույթների դեմ գործող հիմնական ինստիտուցիոնալ մեխանիզմը ՀՀ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների գործակալությունում դրանց գրանցումն է, ոչ միշտ է արդյունավետորեն կանխում անորակ դեղերի ներկրումը և իրացումը:

Մեկ այլ խնդիր է ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագրին համապատասխան մի շարք ենթակցիզային ապրանքների (ավտովառելիք, ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրանք և այլն) ակցիզային հարկի աստիճանաբար բարձրացումը: Հայաստանի Հանրապետությունում, մի կողմից, դրանք ավելի ցածր են, քան ԵԱՏՄ մյուս երկրներում, մյուս կողմից՝ ակցիզային հարկի բարձրացումը որոշակիորեն փոխհատուցում է բյուջետային եկամուտների այն կորուստները, որոնք կապված են եկամտային հարկի և շահութահարկի դրույքափերի աստիճանական իջեց-

¹¹⁸ <https://www.e-draft.am/projects/905/about>

¹¹⁹ Տես նույն տեղում:

ման հետ: 2017-2020 թթ., ըստ ԵԱՏՄ պայմանագրահենքի, ՀՀ-ում արտադրվող և ներմուծվող ծխախոտային արտադրանքի ակցիզային հարկը տարեկան բարձրացել է 15 տոկոսով, ինչը զգալիորեն նպաստել է բյուջեի եկամուտների աճին: 2021 թ. ևս ծխախոտի վրա ակցիզը ավելանալու է 15 տոկոսով: Ընդ որում՝ Հայաստանը, լինելով ծխախոտ արտադրող և արտահանող երկիր, ըստ էության, կարող է նաև որոշակիորեն տուժել ծխախոտի արտադրության ծախսերի ավելացման պատճառով, քանի որ ակցիզը մտնում է արտադրանքի գնի մեջ ու նվազեցնում նրա մրցունակությունը: Այդ պատճառով ցանկալի է, որ ծխախոտի արտադրությամբ և արտահանմամբ զբաղվող հայկական ընկերությունները որոշակի հարկային արտոնություններ ստանան, օրինակ՝ տեղական ծխախոտային հումքի մթերման և կիրառության պարագայում կնքված գործարքներից ավելացված արժեքի հարկի զեղչերի տեսքով:

Հարկ է նաև նկատել, որ ԵԱՏՄ երկրների շրջանակներում պայմաններն այնպիսին են, որ նույնիսկ այդ կառույցին անդամակցության ժամանակահատվածի վերջում ՀՀ-ում ակցիզային հարկի դրուքաչափերն ավելի ցածր են լինելու, քան, օրինակ, Ռուսաստանում կամ Ղազախստանում: Օրինակ՝ 100 տոկոսանոց սպիրտի 1 լիտրի ակցիզային հարկը 2022 թ. Ռուսաստանի Դաշնությունում կազմելու է 9 եվրոյին համարժեք ռուբլի, իսկ Հայաստանի Հանրապետությունում, աճելով ներկայիս 3 եվրոյից, կհասնի առավելագույնը 5,4 եվրոյի մակարդակին¹²⁰: Սա նշանակում է, որ 100 տոկոսանոց սպիրտի արտադրության և արտահանման պայմանները ՀՀ-ում շարունակելու են լինել գրավիչ, ու այս հարցում պետությունը պետք է այդ ոլորտի, ինչպես նաև դրան աջակցող ոլորտների արտադրողների համար աջակցության ծրա-

¹²⁰ Распоряжение Коллегии ЕЭК от 18.06.2019 № 98 "О проекте распоряжения Совета Евразийской экономической комиссии "О проекте Соглашения о принципах ведения налоговой политики в области акцизов на алкогольную продукцию государств – членом Евразийского экономического союза""// <https://www.alt.ru/tamdoc/19r00098/>

գրեր մշակի և իրականացնի: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է գյուղատնտեսության ոլորտում ծրագրերի հնարավոր սուբսիդավորման, համաֆինանսավորման կամ հարկային արձակուրդների որոշ սխեմաների գործադրմանը:

Թերևս լրջագույն խնդիրներից է շարունակում մնալ այն հանգամանքը, որ Հայաստանում բացակայում է կադրերի վերապատրաստման համակարգը: Եթե անգամ վերապատրաստվում են, ապա կա՛մ կազմակերպությունն է հոգում, կա՛մ էլ աշխատողների սեփական միջոցներով համապատասխան ոլորտներում մասնագիտական փորձի ուսումնասիրություն և փորձի փոխանակման հնարավորություն է ընձեռվում: Հայաստանում աշխատանքի շուկան չհաշվեկշված վիճակում է, մեծ խզում կա աշխատուժի առաջարկի և պահանջարկի միջև: Հիմնական պատճառն այն է, որ բացակայում է բազմաճյուղ, դիվերսիֆիկացված ու դինամիկորեն զարգացող տնտեսական համակարգը: Կրթական հաստատությունները՝ սկսած համալսարաններից, վերջացրած միջնակարգ մասնագիտական հաստատություններով և քոլեջներով, ըստ էության կադրեր պատրաստում են՝ ելնելով դիմորդների՝ որոշակի մասնագիտություններ ստանալու դիմաց վճարելու պատրաստակամությունից, քան թե աշխատանքի շուկայի և գործատուների իրական պահանջմունքների ուսումնասիրությունից: Նոր մասնագիտությունների նկատմամբ աշխատանքի շուկայի պահանջարկը հաճախ ձևավորվում է հախուռն ու չհամակարգված ձևով: Այդ հարցում մեծ դեր է խաղում նաև ցածր աշխատավարձը, ինչը ձևավորում են գործատուները՝ նպատակ ունենալով հենց ցածր աշխատավարձի հաշվին ստանալ գերշահույթի շատ ավելի մեծ մասաբաժիններ: Այստեղից էլ՝ ոչ բարձր որակավորում ունեցող աշխատուժի կողմից իր մասնագիտական կարողությունների բարելավման, համալրման ու ուժեղացման հարցում շատ թույլ շահագրգռվածությունը:

Այս իրողություններից ելնելով՝ պետական տնտեսական քաղաքականությունը պետք է գործողության մեջ դնի մի շարք հավելյալ

գործիքակազմեր, որոնք կշահագրգռեն ինչպես գործատուներին, այնպես էլ աշխատողներին, նաև գործազուրկ մարդկանց՝ ընդգրկվելու որակավորման բարձրացման, վերաորակավորման և նոր մասնագիտություն (որակավորում) ձեռք բերելուն ուղղված ծրագրերի մեջ: Այդ նպատակով կարելի է, օրինակ, հարկային արտոնություններ սահմանել այն գործատուների համար, ովքեր պարբերաբար իրենց անձնակազմերի որոշակի կայուն մասը (ասենք՝ տարեկան 10 տոկոսը) կգործուղեն որակավորման բարձրացման, վերաորակավորման կամ նոր մասնագիտությունների յուրացման ծրագրերում ընդգրկվելու համար: Օրինակ՝ կարելի է նախատեսել շահութահարկի 0,5-1 տոկոսի սահմաններում զեղչ կամ ծախսերի որոշակի նվազեցումներ, որոնք համարժեք են որակավորման բարձրացման ծրագրերին կատարված վճարումներին: Ի դեպ, ամերիկյան կոոպորացիաները իրենց բյուջեի մինչև 1/3-ը ծախսում են իրենց աշխատողների վերապատրաստման ու վերաորակավորման ծրագրերի վրա¹²¹: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ անձնակազմի վերաորակավորման և վերապատրաստման ծախսերի աճը 10 տոկոսով ընկերություններում աշխատանքի արտադրողականությունը ավելացնում է 8.5 տոկոսով այն դեպքում, երբ կապիտալ ծախսերի 10 տոկոսով աճը աշխատանքի արտադրողականությունը ավելացնում է ընդամենը 3.7 տոկոսով¹²²:

Հատկապես սկսնակ բիզնեսների համար պետության կողմից այս կամ այն հարցում խորհրդատվության տրամադրումը կարող է էապես բարելավել բիզնեսի վիճակը: Պետության կողմից ֆինանսական խորհրդատվության տրամադրումը՝ կապված հարկային վարչարարության, արտահանման գործարքների և, ընդհանրապես, գրագետ բիզնես վարելու հետ, կարող է իրականացվել

¹²¹ Бабаева Э.Т., Зарубежный опыт переподготовки и повышения квалификации персонала, Журнал *Наука 21 века: Вопросы, гипотезы, ответы*, N 6, 2014 г., стр. 138-141.

¹²² Новиков П.П. Зарубежный опыт организации обучения персонала в современных условиях, Журнал *Региональные проблемы преобразования экономики*. N 2, 2011 г. стр.385. <http://www.rppe.ru/wp-content/uploads/2013/09/the-rppe-magazine-number-2-for-2011.pdf>

համապատասխան կրթական հաստատությունների, վերապատրաստման կենտրոնների, խորհրդատվական և ուսուցման կենտրոնների հետ համատեղ ծրագրերի մեջ տնտեսության մասնավոր հատվածի մենեջերների, մասնագետների ընդգրկման ճանապարհով: Ամբողջ խնդիրն այն է, թե այդ ամենի համար ով (կամ ովքեր) պետք է վճարի: Տվյալ դեպքում պետությունը կարող է ստանձնել նման ծախսերի որոշակի մասը՝ թեկուզ անուղղակիորեն վերապատրաստում և վերաորակավորում իրականացնող մասնագիտացած մասնավոր կառույցներին կամ համալսարաններին ազատելով հարկերի որոշակի մասից կամ սուբսիդավորելով նրանց ծախսերի մի մասը:

Հատկապես փոքր ու միջին բիզնեսի համար ծայրահեղ բարդ խնդիր է նույնիսկ կենսունակ ու մրցունակ արտադրանք կամ ծառայություն ունենալու դեպքում գրագետ ու արդյունավետ բիզնես կազմակերպելը և հատկապես արտաքին շուկաներում իր արտադրանքով բարեհաջող դիրքավորվելը: Այս հարցում շատ կարևոր դեր կարող է խաղալ պետության կողմից համապատասխան զարգացման գործակալությունների, առևտրաարդյունաբերական պալատների, խորհրդատվական և կոնսալտինգային ընկերությունների ստեղծման խրախուսումը ինչպես ֆիսկալ խթանման գործիքներով, այնպես էլ պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում որոշակի համատեղ ծրագրերի կամ հարթակների ստեղծումով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին զարգացած երկրներում սկսնակ բիզնեսին պետական օժանդակության ուղղակի համակարգերը աստիճանաբար տրանսֆորմացվում են օժանդակության անուղղակի մեխանիզմների՝ օգտագործելով հատկապես հարկային խթանման միջոցները: Այս տեսակետից բավականին լայն կիրառում է ստացել հարկային վարկերի, հարկային զեղչերի և հարկային արձակուրդների կիրառումը: Այս սկզբունքը թերևս ավելի է կարևորվում վերջին վեց ամիսներին տնտեսությանը և հանրային կյան-

քին ահռելի վնասներ պատճառած COVID-19 համավարակի պայմաններում, երբ ակնհայտ է դառնում, որ ճգնաժամից տուժած տնային տնտեսություններին և ձեռնարկություններին պետական ուղղակի ֆինանսական գործիքներով ու սուբսիդիաներով, վարկերով կամ երաշխիքներով օժանդակության գործիքակազմը խիստ սահմանափակ է ու միայն կարճաժամկետ, սոցիալական իրավիճակը ինչ-որ կերպ կայունացնելու խնդիրներ կարող է լուծել և ոչ ավելին:

Հայաստանի Հանրապետությունում հարկային գործիքներով նորաստեղծ բիզնեսի պետական օժանդակության որոշակի տարրեր արդյունավետորեն կիրառվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում: Մասնավորապես՝ այդ ոլորտի նորաստեղծ ընկերությունները ստեղծման առաջին երեք տարվա ընթացքում ազատվում են շահութահարկի վճարումից և միաժամանակ վճարում եկամտային հարկ 10 տոկոսի չափով¹²³: Այս համակարգի կիրառումը գործում է բավականին արդյունավետ, և նպատակահարմար կլինի այն տարածել նաև մյուս բնագավառների սկսնակ ընկերությունների վրա: Այս գործիքակազմի՝ ավելի ընդլայնված մասշտաբներով տարածումը հնարավորություն կտա խրախուսել անհատական և ստեղծարար ձեռնարկատերերի ակտիվությունը, ինչպես անձնական, այնպես էլ փոխառու միջոցների հաշվին իրականացնել ներդրումներ և հաջողակ բիզնես սկսել ու զարգացնել: Համավարակի պայմաններում այդպիսի լուծումները թույլ կտան հաղթահարել բացասական միտումները և ճգնաժամային երևույթները, միաժամանակ նվազեցնել զգալիորեն ավելացած գործազրկության մասշտաբները:

Որպես ճգնաժամի պայմաններում փոքր սկսնակ ընկերությունների պետական աջակցության գործիք՝ կարելի է ավելի համարձակորեն կիրառել այդ ընկերություններին հարկային վարկի տրամադրումը, որը հիմնված է նրանց կողմից կատարված նվազեցումների վրա: Սա նշանակում է, որ կարող է նվազեցվել (հանվել

¹²³ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5184&lang=arm>

շահույթից) ծախսերի որոշակի մասը, որը կապված է, ասենք, ներդրումների, նոր աշխատատեղերի ստեղծման, աշխատավարձի որոշակի մասի վճարման, վերարտադրվող ու ավելի խնայողական էներգիայի տեսակների օգտագործման ու այլ ծախսերի հետ:

Ստարտափ ընկերությունների գործունեության խթանման նպատակով գործադրվող հարկային վարկերի տեսակներից կարող է օգտագործվել նաև այսպես կոչված հետազոտական հարկային վարկը, որը ուղղված է ինովացիոն գործունեության խթանմանը: Այս գործիքը լայնորեն գործադրվում է, օրինակ, ԱՄՆ-ում, երբ ընկերության ստացած համախառն շահույթից, մինչև հարկվելը, հանվում են գիտահետազոտական և փորձարարական աշխատանքների վրա կատարված ծախսերը: Այսպիսի հարկային գործիքը ԱՄՆ-ում թույլ է տալիս տնտեսել բիզնեսի ծախսերի 6,4-7,3 տոկոսը: Իսկ, օրինակ, այնպիսի երկրներում, ինչպիսիք են Իտալիան, Կանադան, Նորվեգիան կամ Ֆրանսիան, ընկերությունների կատարած հետազոտական ծախսերը ամբողջությամբ փոխհատուցվում են (նվազեցվում են) շահույթների հաշվին¹²⁴:

Որպես ստարտափ ընկերությունները հարկային մեխանիզմներով խթանման արդյունավետ գործիք՝ կարելի է առաջարկել նաև այսպես կոչված ներդրումային հարկային վարկի գործադրումը: Այս դեպքում գանձման ենթակա հարկը (հիմնականում շահութահարկը) կամ նրա մի մասը թողնվում է ձեռնարկության տրամադրության տակ, որպեսզի այն վերաներդնի և իրականացնի արդիականցման և բիզնեսի ընդլայնման, ինչպես նաև նոր պրոդուկտների մշակման ծրագրեր:

Փոքր արտահանող ձեռնարկությունների համար լրջագույն խնդիրներից է մնում արտահանման տրանսպորտային ծախսերի

¹²⁴ Гончаренко Л.И., Вишневская Н.Г., Налоговое стимулирование инновационного развития промышленного производства на основе анализа передового зарубежного опыта, Журнал Экономика. Налоги. Право, № 4/2019, стр. 123.

<http://www.fa.ru/org/div/edition/enp/journals/%E2%84%964%202019.pdf>

մեծությունը: Շատ կարևոր է մատչելի գներով միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող այնպիսի կազմակերպությունների առկայությունը, որոնք բարդ ու ռիսկային պայմաններում կկարողանան լոգիստիկ ծառայություններով սպասարկել ներմուծման և արտահանման գործարքները: Ու այնպես չէ, որ ֆորմալ առումով երկրում այդպիսի կազմակերպությունների պակաս կա: Միայն Spyur.am որոնողական համակարգում հայաստանյան գրանցման միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող 314 ընկերություններ կան¹²⁵: Սակայն հասկանալի է, որ դրանց մի զգալի մասը ի վիճակի չէ միջազգային մասշտաբով մրցունակ բեռնափոխադրումներ իրականացնել: Մյուս կողմից՝ այդ ընկերությունների մեջ կան այնպիսիք, որոնք իրենց ավտոպարկով, տեխնիկական զինվածությամբ, ֆինանսական հնարավորություններով, մենեջմենթի մակարդակով ու պահանջվող մյուս պարամետրերով ի վիճակի են ժամանակակից որակյալ լոգիստիկ ծառայություններ մատուցել: Սակայն հաճախ այդօրինակ ընկերությունների ծառայությունների սակագները բավականին բարձր են: Բացի այդ, այդ ընկերությունները արտադրողների հետ հարաբերություններում կիրառում են դեմպինգի (զնազցման) կամ մոնոպոսոնիայի (պարտադրված ցածր գնման գներ) տարրեր, որոնք նրանց հետ համագործակցությունը դարձնում են ոչ ձեռնտու, ասենք, գյուղատնտեսության ոլորտի արտադրողների համար:

Այս պայմաններում ժամանակակից չափանիշներին բավարարող խոշոր լոգիստիկ ընկերությունների ստեղծման նախաձեռնությունը հաջողությամբ իրականացնելու համար ցանկալի է հիմնել պետական կամ պետական մասնակցությամբ (կիսապետական) հիմնադրամ, որը կարող է օժանդակել արտահանմանը՝ ցածր վարկային գծեր բացելով առավել մրցունակ, նորարարական արտադրանք և միջազգային շուկայում դիրքավորման մեծ ներուժ ունեցող փոքր ու միջին ընկերությունների համար: Այսպիսի ընկերություններին պետական օժանդակության հարցում

¹²⁵ https://www.spyur.am/am/yellow_pages-16/yp/541

արդյունավետ միջոց կարող է դիտվել նաև նրանց ստեղծած գյուտերը միջազգային ընթացակարգերով Մտավոր սեփականության իրավունքների համաշխարհային գործակալությունում գրանցման ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցումը: Այս պարագայում արտաքին շուկայում միջազգային արտոնագիր ստացած ընկերության շուկայական տպավորիչ հաջողության (մեծ շահույթների ստացման) դեպքում ստացված միջոցների մի որոշ մասը կարող է հատկացվել նշված հիմնադրամին (կամ բանկային կառույցին)՝ հետագա համանման ծրագրերի օժանդակության նպատակով: Այս խնդրի լուծման ուղիներից մեկն էլ կարող է լինել պետական-մասնավոր խառը մասնակցությամբ բաժնետիրական կապիտալի վրա հիմնված բեռնափոխադրող ընկերության ստեղծումը, որը ժամանակի ընթացքում կարող է մրցակցել հզոր և կենսունակ բեռնափոխադրող ընկերությունների հետ:

Հարկերի մշտական փոփոխությունը և ամբողջությամբ վերցրած՝ հարկային համակարգի անկայունությունը բիզնեսի համար լուրջ դժվարություններ ստեղծող խնդիր է: Այդ խնդրի լուծման ուղղությամբ որոշակի քայլեր արվել են: Խոսքը առանձին գործող ու հաճախ միմյանց հակասող հարկային տարբեր օրենքների փոխարեն անցումն է մեկ միասնական Հարկային օրենսգրքի, որի սկիզբը դրվել է 2016 թ. հոկտեմբերի 4-ին: Սակայն դրանից հետո արդեն ընդունված ՀՀ Հարկային օրենսգրքում մինչև 2020 թ. հունիսի 26-ը կատարվել են 42 փոփոխություններ¹²⁶: Այդ փոփոխությունների մի մասը պայմանավորված էր Հարկային օրենսգրքում ներառված դրույթների ոչ ադեկվատ ու ոչ արդյունավետ գործողությամբ, մյուս կողմից՝ հետագայում կատարվել են օրենսգրքի որոշակի փոփոխություններ և լրացումներ՝ պայմանավորված երկրում ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ սոցիալական պայմանների փոփոխություններով: Մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը հարկադրել է ընդունել ինտեգրա-

¹²⁶ <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5600&lang=arm>

ցին այդ նոր կազմավորման շրջանակներում գործող խաղի կանոնները, այդ թվում՝ հարկային ոլորտում: Բնականաբար, այդտեղ օբյեկտիվորեն տեղի են ունենում նաև որոշակի փոփոխություններ՝ կապված նոր մաքսատուրքերի, ակցիզային հարկերի, ինչպես նաև մաքսասակագնային կարգավորման ու մաքսային ոլորտում վարչարարության նոր կանոնների ու մեխանիզմների ներդրման հետ: Այս ամենը նաև արտացոլվում է ՀՀ հարկային օրենսդրության մեջ: Պայմանավորված ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությամբ՝ ՀՀ Հարկային օրենսդրության փոփոխությունները կշարունակվեն մինչև 2023 թվականը, հնարավոր է՝ նաև հետագայում ևս տեղի ունենան որոշակի փոփոխություններ: Ամբողջ հարցն այն է, որ ԵԱՏՄ անդամ երկրների հարկային օրենսդրությունները շատ կետերում տարբեր են, ինչը դժվարություններ է ստեղծում անդամ երկրներում ներդրումների և բիզնեսի վարման տեսակետից: Այդ պատճառով հիմնական լուծումներից մեկը, որ կարող է կայունացնել անդամ երկրների ազգային հարկային համակարգերը, կարող է լինել ազգային օրենսդրությունների համադրելիության և ներդաշնակացման ապահովումը՝ իհարկե, հաշվի առնելով ԵԱՏՄ անդամ երկրներից յուրաքանչյուրի տնտեսության յուրահատկությունները:

Մյուս ճանապարհը, որ կարող է կայունացնել ՀՀ հարկային համակարգը, այդ ոլորտի բարեփոխումների այնպիսի օրակարգի որդեգրումն ու իրագործումն է, որ պետական գանձարան մտնող հարկերի հիմնական ծանրության կենտրոնը անուղղակի հարկերից տեղաշարժվի ուղղակի հարկերի վրա (շահութահարկ, եկամտահարկ, գույքահարկ), իսկ ավելի տևական ժամանակահատվածի համար՝ պետական բյուջեի հարկերի հիմնական բաժինը հնարավոր լինի ապահովել ֆիզիկական անձանցից գանձվող եկամտային հարկերի հաշվին: Սակայն հարկերի դրույքաչափերի շարունակական փոփոխությունը և հարկազանձման ու վարչարարության մեխանիզմների մշտական կատարելագործումը կարելի է նվազեցնել, եթե այդ փոփոխությունները համաձայնեցվեն

միմյանց հետ, ինչը ներկայում որոշ չափով ընթացքի մեջ է: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է եկամտային հարկի դրույթաչափի մեկ միասնական դրույթաչափի սահմանմանը և դրա շարունակական իջեցմանը (տարեկան 1 տոկոսի չափով): Մյուս կողմից՝ այդ փոփոխության հետևանքով անխուսափելի է պետական բյուջեի կորուստների փոխհատուցումը ակցիզային հարկի և գույքահարկի դրույթաչափերի բարձրացման հետևանքով:

Հարկային համակարգի կայունացման ու հարկազանձման կանխատեսելիության ապահովման ճանապարհին կարևոր լուծումներից մեկն էլ երկրի բոլոր քաղաքացիների եկամուտների և խոշոր ծախսերի համընդհանուր հայտարարագրման ինստիտուտի ներդրումն է, ինչը, մի կողմից, թույլ կտա բացահայտել ու հարկել ստվերային, անաշխատ եկամուտները և, մյուս կողմից, ապահովելով արդարություն հարկային ոլորտում, կրճատելով ստվերային եկամուտները, հնարավոր կդարձնի նվազեցնել ընդհանուր հարկային բեռը:

Այսպիսով, մենք հնարավորինս հանգամանորեն ներկայացրինք ՀՀ ներդրումային դաշտի բարելավման ուղիները՝ հիմնավորելով միջազգային առաջավոր փորձի տեղայնացման հնարավոր եղանակները ՀՀ տնտեսությունում:

3.3. Ներդրումների համար շահավետ ոլորտները ՀՀ-ում

Փոքր ներքին սպառման շուկա ունեցող երկրներում, ինչպիսին Հայաստանն է, դժվար է գտնել օտարերկրյա ներդրողի համար գրավիչ ոլորտներ: Այդ պատճառով էլ ներդրողների համար շահավետ են համարվում հիմնականում այն ոլորտները, որոնք արտաքին շուկայում արդեն իսկ գրավել են իրենց ուրույն տեղը կամ արտաքին շուկայում մրցունակ դիրք զբաղեցնելու ներուժ ունեն: Սույն վերլուծության մեջ արտաքին շուկայում մրցունակ ապրանքների բացահայտումը կիրականացնենք բացահայտ համեմատական առավելության մեթոդի կիրառմամբ:

Համաշխարհային շուկայում երկրի ունեցած համեմատական առավելությունները չեն համարվում անփոփոխ, մեկընդմիջ տրված ցուցանիշներ, հետևաբար ժամանակի ընթացքում երկիրը կարող է կորցնել դրանցից որոշները կամ ձեռք բերել նորերը: Համեմատական առավելությունների փոփոխությունների դինամիկայի վերլուծությունը մշտապես արդիական խնդիր է յուրաքանչյուր երկրի համար, ինչը հնարավորություն է տալիս կազմել որոշակի ռազմավարություն՝ ուղղված երկրի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացմանը:

Երկրների համեմատական առավելությունների որոշման վերաբերյալ առավել հայտնի տեսություններից մեկը, որը ստացել է «Բալաշայի ինդեքս» կամ «Բացահայտ համեմատական առավելությունների տեսություն» անվանումները, առաջ է քաշվել 1965 թ. Բելա Բալաշայի կողմից: Որպես հետազոտության օբյեկտ Բ. Բալաշան դիտարկել է երկրի արդյունաբերական ապրանքների արտահանման կառուցվածքը, քանի որ այն առավել շատ է ներկայացնում երկրներում առկա համեմատական առավելությունները: Մասնավորապես՝ արդյունաբերական պատրաստի արտադրանքի արտահանման ծավալները ձևավորվում են ինչպես գնային, այնպես էլ ոչ գնային գործոնների ազդեցությամբ, դրանց է բաժին ընկնում համաշխարհային առևտրաշրջանառության շուրջ 75 %-ը: Այս ապրանքախմբերի գծով առևտուրը առավել ազատա-

կանացված է այն դեպքում, երբ հումքի առևտուրը հիմնականում կարգավորվում է քվոտայով, սուբսիդավորմամբ, սակագնային և ոչ սակագնային սահմանափակումներով և այլն: Բ. Բալաշայի ինդեքսը հաշվարկվում է որպես հարաբերակցություն երկրի արտահանման ընդհանուր ծավալում որոշակի արտադրանքի արտահանման մասնաբաժնի և համաշխարհային արտահանման ընդհանուր ծավալում այդ արտադրանքի արտահանման մասնաբաժնի միջև¹²⁷.

$$RCA_{ij} = (X_{ij} / X_{it}) / (X_{nj} / X_{nt}) = (X_{ij} / X_{nj}) / (X_{it} / X_{nt})$$

որտեղ՝

X-ն արտահանումն է,

i-ն՝ դիտարկվող երկիրը,

j-ը՝ ապրանքը (կամ արդյունաբերության ճյուղը),

t-ն՝ բոլոր ապրանքախմբերը (կամ արդյունաբերության ճյուղերը),

n-ը՝ բոլոր երկրները:

Բ. Բալաշայի ինդեքսը տատանվում է 0-ից 1 միջակայքում ($0 < RCA_{ij} < 1$): Համարվում է, որ երկիրը որևէ ապրանքի արտահանման գծով ունի բացահայտ համեմատական առավելություն, երբ $RCA_{ij} > 1$ ¹²⁸:

Հայաստանի Հանրապետությունը, հանդիսանալով համաշխարհային տնտեսության սուբյեկտ, ներկայիս գլոբալացվող աշխարհում չի կարող անմասն մնալ միջազգային առևտրային հարաբերություններից և այս գործընթացում բազմաթիվ տնտեսական ու ոչ տնտեսական գործոնների ազդեցությամբ ձեռք է բերում և կորցնում է բացահայտ համեմատական առավելություն այս կամ այն ապրանքախմբի արտահանման գծով: Մասնավորապես՝ ԵԱՏՄ անդամակցությունից հետո զգալիորեն փոխվեց ՀՀ առևտրային հարաբերությունների կառուցվածքը երրորդ երկրների հետ: Այս տեսանկյունից կարևոր է դիտարկել, թե ՀՀ-ն որ ապրանքների

¹²⁷ Balassa Bela, “Trade Liberalisation and Revealed Comparative Advantage”, The Manchester School of Economic and Social Studies 33 (1965): 99-123.

¹²⁸ Balassa Bela, “Trade Liberalisation and Revealed Comparative Advantage”, The Manchester School of Economic and Social Studies 33 (1965): 99-123.

արտահանման գծով է պահպանել և որոնց արտահանման գծով է կորցրել նախկինում հաստատված նշանակալի դիրքերը դեպի ԵԱՏՄ անդամ չհանդիսացող երկրների շուկաներ:

Հայաստանի համար Վրաստանը հանդիսանում է կարևոր առևտրային գործընկեր, մասնավորապես՝ այս երկրի հետ Հայաստանը մշտապես ունեցել է ակտիվ առևտրային հարաբերություններ: Հետևաբար կարևոր է դիտարկել, թե ինչպիսին է եղել մինչև ԵԱՏՄ անդամակցությունը և դրանից հետո ինչպես է փոխվել Հայաստան-Վրաստան առևտրաշրջանառության կառուցվածքը, մասնավորապես՝ որ ապրանքախմբերի արտահանման գծով է Հայաստանը պահպանել, ձեռք բերել կամ կորցրել բացահայտ համեմատական առավելությունը: Պետք է փաստել, որ 2010 թ. դեպի Վրաստան ՀՀ արտահանման ծավալները կազմել են 49035.2 հազ.ԱՄՆ դոլար, իսկ 2019 թ.՝ 69262.1 հազ. ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2019 թ., 2010-ի համեմատ, ավելացել է 41.2 %-ով¹²⁹:

Աղյուսակ 3.3.1.

ՀՀ բացահայտ համեմատական առավելությունները Վրաստանի շուկայում՝ ըստ ապրանքախմբերի (2010-2019 թթ.)¹³⁰

Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն	Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն
Կենդանի կենդանիներ	+	Պայթուցիկ նյութեր, լուցկի և այլ վառվող նյութեր	*
Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	*	Պլաստմասսա և դրանից իրեր	+

¹²⁹ https://www.armstat.am/file/article/ft_2nish_10_2.pdf, https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf

¹³⁰ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա, +՝ ՀՀ-ն միշտ ունեցել է համեմատական առավելություն, *՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել, -՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	+	Փայտյա և այլ մանրաթելավոր նյութերից զանգված	•
Ձիթատու սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ձողոտ	-	Թաղիք, բամբակ, հատուկ գործվածք, ճոպան, առասանուկ, պարան և իրեր դրանցից	•
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	+	Տեքստիլ, կրկնագործված, հարստացված ծածկույթով իրեր և դրանցից տեխնիկական իրեր	-
Շաքար և հրուշակեղեն շաքարից	-	Հովանոցներ, նստափայտեր, ճիպոտներ, մտրակներ և դրանց մասեր	-
Կակաո և դրանից պատրաստված մթերք	•	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	-
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	+	Ապակի և դրանից իրեր	+
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	-
Մխախտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	+	Սև մետաղներ	-
Աղ, ձծուր, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	-	Պղինձ և իրեր դրանից	•
Հանքաքար, խարամ և մոխիր	•	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	•
Դեղագործական մթերք	•	Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր	•
Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք	•	Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ	•

Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ, մաքրող միջոցներ և քսուքներ, մոմեր և հարդարանքի այլ միջոցներ	-	Խաղալիքներ, խաղեր և սպորտային գույք, դրանց մասեր և հարմարանքներ	-
Մայիտակուցային նյութեր, սուսինձ, մոդիֆիկացված օսլա, ֆերմենտներ	-		

Աղյուսակ 3.3.1-ից երևում է, որ կան այնպիսի ապրանքախմբեր, օրինակ՝ «Կենդանի կենդանիներ», «Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» և այլն, որոնց արտահանման գծով ՀՀ-ն ինչպես նախքան ԵԱՏՄ անդամակցությունը, այնպես էլ դրանից հետո ունեցել է բացահայտ համեմատական առավելություն: Մասնավորապես՝ «Կենդանի կենդանիներ» ապրանքախմբի գծով ՀՀ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը 2010 թ. կազմել է 20.74: 2014 թվականից հետո թեև ցուցանիշը նվազել է, սակայն ՀՀ-ն պահպանել է բացահայտ համեմատական առավելությունը. 2015 թ. այն կազմել է 12.78, 2019-ին՝ 12.04: «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի գծով 2010 թ. բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 1.75, 2014 թ. գրանցվել է ցուցանիշի ամենաբարձր մակարդակը՝ 5.63, 2019 թ. 2014-ի համեմատ ցուցանիշը նվազել է 4.19 կետով և կազմել է 1.44: «Պլաստմասսա և դրանից իրեր» ապրանքախմբի գծով նախքան ԵԱՏՄ անդամակցությունը՝ 2010 թ., ՀՀ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 3.08, 2015 թ. 2010-ի համեմատ ցուցանիշը նվազել է 1.39 կետով և կազմել է 1.69, սակայն 2018 և 2019 թվականներին կրկին ցուցանիշի մակարդակը բարձրացել է՝ կազմելով համապատասխանաբար 3.35 և 3.8:

Այդուհանդերձ, ԵԱՏՄ անդամակցությունից հետո դեպի Վրաստանի շուկա որոշակի ապրանքախմբերի արտահանման գծով Հայաստանը զիջել է իր դիրքերը՝ կորցնելով բացահայտ համե-

մատական առավելությունը: Այդպիսի ապրանքախմբերից են, օրինակ, «Ձիթատու սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ», «Շաքար և հրուշակեղեն շաքարից», «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ, մաքրող միջոցներ և քսուքներ, մոմեր և հարդարանքի այլ միջոցներ», «Սպիտակուցային նյութեր, սուսինձ, մոդիֆիկացված օսլա, ֆերմենտներ» և այլն (աղյուսակ 3.3.1): Մասնավորապես՝ «Շաքար և հրուշակեղեն շաքարից» ապրանքախմբի արտահանման գծով 2010 թ. Հայաստանի բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը եղել է 1.49, բայց ԵԱՏՄ անդամակցությունից հետո կտրուկ նվազել է: 2015 թ. այն կազմել է 0.27, և Հայաստանը փաստացի կորցրել է բացահայտ համեմատական առավելությունը: 2019 թ. ցուցանիշը կազմել է 0.22: Նույն պատկերն է «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» ապրանքախմբի մասով: 2010 թ. ցուցանիշը կազմել է 9.45, 2014 թ. ցուցանիշի մակարդակը նույնիսկ ավելացել է՝ հասնելով 14.94-ի: Սակայն արդեն 2015 թ. այն նվազել է մինչև 0.49-ի, իսկ 2019 թ. արդեն կազմել է 0.3: Նախքան ԵԱՏՄ ինտեգրումը «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից» ապրանքախմբի արտահանմամբ ևս ՀՀ-ն ուներ բացահայտ համեմատական առավելություն (2010 թ. ցուցանիշը կազմել է 1.75), սակայն սկսած 2014 թվականից կորցրել է այն: 2019 թ. այս ապրանքախմբի գծով բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է ընդամենը 0.29:


Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ ԵԱՏՄ անդամակցությունից հետո մի շարք ապրանքախմբերի արտահանումը ՀՀ-ից Վրաստան ավելացել է, և Հայաստանը դրանց գծով ձեռք է բերել բացարձակ համեմատական առավելություն: Այդպիսիք են «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր», «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Դեղագործական մթերք», «Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք» և այլն (աղյուսակ 3.3.1): «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախմբի գծով մինչև 2015 թ. Հայաստանը չի ունե-

ցել բացարձակ համեմատական առավելություն: Սակայն 2015 թ. արդեն բացարձակ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 18.92, և մինչև 2019 թ. Հայաստանը պահպանել է համեմատական առավելությունը: «Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ» ապրանքախմբի մասով ՀՀ-ն մինչև 2018 թ. չի ունեցել բացարձակ համեմատական առավելություն, սակայն 2018 թ. ցուցանիշը կազմել է 1.65, որը պահպանվել է նաև 2019 թ.: «Կակաո և դրանից պատրաստված մթերք» ապրանքախմբի գծով ՀՀ-ն բացարձակ համեմատական առավելություն է ձեռք բերել 2014 թվականից՝ 2.7, և դրական դինամիկան պահպանվել է մինչև 2019 թ.:

Կարող ենք փաստել, որ ներկայումս Վրաստանի շուկայում ՀՀ-ն բացահայտ համեմատական առավելություն ունի «Կենդանի կենդանիներ», «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր», «Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Բանջարեղենի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Օխախոտ», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Դեղագործական մթերք», «Ներկանյութեր», «Պայթուցիկ նյութեր», «Պլաստմասսա և դրանից իրեր», «Փայտյա և այլ մանրաթելավոր նյութերից զանգված», «Թաղիք, բամբակ, հատուկ գործվածք», «Ապակի և դրանից իրեր», «Պղինձ և իրեր դրանից», «Այլ ոչ թանկարժեք մետաղներ», «Լոկոմոտիվներ», «Օպտիկական սարքեր» ապրանքախմբերի արտահանման գծով:

ՀՀ-ի՝ դեպի ԵՄ շուկան չհանդիսացող երկրներ արտահանման բացահայտ համեմատական առավելությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզելու, թե Հայաստանի համար որ ոլորտներն ունեն արտահանման ներուժ, կամ որ ապրանքախմբերի արտահանման գծով ՀՀ-ն ունի ներուժային համեմատական առավելություն վերոնշյալ երկրների շուկաներում, այսինքն՝ բացահայտել այն ապրանքախմբերը, որոնց արտահանման մասով Հայաստանը մոտ և հեռու ապագայում կարող է ձեռք բերել բացահայտ համեմատական առավելություն: Միջ-

նաժամկետ հեռանկարում արտահանման ներուժ ունեցող ոլորտներ կհամարենք նրանք, որոնց հեռավորությունը արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող զամբյուղից փոքր կամ հավասար է 5-ի, իսկ երկարաժամկետում՝ 5-ից 10 է:



Գծապատկեր 3.3.1. Վրաստանի շուկայում արտահանման ներուժ ունեցող ոլորտների հեռավորությունը ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից¹³¹

Գծապատկեր 3.3.1-ից երևում է, որ Վրաստանի շուկայում ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից նվազագույն (մինչև 5) հեռավորություն ունեն «Միս և մսից ենթամթերք», «Կաթ և կաթնամթերք», «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ», «Ուտեղի մրգեր և ընկույզներ», «Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր», «Ձուկ և խեցգետնավորներ», «Ցորենից, ալյուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք», «Սննդարդյունաբերության մնացորդներ», «Այլ քիմիական ապրանքներ», «Կաշվե իրեր», «Բնական և արհեստական մորթի», «Փայտ և փայտից իրեր, փայտածուխ», «Կոշիկ, գուգազուլպա և նմանատիպ իրեր», «Գործիքներ, դանակներ, գդալներ, պատառաքաղներ ոչ թանկարժեք մետաղ-

¹³¹ Գրաֆիկը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա:

ներից», «Այլ իրեր ոչ թանկարժեք մետաղներից», «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ», «Ժամացույցներ», «Կահույք, անկողնային պարագաներ» ապրանքախմբերը: Հետևաբար սրանք այն ապրանքախմբերն են, որոնք Հայաստանի համար միջնաժամկետում հանդիսանում են արտահանման ներուժ ունեցող ոլորտներ և միջնաժամկետ հեռանկարում (մինչև 5 տարի) կարող են դառնալ արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբեր: Իսկ առավել երկար հեռանկարում (5-10 տարի) ներուժային համեմատական առավելություն ունեցող ոլորտներն են «Զիթատու սերմեր և պտուղներ», «Շաքար և հրուշակեղեն շաքարից», «Այլ տարբեր սննդամթերք», «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք», «Թուղթ և սովարաթուղթ, դրանցից պատրաստված իրեր», «Գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք», «Այլումին և իրեր դրանից» ապրանքախմբերը (գծապատկեր 3.3.1): Այսպիսով, սրանք էլ այն ոլորտներն են, որոնք երկարաժամկետում կարող են ՀՀ համար ապահովել Վրաստանի շուկա արտահանման բացահայտ համեմատական առավելություն:

Ինչպես Վրաստանը, Իրանը ևս հանդիսանում է Հայաստանի ռազմավարական առևտրային գործընկերը: ՀՀ ԵԱՏՄ անդամակցությունից հետո Իրանի հետ ՀՀ առևտրաշրջանառության կառուցվածքը նույնպես ենթարկվեց մի շարք փոփոխությունների:

Աղյուսակ 3.3.2.

ՀՀ բացահայտ համեմատական առավելությունները Իրանի շուկայում՝ ըստ ապրանքախմբերի (2010-2019 թթ.)¹³²

Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն	Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն
Միս և մսից ենթամթերք	•	Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով, հնոտիներ	•
Կակաո և դրանից պատրաստված մթերք	•	Սև մետաղներ	•
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	-	Իրեր սև մետաղներից	-
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	+	Ալյումին և իրեր դրանից	•
Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	+	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր	•

Դեպի Իրան ՀՀ արտահանումը 2010 թ. կազմել է 84831.2 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2019 թ.՝ 83851.1, հետևաբար կարելի է արձանագրել, որ 2019 թ. 2018-ի համեմատ արտահանման ծավալները կրճատվել են 1.2 %-ով¹³³:

Պետք է փաստել, որ ինչպես ԵԱՏՄ անդամակցությունից առաջ, այնպես էլ դրանից հետո դեպի իրանական շուկա «Աղ,


¹³² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա: +՝ ՀՀ-ն միշտ ունեցել է համեմատական առավելություն, *՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել, -՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

¹³³ https://www.armstat.am/file/article/ft_2nish_10_2.pdf
https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf

ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» և «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» ապրանքախմբերի արտահանման գծով Հայաստանն ունեցել է բացահայտ համեմատական առավելություն (աղյուսակ 3.3.2): Այսպես, «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ» ապրանքախմբի մասով ՀՀ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը 2010 թ. կազմել է 5.39: Չնայած որ հետագա տարիներին ցուցանիշը 2010 թ. համեմատ նվազել է, այդուհանդերձ ՀՀ-ն շարունակել է պահպանել բացահայտ համեմատական առավելությունը: 2014 թ. բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 1.6 (2010 թ. համեմատ նվազել է 3.79 կետով), 2017 թ.՝ 1.23 (2010 թ. համեմատ նվազել է 4.16 կետով), իսկ արդեն 2019 թ.՝ 1.47 (2010 թ. համեմատ նվազել է 3.92 կետով): Ինչ վերաբերում է «Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր» ապրանքախմբին, ապա այս մասով ՀՀ-ն մշտապես ունեցել է բավականին բարձր բացահայտ համեմատական առավելության ցուցանիշ: Մասնավորապես՝ 2010 թ. բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 41.45, 2015 թ.՝ 123.32, 2019 թ.՝ 120.46:

Այդուհանդերձ, դիտարկվող ժամանակահատվածում «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» և «Իրեր սև մետաղներից» ապրանքախմբերի գծով ՀՀ-ն կորցրել է բացահայտ համեմատական առավելությունը (աղյուսակ 3.3.2): Եթե «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի գծով 2014 թ. բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 1.26, 2015 թ.՝ 1.24, ապա 2019 թ. այն արդեն հասել է 0-ի: «Իրեր սև մետաղներից» ապրանքախմբի մասով բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը 2010 թ. կազմում էր 1.55, սակայն 2015 թ. այն կազմել է ընդամենը 0.22 (2010 թ. համեմատ նվազել է 1.33 կետով), 2018 թ. արդեն նվազել է մինչև 0, իսկ 2019 թ. որոշակի չափով աճել է՝ կազմելով 0.3, բայց փաստացի 2015 թվականից սկսած ՀՀ-ն կորցրել է այս ապրանքախմբի գծով բացահայտ համեմատական առավելությունը:

Մի շարք ապրանքախմբերի գծով էլ դիտարկվող ժամանակաշրջանում Հայաստանին հաջողվել է ձեռք բերել բացահայտ համեմատական առավելություն: Այդպիսիք են «Միս և մսից ենթամթերք», «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով, հնտիներ», «Սև մետաղներ», «Ալյումին և իրեր դրանից» և «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր» ապրանքախմբերը (աղյուսակ 3.3.2): Օրինակ՝ «Կակաո և դրանից պատրաստված մթերք» ապրանքախմբի գծով ՀՀ-ն բացահայտ համեմատական առավելություն ձեռք է բերել 2016 թվականից (2.96) և կարողացել է այն պահպանել մինչև 2019 թ. (1.27): Հետաքրքրական է նաև «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր» ապրանքախումբը, որի գծով ՀՀ-ն 2010 թվականից մինչև 2019 թ. չի ունեցել բացահայտ համեմատական առավելություն, սակայն 2019 թ. ցուցանիշն ավելացել է՝ կազմելով 1.46:



Գծապատկեր 3.3.2. Իրանի շուկայում արտահանման ներուժ ունեցող ոլորտների հեռավորությունը ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից¹³⁴

¹³⁴ Գրաֆիկը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա:

Այսպիսով, Իրանի շուկայում այսօր Հայաստանը բացահայտ համեմատական առավելություն ունի հետևյալ ապրանքախմբերի արտահանման գծով՝ «Միս և մսից ենթամթերք», «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Աղ, ծծումբ, հող և քար», «Հանքային վառելանյութեր», «Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով, հնոտիներ», «Մե մետաղներ», «Ալյումին և իրեր դրանից», «Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ»:

Եթե դիտարկենք իրանական շուկայում ՀՀ ներուժային համեմատական առավելություն ունեցող ոլորտները, ապա կարող ենք փաստել, որ դեպի Իրանի շուկա ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից նվազագույն (մինչև 5) հեռավորություն ունեն «Հանքաքար, խարամ և մոխիր», «Հատուկ կտորներ», «Իրեր սև մետաղներից», «Գործիքներ, դանակներ, գդալներ», «Օպտիկական սարքեր» ապրանքախմբերը (գծապատկեր 3.3.2): Փաստացի սրանք այն ապրանքախմբերն են, որոնք Հայաստանի համար միջնաժամկետում հանդիսանում են արտահանման ներուժ ունեցող ոլորտներ և միջնաժամկետ հեռանկարում (մինչև 5 տարի) կարող են դառնալ արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբեր: Առավել երկար հեռանկարում (5-10 տարի) ներուժային համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերն են՝ «Ցորենից, ալյուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք», «Պլաստմասսա և դրանից իրեր», «Փայտ և փայտից իրեր, փայտածուխ», «Իրեր քարից»: Սրանք էլ այն ոլորտներն են, որոնք երկարաժամկետում կարող են ՀՀ համար ապահովել Իրանի շուկա արտահանման բացահայտ համեմատական առավելություն (գծապատկեր 3.3.2):

Հետաքրքիր է դիտարկել նաև, թե ինչպես է ազդել ՀՀ անդամակցությունը ԵԱՏՄ-ին ԱՄՆ շուկայում ՀՀ ունեցած բացահայտ համեմատական առավելությունների վրա: Պետք է նշել, որ դեպի ԱՄՆ ՀՀ արտահանման ծավալները 2010 թ. կազմել են 82710.6 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 2019 թ.՝ 53909 հազ.ԱՄՆ դոլար, այսինքն՝ ՀՀ արտահանման ծավալները դեպի ԱՄՆ 2010 թ. համեմատ

2019-ին կրճատվել են մոտավորապես 35 %-ով¹³⁵: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ին ամերիկյան շուկայում հաջողվել է պահպանել բացահայտ համեմատական առավելությունը չորս ապրանքախմբերի գծով՝ «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Այլ տարբեր սննդամթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» և «Այլումին և իրեր դրանից» (աղյուսակ 3.3.3):

Աղյուսակ 3.3.3.

ՀՀ բացահայտ համեմատական առավելությունները ԱՄՆ շուկայում՝ ըստ ապրանքախմբերի (2010-2019 թթ.)¹³⁶

Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն	Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն
Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	•	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	•
Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	•	Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ	-
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	•	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	•
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	+	Պղինձ և իրեր դրանից	•

¹³⁵ https://www.armstat.am/file/article/ft_2nish_10_2.pdf
https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf

¹³⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա: +՝ ՀՀ-ն միջտունեցել է համեմատական առավելություն, *՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել, -՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

Այլ տարբեր սննդամթերք	+	Այլումին և իրեր դրանից	+
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	Ժամացույցներ և դրանց մասեր	•

«Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք» ապրանքախմբի մասով Հայաստանի բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը ԵԱՏՄ անդամակցությանը և՛ նախորդող, և՛ հաջորդող ժամանակահատվածում բավականին բարձր է եղել: Մասնավորապես՝ 2010 թ. այն կազմել է 7.27, իսկ 2015 թ. 2010-ի համեմատ ավելացել է 4.46 կետով՝ հասնելով 11.73-ի: 2017 թ. բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 12.74՝ 2015 թ. համեմատ ավելանալով 1.01 կետով: 2019 թ. գրանցվել է գրեթե նույն 2017 թ. ցուցանիշի մակարդակը: Նմանատիպ պատկեր գրանցվել է նաև «Այլ տարբեր սննդամթերք» ապրանքախմբի գծով: 2010 թ. բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 1.29: Ցուցանիշի բարձր մակարդակը պահպանվել է նաև 2015 թվականից հետո: Այս ապրանքախմբի մասով ՀՀ բացահայտ համեմատական առավելության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016 թ.՝ 3.33, իսկ 2019 թ. գրանցվել է ցուցանիշի 1.3 մակարդակ: «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի գծով ՀՀ բացահայտ համեմատական առավելության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2016 թ.՝ 13.19, 2019 թ. ցուցանիշը կազմել է 8.84: «Այլումին և իրեր դրանից» ապրանքախմբի մասով Հայաստանը դիտարկվող ժամանակահատվածում ունեցել և պահպանել է ամենամեծ բացահայտ համեմատական առավելությունը. 2010 թ.՝ 90.07, 2015 թ.՝ 77.2, 2017 թ.՝ 69.02, 2019 թ.՝ 59.55:


2010 թ. ՀՀ-ն բացահայտ համեմատական առավելություն ուներ նաև «Անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ» ապրանքախմբի գծով, սա-

կայն պետք է նշել, որ 2015 թվականից հետո ՀՀ-ն կորցրել է համեմատական առավելությունը (աղյուսակ 3.3.3): Այդուհանդերձ, եղել են նաև ապրանքախմբեր, որոնց մասով ՀՀ-ն մինչև 2015 թ. չի ունեցել բացահայտ համեմատական առավելություն, բայց կարողացել է ձեռք բերել: Այդպիսիք են՝ «Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Ժամացույցներ և դրանց մասեր» ապրանքախմբերը և այլն (աղյուսակ 3.3.3): Օրինակ՝ «Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ» ապրանքախմբի մասով Հայաստանը մինչև 2018 թ. չի ունեցել բացահայտ համեմատական առավելություն, սակայն 2018 թ. կարողացել է ձեռք բերել. մասնավորապես՝ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 1.41, 2019 թ. դրական դինամիկան պահպանվել է՝ 1.03: «Պղինձ և իրեր դրանից» ապրանքախմբի գծով նույնպես 2010 թ. ՀՀ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 0.9, բայց 2015 թ. արդեն հասել է 4.87-ի, և ՀՀ-ն փաստորեն ձեռք է բերել բացահայտ համեմատական առավելություն: 2019 թ. ցուցանիշը կազմել է 8.32:

Կարող ենք արձանագրել, որ ԱՄՆ-ի շուկա արտահանման մեջ ՀՀ-ն ներկայումս բացահայտ համեմատական առավելություն ունի «Ձուկ և խեցգետնավորներ», «Կաթ և կաթնամթերք», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Բանջարեղենի վերամշակումից մթերք», «Այլ տարբեր սննդամթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Բնական կամ արհեստական մարգարիտ», «Պղինձ և իրեր դրանից», «Ալյումին և իրեր դրանից», «Ժամացույցներ և դրանց մասեր» ապրանքախմբերի արտահանման գծով:

ԱՄՆ-ի շուկայում ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից նվազագույն (մինչև 5) հեռավորություն ունեցող ապրանքախմբերն

են՝ «Գործիքներ, դանակներ, գոլներ», «Այլ իրեր ոչ թանկարժեք մետաղներից» և «Օպտիկական սարքեր» (Գծապատկեր 3.3.3): Փաստորեն միայն այս երեք ապրանքախմբերն են միջնաժամկետում Հայաստանի համար հանդիսանում արտահանման ներուժ ունեցող ոլորտներ և միջնաժամկետ հեռանկարում (մինչև 5 տարի) կարող են դառնալ արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբեր:



Գծապատկեր 3.3.3. ԱՄՆ-ի շուկայում արտահանման ներուժ ունեցող ոլորտների հեռավորությունը ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից¹³⁷

Առավել երկար հեռանկարում (5-10 տարի) ՀՀ համար ԱՄՆ շուկայում ներուժային համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերն են՝ «Ալրադացային-ձավարեղենային արտադրանք», «Ձիթատու սերմեր և պտուղներ», «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ», «Գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք», «Գորգեր և հատակի այլ տեքստիլ ծածկոցներ», «Տրիկոտաժև հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով» (գծապատկեր 3.3.3): Ակնկալվում է, որ երկարաժամկետում այս ոլորտները Հայաստանի համար ԱՄՆ շուկայում

¹³⁷ Գրաֆիկը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա:

կապահովեն բացահայտ համեմատական առավելություններ:

Ի տարբերություն Վրաստանի, Իրանի և ԱՄՆ-ի շուկաների՝ դիտարկվող ժամանակահատվածում Չինաստանի շուկայում ՀՀ-ն մշտապես բացահայտ համեմատական առավելություն ունեցել է միայն «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» և «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախմբերի գծով, իսկ «Կակաո և դրանից պատրաստված մթերք» և «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ» ապրանքախմբերի գծով Հայաստանին հաջողվել է ձեռք բերել բացահայտ համեմատական առավելություններ (աղյուսակ 3.3.4):

Աղյուսակ 3.3.4.

ՀՀ բացահայտ համեմատական առավելությունները Չինաստանի շուկայում՝ ըստ ապրանքախմբերի (2010-2019 թթ.)¹³⁸

Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն	Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն
Կակաո և դրանից պատրաստված մթերք	*	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	*
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	Հանքաքար, խարամ և մոխիր	+

Հետաքրքրական է, որ ՀՀ դեպի Չինաստան արտահանման ծավալները 2010 թ. 30867.2 հազ. ԱՄՆ դոլարի փոխարեն 2019 թ. կազմել են 193709.7 հազ. ԱՄՆ դոլար՝ ավելանալով մոտավորապես 528 %-ով¹³⁹:

«Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբի

¹³⁸ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում գետեղված տվյալների հիման վրա: +՝ ՀՀ-ն միշտ ունեցել է համեմատական առավելություն, *՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել, -՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

¹³⁹ https://www.armstat.am/file/article/ft_2nish_10_2.pdf,
https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf


գծով 2010 թ. ՀՀ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը չինական շուկայում կազմել է 2.02: 2015 թ. ցուցանիշը որոշակի նվազել է՝ կազմելով 1.57 (2010 թ. համեմատ նվազել է 0.45 կետով), 2018 թ. գրանցվել է 2015-ի ցուցանիշը՝ 2.02: Մակայն 2019 թ. նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է 0.54 կետով և կազմել 1.48: Ինչ վերաբերում է «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախմբին, ապա այս մասով ՀՀ-ն դիտարկվող ողջ ժամանակահատվածում չինական շուկայում ունեցել է բացահայտ համեմատական առավելության բավականին բարձր ցուցանիշ: Մասնավորապես՝ 2010 թ. ցուցանիշը կազմել է 13.53: Այս ապրանքախմբի գծով ամենաբարձր բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը գրանցվել է 2015 թ.՝ 19.41: 2017 թ. 2015-ի համեմատ որոշակի չափով նվազել է՝ կազմելով 15.85, իսկ 2019 թ.՝ 11.53:

«Կակաո և դրանից պատրաստված մթերք» ապրանքախմբի մասով ՀՀ-ն 2010-2018 թթ. ընթացքում չի ունեցել բացահայտ համեմատական առավելություն չինական շուկայում, սակայն 2019 թ. նկատվել է դրական դինամիկա. ՀՀ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը կազմել է 1.26 և փաստացի ՀՀ-ն ձեռք է բերել բացահայտ համեմատական առավելություն այս ապրանքախմբի մասով, իսկ «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ» ապրանքախմբի գծով ՀՀ բացահայտ համեմատական առավելության ցուցանիշը մինչև 2019 թ. գրեթե միշտ 0 է եղել, բայց 2019 թ. այն կազմել է 2.87:

Կարելի է արձանագրել, որ Չինաստանի շուկայում ՀՀ բացահայտ համեմատական առավելություն ունի միայն չորս ապրանքախմբերի գծով՝ «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ» և «Հանքաքար, խարամ և մոխիր»:

Ինչպես երևում է Գծապատկեր 3.3.4-ից, չինական շուկայում ՀՀ ներուժային համեմատական առավելություն ունի միայն «Բանջարեղենի վերամշակումից մթերք», «Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք», «Օպտիկական

սարքեր» ապրանքախմբերի գծով, որոնց արտահանմամբ Հայաստանը երկարաժամկետում կարող է ձեռք բերել բացահայտ համեմատական առավելություն (գծապատկեր 3.3.4):



Գծապատկեր 3.3.4. Չինաստանի շուկայում արտահանման ներուժ ունեցող ոլորտների հեռավորությունը ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից¹⁴⁰

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությունը էապես անդրադարձել է երրորդ երկրների հետ Հայաստանի ունեցած առևտրաշրջանառության կառուցվածքի վրա: ՀՀ հիմնական առևտրային գործընկեր հանդիսացող մի շարք երրորդ երկրների (Վրաստան, Իրան, ԱՄՆ, Չինաստան) հետ առևտրի դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված շուկաներում ՀՀ-ն կարողացել է պահպանել իր հիմնական կամ բացահայտ մրցակցային առավելությունը հիմնականում այն ապրանքախմբերի գծով, որոնցով արտադրության և արտահանման ծախսերը եղել են հարաբերականորեն ցածր մակարդակի վրա: Մասնավորապես՝ այդ տեսակետից առանձնանում են վերամշակված սննդամթերքի, միրգ-բանջարեղենի, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների, ծխախո-

¹⁴⁰ Գրաֆիկը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա:

տային արտադրանքի, հանքաքարի, այլումինի ու մի շարք այլ ապրանքախմբեր: Պետք է փաստել նաև, որ մի շարք ապրանքախմբեր էլ հեռանկարային են Հայաստանի համար և մի քանի տարի անց վերոնշյալ երկրների շուկաներում ներուժային համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերից կարող են դառնալ բացահայտ համեմատական առավելություն ունեցող ոլորտներ: Այդպիսիք են «Օպտիկական սարքեր», «Իրեր ոչ թանկարժեք մետաղներից» ապրանքախմբերը և այլն:

Այժմ դիտարկենք ԵՄ, ԵԱՏՄ շուկաներում, ինչպես նաև աշխարհում ՀՀ բացահայտ և ներուժային համեմատական առավելությունները տարբեր ապրանքների նկատմամբ:

Աղյուսակ 3.3.5.

ԵԱՏՄ շուկայում ՀՀ բացահայտ համեմատական առավելության առկայություն¹⁴¹

Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն	Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն
Չուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	+	Կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր	*
Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	*	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	*
Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	*	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	*
Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	+	Տրիկոտաժե պաստառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով, հնոտիներ	*

¹⁴¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա: +՝ ՀՀ-ն միջտ ունեցել է համեմատական առավելություն, *՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել, -՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բուստանային մշակաբույսերի կեղևներ և կեպաներ	+	Գլխարկներ և դրանց մասեր	*
Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	+	Հովանոցներ, նստափայտեր, ճիպոտներ, մտրակներ և դրանց մասեր	*
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	*	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	*
Կակաո և դրանից պատրաստված մթերք	*	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	+
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	+	Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ	*
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	*
Շխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	+	Մշակված փետուր և աղվափետուր և դրանցից պատրաստված իրեր, արհեստական ծաղիկներ, մարդու մազից պատրաստված իրեր	-
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	+	Քիմիական գործվածք	*

Հայաստանը, լինելով փոքր երկիր, չի կարողանում ապահովել որևիցե մի ապրանքի լայնամաշտաբ արտադրություն, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է, որ Հայաստանը կենտրոնանա այն ապրանքների արտադրության վրա, որոնցում կարող է ունենալ համեմատական առավելություն: Այսինքն՝ Հայաստանը պետք է զարգացնի այնպիսի ոլորտներ, որոնցում հնարավոր է ապահովել առավել որակյալ ու էժան արտադրանք և լինել ավելի մրցունակ միջազգային շուկայում, քան մյուս երկրները: ԵԱՏՄ երկրների հետ արտաքին առևտրաշրջանառությունը 2019 թ. եղել է 2292281,8 հազար ԱՄՆ դոլար, որից 760894,5 հազար ԱՄՆ

դոլարը կամ 28,8 %-ը բաժին է ընկնում արտահանմանը¹⁴²: Հատկանշական է, որ ԵԱՏՄ անդամակցությունից հետո ավելացել են ապրանքների արտահանման ծավալները: ՀՀ արտահանման մեջ 2019 թ. ԵԱՏՄ տեսակարար կշիռը կազմել է 28,8 %, որից 27,8 %-ը բաժին է ընկնում Ռուսաստանին, 0,5 %-ը՝ Բելառուսին, 0,2 %-ը՝ Ղազախստանին, իսկ 0,1 %-ը՝ Ղրղզստանին¹⁴³: 2019 թ. ՀՀ-ից դեպի ԵԱՏՄ շուկա արտահանման 27,8 %-ը¹⁴⁴ բաժին է ընկել Ռուսաստանին:

«Ձուկ և խեցգետնավորներ», «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ», «Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Բանջարեղենի, պտուղների, մասերի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Աղ, ծծումբ, հող և քար» և «Բնական կամ արհեստական մարգարիտ» ապրանքախմբերում ԵՏՄ շուկայում ՀՀ-ն մշտապես ունեցել է բացահայտ համեմատական առավելություն, այսինքն՝ ՀՀ-ն մասնագիտացել է այդ ապրանքների արտադրության մեջ: 2018 թ. «Ձուկ և խեցգետնավորներ», «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ», «Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Բանջարեղենի, պտուղների մասերի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ», «Աղ, ծծումբ, հող և քար» ապրանքախմբերում ՀՀ-ն ունեցել է համեմատական առավելություն Ռուսաստանի շուկայում, որոնց արտահանումը կազմել է 23.193, 28.333, 46.371, 3.405, 20.274, 185.877 և 4.649 հազար ԱՄՆ դոլար¹⁴⁵: Իսկ «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» ապրանքախումբը 2018 թ. հիմնականում արտահանվել է Շվեյցարիա:

«Կաթ և կաթնամթերք», «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր», «Մսից, ձկներից արտադրանք», «Կակաո և դրանից պատ-

¹⁴² https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf

¹⁴³ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf


¹⁴⁴ https://www.armstat.am/file/article/sv_12_19a_411.pdf

¹⁴⁵ <https://www.armstat.am/am/?nid=766>

րաստված մթերք», «Տրիկոտաժե հագուստ», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ», «Տրիկոտաժե պաստառ», «Գլխարկներ և դրանց մասեր», «Հովանոցներ և դրանց մասեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից», «Օպտիկական, լուսանկարչական չափիչ, դրանց մասեր և հարմարանքներ», «Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր» ապրանքախմբերում սկզբնական շրջանում ՀՀ-ն չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել: Այս ապրանքախմբերում 2018 թ. ևս արտահանման առյուծի բաժինը հասնում է Ռուսաստանին:

Իսկ «Կաշվե իրեր» ապրանքախմբում ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

Դիտարկենք այն ապրանքախմբերը, որոնցում ՀՀ-ն ունի ներուժային համեմատական առավելություն միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում ԵԱՏՄ շուկայում:



Գծապատկեր 3.3.5. ԵԱՏՄ շուկայում արտահանման ներուժ ունեցող ոլորտների հեռավորությունը ՀՀ արտահանման ԲՀՄ գամբյուրից

Ըստ գծապատկեր 3.3.5-ի՝ ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից 0-5 հեռավորություն ունեն «Միս և մսից ենթամթերք», «Այլ տարբեր սննդամթերք», «Կոշիկ, զուգագուլպա և նմանատիպ իրեր» և «Կենդանի կենդանիներ» ոլորտները, և ենթադրվում է, որ միջնաժամկետ հատվածում դրանք կարող են ձեռք բերել բացահայտ համեմատական առավելություն:

Իսկ «Ալրադացային-ձավարեղենային արտադրանք», «Շաքար և հրուշակեղեն շաքարից», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Դեղագործական մթերք», «Ներկանյութեր, պիգմենտներ լաքեր, թանաք», «Սպիտակուցային նյութեր», «Պլաստմասսա և դրանից իրեր», «Փայտ և փայտից իրեր, փայտածուխ», «Եթերային յուղեր, հարդարանքի և լոգարանային միջոցներ», «Բամբակ», «Կերամիկական իրեր», «Օպտիկական, լուսանկարչական չափիչ հարմարանքներ», «Գորգեր և հատակի այլ տեքստիլ ծածկոցներ» և «Հատուկ կտորներ, ասեղնագործած կտորներ» ոլորտները ունեն առավել երկարաժամկետ ներուժային համեմատական առավելություն:

Կարելի է ենթադրել, որ ԵԱՏՄ երկրների հետ առևտրում ՀՀ-ն ունի արտահանման հսկայական չիրացված ներուժ: ԵԱՏՄ անդամ երկրների կողմից ընդունված նոր սակագնային քաղաքականության հեշտացումը կնպաստի ՀՀ-ից դեպի ԵԱՏՄ արտահանման աճին:

2019 թ. արտահանման հիմնական մասը բաժին է ընկել Բուլղարիային և Նիդեռլանդներին: «Հանքաքար, խարամ և մոխիր», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «Սև մետաղներ», «Պղինձ և իրեր դրանից» ապրանքախմբերում ՀՀ-ն մշտապես ունեցել է համեմատական առավելություն ԵՄ շուկայում:

Աղյուսակ 3.3.6.


ԵՄ շուկայում ՀՀ բացահայտ համեմատական առավելության առկայություն¹⁴⁶

Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն	Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	*	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	*
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	*	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	+
Հանքաքար, խարամ և մոխիր	+	Սև մետաղներ	+
Բնական և արհեստական մոդյոթի և դրանցից պատրաստված իրեր	+	Պղինձ և իրեր դրանից	+
Բամբակ	-	Ալյումին և իրեր դրանից	*
Քիմիական թելեր	-	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	-
Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ, գորբելեններ, հարդարման նյութեր և այլն	-		

¹⁴⁶ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա: +՝ ՀՀ-ն միշտ ունեցել է համեմատական առավելություն, *՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել, -՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

«Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Ալյումին և իրեր դրանից» ապրանքախմբերում ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, սակայն հետո ձեռք է բերել:

Իսկ «Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր», «Բամբակ», «Քիմիական թելեր», «Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ, գորելեններ, հարդարման նյութեր և այլն», «Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից» ապրանքախմբերում ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է բացահայտ համեմատական առավելություն, սակայն հետո այն կորցրել է:



Գծապատկեր 3.3.6. ԵՄ շուկայում արտահանման ներուժ ունեցող ոլորտների հեռավորությունը ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից

Ստորև ներկայացնենք այն ապրանքախմբերը, որոնցում ՀՀ-ն ունի ներուժային համեմատական առավելություն միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում ԵՄ շուկայում:

Համաձայն գծապատկեր 3.3.6-ի՝ «Իրեր սև մետաղից» ապրանքախումբը ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից գտնվում է 0-5 հեռավորության վրա, այսինքն՝ միջնաժամկետ հատվածում կարող է ձեռք բերել բացահայտ համեմատական առավելություն: Իսկ «Աղ, ծծումբ, հող և այլն», «Չմշակված մորթիներ և մշակված կաշի», «Կաշվե իրեր», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից», «Օպտիկական, լուսանկարչական չափիչ հարմարանքներ» և «Ժամացույցներ և դրանց մասեր» ոլորտները ունեն առավել երկարաժամկետ ներուժային համեմատական առավելություն:

Համեմատական առավելության կորուստը կարող է կապված լինել հայկական արտադրանքի ոչ ճիշտ մարքեթինգային քարոզչությամբ, ինչպես նաև արտաքին քաղաքականությամբ պայմանավորված, այսինքն՝ ՀՀ կառավարությունը պետք է ճիշտ կարողանա օգտագործել Սփյուռքի ներուժը, որպեսզի է՛լ ավելի ներկայանալի դարձնի հայկական արտադրանքը ԵՄ շուկայում: Իսկ վերը թվարկված ապրանքախմբերը պատկանում են այն հարակից ոլորտներին, որոնցում ներդրողների ներգրավման պարագայում ՀՀ-ն կունենա բացահայտ համեմատական առավելություն:

ՀՀ-ն մշտապես ունեցել է համեմատական առավելություն աշխարհում հետևյալ ապրանքախմբերում՝ «Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ», «Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ», «Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ», «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ», «Հանքաքար, խարամ և մոխիր», «Ապակի և դրանից իրեր», «Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ», «Սև մետաղներ», «Ալյումին և իրեր դրանից» և «Ժամացույցներ և դրանց մասեր»:

Աղյուսակ 3.3.7.

Աշխարհում ՀՀ բացահայտ համեմատական առավելության առկայություն¹⁴⁷


Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն	Ապրանքախմբի անվանումը	Բացահայտ համեմատական առավելության առկայություն
Կենդանի կենդանիներ	*	Հանքաքար, խարամ և մոխիր	+
Ձուկ և խեցգետնավորներ, մանրույթներ և այլ ծովային անողնաշարավորներ	+	Տրիկոտամե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	*
Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	*	Տրիկոտամե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	*
Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	*	Հովանոցներ, նստափայտեր, ճրպոտներ, մտրակներ և դրանց մասեր	*
Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	+	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	-
Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	-	Ապակի և դրանից իրեր	+
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	*	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	+

¹⁴⁷ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx> կայքում զետեղված տվյալների հիման վրա): +՝ ՀՀ-ն միշտ ունեցել է համեմատական առավելություն, *՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում չի ունեցել համեմատական առավելություն, որից հետո ձեռք է բերել, -՝ ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

Կակաո և դրանից պատրաստված մթերք	*	Սև մետաղներ	+
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	+	Պղինձ և իրեր դրանից	-
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	+	Այուրմին և իրեր դրանից	+
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	+	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	-
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	+	Ժամացույցներ և դրանց մասեր	+

Իսկ «Կենդանի կենդանիներ», «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր», «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Կակաո և դրանից պատրաստված մթերք», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով» և «Հովանոցներ, նստափայտեր, ճիպոտներ, մտրակներ և դրանց մասեր» ապրանքախմբերում ՀՀ-ն սկզբում չի ունեցել համեմատական առավելություն այնուհետև ձեռք է բերել: «Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ», «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից», «Պղինձ և իրեր դրանից» և «Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից» ապրանքախմբում ՀՀ-ն սկզբնական շրջանում ունեցել է համեմատական առավելություն, որից հետո այն կորցրել է:

Վերլուծելով ԵԱՏՄ և ԵՄ շուկաներում ՀՀ ներուժային համեմատական առավելությունը՝ այժմ դիտարկենք նաև այն աշխարհում:



Գծապատկեր 3.3.7. Աշխարհում արտահանման ներուժ ունեցող ուղորտների հեռավորությունը ՀՀ արտահանման ԲՀԱ զամբյուղից

Համաձայն գծապատկեր 3.3.7-ի՝ «Միս և մսից ենթամաշտկուց», «Այլ տարբեր սննդամթերք», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Իրեր սև մետաղներից» և «Այլ կենդանական ծագման ապրանքներ» ուղորտներում ՀՀ-ն արտահանման ԲՀԱ զամբյուղից գտնվում է 0-5 հեռավորության վրա, այսինքն՝ միջնաժամկետ հատվածում կարող է ձեռք բերել բացահայտ համեմատական առավելություն: Իսկ «Շաքար և հրուշակեղեն շաքարից», «Համալսարանի վանդակներ», «Դեղագործական մթերք», «Պայթուցիկ նյութեր», «Պլաստմասսա և դրանից իրեր», «Չմշակված մորթիներ և մշակված կաշի», «Կաշվե իրեր», «Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր», «Խցան և դրանից իրեր», «Գորգեր և հատակի այլ տեքստիլ ծածկոցներ», «Գլխարկներ և դրանց մասեր», «Կերամիկական իրեր», «Այլ իրեր ոչ թանկարժեք մետաղներից», «Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր», «Օպտիկական, լուսանկարչական չափիչ հարմարանքներ» ուղորտներն ունեն առավել երկարաժամկետ ներուժային համեմատական առավելություն: Վերը շարա-

դրված ոլորտներում թե՛ միջնաժամկետ և թե՛ երկարաժամկետ հատվածներում ներդրումների ներգրավման պարագայում ներուժ ունեցող այդ ոլորտները աշխարհում կարող են ունենալ բացահայտ համեմատական առավելություն:

Այսպիսով, մենք բացահայտեցինք այն ոլորտները, որոնք կարճաժամկետ և միջնաժամկետ ժամանակահատվածում կարող են թիրախային լինել թե՛ տեղական, թե՛ օտարերկրյա ներդրողների համար՝ կախված նրանից, թե արտադրված արտադրանքի իրացման համար նրանք որ երկրի կամ որ ինտեգրացիոն միավորման շուկան կհամարեն հեռանկարային:

3.4. ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման ռազմավարական նախագիծ

ՀՀ ներդրումային միջավայրի հանգամանակից վերլուծությունը ցույց տվեց, որ այս հարթությունում դեռևս առկա են բազմաթիվ թերություններ՝ սկսած մակրոտնտեսական միջավայրից մինչև միկրո ոլորտի խնդիրներ, որոնք էականորեն նվազեցնում են Հայաստանի տնտեսության ներդրումային գրավչությունը: Հասկանալի է, իհարկե, որ մշտապես պատերազմի առկալված վտանգ ունեցող երկրում դժվար է ապահովել այնպիսի ներդրումային գրավչություն, որը կստվերի պատերազմի վտանգը: Այդուհանդերձ, ցանկալի է տնտեսական լծակների տեսանկյունից ներդնել առավելագույն ջանք, որպեսզի առնվազն տնտեսական ռիսկի տեսանկյունից երկրի ներդրումային միջավայրը լինի նվազ ռիսկային և առավելագույնս գրավիչ:

Անհրաժեշտ է նախ և առաջ հստակ պատկերացնել, որ ներդրումային միջավայրի բարելավումը ունի մակրո և միկրո միջավայրեր: Այստեղ մակրոմիջավայրը ՀՀ ընդհանուր զարգացման քաղաքականության, իսկ միկրոմիջավայրը՝ բացառապես ներդրումների զարգացման քաղաքականության ազդեցության գոտում է:

Անդրադառնանք նախ և առաջ ներդրումային միջավայրի բարելավմանը մակրոմիջավայրի տեսանկյունից: Մակրոմիջավայրի կարևորագույն տարրերից է կոռուպցիայի բացառումը: Մինգապուրի տնտեսությունը կոռուպցիայի դեմ պայքարի ամենացայտուն օրինակներից է: Կոռուպցիայի դեմ ակտիվ պայքարի քաղաքականությունում այստեղ կիրառվեց 2 գործիք. անխտիր պատժվեցին կոռուպցիոն մեխանիզմներում մեղադրվող անձինք, և էականորեն բարձրացվեցին պատասխանատու պետական պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատավարձերը: Թերևս նորանկախ Հայաստանում ևս առկա էին կոռուպցիայի դեմ պայքարի դրսևորումներ, սակայն դրանց անարդյունավետ մեխանիզմները չտվեցին ցանկալի արդյունք: Ի պատիվ ներկայիս կառավարու-

թյան՝ պետք է նշել, որ այժմյան քաղաքականությունն առավել հարում է Սինգապուրի գործիքակազմին: Այնուամենայնիվ, հարկ է առանձնացնել 2 հնարավոր ծուղակ, որոնցից խուսափելով միայն հնարավոր է հասնել հաջողության: Առաջինը ժողովրդավարության ծուղակն է: Պետական պաշտոնյաների աշխատավարձերի բարձրացումը անխոս առաջացնելու է ժողովրդի դժգոհությունը: Այդուհանդերձ, դրան տեղի տալու պարագայում մենք կարող ենք կորցնել պետական պաշտոններում լավագույն մասնագետներին ներառելու հնարավորությունը: Երկրորդը մեղալի երկու կողմերի անհամադրելիության ծուղակն է: Տվյալ դեպքում մեղալի մի կողմում պետական պաշտոնյայի աշխատավարձի չափն է, մյուս կողմում՝ նրա փորձառությունն ու մասնագիտական որակները: Թե՛ պետական պաշտոնյայի մեծ փորձառության և մասնագիտական բարձր որակների համադրումը ցածր աշխատավարձի, թե՛ պաշտոնյայի փորձառության պակասի կամ մասնագիտական ոչ բարձր որակների համադրումը բարձր աշխատավարձի հետ դատապարտված են ձախողման: Ուստի այստեղ շատ կարևոր է լավագույն արդյունավետ համադրության ընտրությունը:

Մակրոմիջավայրի երկրորդ կարևոր բաղադրիչը տնտեսական զարգացման երկարաժամկետ ռազմավարությունների մշակում և ճշգրիտ իրագործումն է: Դիտարկելով բոլոր այն երկրների տնտեսական քաղաքականությունները, որոնք կարճ ժամանակում կարողացել են արձանագրել տնտեսության թռիչքաձև աճ և ներդրումների զգալի ներհոսք՝ կարող ենք հստակ արձանագրել, որ այս հարցում շատ մեծ դեր են ունեցել ռազմավարությունների հստակությունն ու ճիշտ թիրախների որոշումը, որոնցից էլ բխել է նաև արդյունավետ մարտավարության մշակումը:

Նորանկախ Հայաստանում ևս մշակվում էին տնտեսական զարգացման ռազմավարություններ, սակայն լավագույն դեպքում դրանք թերակատարվում էին, իսկ վատագույն դեպքում՝ հակասում միմյանց: Այս դեպքում ևս առաջանում է 2 ծուղակ, որոնցից խուսափելով միայն հնարավոր կլինի հասնել հաջողության: Առաջինը անորոշության ծուղակն է. ռազմավարությունները պետք է

ունենան հստակ չափելի և ճիշտ ընտրված թիրախներ, որոնք հնարավորություն կտան ընտրելու ճիշտ մարտավարություն: Ներկայումս ՀՀ տնտեսության համար թերևս մեծ վտանգ կա այս ծուղակում հայտնվելու: Մասնավորապես՝ ՀՀ գործարար միջավայրի բարելավման 2019-2024 թթ. (բաժին 5.11-5.13-ում), Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման 2020-2024 թթ. (բոլոր բաժիններում) և այլ ռազմավարություններում մեծամասամբ առկա չեն չափելի թիրախներ: Ինչո՞վ է վտանգավոր չափելի թիրախների բացակայությունը մշակվող ռազմավարությունում: Բանն այն է, որ ռազմավարությունը մշակվում է առնվազն 5 տարվա համար, և եթե դրանում հստակ թիրախավորված չէ, թե տվյալ 5 տարի ժամանակահատվածում դիտարկվող ցուցանիշը որքանով պետք է աճի կամ նվազի, նշանակում է հնարավոր չէ այն թիրախավորել նաև դրանից բխող կարճաժամկետ մարտավարություններում: Ուստի 5 տարի անց մեծ հավանականությամբ մենք կունենանք այնպիսի իրավիճակ, երբ ստացված արդյունքը ամենեին էլ լավագույնը չէ և չի համապատասխանում մեր ակնկալիքներին: Այլ կլիներ պատկերը, եթե ռազմավարության մեջ նշվեին հստակ չափելի թիրախներ 5 տարվա համար, և հետևապես՝ դրանից բխող մարտավարություններն էլ կամրագրեին թիրախներ կարճաժամկետ ժամանակահատվածների համար, յուրաքանչյուր տարի տվյալ տարվա համար նախատեսված թիրախից շեղումը արագ կարձանագրվեր ու կշտկվեր, և 5 տարի անց մենք կունենայինք առնվազն այն թիրախը, որը ռազմավարությունը մշակելիս համարել էինք լավագույնը:

Երկարաժամկետ ռազմավարությունների մշակման պարագայում երկրորդ հնարավոր ծուղակը ջայլամի ծուղակն է. տվյալ պարագայում եթե մենք ճիշտ չենք գնահատում առկա վիճակը կամ թիրախավորում ենք մոլորության մեջ զցող իրավիճակ, մենք ձախողվելու ենք: Մասնավորապես՝ երբ նշում ենք, որ 5-ամյա ռազմավարության իրականացման արդյունքում ՀՀ-ն պետք է դառնա լավագույն ներդրումային միջավայր ունեցող 15 երկրներից մեկը և դա նույնականացնում ենք Doing business վարկանիշային

աղյուսակում 15-րդ հորիզոնականը գրավելու հետ, սա մոլորություն է, քանի որ, օրինակ, 2019 թ. Doing business-ի տվյալներով Լիտվան զբաղեցնում է 14-րդ հորիզոնականը, Ադրբեջանը՝ 25-րդ, իսկ օրինակ՝ Ճապոնիան՝ 39-րդ, Բելգիան՝ 45-րդ, Լյուքսեմբուրգը՝ 66-րդ տեղը: Արդյո՞ք սա նշանակում է, որ վերջին 3 երկրները ներդրումային ավելի քիչ գրավչություն ունեն, քան Ադրբեջանն ու Լիտվան: Բնավ ոչ: Ուստի ներուժի ճիշտ գնահատումն ու արդարացի թիրախների ընտրությունը շատ կարևոր է արդունավետ ռազմավարության մշակման համար:

Եվ, ի վերջո, մակրոմիջավայրի հաջորդ կարևոր տարրը, որ կարևորվել է մեր կողմից, պատկան կառավարման համակարգում գործառույթների կրկնության բացառումն է: Այս տեսանկյունից համեմատական վերլուծությամբ կարող ենք ներկայացնել Մինգապուրի Ջարգացման գործակալության և Ջարգացման հայկական գործակալության ստեղծումը: Փաստենք, որ Ջարգացման սինգապուրյան գործակալության ստեղծումը մեծապես նպաստեց ՕՌԻՆ ներգրավմանը, Ջարգացման հայկական գործակալության ստեղծումը՝ ոչ: Ջարգացման հայկական գործակալության ձախողման պատճառները հետևյալն են. այն հիմնականում զբաղված էր վերլուծությունների իրականացմամբ, ուներ նույն գործառույթները, ինչ մի շարք պետական այլ կառույցներ, ուստիև պատասխանատվություն չէր կրում դրանց իրականացման, առավել ևս՝ ձախողման համար: Բացի այդ, ՋՀԳ-ն իրականացնում էր խորհրդատվություն առ այն, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ այս կամ այն ապրանքի արտահանման կամ ներմուծման համար, որը, ըստ էության, իրականացնում էր նաև էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումը: Փոխարենը Մինգապուրի Ջարգացման գործակալությունը հանդիսացավ միասնական պատուհան օտարերկրյա ներդրողների համար և ուղղորդեց ներդրողներին անգամ ամենաաննշան խնդիրների առկայության պարագայում: Այսօր արդեն ակնհայտ է, թե վերոնշյալ 2 կառույցներից որի գործունեությունն էր առավել արդյունավետ երկրի զարգացման տեսանկյունից:

Այս տեսանկյունից շատ կարևոր է գիտակցել, որ պետական մի քանի կառույցների նույն գործառույթով օժտելը միանշանակ հանգեցնելու է լավագույն դեպքում այդ գործառույթի թերակատարմանը, իսկ վատագույն դեպքում՝ առհասարակ չիրականացմանը: Սա մեծ բեռ է պետության համար, քանզի ոչ միայն ձախողվում է որևէ պետական գործառույթի իրականացումը, այլև այդ ձախողման համար ֆինանսավորվում են միաժամանակ մի քանի պետական կառույց: Այս երևույթը պայմանականորեն կարելի է անվանել տնտեսական գործառույթների կրկնության ծուղակ: Այս ծուղակն ամենավտանգավորներից է տնտեսության զարգացման համար: Անհրաժեշտ է նշել, որ այն առկա է նաև այսօրվա ՀՀ տնտեսությունում՝ հանձինս ՀՀ Էկոնոմիկայի նախարարության և Բիզնես Արմենիա գործակալության, ինչպես նաև Էկոնոմիկայի նախարարության առանձին ստորաբաժանումների (օրինակ՝ Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման վարչության ու Ձեռներեցության զարգացման վարչության գործառույթները ամենայն հավանականությամբ հիմնականում կրկնվում են, նույնը կարելի է ասել նաև Մանուսկրիպտների անվտանգության վարչության ու Պարենային անվտանգության և ագրովերամշակման զարգացման վարչության, ինչպես նաև Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության և Գյուղատնտեսության ծրագրերի իրականացման վարչության մասին): Եվ գիտակցելով, որ ՀՀ պետական բյուջեն չի կարող թույլ տալ այնպիսի շռայլություն, ինչպիսին է նույն գործառույթը կատարելու կամ, առավել ևս, թերակատարելու համար միաժամանակ մի քանի պետական կառույցների ֆինանսավորումը, այս խնդրին անհրաժեշտ է օր առաջ լուծում տալ՝ բարձրացնելով պետական կառավարման արդյունավետությունը:

Այժմ անդրադառնանք ներդրումային միջավայրի բարելավման միկրոմիջավայրին, այսինքն՝ անմիջականորեն ներդրումների առնչվող պետական քաղաքականությանը:

Ներդրումային միջավայրի բարելավման տեսանկյունից նախ և առաջ պետք է կարևորվի տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման ռազմավարության մշակումը: Հայտնի է, որ անկախ Հայաստանի գրեթե երեսնամյա պատմության մեջ դեռևս չի մշակվել ներդրումների ներգրավման ռազմավարություն: Դրա բացակայությունն է հիմնական պատճառը, որ մինչ օրս ՀՀ-ում ներդրումների ներհոսքը կրում է տարերային և պատահական բնույթ, չունի որևէ հեռանկարային ուղղորդվածություն, չի տալիս ներդրողին որևէ պատկեր ՀՀ տնտեսության հեռանկարային զարգացումների տեսանկյունից: Ստացվում է, որ ներդրողները, ՀՀ-ում ներդրումներ կատարելով, ստիպված են սեփական ուժերով գուշակել՝ արդյո՞ք այս կամ այն ոլորտը շահավետ կլինի ներդրման համար, արդյո՞ք ՀՀ կառավարությունը կարճաժամկետ, միջնաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում թիրախային կհամարի տվյալ ոլորտի զարգացումը և կտրամադրի որոշակի արտոնություններ, թե՞ թիրախային կարող է համարվել որևէ մրցակից ոլորտի զարգացումը՝ ստվերելով տվյալ ոլորտում իրականացված կապիտալ ներդրումների արդյունավետությունը: Հասկանալի է, որ ռացիոնալ ներդրողը որևէ ցանկություն չունի նման գուշակություններ անելու, հատկապես որ խիստ կոժվարանա գուշակել ՀՀ պետական քաղաքականության թիրախները՝ հիմք ընդունելով ԵԱՏՄ անդամակցությունից առաջ մատնանշվող թիրախների համատեքստն ու ԵԱՏՄ անդամակցության մասին որոշման կայացումը:

Առհասարակ յուրաքանչյուր ոլորտի ռազմավարություն կամ ռազմավարական նախագիծ մշակելուց առաջ անհրաժեշտ է հանգամանորեն վերլուծել տվյալ ոլորտին առնչվող միկրո և մակրո խնդիրները, հստակ ներկայացնել ռազմավարության մշակման պահին տվյալ ոլորտի վիճակը՝ հստակ ցույց տալով դրա դինամիկան նախորդ տարիների համեմատ: Սա շատ կարևոր հանգամանք է, քանի որ միայն առկա վիճակի և դինամիկայի ճիշտ գնահատումը թույլ կտա հասկանալ, թե որ ուղղությամբ է պետք շարժվել հետագայում: Մասնավորապես՝ եթե մենք

«Գործարար միջավայրի զարգացման ռազմավարության» մեջ նշում ենք, որ ՀՀ-ն Գործարարության դյուրինության ինդեքսով դիտարկվող ժամանակահատվածում 47-րդ հորիզոնականից բարձրացել է մինչև 41-րդ հորիզոնական, սա նշանակում է, որ դիտարկվող ժամանակահատվածում այդ ուղղությամբ վարվող պետական քաղաքականությունը եղել է արդյունավետ և նույն ուղղությամբ քաղաքականության վարման պարագայում ՀՀ տնտեսությունը կհայտնվի է՛լ ավելի բարձր դիրքերում: Մակայն երբ մենք ներկայացնում ենք իրական պատկերն առ այն, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ն Գործարարության դյուրինության ինդեքսով 47-րդ հորիզոնականից բարձրացել է մինչև 39-րդ հորիզոնական և այնուհետև իջել մինչև 41-րդ հորիզոնական, սա նշանակում է, որ վերջին տարիներին վարած քաղաքականությունը արդյունավետ չի եղել, և նույն ուղղությամբ քաղաքականության վարումը հանգեցնելու է ՀՀ դիրքերի ավելի մեծ հետընթացի:

Ուստի առաջին կարևոր հանգամանքը, որի վրա պետք է հստակ ուշադրություն դարձվի ներդրումների ներգրավման ռազմավարություն մշակելիս, այն է, որ մշակվող ռազմավարությունը պետք է զերծ լինի ՀՀ գործարար միջավայրի բարելավման ռազմավարական նախագծում տեղ գտած սխալներից և թերություններից, արտացոլի իրավիճակի իրական պատկեր և դինամիկա, հիմքում ունենա խոր վերլուծություն, որի ծավալը պարզապես հնարավորություն չի կարող տալ այն ներառելու ռազմավարության բովանդակության մեջ:

Ներդրումների ներգրավման ռազմավարությունը պետք է ունենա հստակ սահմանված սկզբունքներ, որոնք պետք է համահունչ լինեն միջազգային իրավունքի սկզբունքներին, մասնավորապես՝ առավել բարենպաստության սկզբունքին, երբ բոլոր երկրների ներդրողներին ցուցաբերվում է հավասար բարենպաստ վերաբերմունք, և ազգային մոտեցման սկզբունքին, երբ յուրաքանչյուր երկրի ներդրողի նկատմամբ վերաբերմունքը պակաս բարենպաստ չէ, քան տեղական ներդրողի նկատմամբ վերաբերմունքն է:

Օտարերկրյա և տեղական ներդրումների ներգրավման ռազմավարության առաջին թիրախը պետք է լինի ներդրողի համար կանխատեսելիության ապահովումը: ՀՀ տնտեսությունում անգամ կարճաժամկետ ժամանակահատվածում մշտապես փոփոխվող մակրոտնտեսական պայմանները, տնտեսական քաղաքականության ուղղություններն ու առաջնահերթությունների ընտրությունը հնարավորություն չեն տալիս ներդրողին կանխատեսելու մոտ ապագայում, առավել ևս միջնաժամկետում կամ երկարաժամկետում ակնկալվող փոփոխությունները, ուստի նա հրաժարվում է ՀՀ-ում ներդրում կատարելուց՝ հոգուտ առավել կանխատեսելի մակրոմիջավայր ունեցող երկրի: Այս խնդրի լուծումը կտրվի մեկընդմիջտ միայն այն ժամանակ, երբ հստակ մշակվի ընդհանրապես Հայաստանի Հանրապետության և մասնավորապես՝ ՀՀ տնտեսության զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, օրինակ՝ 50 կամ 100 տարվա համար: Այս ռազմավարությունը թիրախավորման առումով պետք է անփոփոխ լինի և կախված չլինի կառավարության կամ նախարարների փոփոխման հաճախակիությունից:

Ներդրումների ներգրավման ռազմավարության մեջ հստակ պետք է շեշտադրվեն ՀՀ ներդրումային միջավայրի առավելությունները՝ ի համեմատ հարևան և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերի, և ներկայացվեն համեմատական թերությունների շտկման ուղիներ: Աշխատանքում մեր կողմից արդեն իսկ ներկայացվել են այն խնդիրները, որոնք առկա են ՀՀ ներդրումային միջավայրում, և առաջարկվել են դրանց լուծման ուղիներ՝ հիմնվելով միջազգային փորձի վրա: Մեր կողմից ներդրումային խնդիրների բացահայտումն իրականացվել է երեք հիմնական ուղղություններով՝ հանգամանալից վերլուծելով ՀՀ ներդրումային դաշտը պայմանավորող օրենսդրաիրավական փաստաթղթերում առկա թերությունները, վերլուծելով ներդրումային դաշտի ձևավորման և զարգացման վրա ազդող 50 ցուցանիշներն ու գույքահեռներ անցկացնելով հարևան և ԵԱՏՄ երկրներում նույն ցուցանիշների արձանագրած մեծությունների հետ և իրականաց-

նելով սոցիոլոգիական հարցում ՀՀ-ում գործող ձեռնարկությունների հիմնադիրների կամ նրանց ներկայացուցիչների շրջանում: Արդյունքում բացահայտել ենք բազմաթիվ մանր ու մեծ հիմնախնդիրներ և նրբություններ և մշակել ենք դրանց լուծմանն ուղղված առաջարկներ: Չկրկնելով առաջարկվող լուծման ուղիները՝ այդուհանդերձ ներկայացնենք դրանք առավել ամփոփ եղանակով: Մեր կողմից կատարված վերլուծության արդյունքում բացահայտված խնդիրների լուծման համար ներկայացվում է առաջարկությունների 2 փաթեթ՝ ընդհանուր բնույթի և օրենսդրական բարեփոխումների առաջարկություններ, առաջարկություններ՝ համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպությունների գործունեությանն ուղղված:

Ընդհանուր բնույթի և օրենսդրական բարեփոխումներին ուղղված առաջարկություններ

Մեր կողմից առաջարկվում է ստեղծել ներդրումային առցանց հարթակ, որտեղ կհանդիպեն ներդրման կարիք և ներդրման հնարավորություն ունեցող տնտեսական սուբյեկտները: Մասնավորապես՝ ներդրումային առցանց հարթակի ստեղծում կամ նախկինում մշակված հարթակի էական բարեփոխում՝ ծրագրային համապատասխան լուծումների միջոցով: Մինգապուրի ներդրումային հարթակը լավագույններից է աշխարհում և ստեղծվել է 2007 թ.՝ <https://www.investmentnetwork.sg>: Համանման մոդելով մեր կողմից առաջարկվում է ստեղծել ներդրումային առցանց հարթակ, որտեղ կհանդիպեն ներդրման կարիք և ներդրման հնարավորություն ունեցող տնտեսական սուբյեկտները: 2017 թ. Հայաստանի զարգացման հիմնադրամը մշակեց նման մի հարթակ՝ investmentprojects.am, որը, սակայն, շատ թերի էր և ներկայումս անգամ չի էլ գործում անհայտ պատճառներով: Մինգապուրի մոդելով ստեղծվող կայքը կունենա առանձնացված բաժիններ՝ startup-ի համար և տարբեր ոլորտներում գործող սկսնակ և ոչ սկսնակ

բիզնեսների համար: Ներդրման կարիք ունեցողների համար կայքը կսահմանի պարտադիր դաշտեր, որոնք պետք է լրացվեն գրանցվելիս, այդ թվում՝ նաև էլեկտրոնային ստորագրություն: Նրանք մուտք կգործեն համակարգ առանձին մուտքանունով և գաղտնաբառով և կունենան հնարավորություն իրենց հատկացված օգտահաշվում ստանալ հարցեր կամ մեկնաբանություններ պոստենցիալ ներդրողներից՝ դրանց պատասխանելու հնարավորությամբ: Առաջարկվող մեխանիզմով հարթակը հնարավորություն կտա ներդրողներին միաժամանակ գումարներ ներդնել տարբեր նախագծերում կամ գործող ձեռնարկություններում՝ այսպիսով դիվերսիֆիկացնելով և նվազեցնելով ռիսկերը: Մյուս կողմից՝ հարթակը հնարավորություն կտա նաև օտարերկրյա տնտեսական սուբյեկտներին ևս ներդրումներ իրականացնել ներկայացված տարբեր նախագծերում: Բացի այդ, Սինգապուրի օրինակը ցույց է տալիս, որ շատ արդյունավետ է այն մոդելը, երբ կայքը նախատեսում է հնարավորություն նաև յուրաքանչյուր նախագծի համար անհրաժեշտ գումարի մի մասի ներդրման համար՝ հնարավորություն տալով տվյալ նախագծի համար անհրաժեշտ գումարը հավաքագրել տարբեր աղբյուրներից: Սա ունի 3 հիմնավորում. նախ՝ հնարավորություն կտրվի ներդրողին տարբերակել իր ներդրումային պորտֆելը, բացի այդ հնարավորություն կտրվի նախագծի հեղինակին կախում չունենալ մեկ ներդրողից, և ի վերջո՝ նախագծի հեղինակը կկարողանա առաջարկվող բոլոր ներդրողների հետ բանակցություններ վարել և ընտրել իր տեսանկյունից առավել վստահելիներին: Այսինքն՝ մեր առաջարկված մոդելում ընտրության հնարավորություն է տրվում ոչ միայն ներդրողին, որն առկա էր investmentprojects.am-ի պարագայում, այլ նաև նախագծի հեղինակին: Հետագա զարգացման պարագայում կայքը կունենա նաև համապատասխան բջջային հավելված՝ առավել ճկունություն ապահովելու համար: Հարկ է նշել նաև, որ կայքի ստեղծումը ինքնին չի կարող հանդիսանալ ներդրումների ներգրավմանն ուղղված քայլ: Անհրաժեշտ է նաև անհապաղ իրա-

կանացնել դրա առաջնորդում արտերկրում ինչպես սոցիալական ցանցերի, այնպես էլ արտերկրում գործող ՀՀ ներկայացուցչությունների կամ դիվանագիտական ներկայացուցչությունների ստորաբաժանումների միջոցով:

Ներկայումս ՀՀ տնտեսությունում ներդրում կատարող անձինք հնարավորություն ունեն արտոնյալ պայմաններով արտադրված ապրանքն արտահանելու դեպի ԵՏՄ շուկա: Սակայն ՀՀ տնտեսությունը օտարերկրյա ներդրողների համար դեռևս մնում է չբացահայտված. նրանք դժվարանում են ՀՀ տնտեսությունում գործունեություն ծավալելու համար անհրաժեշտ տեղեկատվություն գտնելու հարցում: Այդ պատճառով առաջարկում ենք ներդնել օտարերկրյա գործարարների հարցերին պատասխանող, ինչպես նաև օտարերկրյա գործարարների և պետական մարմինների միջև առաջացող խնդրահարույց իրավիճակների լուծմամբ զբաղվող «1 պատուհանի սկզբունք»՝ իր պաշտոնական կայք-էջով, ինչպես նաև դրան կից էջերով linkedin և facebook սոցիալական հարթակներում:

Մեր կողմից կատարված հարցումները ցույց են տվել, որ ներկայումս ՀՀ տնտեսությունում զգալի տեսակարար կշիռ է կազմում բիզնես գրագիտություն չունեցող փոքր և գերփոքր ձեռնարկատերերի մի խումբ: Նրանք մարդիկ են, ում պետք է տրվի զարգացման հնարավորություն, և նրանց ծավալած բիզնեսի պայմանների դյուրինացման նպատակով, իհարկե, մեր կողմից առաջարկվել են բազմաթիվ հարկային փոփոխություններ, քանի որ դա ժամանակի հրամայականն է: Սակայն, այդուհանդերձ, հասկանալի է, որ տվյալ պարագայում միայն բիզնեսի պայմանների դյուրինացմամբ, առանց բիզնեսի գրագիտության մակարդակի բարձրացման տնտեսությունը շատ փոքր քայլերով կզարգանա: Ուստի այս տեսանկյունից ուսանելի կարող է լինել Իսրայելի փորձը: Մեր կողմից առաջարկվում է որոշակի հարկային արտոնություն տրամադրել առնվազն 25 % օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ գործող ձեռնարկություններին, որոնք ՀՀ կներմու-

ծեն իրենց երկրի փորձը, բիզնես գրագիտության մակարդակը և այլն¹⁴⁸:

Աշխատողների մասնագիտական հմտությունների անհամապատասխանության խնդրի լուծման նպատակով առաջարկում ենք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կայք-էջում առանձնացնել «օն-լայն դասընթացներ» բաժին, որտեղ կազմակերպությունները կգրանցվեն և կներկայացնեն հայտեր, թե որ մասնագետի վերապատրաստման կարիք ունեն, և որոշակի քանակի հայտերի առկայության պարագայում նախարարությունը վերապատրաստում իրականացնող համապատասխան մասնագետների միջև կիրականացնի թեստավորում՝ ընտրելով նրանցից տվյալ դասընթացի համար ամենաշատ համապատասխանողներին, որոնք ևս կգրանցվեն նախարարության կայքում որպես մասնագետներ՝ ներկայացնելով տվյալ դասընթացի ծրագիրը և վճարը: Նշենք, որ մեր կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ մի շարք կազմակերպություններ ներկայումս վերապատրաստում են աշխատակիցներին օն-լայն դասընթացների միջոցով և ծախս-արդյունք տեսանկյունից այս եղանակը համարում են առավել արդյունավետ (հիմնականում՝ ծառայությունների ոլորտում): Այս մեթոդը հնարավորություն կտա խնայելու ժամանակ և ֆինանսներ: Հասկանալի է, որ որոշակի տարածքում դասընթաց անցկացնելու համեմատ այս մեթոդը առավելություն ունի անհամեմատ մեծ լսարանի հնարավորության, տարածքի վարձակալության գումարի բացակայության, միջնորդավճարի բացակայության և բազմաթիվ այլ տեսանկյուններից:

Ինչպես ցույց է տալիս գործարարության իրականացման դյուրինության ինդեքսի վերլուծությունը, դրանում ՀՀ-ի դիրքերը բարելավելու նպատակով ամենաառաջնային գործոնը շինարարության թույլտվության ստացման գործընթացում փոփոխություննե-

¹⁴⁸ Լ. Սարգսյան, Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները ՀՀ-ում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 280-282:

րի իրականացումն է: Այս տեսանկյունից մենք առաջարկում ենք ներկայիս 20 գործողության փոխարեն շինարարության թույլտվությունը տալ 8 գործողությունների արդյունքում՝ մի շարք պետական և ոչ պետական կառույցների հետ թույլտվություն ստացողի շփումը հասցնելով նվազագույնի, այդ գործառույթը դնելով քաղաքապետարանի վրա և էականորեն կրճատելով շինթույլտվության ստացման համար պահանջվող ժամանակահատվածը: Սակայն սա բարեփոխումների միջանկյալ տարբերակ կարող է հանդիսանալ, քանի որ բարեփոխումների վերջնական տարբերակի համար մեր կողմից մշակվել է 1 պատուհանի սկզբունքը, որի իրագործումը հնարավոր կլինի մի շարք կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության՝ էլեկտրոնային եղանակով իրականացման պարագայում: Այսպիսով, 20 պատուհանի մոտենալու փոխարեն շինթույլտվության ստացողը, մեր կողմից առաջարկվող միջանկյալ տարբերակի համաձայն, կմոտենա 8, իսկ հետագա բարելավումների արդյունքում՝ արդեն 1 պատուհանի:

Ինչպես հայտնի է, ներկայումս ՀՀ արժեթղթերի շուկան բավական թույլ է զարգացած: Սակայն սա, ըստ էության, ունի միանգամայն օբյեկտիվ հիմք. ՀՀ բնակչության մեծամասնությունը չունի ազատ դրամական միջոցներից երկարաժամկետ հրաժարվելու հնարավորություն, իսկ արժեթղթերի շուկայի զարգացման համար անհրաժեշտ են «երկար փողեր»: Ուստի այս խնդրի լուծման նպատակով մենք առաջարկում ենք ՀՀ կուտակային կենսաթոշակների մասին օրենքի 41-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն, համաձայն որի՝ կուտակային կենսաթոշակի կառավարիչները կպարտավորվեն հավաքագրված գումարների 25-30 %-ը ներդնել ՀՀ տնտեսությունում: Այս ձևով աստիճանաբար կլուծվի արժեթղթերի շուկայի կայացման խնդիրը, միաժամանակ ՀՀ տնտեսության զարգացումը նոր տեմպ կստանա:

Մեր կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ սկսնակ բիզնեսները գրեթե միշտ գործունեության

սկզբում գերադասում են գործել սովորում մինչև որոշակի զարգացման մակարդակի հասնելը: Ուստի սովորայնության մակարդակի կրճատման և ներդրումային ակտիվության խրախուսման նպատակով առաջարկում ենք ՀՀ Հարկային օրենսգրքի գլուխ 23-ի 127-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություն, համաձայն որի՝ start-up բիզնեսները կազատվեն շահութահարկի վճարումից մինչև 2 տարի ժամանակահատվածով, իսկ արտադրական գործունեություն իրականացնող նորաստեղծ ձեռնարկությունները՝ 6 ամսից մինչև 1 տարի ժամկետով՝ որոշակի քանակի աշխատատեղերի ապահովման պարագայում¹⁴⁹:

Ինչպես արդեն նշեցինք, շրջանառության հարկի մասին օրենքը ներկայումս սահմանում է մինչև 115 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող կազմակերպությունների համար 1,5 տոկոս շրջանառության հարկ՝ փաստաթղթավորված ապրանքի պարագայում, և 5 տոկոս հարկադրույք՝ չփաստաթղթավորվածի դեպքում: Իսկ 115 մլն դրամը 1 դրամով գերազանցելու պարագայում կազմակերպության հարկման դաշտը փոխվում է՝ էականորեն մեծացնելով հարկային բեռը, ինչի արդյունքում էլ կազմակերպությունը թաքցնում է շրջանառությունը: Այս խնդրի լուծումն այնքան էլ բարդ չէ: Նախ և առաջ առաջարկում ենք վերացնել օրենսդրության այն կետը, որը թույլատրում է չփաստաթղթավորված ապրանքներ ունենալ: Եվ միաժամանակ անհրաժեշտ է շրջանառության հարկից մինչև ընդհանուր հարկման դաշտ անցնելու համար սահմանել աստիճանական համակարգ. մինչև 115 մլն դրամ շրջանառության պարագայում՝ 1,5 տոկոս, այն գերազանցող X գումարի պարագայում՝ 3 տոկոս, 115+X-ը գերազանցող Y գումարի դեպքում՝ 5 տոկոս և այլն: Այս եղանակը հնարավորություն կտա կազմակերպությանը աստիճանաբար մուտք գործել ընդհանուր հարկային դաշտ և կտրուկ չմեծացնել նրա հարկային բեռը:

Հարցումների արդյունքում պարզ դարձավ նաև, որ ներկա-

¹⁴⁹ Լ. Սարգսյան, Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները ՀՀ-ում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 281-283:

յումս ՀՀ և ԼՂՀ իրավաբանական անձանց միջև իրականացվող գործարքների պարագայում առաջանում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ ոչ ռեզիդենտի շահութահարկի տեսքով: Իհարկե, ինդիքը տվյալ պարագայում տնտեսական հարթությունից չի առաջանում: Սակայն հաշվի առնելով դրա ընդգրկման մասշտաբները և դրա արդյունքում ՀՀ և ԼՂՀ տնտեսական սուբյեկտների կրած վնասները՝ առաջարկում ենք տնտեսական գոնե միջանկյալ լուծում տվյալ խնդրի համար: Դա կարող է լինել, օրինակ, ՀՀ և ԼՂՀ միջև կնքվող կրկնակի հարկումը բացառող համաձայնագրի տեսքով՝ ՀՀ և ԼՂՀ իրավաբանական անձանց միջև տնտեսական գործարքների իրականացման պարագայում:

Ներկայումս, համաձայն ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի, ներմուծվող ապրանքի համար ԱԱՀ-ն գանձվում է սահմանին, որը, սակայն, լրացուցիչ բեռ է դառնում ձեռնարկատերերի համար: Այս տեսանկյունից առաջարկում ենք ԱԱՀ-ի մասին ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում ԱԱՀ դաշտում գործող, ինչպես նաև շրջանառության հարկ վճարող ՀՀ իրավաբանական անձանց համար ներմուծված ապրանքի ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված տասնօրյա ժամկետը փոփոխել և սահմանել 1 տարի ժամանակահատված՝ հաշված ապրանքի մաքսազերծման օրվանից: Սա, փաստորեն, հնարավորություն կտա սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ ունեցող կազմակերպություններին ներմուծել 20 %-ով ավելի շատ ապրանք, այդ թվում և հումք, որի գոնե որոշակի մասի իրացումից կամ վերամշակումից հետո միայն կվճարվի ԱԱՀ-ն. այսպիսով հնարավորություն կստեղծվի ապրանքաշրջանառության ծավալների աճի համար՝ բազմարկչի էֆեկտով աշխուժացնելով տնտեսության առանձին հատվածները ևս:

Համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպությունների գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ

Հարցումների արդյունքում պարզ դարձավ, որ ՀՀ մարզերում գործող մի շարք ձեռնարկություններ ունեն պետական աջակցության կարիք՝ վարկային արտոնությունների կամ երաշխավորման տեսքով՝ ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում առաջացած ֆորս-մաժորային իրավիճակի հաղթահարման և աշխատակիցների ու արտադրության ծավալի նախաճգնաժամային մակարդակին հասնելու համար: Այս դեպքում խոսքը վերաբերում է միջին և խոշոր կազմակերպություններին, ուստի մեր կողմից առաջարկվում է՝ համայնքի զարգացման խնդիր լուծող նորաստեղծ կամ ընդլայնման ծրագիր ունեցող կազմակերպություններին կազմակերպության ստեղծման, առողջացման կամ ընդլայնման կենսունակ ծրագիր ներկայացնելու դեպքում տրամադրել պետական աջակցություն առևտրային բանկերից առանց համապատասխան գրավի առկայության՝ պետական երաշխավորմամբ վարկերի տրամադրման տեսքով: Այս պարագայում հաշվի է առնված այն հանգամանքը, որ համայնքում գործող միջին և խոշոր ձեռնարկատերերը մեծածավալ ներդրումների իրականացման համար չունեն պահանջվող ներդրման գումարին համապատասխանող արժեքի գրավ: Մեր կողմից մշակված այս դրույթի համաձայն՝ համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպություն կարելի է համարել առնվազն 200 աշխատատեղ ունեցող կամ ընդլայնման արդյունքում աշխատատեղերի քանակը առնվազն 200-ի հասցնող իրավաբանական անձին, որի 200 աշխատակիցների ամսական աշխատավարձը նվազ չէ 100000 ՀՀ դրամից: Այս պարագայում ուռճացված տվյալների ներկայացման, ինչպես նաև գրանցված, սակայն իրականում ավելի քիչ աշխատավարձի վճարման ռիսկից խուսափելու համար անհրաժեշտ է սահմանել տույժ յուրաքանչյուր նմանատիպ բացահայտված դեպքի համար նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: Նշենք, որ

200 աշխատատեղի սահմանման համար հիմք ենք ընդունել ՀՀ մարզերի քաղաքաբնակ բնակչության թվաքանակը: Եթե ընդունենք, որ միջին վիճակագրական ընտանիքը 4 հոգի է, 200 հոգու աշխատանքով ապահովելով գրեթե բոլոր մարզերում հնարավորություն է ստեղծվում քաղաքաբնակ բնակչության 1 %-ին վեր հանել աղքատության գծից¹⁵⁰:

Ներդրումների ներգրավման ռազմավարությունը պետք է հստակ հաշվարկներով ներկայացնի, թե ՀՀ տնտեսության որ ոլորտներն են շահավետ ներդրումների իրականացման համար այս կամ այն երկրի շուկա արտադրանքի արտահանման տեսանկյունից: Տվյալ վերլուծության շրջանակներում մենք բացահայտել ենք ՀՀ տնտեսության այն ոլորտները, որոնք համեմատական առավելություն ունեն, ինչպես նաև համեմատական առավելություն ձեռք կբերեն առաջիկա մինչև 5 և 5-10 տարում աշխարհում՝ ընդհանրապես և ԵԱՏՄ, ԵՄ երկրների, ԱՄՆ-ի Չինաստանի, Իրանի, Վրաստանի շուկաներում՝ մասնավորապես: Ուստի հենց այդ ոլորտներն էլ կարող են գրավիչ հանդիսանալ ներդրողների համար: Ներկայում, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում ներդրումային հեռանկար ունեցող ոլորտների ողջ ցանկը ներկայացված է աղյուսակ 3.4.1-ում:

¹⁵⁰ Լ. Սարգսյան, Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները ՀՀ-ում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 285:

Ներդրումների ներգրավման հեռանկար ունեցող ոլորտները ՀՀ-ում

Ապրանքախմբի անվանումը, որի արտադրությունը շահավետ է ներդրումների ներգրավման համար	Այն երկրներն ու տարածաշրջանները, որոնցում տվյալ ապրանքի արտահանումը կունենա մրցունակություն այժմ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում	Ապրանքախմբի անվանումը, որի արտադրությունը շահավետ է ներդրումների ներգրավման համար	Այն երկրներն ու տարածաշրջանները, որոնցում տվյալ ապրանքի արտահանումը կունենա մրցունակություն այժմ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում
Կենդանի կենդանիներ	Աշխարհ, Վրաստան	Պայթուցիկ նյութեր, լուցկի և այլ վառվող նյութեր	Վրաստան Միջնաժամկետում՝ աշխարհ
Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	Աշխարհ, ԵՄՏՄ, Վրաստան	Պլաստմասսա և դրանից իրեր	Վրաստան Միջնաժամկետում՝ աշխարհ, ԵՄՏՄ Երկարաժամկետում՝ Իրան
Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	Վրաստան, ԵՄՏՄ	Փայտյա և այլ մանրաթելավոր նյութերից զանգված	Վրաստան
Ձիթատու սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ	Միջնաժամկետում՝ Վրաստան, ԱՄՆ	Թաղիք, բամբակ, հատուկ գործվածք, ճուպան, առասանուկ, պարան և իրեր դրանցից	Վրաստան Երկարաժամկետում՝ ԵՄՏՄ
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	Աշխարհ, ԵՄՏՄ, ԱՄՆ, Վրաստան	Միս և մսից ենթամթերք	Իրան Միջնաժամկետում՝ աշխարհ, ԵՄՏՄ, Վրաստան
Շաքար և հրուշակեղեն շաքարից	Միջնաժամկետում՝ աշխարհ, ԵՄՏՄ, Վրաստան	Հովանոցներ, նստափայտեր, ճիպոտներ, մտրակներ և դրանց	Աշխարհ, ԵՄՏՄ
Կակաո և դրանից պատրաստված մթերք	Աշխարհ, ԵՄՏՄ, Չինաստան, Իրան, Վրաստան Երկարաժամկետում՝ ԱՄՆ	Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	Աշխարհ, ԵՄՏՄ Երկարաժամկետում՝ ԵՄ, Իրան
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	Աշխարհ, ԵՄՏՄ, ԱՄՆ, Վրաստան Երկարաժամկետում՝ Չինաստան	Ապակի և դրանից իրեր	Աշխարհ, Վրաստան

Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	ԵՄ, ԵԱՏՄ, ԱՄՆ Վրաստան	Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	Աշխարհ, ԵՄ, ԵԱՏՄ, ԱՄՆ
Մխախտտ և ծխախտի արդյունաբերական փոխարինողներ	Աշխարհ, ԵՄ, ԵԱՏՄ, Չինաստան, ԱՄՆ, Վրաստան	Սև մետաղներ	Աշխարհ, ԵՄ, Իրան
Աղ, ձծումբ, հող և քար, ավաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	Աշխարհ, ԵԱՏՄ, Իրան Միջնաժամկետում՝ ԵՄ	Պղինձ և իրեր դրանից	Աշխարհ, ԵՄ, ԱՄՆ, Վրաստան
Հանքաքար, խարամ և մոխիր	Աշխարհ, ԵՄ, Չինաստան, Վրաստան Միջնաժամկետում՝ Իրան Երկարաժամկետում՝ ԵԱՏՄ	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	Վրաստան
Դեղագործական մթերք	Վրաստան Միջնաժամկետում՝ աշխարհ Երկարաժամկետում՝ ԵԱՏՄ	Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր	Վրաստան Միջնաժամկետում՝ աշխարհ
Ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, լաքեր, թանաք	Վրաստան Երկարաժամկետում՝ ԵԱՏՄ, Չինաստան	Օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և հարմարանքներ	Վրաստան Միջնաժամկետում՝ աշխարհ, ԵՄ, Իրան, ԱՄՆ Երկարաժամկետում՝ Չինաստան
Օճառ, մակերեսային ակտիվ օրգանական միջոցներ, մաքրող միջոցներ և քսուլներ, մոմեր և հարդարանքի այլ միջոցներ	Երկարաժամկետում՝ ԱՄՆ	Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք	ԵԱՏՄ, ԱՄՆ Միջնաժամկետում՝ Վրաստան
Մպիտակուցային նյութեր, սպինձ, մոդիֆիկացված օսլա, ֆերմենտներ	Միջնաժամկետում՝ ԵԱՏՄ	Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ	Աշխարհ, ԵԱՏՄ Միջնաժամկետում՝ Վրաստան
Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	Աշխարհ, ԵԱՏՄ Միջնաժամկետում՝ Վրաստան	Կենդանական և բուսական ծագման յուղեր և ձարպեր	Միջնաժամկետում՝ Վրաստան

Ձուկ և խեցեգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ	Աշխարհ, ԵՄ, ԱՄՆ Միջնաժամկետում՝ Վրաստան	Յորենից, այլուրից, օսլայից և կաթից պատրաստված ապրանք	Միջնաժամկետում՝ Վրաստան Երկարաժամկետում՝ Իրան
Այլ քիմիական ապրանքներ	Միջնաժամկետում՝ Վրաստան	Կաշվե իրեր, կենդանիների աղիքից իրեր	ԵՄ Միջնաժամկետում՝ Վրաստան Երկարաժամկետում՝ աշխարհ, ԵՄ
Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր	ԵՄ Միջնաժամկետում՝ Վրաստան Երկարաժամկետում՝ աշխարհ	Փայտ և փայտից իրեր, փայտածուխ	Միջնաժամկետում՝ Վրաստան Երկարաժամկետում՝ ԵՄ, Իրան
Կոշիկ, գուգազուկա և նմանատիպ իրեր	Միջնաժամկետում՝ Վրաստան, ԵՄ	Այլ իրեր ոչ թանկարժեք մետաղներից	Միջնաժամկետում՝ Վրաստան, ԱՄՆ Երկարաժամկետում՝ աշխարհ
Գործիքներ, դանակներ, գրպաններ, պատառաքաղներ ոչ թանկարժեք մետաղներից	Միջնաժամկետում՝ Վրաստան, Իրան, ԱՄՆ	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ	Իրան Միջնաժամկետում՝ Վրաստան
Ժամացույցներ և դրանց մասեր	Աշխարհ, ԱՄՆ Միջնաժամկետում՝ Վրաստան Երկարաժամկետում՝ ԵՄ	Կահույք, անկողնային պարագաներ և դրանց հարակից մասեր	ԵՄ Միջնաժամկետում՝ Վրաստան
Այլ տարբեր սննդամթերք	ԱՄՆ Միջնաժամկետում՝ աշխարհ, ԵՄ, Վրաստան	Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր	Իրան Միջնաժամկետում՝ աշխարհ, Վրաստան
Թուղթ և սովարաթուղթ, դրանցից պատրաստված իրեր	Միջնաժամկետում՝ Վրաստան	Գրքեր, լրագրեր, տպագրական արտադրանք	Միջնաժամկետում՝ Վրաստան Երկարաժամկետում՝ ԱՄՆ
Այլումին և իրեր դրանից	Աշխարհ, ԵՄ, ԱՄՆ, Իրան Միջնաժամկետում՝ Վրաստան	Տրիկոտաժե պատառ մեքենայական կամ ձեռքի գործվածքով, հնոտիներ	ԵՄ, Իրան
Հատուկ կտորներ, ասեղնագործ կտորներ, գրեղեններ, հարդարման նյութեր և այլն	Միջնաժամկետում՝ Իրան Երկարաժամկետում՝ ԵՄ	Ալրաղացային-ձավարեղենային արտադրանք	Երկարաժամկետում՝ ԵՄ, ԱՄՆ
Գորգեր և հատակի այլ տեքստիլ ծածկոցներ	Երկարաժամկետում՝ աշխարհ, ԵՄ, ԱՄՆ	Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ մեքենայական կամ ձեռքի գործվածքով	Աշխարհ, ԵՄ Երկարաժամկետում՝ ԱՄՆ

Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	Աշխարհ, ԵԱՏՄ, ԵՄ	Գլխարկներ և դրանց մասեր	ԵԱՏՄ Երկրաժամկետում՝ աշխարհ
Քիմիական գործվածք	ԵԱՏՄ	Եթերային յուղեր, հար-դարանքի և յոգարանային միջոցներ	Երկարաժամկետում՝ ԵԱՏՄ
Կերամիկական իրեր	Երկարաժամկետում՝ աշխարհ, ԵԱՏՄ	Իրեր սև մետաղից	Միջնաժամկետում՝ աշխարհ, ԵՄ
Չմշակված մորթիներ և մշակված կաշի	Երկարաժամկետում՝ աշխարհ, ԵՄ	Այլ կենդանական ծագման ապրանքներ	Միջնաժամկետում՝ աշխարհ

Ընդ որում՝ մեր կողմից իրականացված հաշվարկների հիման վրա բացահայտված ոլորտները կարող են պատկերացում տալ առավելագույնը առաջիկա մինչև 10 տարվա ներդրումային գրավչություն ունեցող ոլորտների մասին: Ուստի անհրաժեշտ է, որ մշակվող ռազմավարությամբ սահմանվի 10-ամյա պարբերականությամբ կից թողարկվող հավելվածի թարմացում, որտեղ մշտապես նմանատիպ հաշվարկներով կներկայացվեն հետագա 10 տարիների համար ՀՀ ներդրումային գրավչություն ունեցող ոլորտները, որոնք էլ կհանդիսանան տեղական և օտարերկրյա ներդրողների հիմնական թիրախներ:

Եվ, ի վերջո, ներդրումների ներգրավման ռազմավարության մեջ պետք է հստակ տարանջատվեն ռազմավարության յուրաքանչյուր բաժնի իրականացման համար պատասխանատու պետական պատկան մարմինները, որոնք էլ իրենց հերթին, ելնելով իրենց վրա դրված պարտականություններից, կմշակեն համապատասխան գործողությունների ծրագիր:

Այսպիսով, ստացվում է, որ ներդրումային միջավայրի բարելավման նկատառումներով ՀՀ-ում պետք է իրականացվեն մի շարք կառուցվածքային բարեփոխումներ՝ սկսած ներդրումային միջավայրի մակրոհարթությունից մինչև միկրոհարթություն:

Խնայելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության ռեսուրսները և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ԳԱԱ-ն հանդիսանում է ՀՀ կառավարության խորհրդատուն, հանգամանալից վերլուծության իրականացումը ոչ միայն նշված, այլև այլ ռազմավարու-

թյունների մշակումից առաջ կարող է արտապատվիրվել ՀՀ ԳԱԱ-ին: Թերևս այս աշխատությունը վերլուծության խորությամբ և համընդգրկունությամբ կարող է հիմք հանդիսանալ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի և ՀՀ ԷՆ միջև հետագա սերտ համագործակցության համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաշխարհային փորձը վկայում է, որ ինտեգրման և գլոբալացման գործընթացների հիմնական շարժիչ ուժերից մեկը օտարերկրյա ներդրումներն են: Մասնագիտական գրականությունում առկա են բազմաթիվ փաստեր առ այն, որ համաշխարհային տնտեսությանն ինտեգրման գործընթացն առավել արագ է ընթացել այն երկրներում, որոնցում օտարերկրյա ներդրումներն առավել մեծ ծավալներով են իրականացվել: Ներդրումների ներգրավումը և դրանց համար նպաստավոր պայմանների ստեղծումը հատկապես կարևորվում է անցումային տնտեսություններում, ինչպիսին Հայաստանն է, որտեղ տեղական խիստ սահմանափակ ֆինանսական ռեսուրսների ծավալը շղթայաբար հանգեցնում է բազմաթիվ անցանկալի հետևանքների՝ գործազրկություն և աղքատության բարձր աստիճան, պետական բյուջեի եկամուտների անհամապատասխանություն պետական ծախսերի անհրաժեշտ չափին և այլն, որոնք նվազեցնում են երկրի զարգացման ներուժային հնարավորությունը: Իհարկե, ներքին ֆինանսական ռեսուրսների պակասը պետությունը կարող է որոշակիորեն լրացնել արտաքին փոխառությունների միջոցով, որոնք գուցե տվյալ պահին մասամբ լուծում են խնդիրը, սակայն ավելացնում են արտաքին պարտքը՝ մեծ բեռ դնելով ներկա և ապագա սերունդների ուսերին: Ուստի ժամանակակից պայմաններում ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականության վարումը և ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծումը գրեթե չունի այլընտրանք:

Վերլուծելով ՀՀ ՕՈՒՆ դինամիկան՝ այն կարող ենք բաժանել 3 հիմնական փուլի.

1. մինչև 2000 թ., երբ ՀՀ ներդրումային գրավչությունը, ինչպես նաև ներդրումների ծավալները խիստ փոքր են եղել ի հետևվանք ԽՍՀՄ փլուզման, պատերազմի և այլ մակրո ու միկրո բնույթի գործոնների,
2. 2000-2008 թթ., երբ մինչև համաշխարհային ֆինանսատնտեսա-

կան ճգնաժամի՝ ՀՀ-ում ունեցած դրսևորումները արձանագրվում էր օտարերկրյա ներդրումների աճի դինամիկա,

3. 2008 թվականից մինչ օրս, երբ ներդրումների ներհոսքը Հայաստան կրում է խիստ տարերային բնույթ, քանի որ ճգնաժամային և հետճգնաժամային տարիները արտացոլեցին ՀՀ տնտեսությունում առկա թերությունները բավական խտացված գույներով:

2018 թ. դրությամբ ՀՀ ՕՈՒՆ ներհոսքի մեծ մասն ապահովվել է ՌԴ-ից, Գերմանիայից և Ջերսի կղզուց: Վերջինս թերևս պետք է մտահոգությունների առիթ տա, քանի որ հանդիսանում է հիմնականում սև փողերի օֆշորային գոտի, և բավական բարդ է իրական ներդրողին բացահայտելը, ինչը կարող է հետագայում առաջացնել ազգային անվտանգության խնդիր Հայաստանի համար:

Ոլորտային բաշխման տեսանկյունից 2018 թ. ՕՈՒՆ ներհոսքը հիմնականում եղել է էլեկտրաէներգիայի և գազի, հանքարդյունաբերության և անշարժ գույքի ոլորտներում:

Մասնագիտական գրականության մեջ առկա են բազմաթիվ փաստեր տնտեսության զարգացման վրա ՕՈՒՆ ազդեցության վերաբերյալ: Հատկապես կարևոր տեղ են գրավում այն վերլուծությունները, որոնցում արտացոլված է ՕՈՒՆ ազդեցությունը տնտեսական աճի, արտահանման, ներմուծման, գործազրկության և աղքատության վրա: Ուստի սույն վերլուծության շրջանակներում կներկայացվեն այդ ցուցանիշների վրա ՕՈՒՆ ազդեցության մեխանիզմները ՀՀ-ում, ինչպես նաև կգնահատվի յուրաքանչյուր ցուցանիշի վրա ՕՈՒՆ ազդեցության չափը:

Այս համատեքստում տնտեսաչափական մեթոդների կիրառմամբ Գրեյնջեր պատճառականության թեստի հիման վրա մեր կողմից բացահայտվել է ՕՈՒՆ-ի պատճառական կապը ՀՆԱ-ի, արտահանման, ներմուծման, փոխարժեքի, աղքատության, գործազրկության հետ: Ներկայացվել է նշված յուրաքանչյուր գործոնի վրա ՕՈՒՆ ազդեցության մեխանիզմը՝ ըստ ազդեցության հաջորդականության՝ եռամսյակային կտրվածքով: Նման տվյալների առկայությունը հնարավորություն կտա ՀՀ կառավարությանը կանխատեսել հնարավոր ոչ ցանկալի փոփոխությունները եռամսյա-

կային կտրվածքով և ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ: Ուստի իրականացվեց նաև այդ վերլուծությունը:

Արդյունքում բացահայտվել են ՀՀ տնտեսության վրա ՕՌԻՆ ազդեցության հետևյալ մեխանիզմները.

1. ՕՌԻՆ ներհոսքի աճը ավելի արագ ազդում է գործազրկության մակարդակի կրճատման և ավելի դանդաղ՝ աղքատության մակարդակի կրճատման վրա: Սակայն գործազրկության մակարդակի անկումը ևս հետագայում հանգեցնում է աղքատության մակարդակի նվազման: Ուստի ստացվում է, որ ՕՌԻՆ ներհոսքը աղքատության նվազման վրա ունենում է ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդավորված ազդեցություն՝ գործազրկության մակարդակի անկման միջոցով:
2. ՕՌԻՆ ներհոսքը կարճ ժամանակ անց նպաստում է ներմուծման աճին: Ներմուծման աճն էլ իր հերթին նպաստում է ՀՆԱ աճին: Սակայն ՀՆԱ-ն ներմուծման հետևանքով աճում է ավելի երկար ժամանակահատվածի համար, քան ՕՌԻՆ ազդեցությամբ: Սա նշանակում է, որ ՀՆԱ-ն միայն ՕՌԻՆ ներհոսքի արդյունքում ավելացած արտադրության քանակով չի աճում, այլ ներմուծման աճի հետևանքով առաջացող արտահանման աճով, որն էլ իր հերթին կրկին նպաստում է ՀՆԱ-ի աճին: Այսպիսով, ՀՆԱ-ի աճի վրա ՕՌԻՆ-ը կրկին ունի ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դրական ազդեցություն:
3. ՕՌԻՆ աճը ավելի երկար ժամանակահատվածում նպաստում է արժույթի արժևորմանը, իսկ ավելի կարճ ժամանակահատվածում՝ արտահանման աճին: Արտահանման աճը ևս նպաստում է արժույթի արժևորմանը: Իսկ փոխարժեքի արժևորումը նպաստում է ՕՌԻՆ կրճատմանը՝ այսպիսով առաջացնելով ՕՌԻՆ-փոխարժեք-արտահանում տատանման ցիկլային բնույթ:

Կորելացիոն վերլուծության միջոցով պարզվել է, որ ՕՌԻՆ-ը բարձր աստիճանի կորելացված է ինչպես աշխարհի, այնպես էլ բարձր և միջին եկամտով երկրների համար գրեթե բոլոր դիտարկվող ցուցանիշների հետ, բացառությամբ աղքատության: Սակայն Հայաստանում այն բարձր կորելացվածություն ունի միայն ար-

տահանման և գործազրկության ցուցանիշների հետ՝ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանը ներկայումս համարվում է միջին եկամտով երկիր: ՕՈԻՆ կորեկացիայի աստիճանը ՀՆԱ-ի հետ ամենաբարձրը բարձր եկամտով երկրներում է:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով հաշվարկվել և կանխատեսվել են ՕՈԻՆ ազդեցության գործակիցները վերոնշյալ ցուցանիշների վրա ինչպես Հայաստանի համար, այնպես էլ աշխարհում, մասնավորապես՝ ներկայացվել են միջինացված տվյալներ բարձր, միջին բարձր և միջին ցածր եկամուտ ունեցող երկրների, ինչպես նաև ԵՍՏՄ երկրների համար:

Ռեգրեսիոն վերլուծության միջոցով ՕՈԻՆ ազդեցության չափը մի շարք ցուցանիշների վրա գնահատելիս ստացվել են հետևյալ փոխառնչությունները.

1. ՕՈԻՆ ներհոսքը ՀՆԱ-ի աճի վրա ամենամեծ նպաստումն է ունենում բարձր եկամտով երկրներում՝ ի համեմատ համաշխարհային միջինի և եկամտային այլ խմբի երկրների: Այդուհանդերձ, Հայաստանում այդ ազդեցության չափը շատ ավելի մեծ է, ինչը կարող է բացատրվել փոքր երկիր լինելու և սակավ ֆինանսական ռեսուրսների տիրապետելու հանգամանքով, երբ յուրաքանչյուր միավոր նոր ներդրումը հանգեցնում է ՀՆԱ-ի մեծ աճի:
2. ՕՈԻՆ աճը միջին եկամտով երկրներում անհամեմատ մեծ չափով է նպաստում արտահանման աճին, քան բարձր եկամտով երկրներում: Մինչդեռ Հայաստանում ՕՈԻՆ աճը նպաստում է 1 տարի անց արտահանման որոշակի կրճատմանը:
3. ՕՈԻՆ աճը դիտարկվող բոլոր երկրներում նպաստում է ներմուծման աճին, սակայն ամենամեծ դրական նպաստում արձանագրվել է միջին եկամտով երկրներում:
4. ՕՈԻՆ աճը նվազեցնում է գործազրկության մակարդակը բոլոր դիտարկվող դեպքերում, սակայն ամենամեծ չափով գործազրկությունը նվազում է բարձր եկամտով երկրներում:

ՀՀ եռամսյակային տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքում բացահայտվել է հետևյալ փոխառնչությունը.

- ՕՈՒՆ աճը 1 միավորով նպաստում է ՀՆԱ աճին 2,4 միավորով նույն ժամանակահատվածում, 5,3 միավորով՝ 3 եռամսյակ անց և 4,6 միավորով՝ 4 եռամսյակ անց:
- ՕՈՒՆ աճը 1000 միավորով նպաստում է արժույթի արժևորմանը դրան հաջորդող 2-4 եռամսյակների ընթացքում՝ յուրաքանչյուր եռամսյակում 1-ական միավորով:
- ՕՈՒՆ աճը 1 միավորով նպաստում է նույն ժամանակահատվածում արտահանման աճին 2,3 միավորով:
- ՕՈՒՆ ներհոսքի աճը 1 միավորով նպաստում է նույն ժամանակահատվածում ներմուծման աճին 0,7 միավորով և 3 եռամսյակ անց՝ 0,6 միավորով:
- ՕՈՒՆ աճը 10000 միավորով 4 եռամսյակ անց նպաստում է գործազրկության կրճատմանը 0,2 տոկոսային կետով:

Ակնհայտ է, որ ՕՈՒՆ ներհոսքը զգալի ազդեցություն ունի ՀՀ տնտեսության զարգացման տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ է հստակեցնել ինչպես տեղական, այնպես էլ ՕՈՒՆ ներհոսքին խոչընդոտող գործոնները և առաջարկել դրանց լուծման ուղիներ:

Այս տեսանկյունից մենք վերլուծել ենք ներդրումային միջավայրը պայմանավորող 50 ցուցանիշներ՝ պարզելու համար ՀՀ ներդրումային միջավայրը պայմանավորող գործոնների թերությունները հարևան և ԵՏՍ անդամ երկրների համեմատությամբ: Հիմնական թերությունները ամփոփ կերպով ներկայացված են ստորև.

- բնակչության փոքր թվաքանակ, որը նույնն է, ինչ ներքին փոքր սպառման շուկան,
- բնակչության տարեկան աճի փոքր ցուցանիշ կամ որ նույնն է՝ ներքին պահանջարկի ներուժի սակավություն,
- 1 շնչի հաշվով ՀՆԱ-ով կամ որ նույնն է՝ բնակչության գնողունակությամբ ՀՀ-ն զիջում է դիտարկվող բոլոր երկրներին, բացի Դրոգատանից,
- գործազրկության և աղքատության բարձր մակարդակ, որը կրկին սահմանափակում է բնակչության գնողունակությունը,
- ՕՈՒՆ զուտ ներհոսքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում բարձր է ԵԱՏՍ բոլոր երկրներից, բացառությամբ Բելառուսի, սակայն

ցածր է հարևան բոլոր երկրներից,

- արտահանման փաստաթղթավորման հետ կապված ծախսերով Հայաստանը զիջում է միայն Ղազախստանին և Ադրբեջանին, ինչը նվազեցնում է արտահանվող ապրանքի մրցունակությունը,
- գործարարությամբ զբաղվելու դյուրինության աստիճանով ԵԱՏՄ երկրների շրջանում Հայաստանի դիրքերը վատագույն երկրորդն են՝ Ղազախստանից հետո,
- առևտրի բացվածության ինդեքսով ՀՀ-ն զիջում է Ղազախստանին, Բելառուսին, Վրաստանին և անգամ Ադրբեջանին,
- բանկային վարկի տոկոսադրույքը ՀՀ-ում ցածր է միայն Ղազախստանի և Ադրբեջանի նույն ցուցանիշից, իսկ մյուս երկրների համեմատ զգալի բարձր է,
- բիզնեսի կողմից վճարվող հարկերի քանակով ՀՀ-ն զիջում է միայն Իրանին և Ղազախստանին,
- կոռուպցիայի վերահսկողության ինդեքսը ՀՀ-ում բավական ցածր է,
- քաղաքական կայունության ինդեքսը ՀՀ-ում ձգտում է հնարավոր միջին վատագույնին,
- գիտահետազոտական աշխատանքների վրա կազմակերպությունների կատարած ծախսերի դիրքը ՀՀ-ում ցածր է ԵԱՏՄ բոլոր երկրներից, բացառությամբ Ռուսաստանի,
- ՀՀ-ն գործարարության դյուրինության գրեթե բոլոր ենթասյուներով զիջում է դիտարկվող երկրների մեծ մասին:

Հասկանալի է, սակայն, որ միայն օրենսդրաիրավական դաշտի և ցուցանիշների վերլուծության միջոցով հնարավոր չէ բացահայտել ներդրումային միջավայրի բոլոր թերությունները: Անհրաժեշտ է հասկանալ այն միկրոխնդիրները, որոնց բախվում են գործարարներն իրենց առօրյա գործունեության ընթացքում: Այդ նպատակով մեր կողմից մշակվել է ՀՀ ներդրումային միջավայրի խնդիրների բացահայտմանն ուղղված անանուն սոցիոլոգիական հարցման հարցաթերթիկ: Մշակված հարցաթերթի հիման վրա հարցում է իրականացվել 1832 (99 % վստահելիության մակարդակ և առավելագույնը 3 % սխալի հավանականություն թույլ տալու

համար) կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում, որոնցից 521-ը՝ օտարերկրյա կապիտալով: Հարցումն իրականացվել է linkedin սոցիալական կայքի միջոցով, գործարարների հետ դեմ առ դեմ հանդիպումների, ինչպես նաև արտադրական ցուցահանդեսների ընթացքում: Այս համատեքստում համագործակցել ենք նաև ՀՀ-ում գործող տարբեր պետական և միջազգային կազմակերպությունների հետ՝ ՀՀ ԱԱՊ, Արդյունաբերողների և գործարարների միություն, Գործարարության աջակցման գրասենյակ՝ հարցվողների քանակը հնարավորինս ընդգրկուն դարձնելու և իրենց տրամադրության տակ եղած կազմակերպությունների ներկայացուցիչների հետ ևս հարցում իրականացնելու նպատակով:

Այսպիսով, հարցման արդյունքում բարձրաձայնված հիմնախնդիրները հետևյալն են.

- կազմակերպության գրանցման ընթացքում հանդիպող հիմնական խոչընդոտներից են պատկան մարմինների դանդաղ աշխատանքը (16,9 %), նախնական կապիտալի պահանջվող մեծությունը (9 %), ոչ օրինական ճնշումները մրցակիցների կողմից (8,2 %),
- աշխատուժին առնչվող հիմնախնդիրներից են աշխատողների մասնագիտական հմտությունների անհամապատասխանությունը կազմակերպության պահանջներին (41,6 %), արտագաղթը (19,3 %), աշխատուժի հոսունությունը (8,8 %),
- ֆինանսական ռեսուրսներին առնչվող հիմնախնդիրներից են վարկերի բարձր տոկոսադրույքը (43 %), վարկավորման համար պահանջվող գրավի կամ երաշխիքի առկայությունը (23,1 %), նոր ներդրողների ներգրավման դժվարությունը (23 %),
- հարկային օրենսդրության և վարչարարության հետ կապված հիմնական խոչընդոտներից են բարձր հարկադրույքները (34,5 %), հարկադրույքների փոփոխությունից առաջացող անորոշությունը (22 %), հարկային հաշվետվությունների էլեկտրոնային համակարգի խափանումները (15,5 %), հարկային մարմինների կողմից ոչ օրինական ճնշումները (13,9 %),
- մրցակիցների հետ կապված հիմնական խնդիրներից են գեր-

իշխող դիրքի չարաշահումը (19 %), սև PR-ի իրականացումը (11,5 %), մաքսային մարմինների կողմից խտրական վերաբերմունքը (8 %)։

Այնուամենայնիվ, հարցման արդյունքում բացահայտված խնդիրների տեսանկյունից կարող ենք փաստել, որ մի շարք խնդիրների պատկերն էապես փոխվել է մինչև 2018 թ. և 2018-2020 թթ. իրականացված հարցումների ընթացքում։

Առաջին ակնհայտ տարբերությունը, որ նշվել է կազմակերպությունների հարցման ժամանակ մինչև 2018 թ. և դրանից հետո, այն է, որ մինչև 2018 թ. շատ էր բարձրաձայնվում պետական մարմիններում կոռուպցիայի առկայության մասին, որը զգալիորեն խոչընդոտում էր կազմակերպությունների զարգացմանը։ 2018 թվականից սկսած էականորեն նվազել է այս խնդիրը բարձրաձայնողների քանակը։ Մինչև 2018 թ. աշխատողների արտագաղթը որպես խնդիր նշել է հարցվողների 25,6, իսկ 2018-2020 թթ.՝ 13,6 տոկոսը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2018-2020 թթ. հարցմանը մասնակցել է 1445, իսկ մինչ այդ՝ 387 կազմակերպություն, կարող ենք փաստել, որ 2018 թվականից սկսած անհամեմատ կրճատվել է աշխատող բնակչության արտագաղթը։ 2018-2020 թթ. ավելի մեծ թվով տնտեսվարող սուբյեկտներ են բախվել վարկավորման համար գրավադրվող գույքի անհամապատասխանությանն իրենց տնօրինածի համեմատ։ Սրա հիմնական պատճառներից է այն, որ 2018 թվականից սկսած մեծացել է մարզերում տեղի բնակիչների կողմից միջին չափի ձեռնարկություններ հիմնելու ձգտումը, մինչդեռ նրանց տնօրինած գույքը բավարար չի եղել ակնկալվող չափի վարկ ստանալու համար։ Հակառակ սրան՝ 2018 թվականից սկսած նվազել է վարկի բարձր տոկոսադրույքից դժգոհող տնտեսվարող սուբյեկտների տեսակարար կշիռը, ինչպես նաև նվազել են նոր ներդրողների ներգրավման դժվարությունները։ Հարկային մարմինների կողմից ոչ օրինական ճնշումների խնդրի մասին մինչև 2018 թ. բարձրաձայնել է հարցվողների 18,6, իսկ 2018-2020 թթ.՝ 9,8 տոկոսը։ Մաքսային մարմինների կողմից խտրական վերաբերմունքից դժգոհություն են հայտնել մինչև 2018 թ. հարցվածների 11,4, իսկ 2018-2020 թթ.

հարցվածների 4,9 տոկոսը: 2018-2020 թթ. նվազել է նաև բարձր հարկադրույքներին առնչվող դժգոհության տեսակարար կշիռը: Այդուհանդերձ, դեռևս շատ սուր է մնում շրջանառության հարկով հարկվողների՝ ընդհանուր հարկման դաշտ անցնելու հետևվանքով հարկային բեռի կտրուկ ավելացման խնդիրը:

Այսպիսով, հարցման արդյունքում բացահայտվել են մի շարք լուրջ հիմնախնդիրներ, որոնց լուծման նպատակով առաջարկները մշակվել են՝ հիմնվելով տարբեր երկրների փորձի և ՀՀ-ում դրա տեղայնացման հնարավորության վրա: Որպես առանձին խնդիրների լուծման գործիքներ առաջարկվել են հարկային, վարկային արտոնությունները, հարկային արձակուրդները, մարզերում մեծ թվով աշխատատեղեր ստեղծող կազմակերպություններին վարկային երաշխիքի տրամադրումը և այլն: Հասկանալի է, սակայն, որ ներդրումային դաշտի բարելավումը չի ենթադրում միայն առանձին խնդիրների լուծում, և անհրաժեշտ է առաջարկել առավել ընդգրկուն մոտեցում՝ ներառելով ոչ միայն ներդրումային դաշտին առնչվող միկրոխնդիրները, այլև ընդհանուր տնտեսության զարգացումը: Այս սկզբունքի հիման վրա էլ մեր կողմից առաջարկվել է ներդրումային դաշտի բարելավման ռազմավարական նախագիծ, որի հիմնական դրույթները կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

- վերացնել կամ նվազագույնի հասցնել կոռուպցիան՝ կոռուպցիոն մեխանիզմներում մեղադրվող անձանց պատժելու և պետական պաշտոնյաների աշխատավարձի բարձրացման միջոցով, այս գործընթացում խուսափել ժողովրդի դժգոհություններին տեղի տալու արդյունքում կտրուկ քայլերի իրականացումը մեղմացնելու, ինչպես նաև պետական պաշտոնյայի աշխատավարձի չափի և նրա փորձառության ու մասնագիտական որակների անհամապատասխանությունների ծուղակներում հայտնվելուց:
- Մշակել ՀՀ տնտեսության զարգացման երկարաժամկետ ռազմավարություն, որը ուղենիշային կլինի ՀՀ ղեկավարության համար՝ անկախ կառավարության և նախարարների փոփոխությունից: Ռազմավարությունը պետք է պարունակի հստակ չա-

փելի թիրախներ, որպեսզի թույլ տա ընտրելու դրան հասնելու ճիշտ մարտավարություն: Ռազմավարություն մշակելիս անհրաժեշտ է ճիշտ գնահատել առկա վիճակը և մինչ այդ պահը գրանցված դինամիկ փոփոխությունները և ընտրել իրականանալի թիրախներ ապագայի համար:

- Ռազմավարությունը մշակելիս բացառել պետական մարմինների գործառույթների և ռազմավարության իրականացման մեջ նրանց դերակատարությունների կրկնությունը:
- Մշակել տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավման ռազմավարություն՝ հիմնվելով միջազգային իրավունքի և մեր ազգային շահի համադրման սկզբունքի վրա: Ռազմավարությունը մշակելիս խուսափել «Գործարար միջավայրի բարելավման ռազմավարության» մեջ տեղ գտած թերությունների կրկնությունից՝ մակերեսային վերլուծության արդյունքում ռազմավարության մշակում, չափելիության բացակայություն, իրագործման վերահսկելիության անհնարինություն, իրավիճակի ոչ ճշգրիտ ներկայացում և ներուժի սխալ գնահատում:
- Ներդրումների ներգրավման ռազմավարության նախաբանում մինչ այդ կատարած խոր վերլուծության հիման վրա հստակ ներկայացնել ՀՀ ներդրումային միջավայրի առավելություններն ու թերությունները՝ ի համեմատ հարևան և ԵԱՀԿ անդամ երկրների:
- Առանձնացնել խնդիրների լուծման փաթեթներ առանձին թիրախային խնդիրների լուծման ուղղությամբ: Մասնավորապես՝ սույն վերլուծության ժամանակ մեր կողմից առանձնացվել են ընդհանուր բնույթի և օրենսդրական դաշտի թերությունների և համայնքի զարգացման խնդիր լուծող կազմակերպությունների խնդիրների լուծմանն ուղղված փաթեթներ՝ ի թիվս առանձին միկրոխնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունների: Այս շրջանակներում որպես գործիքներ ներկայացվել են ներդրումային հարթակի ստեղծումը, ստարտափների գործունեության աջակցության եղանակները, շրջանառության հարկից ընդհանուր հարկման դաշտի անցնելու գործընթացի մեղմացումը, ներդրողների հիմնախնդիրներով զբաղվող

«1 պատուհանի» գործունեության կազմակերպումը, շինարարության թույլտվության ընթացակարգի պարզեցումը և այլն:

- Ներդրումների ներգրավման ռազմավարության մեջ հստակ հաշվարկների հիման վրա ներկայացնել ՀՀ ներդրումային հեռանկար ունեցող ոլորտները՝ հիմք ընդունելով տվյալ ոլորտում արտադրված արտադրանքը այս կամ այն երկրի շուկա արտահանելու և այդ շուկայում մրցունակ դիրք գրավելու հնարավորությունը: Այս տեսանկյունից մեր կողմից իրականացվել է արտահանման մրցունակության գնահատում բացահայտված և ներուժային համեմատական առավելությունների տեսանկյունից դեպի աշխարհի տարբեր երկրներ՝ ԵՄ, ԵԱՏՄ, ԱՄՆ, Չինաստան, Իրան, Վրաստան արտահանման հիմնավորմամբ: Արդյունքում ներկայացվել են այն ոլորտները, որոնք ներկայում ունեն արտահանման մրցունակություն կունկրետ շուկայում, ինչպես նաև այն ոլորտները, որոնք ձեռք կբերեն արտահանման մրցունակություն մինչև 10 տարի ժամանակահատվածում: Ապրանքների միջազգային դասակարգմամբ ներկայացվող 97 անուն ապրանքախմբերից մեր կողմից բացահայտվել են 64 անուն ապրանքախմբեր, որոնք ունեն արտահանման մրցունակություն կամ այն ձեռք կբերեն առաջիկա 10 տարիների ընթացքում:
- Մշակված ռազմավարությանը կից ներկայացնել առնվազն 10-ամյա պարբերականությամբ թարմացվող հավելված, որտեղ վերոնշյալ եղանակով հաշվարկների հիման վրա տվյալ պահի դրությամբ կներկայացվեն նոր ոլորտներ, որոնք կունենան ներդրումային գրավչություն:

Կարծում ենք, որ ներկայացված վերլուծությունը և մշակված առաջարկություններն ու ներդրումային միջավայրի բարելավման ռազմավարական նախագիծը հնարավորություն կտան ՀՀ կառավարությանն ու պատկան մարմիններին՝ առավել արդյունավետորեն աշխատելու, բարելավելու ՀՀ ներդրումային միջավայրը և վարելու ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականություն, որի արդիականությունն ավելի է մեծանում հետպատերազմյան ժամանակաշրջանում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Եկամտային հարկի մասին» ՀՀ 30.12.10 թ. ՀՕ-246-Ն օրենք, հոդված 10, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80486>
2. «Ակցիզային հարկի մասին» ՀՀ 27.07.2000 թ. ՀՕ-79 օրենք, հոդված 3, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=95189>
3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 30.05.2015 թ. ՀՕ-41-Ն օրենք, հոդված 1, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=98064>
4. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ 16.06.1997 թ. ՀՕ-118 օրենք, հոդված 9, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=80579>
5. «Գույքահարկի մասին» ՀՀ 13.01.1998 թ. ՀՕ-187 օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=493>
6. «Գույքահարկի մասին» ՀՀ 30.12.2002 թ. ՀՕ-491-Ն օրենք, հոդված 6, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=68794>
7. «Դեղերի մասին» ՀՀ օրենք, հոդված 11.5, 2-րդ կետ, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=120774>
8. «Եկամտահարկի մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 29.12.2000 թ. ՀՕ-130 օրենք, հոդված 8, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=482>
9. «Ինքնագրադրված անձանց հարկային արտոնությունների մասին» ՀՀ 30.12.2006 թ. ՀՕ-261-Ն օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=110550>
10. «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ 22.07.1998 թ. ՀՕ-238 օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=87126>
11. «ՀՀ հարկային օրենսգիրք», ՀՀ 01.11.2016 թ. ՀՕ-165-Ն օրենք, հոդված 135, 1 և 4 կետեր, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=109017>
12. «Հողի հարկի մասին» ՀՀ 27.04.1994 թ. ՀՕ-101 օրենք, հոդված 7, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75283>
13. «Շահութահարկի մասին» ՀՀ 27.11.1997 թ. ՀՕ-155 օրենք, հոդված 33, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=73140>,
14. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 12.03.2015 թ. ՀՕ-4-Ն օրենք,

- հողված 2, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=96152>
15. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 30.12.2010 թ. ՀՕ-265-Ն օրենք, հողված 11, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64552>
 16. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին ՀՀ 29.12.2000 թ. ՀՕ-128-Ն օրենք, հողված 22, «բ» ենթակետ, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=813>
 17. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ 31.07.1994 թ. ՀՕ-115 օրենք, հողված 6,7,8,9,11,15,21:
 18. ԵԱՏՄ հանձնաժողովի 2012 թվականի հուլիսի 16-ի թիվ 54-րդ որոշում, <http://www.eurasiancommission.org/hy/nae/events>
 19. Լ. Ն. Սարգսյան, Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 320 էջ:
 20. Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգիրք: Ընդունվել է 06.07.2000: Հողված 102, Մաքսատուրքի դրույրաչափերը:
 21. ՀՕ-24-Ն օրենք, հողված 2, <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=90846>
 22. “Сколько стоит отсрочка платежа?” <https://www.apteka.ua/article/1014>
 23. Ахметов А.Е., Мировой опыт регулирования цен на фармацевтическую продукцию. Вестник РУДН, серия Экономика, 2012, № 2, стр. 41. <https://www.apteka.ua/article/13798>
 24. Бабаева Э.Т., “Зарубежный опыт переподготовки и повышения квалификации персонала”, Журнал Наука 21 века: Вопросы, гипотезы, ответы, N 6, 2014 г. стр. 138-141.
 25. Гончаренкова Л.И., Вишневская Н.Г., Налоговое стимулирование инновационного развития промышленного производства на основе анализа передового зарубежного опыта, Журнал, Экономика. Налоги. Право, № 4/2019, стр. 123.
 26. Муха Д., Влияние экономических и институциональных факторов на привлечение прямых иностранных инвестиций,

- Беларусь, 2014, стр. 40.
27. Новиков П.П., Зарубежный опыт организации обучения персонала в современных условиях, Журнал Региональные проблемы преобразования экономики, N 2, 2011 г. стр. 385. <http://www.rppe.ru/wp-content/uploads/2013/09/the-rppe-magazine-number-2-for-2011.pdf>
 28. Распоряжение Коллегии ЕЭК от 18.06.2019 № 98 "О проекте распоряжения Совета Евразийской экономической комиссии "О проекте Соглашения о принципах ведения налоговой политики в области акцизов на алкогольную продукцию государств – членов Евразийского экономического союза", <https://www.alt.ru/tamdoc/19r00098/>
 29. Саргсян Л. Н., Маргарян С. А., "Анализ динамики ПИИ Армении в 2000-2018 гг.", "Современная экономика: актуальные вопросы, достижения и инновации": сб. ст. XXXII международной научно-практической конференции, МЦНС «Наука и просвещение», Пенза, ноябрь, 2019 г., стр. 88-92 <https://naukaip.ru/wp-content/uploads/2019/11/МК-656.pdf>
 30. Саргсян Л., Влияние пии на внешнюю торговлю Армении, XXXII международная научно-практическая конференция "Современная экономика: Актуальные вопросы, достижения и инновации, 25 ноября, 2019 г., стр. 92-95.
 31. Adam P. Balcerzak, Mirosława Żurek, «Foreign Direct Investment and Unemployment: VAR Analysis for Poland in the Years 1995-2009», European Research Studies, Volume XIV, Issue (1), 2011, pp. 4-12.
 32. Ahn S., Hemmings P., Policy influence on economic growth on OECD countries: An evaluation of the evidence, OECD Economics Department Working Paper, No. 246, OECD, Paris, 2000; Borensztein E., De Gregorio J., Lee L-W., How does foreign direct investment affect economic growth, Journal of International Economics, Vol. 45, 1998, pp. 115-135.
 33. Akamatsu K., The Flying Geese Pattern of Industrial Development in Newly Industrializing Countries, Essays in Honor of Dr. Ueda

- Teijir, Vol. 4, Research on Population and the East Asian Economy, 1943, pp. 565–577.
34. Aliber R.Z., A Theory of Direct Investment, In. Kindelberger C.P. (ed.), The International Corporation. Cambridge, Mass 1970, pp. 17-34.
 35. Anigbogu, Theresa Ukamaka (Ph.D) , Edoko, Tonna David, Okoli, Ikechukwu Moses, “Foreign Direct Investment and Poverty Reduction in Nigeria”, International Journal of Business and Management Invention www.ijbmi.org, Volume 5, Issue 6, June, 2016, pp 19-28.
 36. Applied Economics and Finance, Vol. 3, No. 1, February 2016 ISSN 2332-7294 E-ISSN 2332-7308 Published by Redfame Publishing URL: <http://aef.redfame.com>, pp. 145-160.
 37. Asafu-Adjaye J., The effect of foreign direct investment on Indonesian economic growth, 2000, p. 62.
 38. Baba Insah, « Foreign Direct Investment Inflows and Economic Growth in Ghana», International Journal of Economic Practices and Theories, Vol. 3, No. 2, 2013 (April), e-ISSN 2247–7225, pp. 115-121.
 39. Balassa, Bela, “Trade Liberalisation and Revealed Comparative Advantage”, The Manchester School of Economic and Social Studies 33 (1965): 99-123.
 40. Balasubramanyam V. N., M., Sapsford Salisu and David, Foreign Direct Investment and Growth in EP and is Countries, The Economic Journal, Vol. 106, No. 434, Jan., 1996, pp. 92-105.
 41. Buckley P. J. and Casson M., The Future of the Multinational Enterprise. New York: Holmes and Meier, 1976.
 42. Corden W. Max, The theory of International Trade, In: Dunning/H. (ed.) Economic Analysis and the Multinational Enterprise, London, 1974, pp. 209-232.
 43. Countries, European Scientific Journal, February 2014 /SPECIAL/ edition vol.1 ISSN: 1857 – 7881 (Print) e - ISSN 1857- 7431, P.245-252
 44. David Mayom, «The Impact of Foreign Direct Investment on Labor Market Measures: Evidence from Sub-Saharan Africa», pp. 1-28.

45. De Mello L.R., Foreign Direct Investment-led growth: evidence from time series and panel data, *Oxford Economic Papers*, 51, 1999, pp. 133-151.
46. Derrick Tanggapan, Caroline Geetha, Rosle Mohidin, Vivin Vincent, "The relationship between economic growth and foreign direct investment in Malaysia: Analysis based on location advantage theory", *International Journal of Economics and Management Sciences*, Vol. 1, No. 2, 2011, pp. 24-31.
47. Dr. Niaz Ahmed Bhutto, Abdul Khaliq Daudpota, Raja Shahzad, Maria Tabassum and Asma Malik, "The Impact of Foreign Direct Investment (FDI) on Pakistan Exports", *Journal of Independent Studies and Research (JISR) - Management and Social Sciences & Economics* Vol. 6, Number 2, July 2008, pp. 13-18.
48. Dr. Sauwaluck Koojaroenprasit, "The Impact of Foreign Direct Investment on Economic Growth: A Case Study of South Korea", *International Journal of Business and Social Science*, Vol. 3, No. 21, November 2012, pp. 8-19.
49. E.O. Oyatoye, K.K. Arogundade, S.O. Adebisi, E.F. Oluwakayode, "Foreign Direct Investment, Export and Economic Growth in Nigeria", *JournalsBank.com* (2011), ISSN 2220-9425, Vol. 2, No. 1 (2011).
50. Elizabeta Djambaska, Aleksandra Lozoska, "Foreign direct investment and unemployment evidence from the republic of Macedonia", *International Journal of Economics, Commerce and Management*, United Kingdom, Vol. III, Issue 12, December 2015, Licensed under Creative Common, <http://ijecm.co.uk/> pp. 73-85.
51. Fu Qiang and Muhammad Suhail Sharif, Nayyra Zeb, "Foreign direct investment and unemployment reduction in Pakistan", *Int. J. Eco. Res.*, 2014, v5i2, 10-17 ISSN: 2229-6158, pp.10-17.
52. Ghatak A., Halacioglu F., Foreign direct investment and economic growth: some evidence from across the world, 2007, p. 15.
53. Gheorghe Ruxanda Andreea Muraru, "FDI and economic growth.

- evidence from simultaneous equation models”, Romanian Journal of Economic Forecasting – 1/2010, pp. 45-58.
54. Gohou, G. and Soumaré, I. (2009). Impact of FDI on Poverty Reduction in Africa: Are There Regional Differences?. Working Paper, African Development Bank. Retrived from <http://www.afdb.org/fileadmin/uploads/afdb/Documents/Knowledge/2009%20AEC-%20Impact%20of%20FDI%20on%20Welfare%20and%20Regional%20Integration%20in%20Africa.pdf>
 55. Hirsch S., An International Trade and Investment Theory of the Firm. Oxford Economic Papers. Vol. 28, 1976, pp. 258-270.
 56. IMF, Foreign Direct Investment Trends and Statistics.
 57. Kevin O. Onwuka* , Kutlu Yaşar Zoral, “Foreign direct investment and imports growth in Turkey”, Journal of Yasar University, pp. 2357-2380.
 58. Knickerbocker F.T., Oligopolistic Reaction and Multinational Enterprise, Boston, 1973.
 59. Kojima, K. and T. Ozawa, “A macroeconomic approach to foreign direct investment”, Hitotsubashi Journal of Economics, 1973, vol. 14, No. 1.
 60. Kyuntae Kim and Hokyung Bang, « The Impact of Foreign Direct Investment on Economic Growth: A Case Study of Ireland», KIEP Working Paper 08-04 Published July 25, 2008 in Korea by KIEP, pp. 1-56.
 61. Limam Ould, «An Investigation of the Impact of Foreign Direct Investment on Economic Growth: A Case Study of Mauritania», Int J Econ Manag Sci Volume 4 • Issue 2 • 1000224, ISSN: 2162-6359 IJEMS, an open access journal, pp. 1-5.
 62. Markuzen J.R., Venables A.J., Foreign direct investment as a catalyst for industrial development, European Economic Review, Vol. 43, 1999, pp. 335-356.
 63. Mayank Nagpal, «FDI And Trade In India – A Gravity Model Analysis», pp. 1-14.
 64. Meltem Şengün Ucal, «Panel Data Analysis of Foreign Direct Investment and Poverty from the Perspective of Developing

- Countries», *Procedia - Social and Behavioral Sciences* 109 (2014), 1101 – 1105.
65. Mishkin F., *International capital movements, financial volatility and financial instability*, NBER working paper, Cambridge, 1998, (<https://www0.gsb.columbia.edu/faculty/fmishkin/PDFpapers/w6390.pdf>); Evana M.D.D., Hnatkovaka V., *International capital flows, returns and world financial integration*, September, 2005, (https://www.ecb.europa.eu/events/pdf/conferences/fgi/Hnatkovska_Evans.pdf); Committee on the global financial system, *Capital flows and emerging market economies*, January, 2009, (<http://www.bis.org/publ/cgfs33.pdf>)
 66. Muhammad Abdul Kamal, Zhaohua Li, Sara Rafiq, Amna Nazeer, Khalid Khan, Khuram Shafi, “Inter-Linkage between FDI, Imports and Exchange Rate: An Empirical Evidence from Pakistan”, *Developing Country Studies* www.iiste.org, Vol.4, No.21, 2014, pp. 122-130.
 67. N. Prasanna, «Impact of Foreign Direct Investment on Export Performance in India», *J Soc Sci*, 24 (1):
 68. Nasir Selimi, Kushtrim Reçi, Luljeta Sadiku, “The Impact of Foreign Direct Investment on the Export Performance: Empirical Evidence for Western Balkan Countries”, *ILIRIA International Review – Vol 6, No 1 (2016)*, pp. 58-66.
 69. Nguyen Thi Phuong Hoa, «Contribution of FDI to poverty Reduction: The case of Vietnam in the 1990s», pp. 65-71 (2010).
 70. R. Vernon, «International Investment and International Trade in the Product Cycle», *Quarterly Journal of Economics*, 1966, 2, pp. 190-207.
 71. Romer Paul, *Idea gaps and object gaps in economic development*, University of California, Berkeley, CA 94720, USA, 1993, pp. 543-548.
 72. Rusike T. G., *Trends and determinants of inward foreign direct investment to South Africa*, Rhodes University, September, 2007.
 73. Safet Kurtovic, Boris Siljkovic, Milos Milanovic, “Long-term impact of foreign direct investment on reduction of unemployment: panel

- data analysis of the Western Balkans countries”, *Journal of Applied Economics and Business Research JAEBR*, 5 (2): 112-129 (2015), pp. 112-129.
74. Sahraoui Mohammed Abbas a*, Belmokaddem Mostéfaa, Guellil Mohammed Seghir a, Ghouali Yassine Zakarya, “Causal Interactions between FDI, and Economic Growth: Evidence from Dynamic Panel Co-Integration”, *Procedia Economics and Finance* 23 (2015), pp. 276-290.
 75. Seiko Minota Zekariaz, The Impact of Foreign Direct Investment (FDI) on Economic Growth in Eastern Africa: Evidence from Panel Data Analysis. *Applied Economics and Finance*, 2016, 3(1): pp.145–160.
 76. Seng Sothan, Causality between foreign direct investment and economic growth for Cambodia, Sothan, *Cogent Economics & Finance* (2017), 5: 1277860, *Econometrics | Research Article*, pp. 1-13.
 77. Tolkyn Azatbek, Altay Ramazanov, “Assessment of foreign direct investment, export and economic growth on the example of Kazakhstan”, *Investment Management and Financial Innovations*, 2016, 13 (4), pp.130-135.
 78. UNCTAD, Global Flows Of Foreign Direct Investment Exceeding Pre-Crisis Levels In 2011, Despite Turmoil In The Global Economy, No. 824, January 2012.
 79. United Nations Conference on Trade and Development, *World Investment Report 2000*.
 80. Zhang, Kevin H., “How Does FDI Interact with Economic Growth in A Large Developing Country? The Case of China”, *Economic Systems*, 21 (4), 1999, pp. 291-303.
 81. Zuzana Brincikova, Lubomir Darmo, Lubomir Darmo, “The impact of FDI inflow on employment in v4 countries”, *European Scientific Journal*, February 2014 /SPECIAL/ edition vol.1, pp. 245-252.
 82. <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=5184&lang=arm>
 83. <http://www.fa.ru/org/div/edition/enp/journals/%E2%84%964%202019.pdf>

84. <https://ceec-china-sme.org/latvia/>
85. <https://cyberleninka.ru/article/n/mirovoy-opyt-regulirovaniya-tsen-na-farmatsevticheskuyu-produktsiyu-na-primere-stran-evropy>
86. <https://databank.worldbank.org/reports.aspx?source=2&series=SP.POP.TOTL&country=ARM>
87. https://ec.europa.eu/growth/smes/support/networks_en
88. <https://een.ec.europa.eu/succes-story/traditional-irish-aquaculture-explores-new-markets>
89. <https://learn.e-resident.gov.ee/hc/en-us/articles/360000721597-Estonian-tax-basics>
90. <https://mgimo.ru/upload/iblock/323/323820d24a69fb4cc55ed06dab487547.pdf>
91. https://tcdata360.worldbank.org/indicators/entrp.ip?country=ARM&indicator=3375&countries=RUS,BLR&viz=line_chart&years=2012,2016
92. <https://wits.worldbank.org/WITS/WITS/Restricted/Login.aspx>
93. <https://www.altum.lv/en/services/business-start-ups/accelerator-funds-programme/acceleration-funds/>
94. <https://www.armstat.am>
95. <https://www.doingbusiness.org/content/dam/doingBusiness/media/Annual-Reports/English/DB10-FullReport.pdf>
96. <https://www.e-draft.am/projects/905/about>
97. [https://www.ey.com/Publication/vwLUAssets/EY_-_Infrastructure_in_Russia:_the_road_to_2030/\\$FILE/EY-the-road-to-2030-survey-of-infrastructure-development-in-russia.pdf](https://www.ey.com/Publication/vwLUAssets/EY_-_Infrastructure_in_Russia:_the_road_to_2030/$FILE/EY-the-road-to-2030-survey-of-infrastructure-development-in-russia.pdf)
98. <https://www.financialexpress.com/india-news/five-significant-steps-taken-by-modi-government-to-promote-tourism-hospitality-sector/379469/>
99. <https://www.hsbc.am/loans/products/property/>
100. https://www.spyur.am/am/yellow_pages-16/yp/541
101. <https://www.theglobaleconomy.com>
102. <https://zaganportal.ru/estoniya/finansy-estoniya/nalogi-v-estonii.html>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ.
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Հրատարակության խմբագիր՝ ք. գ. թ. Ա. Մանուկյան
Էջադրումն ու ձևավորումը՝ Դ. Սարաֆյանի

Չափսը՝ 60×84^{1/16}, 20 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 100 օրինակ: